

ISSN 0135-0536
eISSN 3045-302X

Պ Ա Տ Մ Ա Ֆ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Վ Յ Ա Ն
Կ Ա Ն Ա Դ Ե Ս

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ
HISTORICAL AND PHILOLOGICAL JOURNAL

1

2026

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF RA

Պ ԱՏՄԱԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ
ՏԱՆԴԵՍ

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ
HISTORICAL AND PHILOLOGICAL JOURNAL

2026, 1 (231)

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА
PUBLISHING HOUSE «GITUTYUN» NAS RA

Հանդեսը լույս է տեսնում 1958 թվականից
Հիմնադիր խմբագիր՝ Մ. Գ. Ներսիսյան

Журнал издается с 1958 года
Редактор-основоположник М. Г. Нерсисян

The journal has been published since 1958
Editor-founder M. G. Nersisyan

Խ մ բ ա գ ր ա կ ա ն խ ո Ր Հ ու Ր Դ

Ն ա խ ա գ ա հ՝ ԱՇՈՏ ՄԵԼԿՈՆՅԱՆ

Գ լ խ ա վ ո Ր խ մ բ ա գ ի Ր՝ ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Գ լ խ ա վ ո Ր խ մ բ ա գ Ր Ի տ ե ղ ա կ ա լ՝ ՍՏՅՈՊԱ ՊԵՏՈՅԱՆ

Ա ն ղ ա մ ն ե Ր՝ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԼԵՎՈՆ, ԱՍԱՏՐՅԱՆ ԱՆՆԱ, ԱՎԵՏԻՍՅԱՆ ՊԱՎԵԼ, ԲԱՐԴԱԿՅԱՆ
ԳԵՎՈՐԳ (ԱՄՆ), ԴՈԼՈՒՔԱՆՅԱՆ ԱԵԼԻՏԱ, ԴՈՒՄ-ԹՐԱԳՈՒԹ ԺԱՍՄԻՆ (Ավստրիա),
ԶԵԿԻՅԱՆ ԼԵՎՈՆ (Իտալիա), ԿԱՏՎԱԼՅԱՆ ՎԻԿՏՈՐ, ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ, ՏԵՐՅԱՆ
ԱԲՐԱՀԱՄ (ԱՄՆ), ՏՈՆԱՊԵՏՅԱՆ ԱՆԱՀԻՏ (Ֆրանսիա), ԿՈՆՏԻՆ ԲԵՆԵԴԵՏԱ (Ավստրիա),
ԿՐՅՈՒՉԿՈՎ ԻԳՈՐ (Ռուսաստան), ՈՐՍԿԱՆՅԱՆ ՀԵՐԻՔՆԱԶ, ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՀԱՄՈ

Редакционная коллегия

Председатель – АШОТ МЕЛКОНЯН

Главный редактор – АНУШАВАН ЗАКАРЯН

Заместитель главного редактора – СТЕПА ПЕТОЯН

Члены – АБРАМЯН ЛЕВОН, АВЕТИСЯН ПАВЕЛ, АСАТՐՅԱՆ ԱՆՆԱ, ԲԱՐԴԱԿՅԱՆ ԳԵՎՈՐԳ (ՍՄԱ),
ՎՈՐՏԿԱՆՅԱՆ ԵՐԻԿՆԱԶ, ԴՈԼՈՒՔԱՆՅԱՆ ԱԵԼԻՏԱ, ԴՈՒՄ-ԹՐԱԳՈՒԹ ԺԱՍՄԻՆ (Ավստրիա),
ԶԵԿԻԱՆ ԼԵՎՈՆ (Իտալիա), ԿԱՏՎԱԼՅԱՆ ՎԻԿՏՈՐ, ՕԳԱՆԻՍՅԱՆ ԴԵՆՐԻԿ, ԿՈՆՏԻՆ ԲԵՆԵԴԵՏԱ (Ավստրիա),
ՏՈՆԱՊԵՏՅԱՆ ԱՆԱՀԻՏ (Ֆրանսիա), ԿՐՅՈՒՉԿՈՎ ԻԳՈՐ (Ռուսաստան), ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՀԱՄՈ

Editorial Board

Chair: ASHOT MELKONYAN

Editor-in-Chief: ANUSHAVAN ZAKARYAN

Deputy Editor-in-Chief: STYOPA PETOYAN

Members: ABRAHAMYAN LEVON, AVETISYAN PAVEL, ASATRYAN ANNA, BARDAKJIAN
KEVORK (USA), VORSKANYAN HERIKNAZ, DOLUKHANYAN AELITA,
DUM-TRAGUT JASMINE (Austria), ZEKIYAN LEVON (Italy), KATVALYAN VIKTOR,
HOVHANNISYAN HENRIK, TERIAN ABRAHAM (USA), TONAPETYAN ANAHIT (France),
KONTIN BENEDETTA (Austria), KRUCHKOV IGOR (Russian), SUKIASYAN HAMO

© Պատմաբանասիրական հանդես, 2026

© Историко-филологический журнал, 2026

© Historical and Philological Journal, 2026

Հապավումը՝ ՊԲՀ

Аббревиатура – ИФЖ

Abbreviation: HPhJ

ՀՏԴ: 929:947.925 Ազաթանգեղոս

DOI: 10.54503/0135-0536-2026.1-3

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՍՏԵՂԾՄԱՆ
ԱԶԳԱՅԻՆ-ԿՐՈՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ*

ԱՇՈՏ ՍԱՐԳՍՅԱՆ

Բանալի բառեր՝ Ազաթանգեղոս, «Հայոց պատմություն», քաղաքական օրակարգ, կրոնական իրավիճակ, ազգային ինքնություն, զինվորական խավ, եկեղեցու իշխանություն, Աստվածաշնչի թարգմանություն:

Ամփոփում

Հայ քաղաքական միտքը IV–V դարերի սահմանագլխին ձևակերպեց ազգային (աշխարհիկ ու հոգևոր) իշխանության պահպանման օրակարգ՝ դրա լուծման միջոցը համարելով քրիստոնեության լիակատար ու վերջնական տարածումը, այն ջերմեռանդ հավատի, հայ մարդու ինքնության առանցքի վերածումը:

Ըստ Ազաթանգեղոսի «Հայոց պատմության»՝ IV դարի սկզբին Տրդատ Գ թագավորի և Գրիգոր Լուսավորչի ջանքերով քրիստոնեությունն ընդունվել, լիակատար տարածվել ու արմատավորվել է ամբողջ երկրով մեկ: Մինչդեռ V դարի պատմիչները բոլորովին այլ պատկեր են ներկայացնում՝ համարելով, որ նոր կրոնի տարածումը խիստ մակերեսային էր, իսկ դրա պատճառը Աստվածաշունչը հայերենով չունենալն էր: Իրականում նաև այլ, ավելի լուրջ խոչընդոտներ են եղել նոր կրոնի տարածման և արմատավորման ճանապարհին, որոնց մասին պատմիչները լռում են կամ նրանց տեղեկությունները անուղղակի են:

Շուրջ 600-ամյա անկախ պետականության ընթացքում հայաստանյան հասարակությունը բնորոշվում է լեզվական ընդհանրության առանձնահատկությամբ: Մի այլ առանցքային բաղադրիչի՝ ավանդական հեթանոսական կրոնի հետ դա պիտի պայմանավորեր նաև ընդհանուր սովորությունների, աշխարհընկալման, ընդհուպ՝ միանման կենցաղի գոյացումը: Երկրորդ առանձնահատկությունը հայաստանյան հասարակության մեջ ազատ բնակչության բացարձակ մեծամասնությունն էր: Երրորդը՝ զինվորական զբաղմունքի խիստ հարգի լինելու պարագան՝ կոշտ կյանք, կայուն մտածելակերպ ենթադրող, և դժվարությամբ փոփոխության տրվող զինվորականության մեծ տեսակարար

* Ներկայացվել է 20. XII. 2025 թ., գրախոսվել է 01. II. 2026 թ., ընդունվել է տպագրության 20. III. 2026 թ.:

© Հեղինակ/ներ, 2026: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:

կշիռը՝ ազնվականության գլխավորությամբ: Այդ ամենի վրա հենվող ընդհանրական արժեհամակարգը, որպես ազգային ինքնության հիմք, բնական ու լուրջ խոչընդոտ էր նոր կրոնի ճանապարհին:

Հայ քաղաքական միտքը այս հանգամանքների գիտակցմամբ ու մեկդարյա սակավ արդյունավետ փորձով Աստվածաշնչի (նաև կրոնական այլ գրականության) թարգմանությունը բավարար չի համարել նոր կրոնի դեմ եղած խոչընդոտների հաղթահարման, քաղաքական հիմնական խնդրի լուծման համար: Համազգային քաղաքական օրակարգի մեկնակետից ու տրամաբանությամբ՝ Ազաթանգեղոսի Պատմությունը գործնական առաջնահերթություն պետք է ունենար քրիստոնեության դեմ ծառայած խոչընդոտները հաղթահարելու, նրա համար արդյունավետ քարոզչության ճանապարհ հարթելու գործում: Ըստ այդմ՝ այն պետք է մտահղացված լիներ դեռ գրերի ստեղծումից առաջ ու ստեղծված՝ առնվազն Աստվածաշնչի թարգմանությանը զուգահեռ:

Նախաբան

Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև Հայաստանի երկու մասի բաժանվելուց հետո (387 թ.), ու քիչ անց բյուզանդական մասում թագավորության վերացման (389 թ.), իսկ պարսկական մասում սպասվող նման մի հեռանկարի հանդիման, երկիրը հայտնվել էր ազգային իշխանության կորստյան ճակատագրական մարտահրավերի առջև: Հայաստանի՝ ավանդաբար ունեցած միասնական պետական իշխանության հետ մեկտեղ վտանգված էր նաև քրիստոնեական եկեղեցու հոգևոր իշխանությունը¹: Վերջինս վտանգված էր երկակի՝ ունեցած ինքնիշխանության կորստի, և առաջին հերթին՝ զսպված, բայց չհաղթահարված, դեռևս կենսունակ հեթանոսության վերականգնմամբ եկեղեցու իշխանության օբյեկտ «հոգևոր հոտի» տարրալուծման, քայքայման հեռանկարներով: Այս պայմաններում անհրաժեշտ էր հաղթահարել հայաստանյան հասարակության մեջ նոր կրոնի նկատմամբ եղած ներքին խոչընդոտները, դեռ միայն պաշտոնապես ու ձևական ընդունված քրիստոնեությունը դարձնել հայ հանրության ազգային ինքնության անկապտելի առանցքային հատկանիշ: Դա նպաստող, բայց դեռ բավարար պայման չէր լինի սասանված միասնական թագավորական իշխանության վերականգնման ու պահպանման համար, սակայն բավարար կարող էր լինել Հայ եկեղեցու հոգևոր իշխանության ապահովման գործում, մանավանդ այլ միջոց պարզապես գոյություն չունեին:

Ոսկեդարյան հայ մատենագրությունը՝ թարգմանական թե ինքնուրույն, ստեղծված նախապես կազմված և ընթացքում լրացվող համապարփակ ծրագրով², սպասարկել է ազգային իշխանության պահպանման ճակատագրորեն կենսական դարձած քաղաքական օրակարգը: Միայն իշխանության համար պայքարի հարթության վրա կարող է բացատրելի լինել հսկայական ծախսեր

¹ Ամբողջ IV դարում թագավորական իշխանության «հովանոցն» էր ապահովել Հայոց եկեղեցու կայացումը և զսպել նման վտանգների առարկայացումը (հիմնավորումները տե՛ս Ս ա ր գ ս յ ա ն. 2024թ, 64):

² Մանրամասները տե՛ս Ս ա ր գ ս յ ա ն. 2024թ, 48–56:

ու ջանքեր ենթադրող նման մի ծրագրի մտահղացումը և իրագործումը³: Ոսկեդարյան մի քանի տասնյակ մատենագրական (թարգմանական և ինքնուրույն) հուշարձաններից յուրաքանչյուրը համապարփակ այս ծրագրի իրականացման գործում յուրատեսակ մի սեկտոր է ծածկել, առանձին մի հարց լուծել՝ ի վերջո հասնելով տվյալ քաղաքական խնդրի վերջնական լուծմանը:

Ժամանակի անմխիթար կրոնական իրավիճակի, հայ հասարակության ազգային, սոցիալական կառուցվածքի առանձնահատկությունների հետ կապված իրողությունների համատեքստում ակնհայտ է դառնում, որ քրիստոնեական հավատի լիակատար տարածման և ամրապնդման հրատապ քաղաքական խնդրում ամենամեծ ծանրաբեռնվածությունը ու վճռական դերը պիտի ունենար Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը»: Համազգային քաղաքական օրակարգի մեկնակետից այս գործի դիտարկումը, դրան տրված տեղի, հատկացված դերի, ստեղծման շարժառիթների, նպատակի պարզումը կարող է նաև թվագրման ու ստեղծման այլ հանգամանքների որոշակիացման վստահելի հիմք հանդիսանալ:

Լեզվական խնդիրը

Ագաթանգեղոսի պատումով՝ Հայաստանում քրիստոնեության ամբողջական ու վերջնական տարածումը, ըստ էության, որպես հեղափոխական ակտ է ներկայանում, մի հաղթարշավ՝ իրականացված կարճ ժամանակում Գրիգոր Լուսավորչի գլխավորությամբ (Վիրապից դուրս գալուց հետո) և Տրդատ թագավորի աջակցությամբ: Մյուս պատմիչները, ուղղակի չհակադրվելով հանդերձ այս արձանագրմանը, կրոնական իրավիճակի բոլորովին այլ՝ խիստ անմխիթար պատկեր են ներկայացնում հաջորդած մեկ դարի համար:

Ընդհանրապես, բնական է, որ ամեն մի նորի հաստատվելը դիմադրության է հանդիպում: Նույնը պետք է լիներ նաև քրիստոնեության դեպքում: Առավել ևս, երբ վերջինս ոչ թե եղածի կողքին, այլ նրա փոխարեն հաստատվելու, այն բացառելու հավակնություն ուներ, ուստիև հնի, ավանդականի դիմադրությունը առավելագույնը պետք է լիներ: Եվ դա ոչ միայն հոգևոր իշխանություն կրող շահագրգիռ կրոնական կառույցների (հեթանոսական և քրիստոնեական), այլ նաև հասարակության յուրաքանչյուր անհատի ազատությունների, մտածողության, ունեցած արժեքային համակարգի, ընդհուպ՝ կենցաղի մակարդակում:

Պատմիչների համերաշխ վկայությունները քրիստոնեության մակերեսային տարածման մասին, ըստ էության, վերաբերում են ամբողջ IV դարին, մասնավորաբար՝ IV–V դարերի սահմանագլխին: Նրանք նույնպիսի համերաշխությամբ այդ վիճակի համար որպես միակ պատճառ մատնանշում են Աստվածաշնչի հայերեն թարգմանության բացակայությունը: Եվ դա, ընդհանուր առմամբ, բնական է. քրիստոնեությունը գրավոր վարդապետություն էր և չէր կարող

³ Այդպիսի վտանգ չկար, օրինակ, Բյուզանդիայում, որտեղ ապահով պետական իշխանության պայմաններում քրիստոնեության տարածումն ընթացավ աստիճանական, շուրջ մեկուկեսդարյա գործընթացով՝ առանց արտակարգ, «հեղափոխական» քայլերի ու նման ջանքերի (տե՛ս Ս ա ր գ ս յ ա ն. 2024ա, 41–44):

հենվել բանավոր պատմությունների, ավանդությունների վրա, ոչ էլ ներկայանալ նյութական առարկաների՝ կուռքերի, պատկերների, արձանների տեսքով, տարածվել միայն բերանացի: Հիմնական, սկզբի համար առաջնային «դասագիրքը», բնականաբար, պետք է լիներ Աստվածաշունչը՝ Հին և Նոր կտակարաններով: Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելը չուղեկցվեց հայերենի համար գրերի ստեղծմամբ: Գրավոր լեզուն ասորերենն ու հունարենն էին, և այդ լեզուներով էին եկեղեցիներում կատարվում քարոզները, արարողությունները, ինչը դժվարամարս պիտի լիներ, եթե անգամ այն ուղքի վրա բանավոր թարգմանվեր: Այսպիսին են ժամանակի պատմիչների համերաշխ վկայությունները ինչպես քարոզչության ու պաշտամունքի լեզվի, այնպես էլ շատերի համար դրա անհասկանալի լինելու պատճառների մասին:

Լեզվական խոչընդոտի հանգամանքին վերաբերող ամենապերճախոս վկայությունը Բուզանդինն է. «Որովհետև վաղուց ի վեր, երբ նրանք քրիստոնյա անունն ստացան՝ այդ (կրոնը) հանձն առան հարկադրաբար՝ իբրև մի մարդկային մոլորություն, առանց ջերմեռանդ հավատի: /Կրոնն ընդունեցին/ ոչ գիտակցաբար, հույսով ու հավատով, ինչպես որ հարկն էր: Միայն քչերը, որոնք փոքր ի շատե ծանոթ էին հունական կամ ասորի գրագիտության, մասամբ հասկանում էին այդ (կրոնը): Իսկ որոնք գրագիտության արվեստից զուրկ էին, այսինքն՝ ժողովրդի՝ նախարարների ու շինականների խառնիճադանջ բազմությունը – եթե ուսուցիչները նստելով գիշեր-ցերեկ ամպերի նման ուսումը ինչպես հորդ անձրև նրանց վրա հոսեցնեին, նրանցից ոչ մեկը ոչ մի խոսք, ոչ կես խոսք, ոչ մի բան, ոչ մի նշույլ իրենց լսածներից չէին կարող մտքում պահել կամ հասկանալ»⁴:

Մյուս պատմիչների (Խորենացի, Փարպեցի, Կորյուն) նույնաբովանդակ արձանագրումների⁵ և այնպիսի տպավորություն է ստեղծվում, թե, կարծես, նախընթաց մեկդարյա շրջանում որևէ մեկը չի տեսել կամ չէր կարող տեսնել, որ խնդրի լուծման բանալին պետք է լիներ հայոց գրերի ստեղծումը, միջոցը՝ օտարալեզու կրթական համակարգն ազգային լեզվով դարձնելը, Աստվածաշնչից սկսած՝ քարոզչական նյութերը, անհրաժեշտ այլ գրականությունը թարգմանելը, եկեղեցիներում ասորերենը և հունարենը հայերենով փոխարինելը: Սա այն եզրահանգումը չէր, անշուշտ, որին կարելի էր գալ միայն հարյուր տարի հետո, ինչպես պատմիչներն են դա մատուցում՝ նույնիսկ դա որպես մտքի յուրատեսակ մի գյուտ⁶ ներկայացնելով: Դրանք այն խնդիրներն էին, որոնք պետք

⁴ Բ ու զ ա ն դ. 1968, 91:

⁵ Տե՛ս Խ ո Ր Ե Ն ա ց ի. 1991, 317, Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան. 1904, 13, 16, Կ ո Ր Յ ու ն. 1941, 40:

⁶ Կորյունը այդ «գյուտը»՝ որպես Մաշտոցի ներկայացրած խնդրի («հոգսի») պատասխան, վերագրում է «երանելի միաբանյալների աշխարհահոգ խորհրդին» (Կ ո Ր Յ ու ն. 1941, 42): Մովսես Խորենացին գրերի ստեղծման գաղափարը հստակ վերագրում է անձամբ Մաշտոցին (Խ ո Ր Ե Ն ա ց ի. 1991, 317): Արդի պատմագիտությունը, շրջանցելով քրիստոնեության ընդունման հետ նաև գրերի ստեղծման

է գիտակցվեին ու ձևակերպվեին քրիստոնեությունը պետական կրոն դարձնելու դեռ նախապատրաստական շրջանում, էլ չասած՝ այդ քայլը կատարելուց անմիջապես հետո: Առ այդ իրավացիորեն իր տարակուսանքն է հայտնում Ղևոնդ Ալիշանը. «Գուցե այն ատենէն ոմանք փորձեցին որևէ ձևով կամ կերպով՝ հայերէն կարդալու, գրելու հնարք կամ օտար լեզուաց տառերով գրել հայերէնն, վասն զի անկարելի թուի՝ թէ ամբողջ դար մի ժամանակի, ի Լուսաւորչէն մինչև իր թոռան թոռն թարգմանիչ Ս. Սահակ՝ մէկն մտածած չլայ այդպիսի բան մի ռամիկ ժողովրդեան հոգևոր օգտին համար, թող զուսումնականն»⁷: Եվ իրոք՝ այլ ժողովուրդներ, որպէս կանոն, այդպէս են վարվել քրիստոնեությունը որպէս պետական կրոն ընդունելիս⁸: Մեր՝ առաջինը լինելու հանգամանքն այս դեպքում բավարար արդարացում, բացատրություն չի կարող լինել, քանի որ խնդիրը ոչ թէ փորձի ու փորձառության, այլ պարզ տրամաբանության ու ակնհայտ տեսանելիության հարթության վրա էր: Պարզապէս, ժամանակի հայ քաղաքական միտքը, որոշակի իրողությունների հիմքով արած բացատրելի հաշվարկներով, չի տեսել դրա գործնական անհրաժեշտությունը⁹:

Այսինքն՝ եթե պատմիչները հավաստի և ճշգրիտ են IV–V դարերի սահմանազլխին Հայաստանի անմխիթար կրոնական իրավիճակի և այն շտկելու միջոցների հարցերում, ապա, գիտակցված թէ ոչ, չափազանցում են լեզվական խնդիրը՝ այն քրիստոնեության արմատավորման համար որպէս միակ խոչընդոտ համարելով: Դրանով, գիտակցված թէ ոչ, նաև բացարձակացվում է Աստվածաշնչի դերն ընդհանրապէս:

Մայրենի լեզվով Աստվածաշունչը և դավանական այլ ձեռնարկներ ունենալը, հայերենով ուսուցումն ու քարոզչության ապահովումն անհրաժեշտ, բայց նաև բավարար պայման չէր կարող լինել քրիստոնեության լիակատար ու վերջնական տարածման խնդրի լուծման համար: Հայաստանում լեզվական անհարմարության կողքին, որպէս առանձնահատկություն, կային ավելի կարևոր

օրինաչափ պահանջի հարցը, մի դեպքում՝ համարում է, որ հենց «IV դարի վերջերին էր հայկական գրերի ստեղծումը դարձել անհետաձգելի անհրաժեշտություն» (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն. 1984, 423), մյուս դեպքում՝ այդ «անհրաժեշտությունը» դիտարկվում է որպէս նույն շրջանում առաջացած «խայտաբղետ գրային իրավիճակի» հաղթահարման տեխնիկական մի խնդիր (Հայոց պատմություն. 2018, 501):

⁷ Ալիշան. 1920, 206–207:

⁸ Աստվածաշնչի հայերեն թարգմանության պատմությանը վերաբերող իր ուսումնասիրության մեջ դա օրինաչափ անհրաժեշտություն է համարում Մետրոպոլիտ Տեր-Մովսիսյանը՝ մատնանշելով մասնավորապէս գոթերի և սլավոնների օրինակը (տե՛ս Տէր-Մովսիսյան. 2018, 38):

⁹ Այլ առիթով մենք որպէս դրա բացատրություն առաջ ենք քաշել այսպիսի դրոյթ. անկախ ու միասնական ազգային պետության հովանու տակ՝ եկեղեցին իր իշխանությանը սպառնացող ներքին և արտաքին լուրջ վտանգներ չի տեսել, ուստիև նոր կրոնի աստիճանական, անցնում տարածման ընթացքը կտրուկ արագացնելու, ջանքեր ու ծախսեր ենթադրող քայլերի ու միջոցառումների չի դիմել (տե՛ս Սարգսյան. 2024բ, 64):

խոչընդոտող օբյեկտիվ հանգամանքներ, որոնց մասին, սակայն, պատմիչները կա՛մ շատ հստակ և ուղիղ չեն խոսում, կա՛մ չէին կարող խոսել: Մինչդեռ դրանք շատ լավ գիտակցվել ու դրանց հաղթահարման ուղղությամբ լուրջ քայլեր են արվել: Դրա ընդհանրական ապացույցը կարելի է համարել, թեկուզ, թարգմանականին փաստորեն զուգահեռ նաև ինքնուրույն առատ մատենագրության ստեղծումը (որ ամենևին բնորոշ չէ այլ ազգերի), որի մեջ, ահա, Ազաթանգեղոսի «Հայոց պատմությունը» քրիստոնեության տարածման ու ամրապնդման հարցում իր թեմատիկ նպատակամղվածությամբ և գործառության ղեկավարող անցքային է:

Նոր կրոնին խոչընդոտող ազգային առանձնահատկություններ

Ա) Ավելի քան կես հազարամյակ պետական սահմաններով ամփոփվող հայաստանյան բնակչության «միալեզու» լինելու մասին Ստրաբոնի (մ. թ. ա. 1-ին դար) վկայությունը, ըստ էության, Հայաստանը հարևաններից տարբերակող, բնութագրող մի հատկանիշի արձանագրում է¹⁰: Խորենացու մոտ տարբերակիչ նույն հատկանիշի մի քանի արձանագրումներն արդեն մի համակարգ են կազմում, որ արդեն ոչ թե բնակչության բնութագրման, այլ քաղաքական հանգամանքի իմաստ ունի¹¹: Այսինքն՝ առնվազն Արտաշիսյաններից սկսած, Հայաստանը, միայն լեզվական միատարրության հանգամանքով, իրոք, մի «միաձույլ էթնիկական թագավորության»¹², յուրատեսակ ազգ-պետություն էր¹³, ինչը տեսանելի էր «դրսից» ու շատ լավ գիտակցվում և իմաստավորվում էր «ներսում»:

Պետական սահմաններով առանձնացող հանրությամբ, եթե արդեն որպես պատմական փաստ դարեր շարունակ բնորոշվում է ազգային առանցքային հատկանիշ լեզվական միասնությամբ, դրան շաղկապված ու դրա շուրջ պետք է գոյանար նաև քաղաքակրթական, մշակութային, սովորութային, կրոնական հատկանիշ-բաղադրիչների տարբերակիչ այլ ընդհանրությունների մի համալիր: Այս հատկանիշ-որակներով կազմված, ժամանակի մեջ ամրացած ու ավանդաբար սրբագործված արժեքային համակարգի հիմքով ազգային ինքնությունը, դրանով պայմանավորված կենցաղը և այլն, դժվարությամբ պետք է նորություն ընդուներ, առավել ևս՝ այնպիսի արմատական, հեղափոխական վերափոխման տրվեր, ինչպիսին ենթադրում էր քրիստոնեությունը:

Բ) Հայաստանի մյուս առանձնահատկությունը նրա բնակչության մեծագույն մասի ազատ լինելն էր, ստրկատիրության խիստ ցածր մակարդակը: Այս խնդիրը հիմնավորապես ուսումնասիրված է¹⁴:

¹⁰ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն. 1971, 530, Հայոց պատմություն. 2024, 224:

¹¹ Այս խնդրի մասին ավելի մանրամասն տե՛ս Ս ա Ր Գ Ս Ե Մ Ն. 2019, 237:

¹² Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն. 1971, 707:

¹³ Ազգ-պետությունների առաջացումը որպես երևույթ բնորոշ է ուշ միջնադարին:

¹⁴ Անգամ խորհրդային գաղափարախոսականացված պատմագրությունն արձանագրել է, որ Հայաստանը «կլասիկ» ստրկատիրական հասարակարգ չի ունեցել (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն. 1971, 652, նաև՝ Մ ա ն ա ն դ յ ա ն. 1978, 416): Անգամ հարյուր հազարներով գերեվարվածները հիմնականում բնակեցվում

Գ) Պատմական նյութը հիմք է տալիս որպես հայաստանյան հասարակության մի այլ առանձնահատկություն կամ տարբերակիչ դիտել նրա ռազմունակությունը և ռազմականացվածության բարձր աստիճանը: Արտաշիսյան շրջանի համար հունահռոմեական աղբյուրները վկայում են զինվորականության վեցանիշ տպավորիչ թվեր¹⁵: Արշակունյաց շրջանում ևս նույն պատկերն է, մասնավորապես, ըստ «Ձորանամակի»¹⁶: Իսկ դրա հիմքը իրավացիորեն համարվում է Հայաստանում ազատ քաղաքացիական բնակչության մեծ տեսակարար կշիռը՝ ընդգրկելով գյուղացուց, շինականից, քաղաքաբնակից մինչև ողջ ազնվականությունը: Նկատի ունենալով հայկական ռազմուժի և զինվորականության կարևոր դերակատարումները տարածաշրջանում, մասնավորապես պարսկական և հռոմեական/բյուզանդական պատմության տարբեր դրվագներում՝ Հայաստանը արդի գիտության մեջ բնորոշվում է որպես «ռազմական ուժի մի ամբար», իսկ դրա հիմքը համարվում է տվյալ ժողովրդի «հերոսներ գնահատող մշակույթը»¹⁷:

Ներքաղաքական հարցերում ևս զինվորականությունը առանցքային գործոն էր: Այդ մասին վկայող մի արձանագրում կարելի է համարել Ազգաթանգեղոսի այն հաղորդումը, թե Տրդատը Գրիգորին Հայոց հովվապետ կարգելու հարցը լուծում է ոչ թե միանձնյա կամ պալատական վերնախավով, այլ հրավիրում է ամբողջ զորքը և ստանում նրա համաձայնությունը¹⁸: Նույն կերպ է վարվում նաև Արշակ թագավորը Ներսեսին կաթողիկոս դարձնելու դեպքում¹⁹: Աշխարհիկ կյանքը և զինվորականի զբաղմունքը հովվապետի բարձր պաշտոնից անվերապահ գերադասում են անգամ Լուսավորչի տան ժառանգները: Հուսիկ կաթողիկոսից հետո նրա որդիներ Պապը և Աթանագիները այդ հիմքով հրաժարվեցին կրոնական դառնալ և ստանձնել կաթողիկոսական

էին քաղաքներում՝ որպես ազատ բնակչություն (Հայ ժողովրդի պատմություն. 1971, 1659): «Հայկական զորքի գերակշռող մասը բաղկացած էր հասարակության ամենաստվար դասակարգի՝ համայնական գյուղացիության ներկայացուցիչներից» (Հայ ժողովրդի պատմություն. 1971, 688):

¹⁵ Հայ ժողովրդի պատմություն. 1971, 686:

¹⁶ Միայն հեծելազորի թիվը 84 հազար էր՝ չհաշված հետևակը (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն. 1984, 143): Ձորքի ընդհանուր քանակը գնահատվում էր 120 հազար, որին կարող էր ավելանալ նաև աշխարհազորը (տե՛ս Հայոց պատմություն. 2018, 401): Սրանք ժամանակի համար շատ մեծ թվեր են, եթե նկատի ունենանք, որ, ասենք, Ալեքսանդր Մակեդոնացու զորքը պարսիկների հետ առաջին ընդհարման ժամանակ չէր գերազանցում 40 հազարը (տե՛ս Советская историческая энциклопедия. 1961, 366):

¹⁷ «Բարձր լեռնային հովիտները, որոնք ձգվում էին Միջագետքի և Կովկասի միջև, ռազմական ուժի մի ամբար էին: Ինչպես ուշ շրջանի շվեյցարական վարձկանները կամ շոտլանդական լեռնականները, որ նկատելի էին երկու կայսրությունների (պարսկական և բյուզանդական – Ա. Ա.) բանակներում: Նրանք ծագում էին հերոսներ գնահատող մշակույթից» (Brown. 2013, 276):

¹⁸ Ազգաթանգեղայ Պատմութիւն Հայոց. 1909, 412:

¹⁹ Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, Ի չորս դպրութիւնս. 1933, 77:

պաշտոնը²⁰: Հոգևոր իշխանության հաջորդ «թագաժառանգ» Ներսեսը հայտնի զինվորական էր և ոչ մի կերպ չէր ուզում անցնել հոգևոր կյանքի: Նրան միայն բռնությամբ ստիպեցին դա անել և ստանձնել հոգևոր իշխանության դեկր²¹: Նախապես հաջող զինվորական էր նաև Մաշտոցը²²:

Անվանի պատմաբան Հակոբ Մանանդյանը խոսում է հոգևորականների «զինվորամուլ բարքերի» մասին (շատ կրոնավորներ թողնում էին հոգևոր ասպարեզը ու մտնում զինվորական ծառայության) և մատնանշում ընդունված եկեղեցական հատուկ կանոններ, որոնք այդ երևույթը կանխելուն էին ուղղված²³: Մշակույթի աստիճանի բարձրացված զինվորական զբաղմունքը հարգի էր այնքան, որ Ջավեն կաթողիկոսը (377–381 թթ.) քահանաներին հրահանգել կամ թույլ էր տվել («սովորեցրել էր») զինվորական զգեստ կրել²⁴: Դա կա՛մ տուրք էր՝ նրանց «զինվորամուլ բարքերը», զինվորական կյանքի նկատմամբ նրանց ձգտումները այդ կերպ մեղմելու, կա՛մ միջոց էր նրանց համար հեղինակություն ապահովելու՝ նրանց նկատմամբ հասարակական վստահություն առաջացնելու նպատակով:

Ազատ քաղաքացիական բնակչության հասարակական-քաղաքական դերի վճռորոշությունը և այդ հիմքի վրա զինվորական զբաղմունքի տարածվածության ու հարգի լինելու կայուն մշակույթը լուրջ խոչընդոտ էր քրիստոնեության ճանապարհին. զինվորական կոշտ կյանքը նույնպիսի կոշտ կայունություն էր ենթադրում նաև նրանց ավանդական պատկերացումներում ու վարքագծում:

Ղևոնդ Ալիշանը քրիստոնեության ընդունման առիթով հայաստանյան հասարակության համար այսպիսի արձանագրում ունի. «... երբ ողջոյն ազգ մի կրօնափոխ կրլլա՝ կարճ ժամանակի մէջ. մանաւանդ այնպիսի պնդակարծիք ազգ մի՛ ինչպէս Հայոցս. զորս՝ շարժելու և հնաւանդ կրօնքէն ի նորն փոխելու համար՝ (մարդկօրէն խօսելով) արտաքին մղող ոյժ մը այլ պէտք էր: Այս ոյժն էր հսկայակերպ Տրդատայ հզոր բազուկն Գրիգորի կակուղ ձեռաց աջակցեալ»²⁵: Իրավացի է քրիստոնեությանը դիմադրելու առումով Ալիշանի՝ հայությանը տված «պնդակարծիք» (բնականաբար, նկատի ունի ի տարբերություն այլ ազգերի) բնորոշումը, որի կրողը (բառիս ոչ բացասական, այլ «ավանդապահ» իմաստով²⁶) ազատ բնակչությունն էր, այդ հիմքի վրա բազմաքանակ զինվորականությունը՝ ազնվականության գլխավորությամբ: Ճիշտ չէ, սակայն, Ազաթանգեղոսին հետևելով, Ալիշանի արած պնդումը, թե Տրդատի

²⁰ Փաստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, ի չորս դպրութիւնս. 1933, 54:

²¹ Բուզանդը դա մեղմացնելով ներկայացնում է որպէս քրիստոնեական համեստության դրսևորում. տե՛ս Փաստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, ի չորս դպրութիւնս. 1933, 79:

²² Կ ո ղ ո լ ն. 1941, 37:

²³ Մ ա ն ա ն դ յ ա ն. 1978, հ. Բ, 359:

²⁴ Փաստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, ի չորս դպրութիւնս. 1933, 267:

²⁵ Ա լ ի շ ա ն. 1920, 95:

²⁶ Նույն այս առիթով մի այլ աշխատության մեջ Ալիշանը հայության համար օգտագործում է «բիրտ և հնապաշտ» բնորոշիչները (տե՛ս Ա լ ի շ ա ն. 1895, 474):

«հզոր բազուկը» ամբողջությամբ չեզոքացրեց այդ դիմադրությունը և «ողջոյն ազգ մի կրօնափոխ կըլլա՝ կարճ ժամանակի մէջ»:

Ըստ Մովսէս Խորենացու՝ Տրդատին այդպես էլ չի հաջողվում ո՛չ «սաստի» (ուժով), ո՛չ համոզելով դարձի բերել «մեծամեծ նախարարներից» սկսած մինչև «ռամիկների բազմությանը»: Դրանից ազդված ու հուսախաբ՝ նա ճգնակյաց կյանքի է անցնում: Նախարարները թունավորելով սպանում են քրիստոնեական հավատի թելադրանքով իրենց ազատությունների և աշխարհիկ բարքերի վրա բռնացող թագավորին: Եվ ահա, հայությանը բարձրագույն՝ «հանուրց հիւսիսականաց վեհագոյն»²⁷ (հյուսիսային բոլոր ազգերի մեջ վեհագոյն) գնահատականը տվող Պատմահայրը քրիստոնեությանը դիմադրելու հանգամանքով վերջին նախատիքներն է թափում նույն այդ ազգի գլխին. «Այլ զխստատութիւն կամիմ ասել, թէ և զամբարհաւածութիւն ազգիս մերոյ յիսկզբանցն և այսր. որպէս անհամբոյր բարւոյ և ճշմարտութեան անհարազատ, կամ թէ բնութիւն ունելով զբարձրայօնութիւն և զկամակորութիւն՝ ընդդիմանան կամաց թագաւորին յաղազս կրօնից քրիստոսականաց, զիտ երթալով կամաց կանանց և հարճից»: Ապա «Սուրբ Հոգու» խիստ խոսքերով դիմում քրիստոնեական հավատից խոյս տվող իր ազգին. «Ազգ թի՛ւր և դառնացող, ազգ, որ ոչ ուղղեաց զսիրտ իւր, և ոչ հաւատարմացաւ Աստուծոյ ոգի նորա: Արք Արամեանք, մինչև յե՛րբ էք ծանրասիրտք, ընդէ՛ր սիրեք զանրութիւն և զանաստուածութիւն»²⁸:

Փավստոս Բուզանդը քրիստոնեությանն ընդդիմանալու նույնպիսի ընդարձակ մի կոնտեքստում դարձյալ ամբողջ ազգին է մեղադրում՝ «կամակոր ազգ» կոչելով. «Ջկորստեան ճանապարհին՝ համարձակէին ի չարիս՝ կամօք գնացեալք, և կամօք լեալք որդիք բարկութեան. և առանց Աստուծոյ շրջէին յաշխարհիս կամակոր ազգ»²⁹ տանն Հայոց երկրին»³⁰:

Արշակունի հաջորդ գահակալներից որևէ մեկի ջերմեռանդ հավատի, քրիստոնեական բարեպաշտության մասին պատմիչները չեն խոսում: Առավել ևս՝ որևէ արձանագրում չունեն, թե նրանք ունեցել են Տրդատի՝ քրիստոնեական կրոնի տարածման հետ կապված մտահոգությունները և նախանձախնդրությունը: Մինչդեռ քիչ չեն հակառակ՝ աշխարհիկ վայելքներին տրվելու, ոչ քրիստոնեական վարքի մասին վկայությունները և այդ հիմքով հոգևոր գործիչների հետ թագավորների սուր հակասությունները: Այսպես՝ Վրթանես կաթողիկոսի դեմ, ըստ Բուզանդի, հեթանոսական սովորությունները գաղտնի պահող երկու հազար հոգի մահափորձ են կազմակերպում՝ երկրի թագուհու դրդմամբ՝ «վասն զի յանդիմանէր զնա սուրբն վասն գաղտնի շնութեան գիջութեան բարոյից պոռնկութեան»³¹: Հուսիկ կաթողիկոսը ոչ քրիստոնեական վարք ու բարքի համար շարունակ հանդիմանում էր Տիրան թագավորին և մյուս

²⁷ Խ ո Ր Ե Ն Ա Յ Ի. 1991, 358:

²⁸ Խ ո Ր Ե Ն Ա Յ Ի. 1991, 246–247:

²⁹ Նկատենք, որ նախատական այս խոսքերում Բուզանդի «կամակոր ազգ» բնորոշումը համընկնում է Խորենացու «կամակորութեանը»:

³⁰ Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, ի չորս դպրութիւնս. 1933, 43:

³¹ Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, ի չորս դպրութիւնս. 1933, 19–20:

«մեծամեծներին», մինչև որ հերթական նման մի դրվագում նրան թագավորի հրամանով սպանում են բրածեծ անելով³²: Հաջորդ Արշակ թագավորը նույնպես հեռու էր քրիստոնեական բարեվարքությունից՝ «ի վտիության»³³ ի շաղաշատության հատալու («թաղված էր վտիության ու մեղկության մեջ»³⁴): Իսկ Պապ թագավորն ընդհանրապես ծնված օրից նվիրվել էր դևերին և լցված էր դևերով³⁵, տառապում էր «ամոթալի ախտերով», հանդիմանվում էր Ներսես կաթողիկոսից, ինչի համար և Պապը նրան թունավորելով սպանեց³⁶:

Այսինքն՝ խնդիրը միայն գաղափարախոսական չէր: Կար մի երկրորդ շատ կարևոր հանգամանք ևս. նոր կրոնը մարդու՝ աշխարհիկ կյանքի, ազատությունների և իրավունքների, կենցաղավարման, ընդհանուր վարքագծի առումով խիստ սահմանափակումներ էր մտցնում բոլորի համար՝ շինականից մինչև նախարար, մինչև թագավոր ու թագուհի: Բոլոր խավերը, և հատկապես զինվորականությունը, այն գլխավորող ազնվականությունը դժվարությամբ պետք է հրաժարվեին ազատ կյանքի սովորական դարձած ռիթմից, իրենց բազում վայելքներից, խրախճանքներից, մարզական և այլ խաղերից, տոնախմբություններից, ընդհուպ՝ ազատ մտածողությունից, որոնք արգելում կամ դոգմաների իր համակարգով սահմանափակում էր նոր կրոնը:

Պատմիչները, որ շատ հստակ խոսում են քրիստոնեության տարածման լեզվական խոչընդոտի մասին, վերոնշյալ խոչընդոտների մասին, հասկանալի պատճառով, նույնքան հստակ ձևակերպված վկայություններ չէին կարող ունենալ: Նկատի առնելով կարծես թե չվիճարկվող այն տեսակետը, թե քրիստոնեությունն առաջին հերթին ճնշվածների, անազատների կրոն է եղել, ապա Հայաստանում դրանով գայթակղվող, դրան տրվող խավը խիստ սակավաթիվ պիտի լիներ, դիմադրողը՝ ծանրակշիռ ու հզոր: Բայց սա դեռ ամենը չէ:

Նյութի օտար և ուսմունքի բարդ լինելը

Ինչպես ասվեց, քրիստոնեության քարոզչության առաջին ձեռնարկը պետք է լիներ Աստվածաշունչը, որի թարգմանությունն էլ, բնականաբար, սկսվեց գրերի ստեղծումից անմիջապես հետո: Ըստ Կորյունի՝ դրանով միանգամից լուծվեցին բոլոր հարցերը. «Այն ժամանակ անպայման սքանչելի դարձավ մեր երանելի ու ցանկալի Հայաստան աշխարհը, ուր երկու հավասարակիցների ձեռքով հանկարծ, մի անգամից եկան հասան, հայաբարբառ, հայերենախոս դարձան օրենուսույց Մովսեսը՝ մարգարեական դասի հետ, և առաջադեմ Պողոսը՝ բոլոր առաքելական գնդով, Քրիստոսի աշխարհակեցույց Ավետարանի հետ միասին: Ի՛նչ սրտալիր ուրախություն էր այնտեղ այնուհետև, և ի՛նչ հաճելի տեսարան աչքի համար: Որովհետև մի երկիր, որ անունն անգամ չէր լսել

³² Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, ի չորս դպրութիւնս. 1933, 42–43:

³³ Տարբեր ընթերցվածներով աղավաղված այս բառը Ստ. Մալխասյանցը թարգմանել է՝ ընդունելով Ն. Բյուզանդացու ուղղումը (տե՛ս Բ ու լ գ ա ն դ. 1968, 324, ծթ. 88):

³⁴ Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, ի չորս դպրութիւնս. 1933, 115:

³⁵ Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, ի չորս դպրութիւնս. 1933, 218:

³⁶ Խ ո Ր Ե ն ա ց ի. 1991, 306:

այն կողմերի, ուր բոլոր աստվածային սքանչելի գործերը կատարվեցին, շատ շուտով, իսկույն իմացավ բոլոր եղած բաները, ոչ միայն ժամանակով կատարվածները, այլև առաջագույն հավիտենականությունը, և հետո եղածները, աշխարհի սկիզբը և վերջը և բոլոր աստվածային ավանդությունները»³⁷:

Վաղուց նկատվել է, որ այս խոսքը, ի թիվս բազմաթիվ այլ բնագրական աղերսների, բառացի նույնությամբ կա նաև Ազաթանգեղոսի բնագրում³⁸. «Այն ժամանակ երանելի, ցանկալի և անչափ սքանչելի եղավ մեր Հայոց երկիրը: Ինչպես Մովսեսը, որ միանգամից եբրայական բանակին օրենսուսույց էր եղել, ամբողջ մարգարեական դասի հետ և կամ ինչպես առաջադեմ Պողոսը բովանդակ առաքելական գնդով Քրիստոսի աշխարհակեցույց Ավետարանի հետ, նույնպես և սա (Գրիգորը) գալով, հասնելով, երևալով՝ հայերենաբարբառ, հայերենախոս դարձավ»³⁹:

Ազաթանգեղոսի մոտ դրանով, ըստ էության, փառավորվում է Գրիգորը՝ Հայաստանում քրիստոնեության վերջնական ու ամբողջական տարածումը ի կատար ածելը կայացած իրողություն ներկայացնելով: Ինչպես տեսանք, դա ոչ մի կերպ իրականությանը չի համապատասխանել: Կորյունի մոտ դրանով, ըստ էության, ներբողվում է Մաշտոցը՝ նրա ստեղծած գրերով Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը որպես քրիստոնեության վերջնական տարածման ու ամրապնդման միջոց ներկայացնելով: Սա նույնպես իրականությանը չի համապատասխանել: Երկու դեպքում էլ գործ ունենք գրական հնարքի՝ ժամանակի «քերթողական արվեստի» կիրառման, ոչ թե փաստի արձանագրման հետ: Երկու դեպքում էլ, սակայն, դա պատմիչների կողմից պատմական իրականության դեմ մեղանչում չէ, այլ որոշակի մի փաստի նշանակության բացարձակացմամբ «լսարանի» վրա ներազդելու, իրենց գործի հիմնական առաքելությունն ապահովող ազդու համարված միջոցի արդարացված կիրառում⁴⁰:

Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը քրիստոնեության լիակատար և վերջնական տարածման համար միակ ու բավարար պայման է համարում նաև Ղազար Փարպեցին⁴¹:

³⁷ Կ ո ղ յ ու ն. 1941, 57:

³⁸ Կորյունի և Ազաթանգեղոսի գործերի բնագրական աղերսների ամբողջական պատկերը տե՛ս՝ Բ ի լ զ ա ն դ ա ց ի. 1900, 36–139:

³⁹ Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս. 1983, 477:

⁴⁰ Կորյունը գրական նույն հնարքին է դիմում նաև աղվանական գրերի ստեղծումից հետո Աստվածաշնչի՝ այդ լեզվով թարգմանելու փաստի արձանագրման առիթով. «... երանելոյն Երեմիայի եպիսկոպոսի ի ձեռն առեալ՝ վաղվաղակի զաստուածային գրոց թարգմանութիւնս ի գործ արականէր, որով անդէն յակն թօթափել վայրենամիտ և դատարկասուն և անասնաբարոյ աշխարհն Աղուանից մարգարէագէտք և առաքելաճանօթք և աւետարանաժառանգք լինէին, և ամենայն աւանդելոցն Աստուծոյ ոչ իփք անտեղեակք» (Կ ո ղ յ ու ն. 1941, 70):

⁴¹ Տե՛ս Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց և Թուրթ առ Վահան Մամիկոնեան. 1904, 13–17:

Ոչ միայն այդպես չի եղել, այլև ժամանակին էլ այդպես չի համարվել իրականում⁴²:

Ինչ-որ պահի, կարծում ենք՝ հենց ի սգբանե, համարվել է, որ հետապնդվող քաղաքական խնդիրը լուծելու համար պետք է ավելի գործուն միջոցներ գտնել, ավելի արդյունավետ լծակներ ստեղծել, քան է Աստվածաշունչը (գումարած կրոնական այլ գրականությունը)՝ հայերեն թարգմանությամբ: Այսպիսի պնդման համար, ինչպես ասվեց, արդեն իսկ ընդհանրական ապացույց կարելի է համարել ինքնուրույն գրականության մեծ տեսակարար կշիռը ոսկեդարյան մատենագրության մեջ՝ երևույթ, որ գրերի ստեղծման կամ քրիստոնեության տարածման խնդրի լուծման ելակետով դժվար է գտնել այլ ժողովուրդների մեջ:

Անվանի հայագետ Մանուկ Աբեղյանը, ընդհանրապես մնալով Աստվածաշնչի թարգմանության նշանակությանը պատմիչների տված գնահատականների շրջանակում, անգամ դա ավելի ուժեղացնելով, երկու հակիրճ, կարելի է ասել՝ լուսանցային, սակայն ճշգրիտ դիտարկում ունի, որոնք իրենց կշռով իրականում շատ ավելին են, քան ներկայանում են նրա վերլուծության ամբողջական կոնտեքստում. «Դրսից եկած օտարը (նկատի ունի քրիստոնեական ուսմունքը – Ա. Ս.), հարկավ, այնպես շուտ ամենքին մոռացնել չէր կարող տալ հայրենի ավանդությունները, որոնց մի մասը մինչև վերջերս էլ (այսինքն՝ XIX–XX դարերում – Ա. Ս.) դեռ մնում էր իբրև ժողովրդական հավատք»⁴³:

Եթե անգամ նշված այդ դարերում հեթանոսությունից մաս էր պահպանվել որպես ժողովրդական հավատք, ապա պատկերացնել կարելի է, թե ինչպիսին պետք է լիներ դրա իրական կշիռը V դարում:

Նոր կրոնի դեմ ի սկզբանե հզոր մրցակից կար՝ ի դեմս դեռ գոյատևող հեթանոսական հավատալիքների՝ որպես որոշակիորեն ազգային դարձված «կուռ պաշտամունքային կառույց»⁴⁴, աստվածների՝ որոնք հայկական էին անուններով, կենսագրությամբ, հայրենի աշխարհագրական միջավայրի հետ կապված հրաշալի վիպական պատմություններով, առինքնող կերպարներով, «փորձված» զորությամբ, բոլորին հասկանալի ու սիրելի երգերով, բանաստեղծություններով, սրբագործված ծեսերով: Այլ երկրի աշխարհագրության, այլ ժողովրդի պատմությունների, անձանոթ կերպարների վրա կառուցված Աստվածաշնչով ներկայացող քրիստոնեությունն այս բոլոր առումներով ոչ միայն, իրոք,

⁴² Խորենացին, որ նաև քրիստոնեության հետ կապված հարցերում չափազանցությունների չի տրվում, իսկ Աստվածաշնչի թարգմանության հետ կապված կարևոր մանրամասներ է հաղորդում, խուսափում է նման ներբողական գնահատականից:

⁴³ Ա ք ե ղ յ ա ն. 1968, 106: Նույնպիսի արձանագրում է անում Լևոն Խաչիկյանը. «Նզովքը, արտաքսումը եկեղեցուց, յոթնամյա ապաշխարությունը և սահմանված այլ պատիժներն անգամ անգոր են եղել արմատախիլ անել հազարամյա հնությունից եկող հեթանոսական հավատալիքներն ու պատկերացումները ժողովրդի գիտակցությունից, և դրանք հարատևել են մինչև վերջին տասնամյակներն ու գրանցվել Հայաստանի մի շարք շրջաններում 19–20-րդ դարերի հայ ազգագրագետների կողմից» (տե՛ս Խ ա չ ի կ յ ա ն. 2012, 19):

⁴⁴ Հայոց պատմություն. 2024, 581:

օտար էր, այլև զգալիորեն զիջում էր գրավչության հարթության վրա: Դժվար է պատկերացնել, որ ժամանակի հայ մարդու համար որևէ սաղմոս ավելի սրտամոտ կլիներ, քան ասենք, Խորենացու ավանդամբ «Վահագնի ծնունդը», «խաղաղություն ու շենություն բերող» Տիգրանի վեպը, Արտաշեսի ու Սաթենիկի «սիրավեպը»: Դժվար է պատկերացնել, որ ժամերգություններն ավելի գրավիչ կլինեին, քան «թվեյաց երգերը», «վիպասանքը», «Գողթան երգերը», Նավասարդյան և այլ տոնահանդեսները, մարզական խաղերը, աստվածներին մատուցված զոհաբերության արարողությունները⁴⁵: Անգամ, դատելով լայն զանգվածների մեջ տարածված հայրենի հեթանոսական երգերի, զրույցների ու վեպերի մեզ հասած պատառիկներից, դրանց համեմատ աստվածաշնչային պատմությունները միապաղաղ էին, միանման, դրամատիզմով անչքի չընկնող, հուզական առումով թույլ և չէին կարող հաղթել մրցակցության մեջ: Հայրենականը, ոչ միայն հազարամյա ավանդույթի իներցիայի ուժով, այլև իր գրավչությամբ, ազգային թեմատիկայով, ծանոթ, նաև դյուրամարս լինելու հանգամանքներով ակնհայտորեն ավելի հարազատ ու գերադասելի պետք է լիներ ժամանակի հայ մարդու համար⁴⁶:

Եվ, այսուամենայնիվ, քրիստոնեությունը հաղթեց: Այս փաստին հանդիման, ի հեճուկս իր վերը բերված էպիզոդիկ, բայց ճշգրիտ վերապահումների, Մ. Աբեղյանը նույնպես համարում է, որ «սառույցը հալվեց» Սուրբ գրքի հայերեն թարգմանությամբ. «Այն, ինչ որ օտար լեզուներով հնարավոր չէր անել, շատ հեշտությամբ գլուխ էր գալիս հասկանալի հայերեն լեզվով ...»⁴⁷, «Հին կտակարանի երգերից ավելի նրա պարզ զրույցներն ու պատմվածքները ոչ միայն հասկանալի, այլև շատ հաճելի պիտի լինեին դեռ մանկական հայ մտքերին: Նրանք դյուրությամբ յուրացնելով այն՝ նույնիսկ միամտությամբ կապում էին իրենց երկրի այս կամ այն տեղի հետ ...»⁴⁸: Որպես նման օրինակներ մատնանշում է Նոյյան տապանը Արարատի վրա իջեցնելու, Հայաստանը «Թորգոմա տուն», հայերը՝ «Ասքանազյան ազգ» կոչելու փաստերը⁴⁹: Սակայն այս «կապերը» տեսնելը կամ ստեղծելը Աստվածաշնչի հետ «հայ մտքի դեռ մանկական լինելու», առավել ևս ժողովրդական «ստուգաբանության-հայտնազործության» արդյունք չէին կարող լինել: Ակնհայտորեն դա արել է եկեղեցին, արել է մտածված, Աստվածաշնչի տեքստի՝ այդ նպատակով մանրազնին

⁴⁵ Ոչ որպես իրողության արձանագրում, այլ ազգին ուղղված նախատինք, հենց այդպես էլ ձևակերպում է Բուզանդը. «Նրանք սիրում էին իրենց երգերը, առասպելները, վիպասանությունները, նրանց նկատմամբ փոթեռանդ էին, նրանց հավատում էին, նրանց մեջ հարատևում». – Բ ո շ ա ն դ. 1968, 91:

⁴⁶ Մեր այս վերլուծությունը, բնականաբար, կապ չունի երկու կրոններից մեկի կամ մյուսի նկատմամբ վերաբերմունքի կամ գերադասելիության խնդրի հետ: Միաստվածային քրիստոնեությունը հաղթեց մրցակցության մեջ (և ոչ միայն մեզ մոտ), ուրեմն այն իր որակներով ու հատկանիշներով լավագույնս բռնեց ժամանակի քննությունը (այս մասին տե՛ս Ս ա թ գ ս յ ա ն. 2023, 182–186):

⁴⁷ Ա բ ե ղ յ ա ն. 1968, 105:

⁴⁸ Ա բ ե ղ յ ա ն. 1968, 107:

⁴⁹ Ա բ ե ղ յ ա ն. 1968, 108:

ուսումնասիրությամբ ու մանրակրկիտ փնտրտուքով՝ հենց Մ. Աբեղյանի մատնանշած հայ իրականությանը ու հայ մարդուն Աստվածաշնչի «օտար» լինելու հանգամանքի խոչընդոտը հնարավորինս մեղմելու, նրան դրանում հարազատ, «ազգային» ինչ-որ բան տալու համար: Դրանք ժամանակի գիտական մտքի արգասիք են, օտար այդ նյութի մեջ ազգային ինչ-որ բան դնելու ջանքերի արդյունք, ուստիև ճիշտ չէ այդ հիմքով հայ միտքը «մանկական» գնահատելը⁵⁰: Չէ՞ որ Աստվածաշունչը հավակնում էր տալ բոլոր ազգերի ծագունաբանությունը, ուստիև հայ մարդը պետք է դրանում ոչ միայն գտներ իր հավաստի «ծննդյան վկայականը», այլ նաև տեսներ իր երկիրը, իր ազգի ինչ-որ նշանակալի դերակատարումը, ու այդ ամենը՝ հնարավորինս բարենպաստ դիրքերում ու հանգամանքներում: Սուրբգրային վերոնշյալ մի քանի տեղերի «հայկականացումը» չէր կարող լուծել նյութի «օտար» լինելու խոչընդոտի հիմնական խնդիրը:

Նույնքան կարևոր է Մ. Աբեղյանի երկրորդ դիտարկումը. «Բացի այդ՝ ոչ միայն ժողովրդի, այլև նույնիսկ շատ վանականների համար, հարկավ, դեռ ըմբռնելի չէին քրիստոնեական սկզբունքները»⁵¹:

Խոսքը վերաբերում է V դարասկզբին: Այս դեպքում կարճ ասած. եթե անգամ որոշակի հոգևոր կրթությամբ հոգևորականի համար քրիստոնեությունը որպես ուսմունք ըմբռնելի չէր, բնականաբար, այն շատ ավելի դժվարամարս ու անըմբռնելի պիտի լիներ մյուս բոլոր խավերի համար:

Այսինքն՝ իրականությունից շատ հեռու է Ագաթանգեղոսի Պատմությամբ մատուցվող այն տպավորությունը, թե Գրիգորի և Տրդատի ջանքերով քրիստոնեության տարածումը Հայաստանում մի հաղթարշավ էր և կարճ ժամանակում դարձավ լիակատար ու վերջնական: Տարբեր առիթներով պատմիչների վկայությունների շարքը կրոնական իրավիճակի մասին հակառակ իրողությունն է ներկայացնում: Բուզանդին վերապատմելով՝ որպես հիմք պետք է ընդունել հետևյալ իրականությունը. Հայաստանում քրիստոնեությունն ընդունվել էր «հարկադրաբար», «առանց ջերմեռանդ հավատի» և «համարվել մարդկային մոլորություն»: Հայ հասարակության՝ վերը ներկայացված առանձնահատկությունների ֆոնին ավելի քան բնական է, որ այլ կերպ չէր կարող լինել ամբողջ IV դարում և V դարի սկզբում⁵²:

⁵⁰ Աբեղյանը, հայկական միտքը «մանկական» կոչելով, ըստ էության, փորձում է դրանով բացատրություն գտնել նաև այն հարցին, թե ինչու քրիստոնեության պետական կրոն ընդունումից հարյուր տարի անց էլ նոր կրոնը խիստ անբավարար էր տարածված: Եթե դա վերաբերում է հայ քաղաքական մտքին, ապա դժվար է այն «մանկական» կոչել, որը V դարում դրեց և հրաշալի լուծեց ճակատագրական ու կենսական համազգային խնդիր:

⁵¹ Ա բ ե ղ յ ա ն. 1968, 106:

⁵² Խորենացին երկու անգամ արձանագրում է, որ թագավորական իշխանության թուլացումը հատկապես նպաստում էր «թաքնված» հեթանոսության ակտիվացմանը. «և որ ի նմա ղօղեալ աղանդն հեթանոսական, թագուցեալ յաւուրցն Տրդատայ մինչև ցայն ժամանակս, և ապա յայտնեցաւ ի վատթարել թագաւորութեանն Արշակունյաց ...» (Խ ո Ր Ե ն ա ց ի. 1991, 316): «Քանզի մնացեալ արմատ

Այսպիսով՝ հայաստանյան մոնոէթնիկ հասարակությունը, առանձնացված ու եռաշերտ պարսպված միալեզվությամբ, ազգային ինքնության կայացած արժեքային համակարգով, աշխարհիկ կյանքին սովոր ազատ բնակչությամբ, ռազմական գործի հարգի լինելու մշակույթով, զինվորականության բարձր հեղինակությամբ ու տեսակարար կշռով՝ ի սզբանե արդեն իսկ մի յուրատեսակ «ամուր ընկույզ» էր նոր մի վարդապետությամբ այդ ամենը մերժող կրոնի համար: Ուստիև՝ իրականությանը չի կարող համապատասխանել նաև պատմիչների այն պնդումը և գիտնականների այն եզրահանգումը, թե միայն Աստվածաշնչի թարգմանությամբ անմիջապես հաղթահարվեցին քրիստոնեության տարածման բոլոր խոչընդոտները, լուծվեցին բոլոր խնդիրները:

Աստվածաշունչը հայերեն ունենալը բավարար չէր քրիստոնեության վերջնական տարածման համար

Օտար ծագմամբ, օտարի պատմության վրա հենված, օտար կերպարներով Աստվածաշունչը, դրանով մատուցվող, անգամ կրոնավորների համար դժվար ըմբռնելի վարդապետությունը չէր կարող արդյունավետ աշխատել այնպիսի հասարակությունում, ինչպիսին հայկականն էր: Չէր կարող կարճ ժամանակում լուծել ավանդական հավատալիքների վերջնական մերժման, նոր կրոնի արմատավորման և մանավանդ՝ «ջերմեռանդ» դարձնելու հարցը, մինչդեռ դա նաև ազգային իշխանության պահպանման կենսական ու հրատապ քաղաքական խնդիր էր:

Աստվածաշնչում, քրիստոնեական ուսմունքը ներկայացնող թարգմանական-քարոզական և այլ գործերում, բնականաբար, ոչինչ չկար ու չէր կարող լինել ո՛չ հայ իրականության, ո՛չ, առավել ևս, հայկական աստվածությունների մասին: Դրանց հերքումը, մերժումը, «սուտ», «սնոտի», «անշունչ», «անզոր» լինելու մասին որևէ եկեղեցականի, քարոզչի «օդում» ասածը չէր կարող հավատ ներշնչել: Հայկական յուրահատուկ միջավայրում դա կարող էին անել հայրենական պատմության հետ կապված և ազգային այնպիսի վստահելի հեղինակություններ, ինչպիսիք որ, ըստ Ավետարանի, էին կամ ներկայացնում են Քրիստոսը և նրա առաքյալները՝ իրենց միջավայրում: Հայ մարդուն համոզելու ու նրան անվերադարձ ու ջերմեռանդ քրիստոնյա դարձնելու համար պետք էր նրան տալ վստահելի մի այլ հիմք, եղած ավանդականին մրցակից-այլընտրանք՝ ազգային հիմքի վրա՝ հայկական մի նոր «Աստվածաշունչ», մի նոր «Ավետարան»՝ ամբողջությամբ հայկական նյութով, Հայաստանի պատմության հետ սերտորեն կապված դեպքերով, հայաստանյան աշխարհագրությամբ, գրավիչ և հուզիչ ներգործուն պատմություններով, ազդու և համոզիչ ազգային կերպարներով: Պատկերավոր ասած՝ ստեղծվեր մի գործիք, որով պետք է ջարդվեր հայկական ավանդական ինքնության «ամուր ընկույզը», մաշեցվեր «պնդակարծիք» ու «կամակոր» հանրության դիմադրությունը: Նման խոստովանություն կամ արձանագրում, բնականաբար, չէր կարող անել մատենագիրներից որևէ մեկը:

դառնութեան հեթանոսական աղանդոյն ի ժամանակի անիշխանութեանն ի վեր երևեալ՝ ի բազումս տարածեցաւ ...» (Խ ո ռ ե ն ա գ ի. 1991, 340):

Սակայն այդպիսի ոչ բարդ ու ակնհայտ եզրահանգման չէր կարող չգալ ժամանակի քաղաքական միտքը՝ Կորյունի հիշատակած «Աշխարհահոգ խորհրդի»⁵³ կարգի մի ուղեղային կենտրոն՝ նման գործի մտահղացմամբ: Դրա համար լավագույն ատաղձը հենց Հայաստանում քրիստոնեությունը պետականորեն ընդունման շրջադարձային պատմական իրադարձություն-իրողությունը կարող էր լինել, որին պետք էր այնպիսի կերպարանք տալ, որ այն պատմական փաստերի չոր արձանագրումից վերածվեր գրավիչ, ազդու, համոզիչ, ինչ-որ տեղ՝ ազդեցիկ քարոզչական նյութի: Ազաթանգեղոսի Պատմությունն էլ հենց դրա վրա հյուսված, կառուցված մի այդպիսի յուրատեսակ ներգործուն լեզուն, ազգային «Ավետարան» պետք է լիներ, ճիշտ այնպես, ինչպես Քրիստոսի կյանքի ու գործունեության վրա կազմված Ավետարանը: Լեզունդի առանցքային կերպարները պետք է նույնքան և ավելի գունեղ ու համոզիչ լինեին հայկական միջավայրի համար, որքան աստվածաշնչային կերպարներն իրենց միջավայրում: Այն տարբերությամբ միայն, որ հայկական այդ «Աստվածաշունչը» կամ «Ավետարանը» ոչ թե կրոնական նոր մի ուսմունք պետք է ստեղծեր կամ մատուցեր, այլ ճանապարհի հարթեր, դառնար վստահելի մի կամուրջ, որով «գետի» հեթանոսական ափից հայ մարդը վստահ, համոզված կամ ակամա անցներ քրիստոնեական ափ:

Ե՞րբ կարող էին հայ քաղաքական միտքը, Հայոց եկեղեցին կամ նրա «Աշխարհահոգ խորհուրդը» գալ նման եզրահանգման. նախորդ շուրջ մեկ դարի փորձառության, թե՛ Աստվածաշնչի թարգմանության «փորձարկումից» ստացված չգոհացնող արդյունքի հիման վրա: Կարծում ենք՝ ավելի շուտ առաջին հիմքով:

Եթե շինականներից ոչ բոլորը և ոչ միշտ կարող էին առիթ ունենալ լսելու Աստվածաշնչի քարոզչությունը հասկանալի հայերենով, ապա նախարարների, թագավորի, թագուհու, այլ խոսքով՝ բարձր ազնվականության համար դա խնդիր չպիտի լիներ ամբողջ հարյուր տարի: Հայաստանում հունարեն և ասորերեն կրթությունը, բնականաբար, առաջին հերթին հենց այս դասին էր մատչելի: Եթե անգամ այդ լեզուներին չէին տիրապետում, ցանկության դեպքում դժվար չպիտի լիներ անձնական մի թարգմանիչ գտնելը: Սրան ավելացրած՝ գիտական ուսումնասիրություններով արձանագրված այն փաստը, որ Աստվածաշնչի՝ հայերենով մատուցման խնդիրը, այնուամենայնիվ, ինչ-որ չափով լուծվել է հընթացս՝ բանավոր զուգահեռ թարգմանությամբ կամ «այլալեզու» (հետերոլեզիկ) ընթերցմամբ: Դա տարածված է եղել այնքան, որ բանավոր թարգմանիչների մի ամբողջ շահագրգիռ խավ է գոյացել ընթացքում, ինչը կարող էր նաև արգելակող հանգամանք լինել հայերեն գրերի ստեղծման համար⁵⁴:

⁵³ Այսպես է բնորոշում (կամ անվանում) Կորյունն այն մարմինը, որը քննարկեց Մաշտոցի ներկայացրած խնդիրը և օրակարգում դրեց գիր ունենալու հարցը (Կ ո Ր Յ ո Ւ Ն. 1941, 42):

⁵⁴ Ст'у С а р к и с я н. 1980, 4, 20, Ս ա ր գ ս յ ա ն. 1990, 26–27:

Եզրակացություն

Գիտության մեջ միմյանց հետ կապվել են Ազաթանգեղոսի Պատմության ստեղծման շարժառիթի և թվագրման խնդիրները: Նկատի ունենալով այս գործի թեմատիկ բնույթը՝ դա բանական մոտեցում կարելի է համարել ընդհանրապես: Նման մոտեցմամբ հարցը դիտարկվել է ներեկեղեցական պայքարի հարթությունում՝ որպես ենթադրյալ «հունասեր» և «ասորասեր» կուսակցությունների մրցակցության մի դրսևորում, ինչը նեղացնում, փոքրացնում է ժամանակին այս գործին տրված կարևորությունը, իրական դերակատարությունը և կշիռը, ուստի և չի կարող թվագրման վստահելի հիմք հանդիսանալ (այդ հարցին առանձին անդրադարձել ենք)⁵⁵:

Նույն մոտեցմամբ, սակայն ոչ թե ներեկեղեցական, այլ ավելի լայն՝ համազգային հարթության վրա է գնահատում Ազաթանգեղոսի Պատմության ստեղծման շարժառիթների ու ժամանակի հարցը հայր Բարսեղ Սարգիսյանը: Նրա եզրահանգումը մեջբերենք ամբողջությամբ՝ կարևորելով երրորդ կետը.

Ա) «Որպես զի կարենար վերոյիշեալ առանձին գրութիւններն յաջողութեամբ ի մի ձուլել և Հայաստանի մէջ հանդիպած այն մեծագոյն դէպքին ամբողջական և կատարեալ պատմութիւն մի կազմել, յորում մեծապէս փայլեցան թէ՛ Գրիգոր, թէ՛ Տրդատ և թէ՛ Հռիփսիմեանք. այնպէս՝ որ ալ չի տեսնուէին անոր մէջ զգալի զանազանութիւնք և խտրոցք»:

Բ) «Որովհետև Հայոց ի քրիստոնէութիւն դառնալու այդ նշանաւոր դէպքն և դիւցազունքը՝ յընթացս պարագայից ամաց՝ հայ ժողովրդեան և վիպասանից բերանը տարբեր վիպաց և գրուցաց գոյներ և կերպարանք առած էին, քան որ ինչ գտանէին վերոյիշեալ գործոց մէջ և առ օտարազգի մատենագիրս, ուստի խմբագիրն ինքնին հայազգի լինելով և հայերէն դպրութեան և գրոց գիտովը զուարճացած, բնականաբար հարկ էր, որ զայնս ևս ներմուծէր իւր խմբագրութեան մէջ, թէ՛ զինքն, թէ՛ իւր ժամանակակից համազգիները գոհացնելու աղագաւ»:

Գ) «Որպէս զի այն գրութեանց ցամաք կմախքները մարմնաւորելով և գեղերեսելով ազգային և ազգայնոց առհասարակ ընդունելի և փարելի լինէր, յորում և լաւ հաջողել է: Այս բանս յետագայ պատմագրաց վերայ ունեցած այն ամենամեծ ազդեցութենէն իսկ քաջ կը տեսնուի»⁵⁶:

Այս գնահատական-մեկնաբանությունները, ընդհանուր առմամբ, նույնպես շատ համեստ են որպես Ազաթանգեղոսի Պատմության ստեղծման շարժառիթ և չեն կարող բավարար համարվել ժամանակի քաղաքական առաջնահերթության կոնտեքստում: Բ. Սարգիսյանի խոսքում առանցքային համարենք «Որպէս զի ... ազգային և ազգայնոց առհասարակ ընդունելի և փարելի լինէր» ձևակերպումը որպես տվյալ գործի շարժառիթի ձևակերպում: Այսինքն՝ որ այն գոյություն ունեցող տարբեր բաղադրիչներից թարգմանվել⁵⁷, կազմվել և խմբագրվել է, որպեսզի քրիստոնեության ընդունման հետ կապված նյութը

⁵⁵ Ս ա Ր գ ս յ ա ն. 2025, 3–24:

⁵⁶ Ս ա Ր գ ի ս ե ա ն. 1890, 270:

⁵⁷ Բ. Սարգիսյանը համարում է, որ այդ բաղադրիչները եղել են հունարեն:

և կերպարները մեկտեղված (Գրիգոր, Տրդատ, Հռիփսիմյաններ) ավելի սիրելի, ցանկալի լինեն հայության համար: Այս հիմքով այն կարելի է գնահատել որպես մեկ քայլ Ազաթանգեղոսի Պատմության ստեղծման համազգային, ոչ թե ներեկեղեցական նշանակության ընկալման, և կես քայլ՝ դրա, որպես կարևոր մի քաղաքական խնդիր, հետապնդելու մեկնաբանման ուղղությամբ: Թերևս, հենց այս ընկալմամբ է, որ Բ. Սարգսյանն անում է Ազաթանգեղոսի Պատմության ամենավաղ թվագրումը՝ 426–430 թվականներով (մի այլ տեղ՝ 420–430 թթ.)⁵⁸ այն դնելով, ըստ էության, Աստվածաշնչի թարգմանությանը զուգահեռ⁵⁹:

Քրիստոնեության լիակատար ու վերջնական տարածմամբ ազգային իշխանության (մասնավորապես եկեղեցու) պահպանման համազգային քաղաքական օրակարգի մեկնակետից պետք է դիտարկել Ազաթանգեղոսի Պատմությունը: Ըստ այդմ՝ այն եղել է առաջնային կարևորության մի ձեռնարկում՝ մի տեսակ պարտադիր «նախապայման»՝ Աստվածաշնչի թարգմանությամբ քրիստոնեության քարոզչության գործնական արդյունավետության ապահովման համար: Եղել է հիմնական «քաշող ուժ»՝ այդ խնդիրը լուծելու նպատակով ստեղծված ոսկեդարյան ողջ թարգմանական և ինքնուրույն գրականության համատեքստում: Քրիստոնեության վերջնական տարածման ու ամրապնդման համազգային քաղաքական խնդրի տրամաբանությամբ ու բանական մոտեցմամբ, ահա, այն պետք է արդեն մտահղացված լիներ նախապես, գրերի գյուտից առաջ: Եվ պետք է ստեղծվեր առնվազն Աստվածաշնչի թարգմանությանը զուգահեռ՝ որպես վերջինիս դեմ հայ ազգային ինքնության օբյեկտիվորեն առկա եռաշերտ պատենշի հաղթահարման, ինքնության նոր առանցքի ձևավորման համար ճանապարհի հարթող, դրանով իսկ՝ եկեղեցու ազգային իշխանության պահպանման մի գործիք:

*Աշոտ Սարգսյան – պ. գ. թ., Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի (Մատենադարան) V–XIV դարերի հայ մատենագրության ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ V–XIV դդ. պատմագրություն, հայ քաղաքական մտքի, Ղարաբաղյան շարժման պատմություն: Հեղինակ է 5 գրքի և 22 հոդվածի:
ashot.sargssyan@gmail.com*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Մ. 1968, Երկեր, հ. Գ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 694 էջ [Abegyan M., 1968, Collected Works, vol. III. Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, 694 p. (in Armenian)]:

⁵⁸ Տե՛ս Ս ա ռ գ ի ս ե ա ն. 1890, 319, 343:

⁵⁹ Արժևորելով Բ. Սարգսյանի՝ Ազաթանգեղոսի Պատմությանը վերաբերող ծավալուն հետազոտությունը՝ Լևոն Խաչիկյանը դրանով ապացուցված է համարում, որ այն նախաձեռնվել և կազմվել է «5-րդ դարի սկզբներին՝ հայկական այբուբենի ստեղծումից անմիջապես հետո» (տե՛ս Խ ա չ ի կ յ ա ն. 2012, 32):

Ազգաթանգեղոս. 1983, Հայոց Պատմություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, ԵՊՀ հրատ., 551 էջ [Agathangelos, 1983, History of Armenia, Modern Armenian Translation with Annotations by Aram Ter-Ghevondyan, Yerevan, YSU Publishing House, 551 p. (in Armenian)]:

Ազգաթանգեղայ Պատմութիւն Հայոց. 1909, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց, Տփղիս, Արագատիպ Մնացական Մարտիրոսյանցի, 474 էջ [Agathangelos. 1909, History of Armenia, Compiled by G. Ter-Mkrtchyan and S. Kanayants. Tiflis, Mnatsakan Martirosyants Publishing House, 474 p. (in Armenian)]:

Ալիշան Ղ. 1895, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց, Վենետիկ, Սուրբ Ղազար, 522 էջ [Alishan Gh., 1895, Ancient Belief or the Pagan Religion of the Armenians. Venice, St. Lazarus Publishing House, 522 p. (in Armenian)]:

Ալիշան Ղ. 1920, Արշալոյս քրիստոնէութեան Հայոց, երկրորդ տպագրութիւն, Վենետիկ, Սուրբ Ղազար, 280 էջ [Alishan Gh., 1920, The Dawn of Christianity among the Armenians, Second Edition. Venice, St. Lazarus Publishing House, 280 p. (in Armenian)]:

Along with the increase in the number of Syrian–Armenians in Armenia, cultural events have also increased year by year. Thus, on June 1, 2016, an “Anush” opera recital was organized at the Al. Spendiaryan National Academic Theater of Opera and Ballet for 30 Syrian–Armenian children.

On the occasion of International Children’s Day, on June 2, 50 Syrian–Armenian children attended the “Let’s Sing and Dance with Talin and Friends” concert program at the H. Paronyan State Theater of Musical Comedy.

On June 12, within the framework of the Chinese Culture Days in Armenia, a group of Syrian–Armenians attended the “My Dream” concert program of the Chinese Dance and Song Ensemble for People with Disabilities at the Al. Spendiaryan National Academic Theater of Opera and Ballet.

On June 26, 50 Syrian–Armenian youth participated in the Holy Liturgy celebrated in the Mother See of Holy Etchmiadzin with the participation of His Holiness Pope Francis of Roma⁸².

In December, 2017, at the initiative of the Youth for Development Foundation, with the support of the US Embassy in the Republic of Armenia, “World Vision” – Armenia, and “Mission Armenia”, the “12 Stories” exhibition opened in Yerevan, presenting the difficult path of 12 Syrian–Armenian women and girls during the

⁷⁸ ՀԱԱ, ֆ. 1786, գ. 3, զ. 44, թ. 19:

⁷⁹ ՀԱԱ, ֆ. 1786, գ. 3, զ. 34, թ. 16:

⁸⁰ ՀԱԱ, ֆ. 1786, գ. 3, զ. 34, թ. 18:

⁸¹ ՀԱԱ, ֆ. 1786, գ. 3, զ. 135, թ. 95, 96:

⁸² ՀԱԱ, ֆ. 1786, գ. 3, զ. 172, թ. 100:

war. The authors of the paintings are young contemporary Armenian artists. The aim of the exhibition was “to raise awareness of psychological violence and other problems among Syrian–Armenian women and girls, as well as to support them in overcoming these problems”⁸³.

On May 30, 2018, the Yerevan-based “Lalafa” vocal studio (artistic director: Hranush Tonoyan) sent a letter to the newly appointed Minister of Diaspora of the Republic of Armenia, informing that the studio will represent Armenia at the festival to be held in Loret de Mar, Spain, from June 25 to July 2. Hermik Keshishyan, a 2nd grade student of the studio, a Syrian–Armenian with excellent performance, is also included in the list of festival participants. He requested the support of the MD to cover the child’s travel expenses, since the parents, due to unemployment, are unable to do so⁸⁴, etc.

Sporting events

Aiming to promote the abilities of Syrian–Armenian youth who have sports skills or simply want to engage in sports, the responsible structures of the Homeland have spared no effort in taking care of the physical health of Syrian–Armenians. Thus, in 2012–2013, the “Dinamo” sports non-governmental organization of Armenia provided Syrian–Armenian youth with the opportunity to train in 10 sports for free⁸⁵. By order of the Chief of the Police of the Republic of Armenia, Vladimir Gasparyan, from January 20, 2013, the “Dinamo” sports organization offered Syrian–Armenian youth arriving in Armenia the opportunity to conduct free training in the following sports: boxing, Greco–Roman, freestyle wrestling, judo, table tennis, chess, kickboxing⁸⁶.

Soon, at the request of the MD, the management of the specialized children’s and youth sports school of the Olympic diving relay named after David Hambardzumyan also provided free training opportunities to Syrian–Armenians who wanted to⁸⁷.

It should be noted that our new Syrian–Armenians have already achieved significant success in the sports arena shortly after arriving in the Motherland. Thus, 11-year-old Serli Musheghyan, who, through the mediation of the MD, had the opportunity to train for 2 months free of charge at the specialized

⁸³ ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 9, թ. 29:

⁸⁴ ՀԱԱ, ֆ. 1786, ց. 3, գ. 159, թ. 95:

⁸⁵ Հայաստան–Ափյուռք չորրորդ համաժողովում (2011 թ., սեպտեմբերի 19–20, Երևան) արված առաջարկությունների կատարման վերաբերյալ. 2014, 73, ՀԱԱ, ֆ. 1786, ց. 1, գ. 137, թ. 1, Ձ ա ք ա ղ յ ա ն. 2018, 575:

⁸⁶ Սպորտով զբաղվել ցանկացող սիրիահայ երիտասարդները հնարավորություն կունենան շարունակել մարզումները նաև Հայրենիքում, 2013, 15 հունվարի. – <https://www.panorama.am/am/news/2013/01/15/police/607009>.

⁸⁷ 11-ամյա սիրիահայ աղջիկը ճանաչվել է Հայաստանի լողի պատանեկան առաջնության չեմպիոն, 2013, 17 հունվարի. – <https://news.am/arm/news/136266.html>.

children's and youth sports school of the Olympic diving relay named after David Hambardzumyan, was recognized as the champion of the Armenian youth swimming championship⁸⁸, etc.

Conclusions

Thus, during 2012–2018, the RA authorities, as a result of coordinated work with the MD and various international, Diaspora and local organizations, took care of and ensured the summer vacation of Armenian children who stayed in Armenia, as well as those who remained in Syria and experienced all the bitterness of war and the horrors of military clashes, in their native camps and rest homes, organized excursions to the sights of Armenia, organized educational, rehabilitation and healing, New Year's, cultural, festive, sports and other events. The above-mentioned were aimed at restoring the mental health, rehabilitation and integration of our compatriots in Armenia, creating favorable conditions for their settlement in the Homeland and for the successful integration of Syrian–Armenians into Armenia's life.

All these events, while aimed at restoring the mental health, strengthening and integration of our compatriots in Armenia, at the same time aimed to popularize, develop and deepen the skills and abilities of Syrian–Armenians with Western Armenian roots, creating favorable conditions for their settlement in the Homeland.

Knarik Avagyan – Doctor of History, Senior Researcher at the Department of History of Armenian Communities and Diaspora, Institute of History, NAS RA. Scientific interests: history of the Armenian community in the USA, Armenian Diaspora. Author of 1 monograph, sections published in various historical volumes and encyclopedias, as well as about 140 articles. ORCID:0009-0000-5496-4997. lira777@yahoo.com

REFERENCES

Babajanyan A. Photo Exhibition: The Newcomers: Syrians in Armenia. 2017, February 24. – <http://repatarmenia.org/en/events/a/photo-exhibition-the-newcomers-syrians-in-armenia> (Accessed on: 21. 09. 2025).

Entrance to “Mher Mkrtchyan” Theatre was Free for Syrian–Armenian Kids. 2012, December 28. – <https://armenpress.am/eng/news/704173/entrance-to-mher-mkrtchyan-theatre-was-free-for-syrian-armenian-kids.html> (Accessed on: 21. 09. 2025).

Meet & Greet: Syrian–Armenian Relief. This Campaign Will be Allocated Through Repat Armenia, Mission Armenia, Aleppo Compatriotic Charitable Organization and

⁸⁸ 11-ամյա սիրիահայ աղջիկը ճանաչվել է Հայաստանի լողի պատանեկան առաջնության չեմպիոն, 2013, 17 հունվարի. – <https://news.am/arm/news/136266.html>.

AGBU, 2016, November 23. – <http://repatarmenia.org/en/engage/inspiration/a/meet-greet-Syrian-Armenian-relief> (Accessed on: 21. 09. 2025).

Ovanisyan L. Minister for Diaspora Matters: 800 Families of Syrian–Armenians have Bought Real Estate in Armenia. 2012, August 3. – <https://www.eng.kavkaz-uzel.eu/articles/21782/> (Accessed on: 21. 09. 2025).

Ovanisyan L. Armenia Intends to Welcome 400 Children of Syrian–Armenians for Summer Holidays. 2012, August 9. – <https://www.eng.kavkaz-uzel.eu/articles/21846/> (Accessed on: 21. 09. 2025).

Syrian–Armenian Children to Partake in Christmas Celebrations. 2012, December 20. – <https://armenpress.am/eng/news/703256/Syrian-Armenian-children-to-partake-in-christmas-celebrations.html> (Accessed on: 21. 09. 2025).

Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1786, ց. 1, գ. 137, ց. 2, գ. 8, 72, 74, 76, 78, 111, 112, ց. 3, գ. 9, 24, 31, 32, 34, 35, 36, 44, 45, 57, 58, 59, 70, 71, 77, 85, 87, 95, 98, 100, 102, 105, 108, 111, 119, 132, 135, 159, 160, 172, 175, ֆ. 1800, ց. 25, գ. 1110 [National Archives of Armenia, f. 1786, c. 1, c. 137, c. 2, c. 8, 72, 74, 76, 78, 111, 112, c. 3, c. 9, 24, 31, 32, 34, 35, 36, 44, 45, 57, 58, 59, 70, 71, 77, 85, 87, 95, 98, 100, 102, 105, 108, 111, 119, 132, 135, 159, 160, 172, 175, f. 1800, c. 25, c. 1110 (in Armenian)]:

Արցախի, Սյունիքի և սիրիահայ 8–25 տարեկան երեխաներն ու երիտասարդները կմասնակցեն Շուշիի ճամբարին, 2013, 12 հունիսի. – <https://www.panarmenian.net/arm/news/162009/> (ներբեռնման օրը՝ 24.10.2025) [Children and Young People Aged 8–25 from Artsakh, Syunik and Syrian–Armenians Will Participate in the Shushi Camp, 2013, June 12. – <https://www.panarmenian.net/arm/news/162009/> (Accessed on: 24.10.2025) (in Armenian)]:

Զաքարյան Ֆ. 2018, Սիրիայի հայ համայնքի հետ տարուող աշխատանքները (2008–2015), «Սուրիոյ հայերը. Գիտաժողովի նիւթեր (24–27 Մայիս, 2015)», խմբ.՝ Անդրանիկ Տազխետան, Պէյրութ, Haigazian University Press, էջ 569–576 [Zakaryan F. 2018, Work with the Armenian Community of Syria (2008–2015), “Armenians of Syria: Conference Proceedings (May 24–27, 2015)”, ed.: Antranig Dakessian, Beirut, Haigazian University Press, p. 569–576 (in Armenian)]:

Համաժողովներ. Հայաստան–Սփյուռք 6-րդ համաժողով, ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի ղեկավար, սիրիահայերի հիմնախնդիրներով զբաղվող աշխատանքային խմբի ղեկավար Ֆիրդուս Զաքարյանի զեկույցը, «Հայաստանի Հանրապետությունում ապաստան գտած սիրիահայերին տրամադրվող աջակցության վերաբերյալ», 2017, 18–20 սեպտեմբերի, էջ 2. – http://www.mindiaspora.am/res/Hamajoxovner/2017/6/Eluytner/44/Firdus_Zakaryan.pdf (ներբեռնման օրը՝ 24.10.2025) [Conferences: 6th Armenia-Diaspora Conference, Report of Firdus Zakaryan, Chief of the Staff of the RA Ministry of Diaspora, Head of the Working Group Dealing with the Main Issues of Syrian–Armenians, “On the Support Provided to Syrian–Armenians Who Found Refuge in the Republic of Armenia”, 2017, September 18–20, p. 2. – http://www.mindiaspora.am/res/Hamajoxovner/2017/6/Eluytner/44/Firdus_Zakaryan.pdf (Accessed on: 24.10.2025) (in Armenian)]:

Հայաստան–Սփյուռք չորրորդ համաժողովում (2011 թ., սեպտեմբերի 19-20, Երևան) արված առաջարկությունների կատարման վերաբերյալ, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն, Երևան, 2014, 129 էջ [On the implementation of the recommendations made at the Fourth Armenia-Diaspora Conference (September 19-20, 2011, Yerevan), Ministry of Diaspora of the Republic of Armenia, Yerevan, 2014, p. 129 (in Armenian)]:

110 տոնածառ եւ 100 զոյգ ձմեռային կօշիկ՝ Սուրիահայ ընտանիքներուն, 2016, դեկտեմբեր 29. – http://www.archivioradiovaticana.va/storico/2016/12/29/110_տօնածառ_եւ_100_զոյգ_ձմեռային_կօշիկ%60_սուրիահայ_ընտանիքներուն:/hy-1282290 (ներբեռնման օրը՝ 24.10.2025) [110 Christmas trees and 100 Pairs of Winter Shoes for Syrian–Armenian Families, 2016, December 29. – http://www.archivioradiovaticana.va/storico/2016/12/29/110_Christmas_trees_and_100_pairs_of_winter_shoes_for_Syrian-Armenian_families./hy-1282290 (Accessed on: 24.10.2025) (in Armenian)]:

Հարյուր ութսուն սիրիահայ երեխաներ կհանգստանան Հայաստանի ճամբարներում, 2015, 31 հուլիսի. – <https://armenpress.am/arm/news/813916/haryur-utsun-siriahay-erekhaner-khangstanan-hayastani.html> (ներբեռնման օրը՝ 24.10. 2025) [One hundred and eighty Syrian–Armenian children will rest in the camps of Armenia, 2015, July 31. – <https://armenpress.am/arm/news/813916/haryur-utsun-siriahay-erekhaner-khangstanan-hayastani.html> (Accessed on: 24.10. 2025) (in Armenian)]:

Շարունակվում են սիրիահայերին ցուցաբերվող սոցիալական աջակցության ծրագրերը, 2017, 17 փետրվարի. – <https://www.pastinfo.am/hy/news/2017/02/17/Շարունակվում-են-սիրիահայերին-ցուցաբերվող-սոցիալական-աջակցության-ծրագրերը/510431> (ներբեռնման օրը՝ 24. 10. 2025) [Social Support Programs for Syrian–Armenians are Continued, 2017, February 17. – https://www.pastinfo.am/hy/news/2017/02/17/Social_Support_Programs_for_Syrian-Armenians_are_Continued/510431 (Accessed on: 24. 10. 2025) (in Armenian)]:

Շուրջ 600 սիրիահայ երեխաներ ամառային հանգիստը կանցկացնեն հանրապետության տարբեր ճամբարներում, 2013, 14 հունիսի. – <http://hayer.naysor.am/archives/8022> (ներբեռնման օրը՝ 24. 10. 2025) [About 600 Syrian-Armenian Children Will Spend their Summer vacation in Various Camps of the Republic, 2013, June 14. – <http://hayer.naysor.am/archives/8022> (Accessed on: 24. 10. 2025) (in Armenian)]:

Սիրիահայերին եւ կարիքավորներին Ամանորի շքանշաններով օգնություն է տրվելու, 2012, 21 դեկտեմբերի. – <https://news.am/arm/news/133473.html> (ներբեռնման օրը՝ 24. 10. 2025) [Aid to Syrian–Armenians and the Needy Will be Provided on the Eve of the New Year, 2012, December 21. – <https://news.am/arm/news/133473.html> (Accessed on: 24. 10. 2025) (in Armenian)]:

Սպորտով զբաղվել ցանկացող սիրիահայ երիտասարդները հնարավորություն կունենան շարունակել մարզումները նաև Հայրենիքում, 2013, 15 հունվարի. – <https://www.panorama.am/am/news/2013/01/15/police/607009> (ներբեռնման օրը՝ 24. 10. 2025) [Syrian-Armenian Youth who Want to Engage in Sports Will Have the Opportunity to Continue their Training in the Homeland, 2013, January 15. –

<https://www.panorama.am/am/news/2013/01/15/police/607009> (Accessed on: 24. 10. 2025) (in Armenian)];

11-ամյա սիրիահայ աղջիկը ճանաչվել է Հայաստանի լողի պատանեկան առաջնության չեմպիոն, 2013, 17 հունվարի. – <https://news.am/arm/news/136266.html> (ներբեռնման օրը՝ 24. 10. 2025) [11-year-old Syrian-Armenian Girl was Named Armenian Junior Swimming Champion, 2013, January 17. – <https://news.am/arm/news/136266.html> (Accessed on: 24. 10. 2025) (in Armenian)];

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍԻՐԻԱՀԱՅ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ
ՀԱՄԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՆՏԵԳՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ
(2012 – 2018 թթ.)

ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ

Ա մ փ ո փ ու մ

Բանալի բառեր՝ Սիրիա, համայնք, պատերազմ, հայրենադարձություն, ինտեգրացիա, ամառային ծրագրեր, ամանորյա միջոցառումներ, մշակութային միջոցառումներ:

2012–2018 թթ. Հայաստանի Հանրապետության իշխանությունները՝ Սփյուռքի նախարարության և միջազգային, սփյուռքյան ու տեղական տարբեր կազմակերպությունների հետ համակարգված աշխատանքների արդյունքում հոգացել ու ապահովել են Հայաստանում հանգրվանած, ինչպես նաև Սիրիայում մնացած և պատերազմի ողջ դառնություններն ու ռազմական բախումների սարսափները ճաշակած հայ երեխաների ամառային հանգիստը հայրենի ճամբարներում ու հանգստյան տներում, կազմակերպել են ուսուցողական, կազդուրման, առողջացման, ամանորյա, մշակութային, տոնական, սպորտային ու այլ միջոցառումներ, իրականացրել էքսկուրսիաներ Հայաստանի տեսարժան վայրեր և այլ ծրագրեր:

Այդ բոլոր միջոցառումները, ուղղված լինելով Հայաստանում մեր հայրենակիցների հոգեկան առողջության վերականգնմանն ու կազդուրմանը, միաժամանակ նպատակ ունեին հանրահռչակել, զարգացնել ու խորացնել արևմտահայ արմատներ ունեցող սիրիահայերի հմտություններն ու կարողությունները՝ բարենպաստ պայմաններ ստեղծելով հայրենիքում նրանց հաստատման ու հայաստանյան կյանքին հաջող ինտեգրման համար:

Քնարիկ Ավագյան – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայ գաղթօջախների և Սփյուռքի պատմության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ ԱՄՆ հայ համայնքի, Սփյուռքի պատմություն: Հեղինակ է 1 գրքի և շուրջ 140 հոդվածի: ORCID:0009-0000-5496-4997. lira777@yahoo.com

ИНТЕГРАЦИОННЫЕ ПРОГРАММЫ, РЕАЛИЗОВАННЫЕ В АРМЕНИИ
ДЛЯ АРМЯНСКИХ ДЕТЕЙ И МОЛОДЕЖИ ИЗ СИРИИ
(2012 – 2018 гг.)

КНАРИК АВАКЯН

Резюме

Ключевые слова: Сирия, община, война, репатриация, интеграция, летние программы, новогодние мероприятия, культурные мероприятия.

В 2012–2018 гг. благодаря скоординированной работе властей РА с Министерством диаспоры и различными международными и местными организациями был обеспечен летний отдых для репатриировавших из Сирии армянских детей, а также армян, оставшихся в Сирии в период военных действий. С этой целью были предоставлены лагеря и дома отдыха в Армении, организованы образовательные, реабилитационные, медицинские, новогодние, культурные, праздничные, спортивные и иные мероприятия, а также экскурсии для ознакомления с достопримечательностями Армении и т. д.

Названные мероприятия, направленные на восстановление психического здоровья и реабилитацию, одновременно способствовали развитию и углублению природных способностей и навыков сирийских армян с западноармянскими корнями, тем самым создавая благоприятные условия для их успешной интеграции в местную среду.

Кнарик Авакян – к. и. н., старший научный сотрудник отдела истории армянских общин и диаспоры Института истории НАН РА. Научные интересы: история армянской общины США, армянской диаспоры. Автор 1 книги и около 140 статей. ORCID:0009-0000-5496-4997. lira777@yahoo.com

ՀՏԴ: 929:008(479.25)(44) Անտուան-ժան Սեն-Մարտեն

DOI: 10.54503/0135-0536-2026.1-49

ԱՆՏՈՒԱՆ-ժԱՆ ՍԵՆ-ՄԱՐՏԵՆԻ
ԾՆՆԴՅԱՆ 235-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ԱՆՏՈՒԱՆ-ժԱՆ ՍԵՆ-ՄԱՐՏԵՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ
ԱՐԴԻՎԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ*

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ Սեն-Մարտեն, Արշակունիներ, Բուզանդ, Խորենացի, Այգեկցի, Մարտիրոս Երզնկացի, Ս. Օրբելյան, Հռիփսիմե, Մխիթարյաններ, հայ պատմիչներ:

Ամփոփում

Ընդունված կարծիք է, որ Ա.-ժ. Սեն-Մարտենը ֆրանսիական հայագիտության հիմնադիրն է: Սակայն առանց չափազանցության կարելի է ասել, որ նա նաև եվրոպական հայագիտության հիմնադիրն է: Չմոռանանք, որ XIX դարասկզբին ֆրանսերենը ինչ ազդեցություն ուներ եվրոպական մտավոր շրջանակների վրա: 1818 և 1819 թվականներին լույս տեսած Սեն-Մարտենի «Հիշատակարաններ Հայաստանի պատմության և աշխարհագրության» գրքի երկու հատորները Եվրոպայի արևելագետների հայացքը թեքեցին դեպի Հայաստան՝ Արևելքի առաջին քրիստոնյա երկրի հարուստ գրականությունն ու պատմությունը, որի իմացությունն ուներ համամարդկային արժեք:

Սեն-Մարտենի ապրած տարիներին Վենետիկի Սուրբ Ղազար կղզում Մխիթարյանները դեռ չէին հասցրել հայ միջնադարյան գրականության արժեքավոր գործերը ամբողջովին տպագրել, շատ կարևոր նյութեր դեռ գտնվում էին գրչագիր մատյաններում: Դեռ չէին գրվել բազմալեզու մեծարժեք բառարանները: Սակայն գիտական խիզախումն ու մարդկության լուսավորությանը ծառայելու սրբազան նպատակը Սեն-Մարտենին օգնեցին ստեղծելու հայագիտական գլուխգործոցներ, հայագիտության մեջ բացելու նոր ուղիներ, որոնցով հետագայում ընթացան շատ արժանավորներ:

Նախաբան

Ա.-ժ. Սեն-Մարտենի հայագիտական գործունեության առաջին շրջանը համընկնում է Նապոլեոն Բոնապարտի քաղաքական մեծ հեղաշրջումներին:

* Ներկայացվել է 24. II. 2026 թ., գրախոսվել է 05. III. 2026 թ., ընդունվել է տպագրության 20. III. 2026 թ.:

© Հեղինակներ, 2026: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:

Վերջինիս 1810 թ. հատուկ հրովարտակով Վենետիկի Ս. Ղազար կղզում գործող հոգևոր միաբանությունը ոչ միայն չի փակվում, այլև արտոնություն է ստանում կոչվելու ակադեմիա, որովհետև այն ուներ գիտական ուղղվածություն:



Սեն-Մարտենը արդեն 20 տարեկանում տիրապետում էր գրաբարին ու ջանադիր սկսում է ուսումնասիրել հայ հին ու միջնադարյան մատենագրության այն հուշարձանները, որոնք կարող էր ձեռքի տակ ունենալ: Ուսումնասիրում է նաև Փարիզի Ազգային գրադարանում պահվող հայկական ձեռագրերի հարուստ հավաքածուն, որը սկսել էր հարստանալ հատկապես Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս XV-ի հատուկ քաղաքականության շնորհիվ:

Իր գլուխգործոցով՝ «Հիշատակարաններ Հայաստանի պատմության և աշխարհագրության»

գրքի երկու հատորներով, Սեն-Մարտենը եվրոպական արևելագիտության ուշադրությունը հրավիրեց աշխարհի հնագույն քաղաքակրթության օրրաններից մեկի՝ Հայաստանի վրա: Եվրոպացի հայագետներից ոչ ոք այնքան բարձր չի գնահատել միջնադարի հայ պատմիչներին, որքան Սեն-Մարտենը:

Նա այն գիտնականն էր, որի կազմած ծրագրերը, հայագիտության օգտակարությունը համաշխարհային պատմագրության, գրականագիտության, արվեստի, աշխարհագրության, քաղաքագիտության, քրիստոնեական կրոնի պատմության խնդիրներում ցարդ մնում են ելակետային:

Հայագետը Ռուսաստանի կայսր Նիկոլայ Առաջինի հովանավորությամբ երազում էր 4 տարով գործուղվել Հայաստան՝ անձամբ հետազոտելու երկրի հնավայրերը՝ համոզված լինելով, որ այնտեղ կհայտնաբերի բազում գանձեր աշխարհի համընդհանուր գիտության համար:

Ա.-ժ. Սեն-Մարտենի կյանքը

Սեն-Մարտենի կյանքի և գործի մասին գրվել են մի շարք հոդվածներ: 1881-ին Թիֆլիսի «Փորձ» պարբերականում Քերովբե Պատկանյանը տպագրում է ընդարձակ հոդված, որը կոչվում է «Հայագետ Սեն-Մարտեն, նորա կենսագրությունը և գրաւոր երկասիրությունները»¹: Սեն-Մարտենի կյանքի մասին պատմող հաջորդ աղբյուրը Գ. Զարբհանայանի «Ուսումնասիրությունը հայ լեզուի եւ մատենագիտութեան Յարեւնուտս (ժԴ-ժԹ դար)» աշխատության համապատասխան հատվածն է, որը լույս է տեսել Վենետիկում 1895-ին²: 2014-ին հրատարակվել է Ա. Դոլուխանյանի «Ա.-ժ. Սեն-Մարտենը ֆրանսիական հայագիտության հիմնադիր» մենագրությունը³: 2025-ին «Հայկազուններ» պարբերականում տպագրվել է

¹ «Փորձ» (Տիֆլիս), 1881, 1-18:

² Ուսումնասիրությունը հայ լեզուի եւ մատենագիտութեան Յարեւնուտս (ժԴ-ժԹ դար). 1895, 170-187:

³ Դոլուխանյան. 2014:

Է. Բաղդասարյանի «Սեն-Մարտենը ֆրանսիական հայագիտության հիմնադիր» հոդվածը⁴:

Սակայն բոլոր հոդվածների հիմքում ընկած է Սեն-Մարտենի արժանավոր աշակերտ Մարի Ֆելիսիտե Բրոսսեի շատ ծավալուն ներբողական բովանդակություն ունեցող կենսագրականը⁵:

Անտուան-ժան Սեն-Մարտենը ծնվել է 1791 թ. հունվարի 17-ին վաճառականի ընտանիքում՝ Փարիզի շրջակայքում գտնվող բնակավայրում: Գրեթե մանուկ՝ նա ականատես եղավ ֆրանսիական հեղափոխության շարժումներին, ամբոխի ջարդարար հակումներին, տեսավ վրեժի ու արյան ծարավի մարդկանց արարքները և ատեց այդ ամենը: Հայրը նրան պատրաստում էր առևտրական բնագավառի համար, սակայն ընտանիքի բարեկամ մի բանկիր համոզում է հորը չթողնել որդուն իր մտավոր հնարավորություններից ցածր բնագավառի նվիրվելու: Ապագա հայագետը չափազանց աշխատասեր էր, կենցաղում չափավոր և այդպիսին էլ մնաց մինչև կյանքի վերջը:

Սեն-Մարտենը Փարիզի Quatre-Nations վարժարանում ուսման մեջ այնպիսի առաջադիմություն է ցուցաբերում, որ գերազանցում է իր ուսուցչին: Վերջինս խոստովանում է. «Ես հազար բան եմ սովորում այս երեխայից»⁶:

Սեն-Մարտենն արագորեն յուրացնում է արաբերենը և հայերենը: Գրաբարի այդքան արագ յուրացումը շատ բարդ էր այն ժամանակների համար, որովհետև դեռ լույս չէր տեսել Հարություն Ավգերյանի հայ-գաղիերեն բառարանը: Արդեն 21 տարեկանում նա զգալի առաջադիմություն է ցուցաբերում պարսկերենի, տաճկերենի, ասորերենի, վրացերենի յուրացման բնագավառներում: Անխոնջ աշխատասիրությամբ յուրացնում է նաև զենդերենը:

Հայաստանը և վերջինիս մատենագրությունը գիտնականի համար դառնում է հենակետ, որտեղից նա իր հետազոտական հայացքը տարածում է պարթևների, մարերի, ասորիների, քաղդեացիների, քրդերի, Անատոլիայի հույների, լազերի, կոլխիդացիների, իբերների, աղվանների վրա. «Նրա բնագավառն էր այդ, քանզի նա Ասիայի այդ լայնարձակ հատվածի մատենագրության տերն էր»⁷:

Սեն-Մարտենին միանգամից մեծ հռչակ է բերում 1818 և 1819 թվականներին հրատարակված «Հիշատակարաններ Հայաստանի պատմության և աշխարհագրության» աշխատությունը:

Հայագետը եվրոպական արևելագիտության առաջ բացում է մի հինավուրց երկրի հարուստ պատմական անցյալի և մատենագրության դռները: Նշանավոր չինագետ Աբել Ռեմյուզայի մարգարեությունն իրականանում է, և Սեն-Մարտենը դառնում է առաջին մեծության հայագետ ու արևելագետ⁸:

Մինչև XVI դարի սկիզբը հայոց պատմությունն ու մատենագրությունը բոլորովին անձանոթ էին եվրոպացիներին:

⁴ «Հայկագույններ» (Երևան), 2025, № 10, 54–57:

⁵ “Notice historique sur M. A.–J. Saint–Martin”. 1833, I–XXII.

⁶ “Notice historique sur M. A.–J. Saint–Martin”. 1833, II.

⁷ “Notice historique sur M. A.–J. Saint–Martin”. 1833, IV.

⁸ Դ ո լ ո լ խ ա ն յ ա ն. 2014, 11:

Պապական Հռոմը ցանկանում էր կաթոլիկությունը տարածել Հայաստանում: XVI դարի սկզբում Ալեքսանդր Յոթերորդ պապը կամեցավ Հռոմում հիմնել մի գիմնազիա, որում բացառապես հայ երեխաներ պետք է սովորեին: Այդ հարցում Հռոմի պապին օգնում էին ֆրանսիացի հոգևորականները: Կարդինալ Ռիշելյեն համոզում էր Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս XIII-ին հավաքել հայկական գրքեր և դրանք տպագրել արքունական տպարանում: 1633-ին Փարիզում հրատարակվում է հայ-լատիներեն բառարան, իսկ 1789-ին Փարիզում՝ Արևելյան կենդանի լեզուների դպրոցում, բացվում է հայոց լեզվի ամբիոն:

1826–1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի հետևանքով Արևելահայաստանը միանում է Ռուսական կայսրությանը: Քրիստոնեական կայսրությանը Հայաստանի միանալու փաստում Սեն-Մարտենը տեսնում է իր հայագիտական ծրագրերի իրականացման հնարավորությունը: Նա նշանավոր աշխարհագրագետ Վ. Հումբոլտի միջոցով դիմում է Նիկոլայ Առաջինին՝ նյութական օգնության համար: Ծրագրում էր գիտական ճամփորդություններ իրականացնել Մեծ Հայքում ու Ռուսաստանի այն բազմաթիվ գավառներում, ուր ապրում էին հայեր: Կամենում էր ֆրանսերենով ունենալ կարևոր 20 հայ պատմիչների գործերը, անհրաժեշտ էր համարում պեղել Հայաստանի հնավայրերը, ուսումնասիրել երկրի ժայռապատկերներն ու վիմագիր արձանագրությունները: Նրան հատկապես հետաքրքրում էին Արտաշատ, Արմավիր, Վաղարշապատ քաղաքները: Նպատակ ուներ այցելել Վան, Կարս, Էջմիածին, մի քանի ամսով կանգ առնել Կոստանդնուպոլսում, այցելել նաև Տրանսիլվանիայի, Տրիեստի ու Վենետիկի հայերին: Նպատակ ուներ անձամբ ուսումնասիրել Պետերբուրգի, Մոսկվայի, Աստրախանի գրադարաններում պահվող հայկական գրական հուշարձանները: Նիկոլայ Առաջին կայսրին ուղղված դիմումի մեջ նա գրում է. «Ահա այս է, որ ինձ խրախուսում է Ձեր հետ խոսել Մեծ Հայաստանի ուսումնասիրության արժանի գավառները ճանապարհորդելու դիտավորության մասին, որ *մարդկային ազգի օրրան է եղած և որին կարևորություն են տալիս միանգամայն կրոնի և պատմական հիշատակները* (ընդգծումը մերն է – Ա. Դ.)»⁹:

Հայագետի նամակին պատասխանել է Ռուսաստանի արտաքին գործերի նախարարը, որը խոստացել է նյութական աջակցություն, միայն թե երկրի քաղաքական վիճակի կայունացումից հետո, պատերազմի աղետներին հաջորդող վտանգներից խուսափելու համար մի քանի տարի անց:

Ավա՛ղ, Սեն-Մարտենի այդքան կարևոր գիտական ծրագիրն ընթացք չստացավ՝ հայագետի վաղաժամ մահվան պատճառով: Նա մահացավ խոլերայից՝ 1832-ի հուլիսի 16-ին, երբ ընդամենը 41 տարեկան էր:

Հիշատակի ներբողական խոսքում Մարի Բրոսսեն՝ նրա աշակերտը և վերջինիս գործի փայլուն շարունակողը, Սեն-Մարտենին համարում է հանճարեղ գիտնական և արդեն կյանքից հեռացած ուսուցչին դիմում է հետևյալ խոսքերով. «Պատվելի՛ ուսուցիչ, եթե Ձեր հիշատակը կարիք ունի այնպիսի հոյակապ հուշարձանի, ինչպիսին Ձեր գործերն են, այդ հուշարձանը Ձեր բարեկամների

⁹ «Արձագանք» (Թիֆլիս), 19. XII. 1893:

սրտերում է, նրանց սրտերում, որոնք իրենց անձի համար պատիվ են համարում Ձեր աշակերտը լինելը»¹⁰:

Հայաստանի պատմությունը, գրականությունն ու աշխարհագրությունը «Հիշատակարաններ Հայաստանի պատմության և աշխարհագրության» գրքի երկու հատորներում

Այս կոթողային աշխատությունն ունի շատ խոսուն նախաբան, որում ասվում է, թե Մեծ Հայք անունը կրող երկիրը, որը թուրքերը, պարսիկներն ու ռուսները բաժանել են իրենց գերիշխանության ներքո, տարածվում է երեք հարյուր մղոնի վրա՝ Եփրատից մինչև Կասպից ծովը թափվող Քուռի գետաբերանը, Վրաստանից և Կովկասյան լեռներից մինչև Դիարբեքի սահմանները: Այդ տարածքում չկա մեկ ուրիշ լեզու, քան հայերենը, բացի այն մասերից, որտեղ բնակվում են մահմեդականները: Սակայն գյուղերում ապրող մահմեդականները ևս խոսում են հայերեն խոսակցական լեզվով: Այդ նույնը կարելի է ասել Փոքր Հայքի, Կիլիկիայի ու Շիրվանի մասին¹¹:

Նկատելի է, որ մեծ թվով երկրներում, ուր հայերը տարածված են և դեռ պահպանում են իրենց լեզուն, կարևոր դեր են կատարում իրենց բնակության երկրների ու եվրոպացիների փոխհարաբերությունների միջև, հատկապես, երբ գիտակցվում է, թե Պարսկաստանի ու Թուրքիայի բանկային գործերում և առևտրում այլ երկրների հետ գործարքները կատարվում են համարյա միշտ հայերի միջոցով:

Հայերը IV դարից մինչև XIX դարը զարգացրել են հայ գրականությունը իր բոլոր ժանրերով և աշխարհի տարեգրություններում արձանագրել են եզակի փաստ՝ նրանք հայերենով տպարաններ ունեն Ամստերդամում, Լայպցիգում, Վենետիկում, Լիվոռնոյում, Լեհաստանում Լվովում, Կոստանդնուպոլսում, Ջնուսնիայում, Ռուսաստանի տարբեր քաղաքներում, իրենց եկեղեցու գլխավորի նստավայր Էջմիածնում, Մադրասում, Նոր Ջուղայում, Մարսելում և այլ վայրերում¹²:

Հայաստանի պատմիչները սեղմ ձևով խոսել են նաև Արևելքի երկրների մասին, որը լրացնում է բավականին բացեր Ասիայի երկրների տարեգրություններում:

Սեն-Մարտենը հիացմունքով է խոսում V դարում ձևավորված հայ թարգմանչական դպրոցի մասին: Դրա շնորհիվ հիանալի ձևով թարգմանվեց Աստվածաշունչը ըստ Յոթանասնից, հայերենով ներկայացվեցին Պլատոնի, Արիստոտելի գործերը, Եվսեբիոսի եկեղեցական պատմությունը, քրիստոնեական համընդհանուր եկեղեցու հայրերի գործերը: Այդ թարգմանություններն աչքի են ընկնում մանրակրկիտ ճշգրտությամբ: Ավելի ուշ Հայաստանն ունեցավ Հիպոկրատի և Գալենի երկերի թարգմանությունները, ինչպես նաև Հոմերոսի պոեմների ամբողջական թարգմանությունները:

¹⁰ “Notice historique sur M. A.-J. Saint-Martin”. 1833, XXI.

¹¹ Դ ո լ ո լ խ ա ն յ ա ն. 2014, 25:

¹² Դ ո լ ո լ խ ա ն յ ա ն. 2014, 27:

Պատմահայր Խորենացին իր «Հայոց պատմության» մեջ հաճախ է վկայում հույն մատենագիրներին, ինչպես՝ Դիոդորոս Սիկիլացուն, Հովսեպոսին, Բերոսոսին, Աբիդենոսին, Կեփաղիոնին, Օլիմպոդորոսին, Մանեթոսին, Հուլիոս Աֆրիկանոսին, Փլեգոնիոսին և քիչ հայտնի շատ ուրիշների: Ստեփանոս Սյունեցին՝ Սյունիքի արքեպիսկոպոսը, հունարենից թարգմանեց սուրբ Գրիգոր Նյուսացու և այլ աստվածաբանների երկեր:

XI դարի կեսերին Արշակունիներից սերող Հայաստանի իշխան Գրիգոր Մագիստրոսը, որը հայտնի էր իր գիտելիքներով ու զինվորական տաղանդով, թարգմանեց հույն մաթեմատիկոսների բազում գրքեր: Ասորական գրականությունը կարող է նպաստ ստանալ հայկական թարգմանություններից՝ ինչպես քաղաքական, եկեղեցական, այնպես էլ հայրաբանական գծով:

Սեն-Մարտենը ֆրանսիացի նշանավոր ավեստագետ Բ. Հաուլեից շատ առաջ ներկայացնում է, թե ինչ նշանավոր փաստեր կան Եղիշեի պատմության մեջ զրադաշտական կրոնի վերաբերյալ, որոնք բացակայում են զենդերենով պահպանված Ավեստայի բնագրում:

Նա նշում է, որ հայերենով պահպանված են մեծաքանակ գործեր՝ նվիրված զանազան աղանդների:

Հայագետը գրաբարը համարում է գիտական լեզու, որով ստեղծվել է բազում ժանրերով հարուստ գրականություն:

Սեն-Մարտենի «Հիշատակարաններ Հայաստանի պատմության ու աշխարհագրության» երկհատոր գիրքը լայն ընդունելություն է գտել Եվրոպայում և Ռուսաստանում: Բավական է հիշել, որ շատ տասնամյակներ անց Բրոկհաուզ-Էֆրոնի «Հայաստան» ծավալուն հոդվածի հիմքում ընկած է Սեն-Մարտենի վերոհիշյալ աշխատությունը¹³:

Այսօր թուրք, ինչպես նաև ադրբեջանացի առանձին գիտնականներ ջանքեր չեն խնայում ապացուցելու, թե Արցախը միշտ եղել է ադրբեջանական տարածք: Այդօրինակ հակագիտական հայտարարությունների փաստացի հերքումը կարելի է գտնել դեռևս 1818-ին լույս տեսած Սեն-Մարտենի գլուխգործոցում: Նա չի մոռանում նշել, թե լեռնային Արցախում XIX դարի սկզբին կան փոքրիկ, ինքնուրույն իշխանություններ, որոնց հայ տերերն իրենց կոչում են մելիքներ¹⁴:

Հայագետը մեզ է ավանդում Գանձակ քաղաքի անվան բացատրությունը: Գանձակ տեղանունն առաջացել է հայերեն գանձ բառից, որովհետև, անկասկած, այդպես է կոչվել հայոց հին թագավորների գանձերն այդ քաղաքում պահվելու պատճառով¹⁵: Իսկ Նախիջևան բառը համարում է այն վայրի անունը, ուր առաջին անգամ իջևանել է Նոյը:

«Հիշատակարանների ...»-ի առաջին հատորի երկրորդ հատվածում ևս հայագետը լայնորեն օգտագործում է Դիոդորոս Սիկիլացու, Ստրաբոնի, Տակիտոսի, Քսենոփոնի, Պոլիբիոսի, Հովսեպոսի, Աբուլֆարաջի և օտարագրի այլ պատմիչների հաղորդածը Հայաստանի պատմության մասին: Սեն-Մարտենը բերում է այնպիսի փաստեր, որոնք անհայտ էին: Նրա գրքից ենք իմանում, թե որտեղից

¹³ Брокгауз, Ефрон. 1890, 124.

¹⁴ Saint-Martin. 1818, 34.

¹⁵ Saint-Martin. 1818, 150.

է վերցրել Մուրացանն իր գլուխգործոցի՝ «Գևորգ Մարզպետունի» պատմավեպի գլխավոր հերոսի Մարզպետունի տոհմանունը: Այդ տոհմանունն առկա է արաբական աղբյուրում, որը հաղորդում է Սեն-Մարտենը՝ «général George Marbedouni» «գորահրամանատար Գևորգ Մարզպետունի»¹⁶:

«Հիշատակարաններ ...» գրքի առաջին հատորի վերջում հայագետը տեղադրել է ժամանակագրական աղյուսակներ. դրանք վերաբերում են Հայաստանի թագավորական բոլոր գերդաստաններին՝

I դինաստիան – Հայկյաններ,

II դինաստիան – Արշակունիներ,

Հայաստանի մարզպաններ,

Բյուզանդական արքունիքից և արաբական խալիֆայից կարգված կառավարիչներ,

III դինաստիան – Բագրատունիներ

Բագրատունիներ Կարսի թագավորության,

Բագրատունի արքաներ հայկական Աղվանքի,

Վասպուրականի թագավորներ Արծրունիներից,

Մինչև Ռուբինյանները նշվում են Հայաստանի տարբեր մահմեդական կառավարիչներ, էմիրներ,

IV դինաստիան – Ռուբինյաններ:

Այնուհետև Սեն-Մարտենը թվարկում է Հայաստանի կաթողիկոսներին՝ սկսելով Գրիգոր Լուսավորչից մինչև Ղուկաս Արզրումեցի (1780):

1440 թվականից սկսած՝ թվարկվում են Սսի կաթողիկոսները՝ մինչև Թորոս III-ը (1784):

Գրքի երկրորդ հատորը հիմնականում վերաբերում է Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» երկի քննությանը ու վերջինիս գրաբար և զուգահիշ ֆրանսերեն թարգմանությանը: Մասնագետները կնկատեն, որ հայագետը թարգմանել է Սյունիքի պատմության միայն մեկ գլուխը:

Սեն-Մարտենին, բացի Ստեփանոս Օրբելյանի պատմությունից, հայտնի են նույն հեղինակի ևս երկու գործեր: Առաջինը նա անվանում է պոեմ, հետո կոչում «Ողբ», որը նվիրված է Հայաստանի դժբախտություններին. Օրբելյանն այն շարադրել է 1299-ին, գրել է իր բարեկամ ու գաղափարակից, նշանավոր վարդապետ և բանաստեղծ Խաչատուր Կեչառեցու խնդրանքով: Հայագետը, օգտվելով Մ. Չամչյանցի «Հայոց պատմությունից», մեջբերում է կատարում Օրբելյանի «Ողբից»: Վերոնշյալ «Ողբը» յուրօրինակ Հայոց պատմություն է, որում հեղինակը ողբում է Մեծ Հայքի տարածքում եղած թագավորությունների վերացումը՝ Արշակունիներ, Բագրատունիներ, Արծրունիներ, Աղվանքի, Սյունյաց թագավորություններ:

Նա նշում է, թե ոչ մի այլ պատմիչ, Ստ. Օրբելյանից բացի, չի նշել մոնղոլների կողմից Երուսաղեմը գրավելու մասին: Նա համոզված է, թե անհնար է, որ այդ գրավումը տեղի ունեցած չլիներ¹⁷:

¹⁶ Saint-Martin. 1818, 362.

¹⁷ Saint-Martin. 1819, 275.

Սեն-Մարտենը, առաջինը հայագիտության պատմության մեջ, մեծարժեք է համարում Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» պատմական արժեքը: Նա բացատրում է, թե ինչու ողջ միջնադարը, հետո Մխիթարյանները չեն հիացել այդ կարևոր երկով: պատճառը հեղինակի ոճն է, որը խիստ տարբեր է Ոսկեդարի մյուս մատենագիրների գրվածքներից:

«Հիշատակարանների ...»-ի իր երկու սովոր հատորներով ու հայագիտական տարալեզու աղբյուրների քննական նյութերով Սեն-Մարտենը հիմնավորեց ֆրանսիական հայագիտության անհրաժեշտությունը: Նրա գիտական նվիրվածության օրինակին հետևեցին XIX և XX դարերի ֆրանսիացի, բելգիացի, անգլիացի, վրացի նշանավոր հայագետներ, ինչպիսիք են Մարի Բրոսսեն, Վիկտոր Լանգլուան, Ֆելիքս Նևը, Էդուարդ Դյուրրիեն, Ֆրեդերիկ Մակլերը, Նիկոլայոս Մառը, Ֆրեդերիկ Ֆելդին, Ժան-Պիեռ Մահեն, Ֆրեդերիկ Կոնիբերը, որոնք սիրեցին աշխարհի հին քաղաքակրթությունը ներկայացնող երկրներից մեկը՝ Հայաստանը ու նրա ստեղծագործ ժողովրդին:

Սեն-Մարտենի հայագիտական կարևոր նախաձեռնություններից մեկը Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմության» ֆրանսերեն թարգմանությունն է, որը լույս է տեսել 1841-ին Փարիզում՝ նրա մահվանից հետո արևելագետ Ֆելիքս Լաժարի ջանքերով¹⁸: Վերջինս, բարձր գնահատելով Սեն-Մարտենի՝ Հովհաննես Դրասխանակերտցու պատմության թարգմանությունն ու նրան կցված ծանոթագրությունները, բնականաբար, խիստ արժեքավոր է համարում պատմության այն հատվածները, որոնք ընթացել են մատենագրի աչքերի առաջ: Դրանք են՝ մարտիրոս կոչված Սմբատ արքայի մահը և նրան հաջորդած Աշոտ Երկրորդի (Երկաթ) գահակալության ողջ դրամատիկ ընթացքը:

Սեն-Մարտենի՝ Դրասխանակերտցու «Հայոց պատմության» թարգմանությունը և Լաժարի հրատարակչական ձեռնարկը ժամանակին եղել են ընծա եվրոպացի հայագետների համար:

Բացառիկ գիտական արժեք ունի Արշակունիների թագավորական գերդաստանին նվիրված հայագետի ուսումնասիրությունը, որը նույնպես ամբողջական ձևով հրատարակվել է հետմահու: Այն երկհատոր է. դրանք լույս են տեսել 1850-ին¹⁹:

1821 թ. հուլիսի 27-ին Սեն-Մարտենը բանախոսությամբ հանդես է գալիս Ֆրանսիայի Արձանագրությունների ակադեմիայում: Այդ բանախոսությունն առաջին անգամ տպագրվել է “Journal Asiatique”-ում՝ 1822-ի օգոստոսին, իսկ երկրորդ անգամ այն հրատարակել է Ֆելիքս Լաժարը 1850-ին՝ հետմահու տպագրված “Fragments d’une histoire des Arsacides” երկրորդ հատորի հավելվածում²⁰:

Մեծ հայագետը ֆեոդալական հասարակարգի դասական ձևավորումը տեսնում է ոչ թե Գերմանիայում՝ այն էլ XII դարում, այլ Ք. ծ. ա. Ասիայում՝ հանձին պարթև Արշակունիների հիմնած պետական համակարգի. «Եթե ուզում են համեմատել XII դարի Եվրոպայի Ասիայում մեր թվարկությունից երեք դար առաջ հիմնված Արշակունիների միապետության հետ, ապա կտեսնեն հասարակական

¹⁸ Histoire d’Armenie. 1841.

¹⁹ Saint-Martin. 1850.

²⁰ Saint-Martin. 1850, 293–306.

նույն հաստատությունները, կգտնեն հասարակության նույն աստիճականությունը և համարյա նույն տիտղոսները՝ սկսած սահմանակալ բղեջխներից, իշխաններից, ասպետներից մինչև հասարակ զինվորներ»²¹:

Սեն-Մարտենը նկատում է, որ Արշակունիների մոտ չկար ստրկատիրություն: Նա սահմանում է, թե ինչ են ֆեոդալական կարգերը: Դա ռազմական ուժի միջոցով նվաճումն է մի մեծ տարածքի՝ բաժանված զինվորական միավորումների միջև: Արշակունիները հանդես եկան Ալեքսանդր Մակեդոնացուց հետո: Երբ Մակեդոնիայի արքան հաղթեց Դարեհին, դարձավ Ասիայի միապետը: Հույները չէին հասկանում և գնահատում Ալեքսանդրի խիզախումը, նրանք չէին ներում վերջինիս, որ իրենց ստիպեց ապրել խաղաղության մեջ: Նրանք Ալեքսանդրին համարում էին իրենց դեմոկրատիան ճնշող:

Սեն-Մարտենն ուներ Ալեքսանդր Մակեդոնացու անձի պաշտամունք և ցավով նշում է, թե Ալեքսանդրին շատ-շատ դարեր անց շարունակում են դատել ըստ նրա թշնամիների կարծիքների: Իր անցած ճանապարհին Ալեքսանդրն ամենուր թողնում էր իր հանճարի ապացույցները: Նա չէր կործանում, նա հիմնադրում էր նոր կայսրություն: Խորհելով ավելի ծավալուն ծրագրերի մասին, քան որ ավարտել էր, նա մեռավ Բաբելոնում, որն ուզում էր դարձնել աշխարհի մայրաքաղաքը²². նա երեսուներեք տարեկան էր:

Արշակունիների հզոր միապետությունը, որի ծագումը պատմագիտության կարևորագույն խնդիրներից է, բաղկացած էր չորս հիմնական թագավորություններից: Ավագ ճյուղը Պարսկաստանում էր, նրա գլխավորը կոչվում էր արքայից արքա: Հայաստանի թագավորը երկրորդ տեղում էր, երրորդ տեղում Բակտրիան էր, և այդ թագավորությունը հասնում էր մինչև Հնդկաստանի սահմանները, վերջին ճյուղը հարավային Ռուսիայի տարածքն էր՝ Վոլգա և Դոն գետերի ափերին ապրող տարբեր ցեղերից կազմված:

226-ին Սասանյան Արտաշիրը կործանեց վերջին Արշակունի Արտավանին ու հիմնեց Սասանյան դինաստիան: Դրանից հետո Արշակունիների բոլոր ճյուղերը սկսեցին մարել: Ամենաերկարակյացը Հայաստանի Արշակունիներն էին. նրանց թագավորությունը վերացավ 428 թվականին. «Իրականում Հայաստանը դարձավ առաջին քրիստոնյա միապետությունը»²³:

Սեն-Մարտենը Կիլիկյան հայ թագավորության մեջ տեսնում է վերջին հայ Արշակունիներին, որոնք հերոսանում էին՝ խառնվելով Եվրոպայի խաչակիրներին:

Հայագիտության մեջ Սուրբ Հռիփսիմեի ողբերգությանն առաջին անդրադարձը կատարել է Սեն-Մարտենը: Հայ թատրոնի պատմության մեջ առանձնակի տեղ զբաղեցնող «Մարտիրոսոսփին սրբոյն Հռիփսիմէի» ողբերգությունը բեմադրվել է 1668-ին Լվովում: Սեն-Մարտենը չի անդրադարձել «Հռիփսիմէ» ողբերգության գրական արժեքին: Այդ արել են հետագա հետազոտողները²⁴: Հայագետը նշում է, թե դպրոցականների ուժերով բեմադրված այդ ողբերգությունը

²¹ “Journal Asiatique” (Paris). 1822, 65–66.

²² Petit Robert-2. 1988, 36.

²³ “Journal Asiatique”, 1822, 77.

²⁴ Լևոնյան. 1941, 115–122, Թերզիբաշյան. 1959, 49–89, Հովհաննիսյան. 2010, 151, Դոլուխանյան. 1983, 58–68.

հայ թատրոնի կարևոր էջ է, և դրանով հայագետների ուշադրությունը սևեռում է այդ ուշագրավ փաստի վրա:

Սեն-Մարտենը 1825-ին հրատարակել է Վարդան Այգեկցու 45 առակները: Փարիզի Ազգային գրադարանում պահվող մի ձեռագրում դրանք թվով 168 էին, հայագետը դրանցից ընտրել է 45-ը:

Նիկողայոս Մառը՝ Վարդան Այգեկցու առակների լավագույն գիտակը, անդրադարձել է Սեն-Մարտենի՝ Այգեկցու առակների թարգմանությանը և նկատել է, թե առակների ողջ թարգմանությունն իրականացրել է ֆրանսիացի հայագետը իր ժամանակի համար ոչ վատ ձևով²⁵:

Նա նշել է, թե Սեն-Մարտենի առակների թարգմանությունն ունեցել է ուսուցողական նպատակ: Դրանք տպագրվել են՝ կողք կողքի դնելով ֆրանսերեն ու հայերեն բնագիրը: Շատ հարմար է այդ ձևով ֆրանսիացուն սովորել հայերեն, իսկ հային՝ ֆրանսերեն:

Սեն Մարտենը Մովսես Խորենացու գնահատող

“Journal Asiatique” ամսագրի 1823 թ. հունիսյան համարում Սեն-Մարտենը հոդված է հրատարակել՝ նվիրված Մովսես Խորենացու կյանքին ու մատենագրական ժառանգությանը: Հենց սկզբից հայագետը որակում է Մովսես Խորենացուն՝ ըստ հայկական ավանդույթի կոչելով Քերթողահայր: Եզրույթը բացատրում է “poète grammairien”, այսինքն՝ բանաստեղծ քերականագիտության դպրությանց հետամուտ: Նա այդ անունով հիշում է նաև հայ միջնադարի մատենագրության ուրիշ դեմքերի՝ Պետրոսին և Ստեփանոս Սյունեցուն: Որո՞նք էին, ըստ նրա, Մովսես Խորենացուն տրված այդ պատվանունի հիմքերը: Դրանք են՝ խոսքի վայելչությունն ու հստակությունը, կարճաբանությունը, դարձվածների հրաշալիությունը, որոնցով նա տարբերվեց ազգի բոլոր մատենագիրներից:

Հայագետը փորձում է որոշել, թե որ թվականին են Մովսես Խորենացին ու նրա ընկերները մեկնել Ալեքսանդրիա՝ հունարենի մեջ կատարելագործվելու: Ըստ նրա՝ Խորենացին եղել է նախ Եդեսիայում, ապա Երուսաղեմում ու այնուհետև Ալեքսանդրիայում՝ վերջինում մնալով երկար ժամանակ: Հետո այցելել է Հռոմ: Որոշ ժամանակ գտնվել է Աթենքում, անցել Կոստանդնուպոլիս և վերադարձել հայրենիք՝ իր հետ բերելով հարուստ գիտելիքներ ու ձեռագիր մատյաններ²⁶:

Սեն-Մարտենը թարգմանաբար մեջբերում է «Հայոց պատմության» այն հատվածները, որոնցում պատկերված են Մովսես Խորենացու և նրա ընկերների բազմաբովանդակ ու հարուստ շրջագայությունը հին աշխարհի քաղաքակրթության կենտրոններում: Այդ հատվածներում նկարագրվում են Եդեսիան, նրան հարևան սրբավայրերը, Պաղեստինը, այդ վայրերի դիվաններում

²⁵ M a p p. 1899, 106.

²⁶ “Journal Asiatique”, 1823, 325.

կարճ ժամանակահատված պարապելը, ապա ավելի մանրամասն՝ Եգիպտոսը՝ իր «անձեռակերտ Նեղոսով», ամեն տեսակ պտուղներով լի, Ալեքսանդրիա քաղաքը՝ ծովի մեջ, իր բարեխառն կլիմայով, քաղաքի հինավուրց հեթանոսական պատմությունը և իր ժամանակի քրիստոնեական ներկան։

Բացառիկ արժեք ունեն Եգիպտոսի հեթանոսական շրջանի հետ կապված որոշ անունների բացատրությունները, որոնք չկան Ստեփանոս Մալխասյանի ծանոթագրություններում: Դրանցից մեկը եգիպտական Տուբի ամիսն է, որն ըստ Սեն-Մարտենի եղել է եգիպտական տարվա հինգերորդ ամիսը: Լորտու բառը հայագետը թարգմանում է ըստ Մ. Ավգերյանի՝ “sort de serpent” – «օձի տեսակ»²⁷:

Սեն-Մարտենը Խորենացու ուսումնառության և ճամփորդության տևողությունը սահմանում է յոթ-ութ տարի: Հիշեցնում է, թե հայրենիք վերադարձի պահին արդեն վախճանվել էին սիրելի ուսուցիչները՝ Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը:

Նա Խորենացու «Ողբի» այն հատվածը, որը ներկայացնում է պատմահոր վերադարձը և ուսուցիչներին մեռած գտնելը, խիստ տարբեր է համարում Վիստոն եղբայրների հրատարակած բնագրի համապատասխան հատվածից: Խորենացու պատմության՝ Գովիելմուս և Գևորգ Վիստոն եղբայրների լատիներեն թարգմանությունը՝ գրաբարյան բնագրի համադրությամբ, լույս է տեսել 1736-ին Լոնդոնում²⁸:

Հայագետը հատուկ կարևորում է Խորենացու երկարամյա թարգմանական գործունեությունը. նա հոգ է տարել հայերեն թարգմանել այն գրքերը, որոնք ձեռք էր բերել ճամփորդությունների ժամանակ: Առկա է իր իսկ՝ պատմահոր վկայությունը սեփական թարգմանական գործունեության վերաբերյալ. «Զի և ես այր եմ ծերացեալ և հիանդոտ և անպարապ ի թարգմանութեանց»²⁹:

Սեն-Մարտենը մերժում է Թովմա Արծրունու այն վկայությունը, թե իբր Խորենացին ապրել է 120 տարի: Այս թիվը մերժում է՝ բացատրելով, թե 60 տարեկանում Խորենացին չէր կարող մեկնել արտասահման ուսումնառության: Նա հիշատակում է Ասողիկ պատմիչի այն վկայությունը, ըստ որի՝ Խորենացին ապրել է Գյուտ կաթողիկոսի ժամանակ, որը զբաղեցրել է կաթողիկոսական աթոռը 465-ից մինչև 475 թվականը³⁰:

Հայագետն իրավացիորեն Խորենացու գլխավոր երկասիրությունը համարում է «Հայոց պատմությունը», որը գրվել է Սահակ Բագրատունի իշխանի խնդրանքով: 481-ին հայրենակիցների կամքով Հայաստանի մարզպան հռչակված՝ նա ընդվզել է պարսիկների դեմ և երկու տարի անց զոհվել:

Սեն-Մարտենի կարծիքով Մովսես Խորենացու պատմությունն ամբողջական երկ է: Նա խոսել է նաև պատմության չորրորդ գրքի մասին, որը գրվել է

²⁷ “Journal Asiatique”, 1823, 330.

²⁸ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2013, 26:

²⁹ Խ ո ռ ե ն ա գ ի. 1991, 353:

³⁰ “Journal Asiatique”, 1823, 335.

առանձին, չի եղել առաջին երեք գրքերի շարունակությունը. դա էլ նպաստել է դարերի ընթացքում նրա անհետանալուն³¹:

Հայագետը կրկնում է 1819-ին «Հիշատակարաններում ...» հայտնի այն կասկածը, թե «Աշխարհացոյցը» չի պատկանում պատմահոր գրչին:

Հայագիտության մեջ առաջին անգամ 1826-ին “Journal Asiatique” ամսագրում լույս է տեսնում XV-ի դարավերջին գրված մի հետաքրքիր ուղեգրություն, որի հեղինակն էր Մարտիրոս Երզնկացի եպիսկոպոսը: Վերջինիս ուղեգրության թարգմանությանը կցված է մի ընդարձակ նախաբան, որը հիացմունք է պատճառում հարուստ փաստերով ու տրամաբանական եզրահանգումներով³²:

Իր նախաբանում Սեն-Մարտենն ասում է, թե Մարտիրոս Երզնկացու ուղեգրությունը պարզ պատմություն է Մեծ Հայքից Եվրոպա եկած մի հոգևորականի մասին, որի փափագն էր տեսնել Եվրոպայի սրբավայրերն իր աչքով և հնարավորինս օգտակար լինել իր ազգին: Նրա առաջնահերթ խնդիրն էր այցելել Հռոմ, խոնարհվել Հիսուսի սուրբ առաքյալներ Պողոսի և Պետրոսի գերեզմանների առաջ, հետո Գալիցիայում տեսնել սուրբ Հակոբի գերեզմանը, իր պաշտամունքը մատուցել Եվրոպայի տարբեր քաղաքներում գտնվող սրբավայրերում եղած հոջակավոր սրբերի մասունքներին: Հայ հոգևորականի այս փափագին գումարվել է նաև երկու ամսից ավելի տևած նրա ուղևորությունը Ատլանտյան օվկիանոսում. ահա ուղեգրության այս հատվածն առավել մեծ արժեք է տալիս գրվածքին:

Սեն-Մարտենն իրավացիորեն է արժեքավորել Մարտիրոս Երզնկացու ուղեգրությունը. այն այսօր էլ պահպանում է իր ճանաչողական արժեքը:

Սեն-Մարտենի ուշադրության կենտրոնում է եղել նաև Վենետիկի Մխիթարյանների «Ընտիր մատենագիրք» շարքը, որի առաջին հատորը նվիրված է Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» աշխատությանը, որը լույս է տեսել 1826 թ.: Հայագետի հոգվածն ունի ճանաչողական մեծ արժեք: Նա միջազգային հայագիտության ուշադրությունը հրավիրում է արդեն լույս տեսած երեք կարևոր մատյանների վրա՝ Եզնիկ Կողբացու, Մովսես Խորենացու և Եղիշեի: Կարևոր են այդ փոքրածավալ գրքերի համառոտ նախաբանները:

Վենետիկի Մխիթարյան միաբանության նշանավոր դեմքերից Ղուկաս Ինճիճյանը (1758–1833) եղել է Սեն-Մարտենի ժամանակակիցը: Նա բազմակողմանի զարգացած մտավորական էր՝ աշխարհագետ, պատմաբան, բանասեր, թարգմանիչ, ազգագրագետ: Հատկապես կարևոր է նրա ներդրումը Ստեփանոս Ազոնցի «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի» 11 հատորանոց կոթողային աշխատության ստեղծման գործում: Այդ հատորները ծանոթ էին Սեն-Մարտենին և ընկած են նրա «Հիշատակարաններ ...» կոթողային աշխատության հիմքում: Սեն-Մարտենը ուշադիր հետևում էր Վենետիկի Մխիթարյան միաբանության հրապարակումներին և երբեմն գրախոսություններով անդրադառնում էր դրանց: Նա քննախոսում էր հատկապես այն գործերը, որոնք իր հետաքրքրությունների շրջանակում էին: Ահա դրանցից մեկն

³¹ “Journal Asiatique”, 1823, 327.

³² “Journal Asiatique”, 1826, 321–346.

էր Ղուկաս Ինճիճյանի «Ստորագրութիւն հին Հայաստանեայց» աշխատութեան գրախոսականը՝ տպագրված 1828 թվականին “Journal des savans” ամսագրում: «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի» տասնմեկ հատորները, ըստ հայագետի, լիովին ինքնուրույն գիտական շարադրանք են և ծաղկաքաղ չեն եվրոպական համանման աշխատություններից: Հատկապես դրանցում չէք գտնի Ֆրանսիայի, Անգլիայի կամ Գերմանիայի լավագույն աշխարհագրագետներից կատարած ընդօրինակումներ³³:

1831 թ. հայագետը “Journal Asiatique” հանդեսում տպագրում է “Note sur les Inscriptions armeniennes de Bolgary” խորագրով հոդվածը, որում անդրադարձ է կատարում Ռուսաստանի տարածքում գտնված մի շարք գերեզմանաքարերի վրա եղած հայերեն արձանագրություններին³⁴:

Եզրակացություն

Ա.-Շ. Սեն-Մարտենը ոչ միայն ֆրանսիական, այլև եվրոպական գիտական հայագիտության հիմնադիրն է: 1818 և 1819 թթ. լույս տեսած «Հիշատակարաններ Հայաստանի պատմության և աշխարհագրության» կոթողային գրքի երկու հատորները եվրոպայի արևելագետների հայացքը թեքեցին դեպի Հայաստան՝ պետականորեն քրիստոնյա դարձած Արևելքի առաջին երկրի հարուստ գրականությունն ու պատմությունը, որի իմացությունն ուներ համամարդկային արժեք:

Սեն-Մարտենի կենսագրության հավաստի ու ծավալուն միակ աղբյուրը նրա աշակերտ Մարի Ֆելիսիտե Բրոսսեի ներբող-կենսագրականն է, որում գիտնականի կերպարը պատկերված է ամբողջական ու կատարյալ ձևով: Չնայած իր կարճատև կյանքին՝ թողել է հարուստ հայագիտական ժառանգություն: Նա ներկայացնում է Մեծ Հայքի և Կիլիկյան Հայաստանի աշխարհագրությունն ու պատմությունը ոչ միայն ըստ հայկական, այլև այլ երկրների մատենագիրների վկայությունների: Սեն-Մարտենը բարձր է գնահատել V և հետագա դարերի հայ պատմիչների թողած վկայությունները, որոնք իրենց փաստերով լրացնում են Արևելքի մի շարք երկրների պատմությունները: Նա առաջինը ճիշտ գնահատեց Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» պատմական արժեքը:

Սեն-Մարտենը հատուկ ուսումնասիրություն գրեց Արշակունիների պարսկական ծագում ունեցող չորս տարբեր երկրների թագավորական գերդաստանների մասին, որոնցից ամենաերկարակյացը հայկականն էր: Ուսուցողական նպատակով Վարդան Այգեկցու 45 ընտիր առակները թարգմանեց ֆրանսերեն:

Նա առաջինն անդրադարձավ հայ թատրոնի պատմության մեջ առանձնակի տեղ ունեցող «Մարտիրոսութիւն սրբոյն Հռիփսիմէի» ողբերգությանը: Շատ բարձր գնահատեց Վենետիկի Մխիթարյանների «Ընտիր մատենա-

³³ “Journal des savans” (Paris), 1828, 532.

³⁴ “Journal Asiatique”, 1831, 503–504.

գիրք» շարքի հատորները: Նա Մարտիրոս Երզնկացու դեպի Եվրոպա և Ամերիկա կատարած ուղեգրությունը՝ գրված XV դարավերջին, թարգմանեց ֆրանսերեն՝ կցելով հարուստ ծանոթագրություններ ու ընդարձակ նախաբան:

Ֆրանսերեն է թարգմանել Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմությունը» (լույս տեսավ հետմահու), Ստեփանոս Օրբելյանի պատմության մի մեծ հատվածը՝ նրանում տեսնելով պատմական մեծ արժեք:

Խորին հարգանքով է գրել Մովսես Խորենացու մասին՝ նրա պատմությունը համարելով քննական:

Երկար տարիներ եղել է “Journal Asiatique” ամսագրի գլխավոր խմբագիրը:

Սեն-Մարտենը՝ արևելագիտության հանճարը, ինչպես նրան կոչել է Մ. Բրոսսեն, վաղաժամ մահվան պատճառով չկարողացավ իրականացնել հայագիտական բոլոր ծրագրերը:

Աելիտա Դոլուխանյան – ք. գ. դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Խ. Արուսյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ հին և միջնադարյան հայ գրականություն, բանահյուսություն, ժամանակակից հայ գրականություն, գրականության դասավանդման մեթոդիկա, գրաքննադատություն, հայագիտություն, գրական կապեր: Հեղինակ է 39 գրքի և շուրջ 800 հոդվածի: ORCID:0000-0001-9526-9464. aelita.dolukhanyan@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Արձագանք» (Թիֆլիս), 19. XII. 1893 [“Ardzagank” (Tiflis), 19. XII. 1893 (in Armenian)]:

Դոլուխանյան Ա. 2014, Ա.-Ժ. Սեն-Մարտենը ֆրանսիական հայագիտության հիմնադիր, Երևան, «Ձանգակ» հրատ., 240 էջ [Dolukhanyan A. 2014, Saint-Martin is the Founder of French Armenology. Yerevan, “Zangak” Press, 240 p. (in Armenian)]:

Թերզիբաշյան Վ. 1959, Հայ դրամատուրգիայի պատմություն, 1668–1868, հ. I, Երևան, «Հայպետհրատ», 487 էջ [Terzibashyan V. 1959, History of Armenian Dramaturgy, 1668–1868, V. 1. Yerevan, “Haypethrat”, 487 p. (in Armenian)]:

Լևոնյան Գ. 1941, Թատրոնը հին Հայաստանում, Երևան, «Հայպետհրատ», 182 էջ [Levonyan G. 1941, Theatre in Ancient Armenia. Yerevan, “Haypethrat”, 182 p. (in Armenian)]:

Խորենացի Մ. 1991, Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը և Ներածությունը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 485 էջ [Khorenatsi M. 1991, History of Armenia, Original Text and Introduction by M. Abeghyan and S. Harutyunyan. Yerevan, Press of Academy of Sciences of the ASSR, 485 p. (in Armenian)]:

«Հայկազուններ» (Երևան), 2025, № 10, էջ 54–57 [“Haykazunner” (Yerevan), 2025, № 10, p. 54–57 (in Armenian)]:

Հայրը՝ Պետրոս Մանուկյանը, վաճառականությամբ էր զբաղվում և հաճախ էր բացակայում տանից, ուստի մանկան դաստիարակությամբ զբաղվում էր մայրը՝ Շահրիստան Մանուկյանը: Աստվածավախ մոր ու միջավայրի ազդեցությամբ երեխայի մեջ վաղ հասակից ձևավորվում են կրոնական զգացումներ: Հինգ տարեկանում գրել-կարդալ է սովորում տեղի քահանայի մոտ, այնուհետև ուսումը շարունակում է երկու կույս քույրերի՝ Մանասեի և Մարիամի մոտ, որոնց հոգևոր առաջնորդ Հարություն քահանայից սովորում է եկեղեցական երաժշտություն: Քույրերի խստակենցաղ ճգնավորությունը և կրոնամիստիկական պահվածքը նրա մեջ առաջացնում են կրոնավոր դառնալու ցանկություն: Հետագայում տասնհինգամյա Մանուկը դառնում է Սբ. Նշան վանքի սան, Անանիա եպիսկոպոսը նրան ձեռնադրում է սարկավագ և անվանակոչում Մխիթար: Ուսումնատենչությունը, գիտության նկատմամբ հակումը նրան մղում են մտավոր ու հոգևոր ինքնազարգացման: Ուստի Էջմիածնի Մայր աթոռից Սեբաստիա եկած նվիրակ Միքայել արքեպիսկոպոսի՝ իրեն աշակերտելու և Էջմիածնում կրթվելու առաջարկը Մխիթարն ընդունում է ուրախությամբ: Էջմիածնում, սակայն, արքեպիսկոպոսը նրան պահում է որպես սպասավոր: Մխիթարի հուսախաբությունը կատարյալ էր: Նա որոշում է հեռանալ, ինչ գնով էլ լինի: Պայմանավորվելով ուխտի եկած իր հայրենակից Ստեփանոսի հետ՝ լքում է Էջմիածինը, գնում է Խոր վիրապ, իսկ հետո՝ Սևան: Այստեղ երկար չի մնում, գնում է Բասեն, ուր Սբ. Աստվածածնի վանքում ստանձնում է այդտեղ սովորող պատանիների ուսուցման ու դաստիարակության գործը: Այդ ընթացքում Մխիթարը Մելիքսեթ եպիսկոպոսի ընկերակցությամբ շրջում է մոտակա գավառները և հնարավորություն է ստանում քարոզելու ժողովրդի մեջ: Շուտով նա որոշում է վերադառնալ Սեբաստիա: Կարինում քարավանի սպասելիս իջևանում է իր բարեկամի տանը, որը ուխտագնացություն էր կատարել դեպի Հռոմ և Մխիթարին ոգևորված պատմում է այնտեղ ծաղկող քրիստոնեության,

նագրով պաշտոնապես ստեղծվում է նոր միաբանություն, որը հետագայում տեղափոխվում է Վիեննա՝ ճանաչվելով որպես Վիեննայի Մխիթարյան միաբանություն: 2001 թ. Մխիթարյան միաբանության 300-ամյակի օրերին երկու միաբանությունները միավորվում են (տե՛ս Ա ս ո յ ա ն. 2001, 12–13):

² Կենսագրական առաջին ճշգրիտ տեղեկությունները տե՛ս Ա գ ո ն ց. 1810: Մ. Սեբաստացու և Միաբանության վերաբերյալ առաջին համակարգված գիտական կենսագրությունը և պատմությունը՝ կազմված ձեռագիր և տպագիր աղբյուրների տվյալների վրա, տե՛ս Թ ո Ր ո ս ե ա ն. 1901:

գիտության ու մշակույթի զարգացման բարձր մակարդակի մասին: Շուտ տպավորվող Մխիթարը որոշում է մի օր անպայման լինել Հռոմում, սակայն Սեբաստիայում հոգեկան ծանր ապրումների հետևանքով կորցնում է տեսողությունը, որը միայն երկարատև բուժումից հետո է վերականգնվում:

Այնուհետև Մխիթարը Հովնան վարդապետի հետ գնում է Երուսաղեմ: Հալեպում բարեկամանում է կաթոլիկ հայր Բովոլիերի, ապա Սսի կաթողիկոս Գրիգոր Պիծակի հետ, որոնք նույնպես ուզում էին գնալ Իտալիա: Ճանապարհին նա սաստիկ հիվանդանում է դեղնախտով, մնում Կիպրոսում և ապա վերադառնում Սեբաստիա:

Անընդհատ ճանապարհորդելով վայրից վայր՝ Մխիթարը մոտիկից է շփվում ժողովրդի հետ, խորամուխ լինում նրա հոգսերի մեջ, իր իսկ փորձով հասկանում է, որ ժողովուրդը, ազգն ընդհանրապես, թաղված է տգիտության ճահճում և այնտեղից նրան դուրս բերելու համար անհրաժեշտ են հոգևոր ու մտավոր ուժերի գերլարում և կենտրոնացում: Այս ընթացքում էլ հղանում է միաբանություն ստեղծելու գաղափարը: Միաբանությունը կազմված պիտի լիներ ուսյալ քահանաներից, որոնք իրենց գործունեությունը կնպատակաուղղեին ազգի զարգացմանն ու լուսավորմանը:

Իր այս գաղափարն իրականացնելու համար Մխիթարն առաջնորդ էր փնտրում: Նա գալիս է Կ. Պոլիս, հանդիպում ժամանակի զարգացած հոգևորականներից մեկի՝ Խաչատուր Կարնեցի վարդապետի հետ, ներկայացնում իր մտադրությունն ու ծրագրերը: Կարնեցին, բարձր գնահատելով Մխիթարի գաղափարները, հրաժարվում է միաբանությունն առաջնորդելուց: Ապագա մեծ գործիչը չի վիստվում. նա վճռել էր ամեն գնով իրագործել իր ազգանպաստ գաղափարները:

Միաբանության համար աշակերտներ ու աջակիցներ հավաքելու նպատակով Մխիթարը այցելում է Սինոպ, Սամսոն, Մարզվան, Թոքատ: Իր ծրագրերը քննարկում է Կարմիր վանքի առաջնորդ Մարգար եպիսկոպոսի հետ՝ վերջինիս առաջարկելով դառնալ ստեղծվելիք միաբանության առաջնորդ, սակայն նորից մերժում է ստանում:

1700 թ. Մխիթարը վերադառնում է Կ. Պոլիս, փորձում հաշտեցնել լուսավորչական և կաթոլիկ հայերի միջև ծագած հակասությունները, սակայն ապարդյուն: 1701 թ. սեպտեմբերի 8-ին նա հավաքում է իր 10 աշակերտներին և պարզաբանում ստեղծվելիք միաբանության նպատակները, որոնք ձևակերպվում են հետևյալ կերպ. ծառայել հայ ազգին, նրա կրոնական, բարոյական և մտավոր վերելքին:

Պետք է ասել, որ հենց այդ օրն էլ ոչ պաշտոնապես ծնվում է Մխիթարյան միաբանությունը:

Մխիթարն իր աշակերտների հետ, խուսափելով հետապնդումներից, հեռանում է Կ. Պոլսից և 1703 թ. հանգրվանում է Հունաստանի Մոռեա քաղաքում, տեղի իշխանությունները, ընդառաջելով նրա խնդրանքներին, Մեթոն բերդաքաղաքում հող են տրամադրում՝ վանք և եկեղեցի կառուցելու, ինչպես նաև երկու գյուղ՝ ապրուստը հոգալու համար: Միաբանությունը պետք է ունենար իր Սահմանադրությունը: Հռոմի կողմից առաջարկված Սբ. Սբ. Բարսեղի, Օգոստինոսի և Բենեդիկտոսի կանոններից Մխիթարն ընտրում է վերջինը,

որովհետև դրանցում շեշտը դրվում էր մանուկների դաստիարակության, դպրոցների անհրաժեշտության վրա: Միաբանության Սահմանադրությունը հաստատվում է Կղեմես XI պապի կողմից, և Մխիթարին շնորհվում է Աբբահայր տիտղոսը: Թվում էր, թե արդեն պայմաններ են ստեղծվել իրականացնելու ազգանպաստ գործունեություն, սակայն թուրքերի հարձակման հետևանքով քաղաքական իրավիճակը փոխվում է, ուստի 1715 թ. Միաբանությունը տեղափոխվում է Վենետիկ: Մխիթարի բազմաթիվ դիմումներից հետո և գործադրած համառ ջանքերի շնորհիվ Վենետիկի Ծերակույտը նրան է տրամադրում Աբ. Ղազար կղզին: 1717 թ սեպտեմբերի 8-ին Միաբանությունը Մխիթարի առաջնորդությամբ մուտք է գործում Աբ. Ղազար կղզի: Այդ օրն էլ պաշտոնապես համարվում է Մխիթարյան միաբանության ծննդյան օրը: Նշենք, որ Միաբանությունը նախապես կոչվել է Սուրբ Անտոն արքեպիսկոպոսի անունով, Մխիթարյան է կոչվել Սեբաստացու մահվանից հետո:

Միաբանության անդամները կարծում էին, թե դժվարությունները մնացել են հետևում, սակայն ճակատագիրը ևս մի փորձություն էր նախատեսել Մխիթարի համար. նրա քարոզչական գործունեությանը կասկածանքով վերաբերվող և՛ լուսավորչական, և՛ կաթոլիկ հայ հոգևորականները ամբաստանում են նրան Հռոմի առաջ: Մխիթարին 1718 թ. հունիսին հրավիրում են Հռոմ: Կարդինալների՝ չորս ժամ տևած ժողովը, որում քննվում էր Մխիթարի գործունեությունը, արդարացնում է նրան:

Վերադառնալով Աբ. Ղազար՝ Սեբաստացին ու իր միաբանները ծավալում են եռուն գործունեություն և սկսում են իրագործել իրենց մտահղացումները: Միաբանության հոգին աննկուն կամքի տեր Մխիթարն էր:

Մ. Սեբաստացին վախճանվում է 74 տարեկան հասակում 1749 թ. ապրիլի 27-ին:

Ա. Չոպանյանը այսպես է ներկայացրել Մխիթարին և նրա գործունեությունը. «Կյանքը, զոր վարեց Մխիթար, նկարագրի ուժը, զոր ցույց տվավ իր նպատակին հասնելու համար, այնքան մեծ են ու գեղեցիկ, որքան Գործը, որ իրմե հիմնված՝ ի կատար հանվեցավ իր հանճարեղ հաջորդներուն ձեռքովը: Այդ կյանքը մին է մարդկությունը պատվող այն հոյակապ դյուցազներգություններեն, որ կտեսնենք մարդ մը, որ միս-մինակ, իր հոգեկան կորովեն ուրիշ որևէ միջոց ու զենք չունենալով, ընկերական, քաղաքական, բնական բոլոր ուժերուն ընդդիմությունը կնվաճե և կհաջողի ոչնչեն աշխարհ մը ստեղծել»³:

Մ. Սեբաստացու գործունեության գնահատման հարցի շուրջ

Սեբաստացու գործունեությունը, հայերենագիտության մեջ ներդրած նրա ավանդը գնահատվել է ինչպես Միաբանության պատմությանը նվիրված աշխատություններում, այնպես էլ հայերենի առանձին հարցերին նվիրված ուսումնասիրություններում: Պետք է ասել, որ Մխիթարի ու նրա գործի նկատմամբ վերաբերմունքը միանշանակ չէ: Արտահայտվել են և՛ դրական, և՛ բացասական տեսակետներ: Շատ դեպքերում տարակարծությունները առա-

³ Չոպանյան. 1988, 357:

վելապես պայմանավորված են եղել հեղինակների հասարակական-քաղաքական, կուսակցական-գաղափարախոսական ակնհայտ աչառու կամ սուբյեկտիվ դիրքորոշմամբ, ժամանակաշրջանի բնույթով, քան հայագիտության, մշակույթի, կրթության ոլորտներում Սեբաստացու ու Միաբանության խաղացած, հիրավի, առաջնակարգ դերով:

Սեբաստացու կենսագիրները, նրա գործունեությունը գնահատողները հիմնականում Միաբանության հայրերն են⁴, որոնք իրենց առաջնորդի անձն ու գործունեությունը ներկայացնում են բացառապես պայծառ լույսի տակ: Թերևս ավելի հետաքրքիր են այն հեղինակների տեսակետները, որոնք Սեբաստացուն և Միաբանությանը դիտում են իբրև մշակութային երևույթ ու փորձում են այն գնահատել համակողմանիորեն, բայց շատ դեպքերում ընկնելով ծայրահեղությունների մեջ:

Այսպես, Գաբրիել Այվազովսկին, որ մեկ տասնամյակից ավելի եղել է Միաբանության անդամ, «Բազմավեպ»-ի առաջին խմբագիրը և Միաբանությունից հեռացել է 1856 թ. եղբոր՝ Հովհաննես Այվազովսկու հորդորով, իր «Ուրուագիծ ոգույ և ընթացից Մխիթարեան միաբանութեան Վենետկոյ» գրքում քննում է Մխիթարի և Միաբանության հոգևոր ուղղվածության ու կենսական սկզբունքների հետ կապված հարցեր և ավելի շատ շոշափում մարդկային-բարոյական խնդիրներ: Նա բարձր է գնահատում Մ. Սեբաստացու գործունեությունը՝ ասելով, թե վերջինս ջանացել է, որ հայոց մեջ լուսավորությունը տարածվի ոչ թե դրսից, այլ իր մեջ գտնված հանճարների ու շնորհալիների շնորհիվ և, որ ավելի կարևոր է, նա, հարգելով ու ընդունելով լատին միսիոներներին, նրանց ուսումնականությունը, մտքով չի էլ անցկացրել նրանց կարգը մտնել⁵: Ահա թե ինչու էին հաճախ Մխիթարին և Միաբանությանը ամբաստանում Հռոմի առջև:

Սեբաստացու գործունեության նկատմամբ բարդ ու հակասական վերաբերմունք է դրսևորում գրող, հրապարակախոս Մ. Նալբանդյանը⁶, որը բարձր է գնահատում Սեբաստացուն՝ ասելով, թե հայոց դպրությունը վերստին կյանք առավ Մխիթարի հանճարեղ մտքերի «ծննդականությամբ», նրա նամակներից կատարած մեջբերումներով ցույց է տալիս վերջինիս հայրենասիրական մղումները, որոնցից կարևորագույնը «ազգի թե՛ հոգևոր, թե՛ իմացական պիտույքը» հոգալն էր: Նալբանդյանը կարծում է, որ սկզբունքայնությամբ Մխիթարն ավելի բարձր է կանգնած իր աշակերտներից: Շարունակելով Գ. Այվազովսկու միտքը՝ նա գրում է. «Մխիթարը պապականությունը դրեց յուր երեսին որպես դիմակ, նրա ապագայքը ծնանում են դիմակով, բայց հայկական դիմակով: Մխիթարի արտաքինը՝ պապականությունը, դառնում է նոցա համար ներքին, Մխիթարի ներքինը՝ հայությունը, դառնում է արտաքին, մի լոկ դիմակ, որով երևում են միմիայն հայոց ազգի առջև»⁷: Սրան հետևում է խիստ

⁴ Տե՛ս Ա գ ո ն յ ց . 1810, Ա յ վ ա զ ո վ ս կ ի . 1857, Թ ո թ ո ս ե ա ն . 1901, Ս ա ռ գ ի - ս ե ա ն . 1905, Ա գ ե ա ն . 1976:

⁵ Տե՛ս Ա յ վ ա զ ո վ ս կ ի . 1857:

⁶ Ն ա լ բ ա ն դ յ ա ն . 1980:

⁷ Ն ա լ բ ա ն դ յ ա ն . 1980, 276:

եզրակացությունը. Մխիթարյան միաբանությունը «հերձվածողական կենտրոն» է:

Նալբանդյանը կարծում է, որ Մխիթարն իր հաջորդների համեմատ բավականաչափ գրագետ ու զարգացած չէ: Գնահատելով նրա կամքը, համառությունը, կայունությունն ու նվիրվածությունը սկսած գործի նկատմամբ՝ Մ. Նալբանդյանը ոչ մի անգամ չի հիշատակում Սեբաստացու անձնական ներդրումը հայերենագիտության ձևավորման և զարգացման մեջ: Նա գրում է. «Ինքը՝ Մխիթարը, չէր կարող համարվիլ մեծ պտղաբեր հեղինակ այս վերստին նորոգության (խոսքը վերաբերում է գրաբարի ուսումնասիրությանը – Ա. Թ.), որով հետև նա չէր ստացել ոչ այն դաստիարակությունը և ոչ ունեցել էր ճանապարհ՝ ուսումնասիրելու հին լեզվի հիշատակարանքը, որ նորա աշակերտքը, հետզհետե ձեռք բերելով, սկսեցին ուսումնասիրել երկաթի համբերությամբ և անձանձիր աշխատելով»⁸: Դեմոկրատ գրողի համար Մխիթարը «ինքնացյալ ուսումնական չէր, այլ ցանկացող լոկ ուսման»⁹: Ակնհայտ է, որ Մ. Նալբանդյանը նսեմացնում է Սեբաստացու դերը հայ գրապատմական գործընթացում: Ճիշտ է, Մխիթարը իր հաջորդների նման կանոնավոր կրթություն չէր ստացել, բայց իր բնական օժտվածության շնորհիվ սկիզբ դրեց գրաբարի մաքրմանը, աշխարհաբարի կիրառմանը, մշակմանն ու քերականության ստեղծմանը, գիտական բառարանագրությանը: Մխիթարի և Միաբանության գործունեության նկատմամբ արտահայտած հակասական, շատ դեպքերում ուղղակի անարդարացի գնահատականները նկատի ունենալով՝ գրականագետ Ս. Դարոնյանը իրավացիորեն եզրակացնում է. «Տվյալ դեպքում Նալբանդյանին, որը կլանված է ժամանակի հրատապ հարցերով, դավաճանել է պատմականության՝ նրան հատուկ զգացումը»¹⁰:

Մեկ այլ գրագետ՝ Ալ. Երիցյանը¹¹, դրվատանքով խոսելով Մխիթարյանների մասին, նրանց քննադատում է համեմատական լեզվաբանությամբ, հայոց և այլ լեզուների պատմությամբ չզբաղվելու համար: Իհարկե, դիտարկումը ճիշտ է, սակայն Երիցյանը հաշվի չի առնում այն հանգամանքը, որ համապատասխան գիտակարգերը XIX դարում նոր-նոր էին ձևավորվում, միաժամանակ աչքաթող է անում այն հանգամանքը, որ Սեբաստացու մոտ արդեն կան լեզուների համեմատականության տարրեր, որոնք վերաբերում են բառային ոլորտին¹²:

Գրեթե նույն հարցերն է շոշափում և գրեթե նույն եզրահանգումներն է անում Լեոն: Մխիթարյան միաբանության ծավալած գործունեությունը, որը նա համարում է «անօրինակ բեղմնավոր, լույս ու գիտություն մատակարարող, մայրենի գրականությունը ծաղկեցնող», իսկ Մխիթարյաններին անվանում է «անհաղթելի և աննկուն տիտաններ», միաժամանակ որակում է որպես «հետադիմություն և դժբախտություն»¹³: Այնուամենայնիվ, Լեոն բարձր է գնահատում Մխիթարի կատարած աշխատանքը «օրվա լեզվի»՝ աշխարհաբարի

⁸ Ն ա լ բ ա ն դ յ ա ն. 1980, 270:

⁹ Ն ա լ բ ա ն դ յ ա ն. 1980, 276:

¹⁰ Դ ա Ր Ո Ն Յ ա ն. 1979, 113:

¹¹ Ե Ր Ի Գ Ե ա ն. 1883, 110–119:

¹² Տ Ե՛ ս Պ Ե տ Ր Ո Ս Յ ա ն. 2008:

¹³ Լ Ե ո. 1986, 360:

ուղղությամբ, իսկ նրա «Հայկազեան բառարանը» համարում է դարագլուխ կազմող հսկայական գործ:

XX դարի երկրորդ կեսին մեծանում է հետաքրքրությունը Մխիթարի և Մխիթարյանների հայագիտական գործունեության նկատմամբ: Հայ լեզվաբանները սկսում են հաճախ անդրադառնալ Մխիթարյանների գիտական ժառանգությանը հայերենի առանձին հարցերի քննության ընթացքում: Ճիշտ է, կատարված ուսումնասիրությունների վրա շատ դեպքերում զգալի է կուսակցական գաղափարախոսության աննպաստ ազդեցությունը¹⁴, սակայն հետագայում մեր հասարակական միտքը աստիճանաբար ազատագրվում է այդ ազդեցությունից և դառնում ավելի իրատեսական ու ճշմարիտ:

Նկատելի է երևույթների մեջ խորանալու, դրանք պատմականորեն արժևորելու, տրված գնահատականները ճշգրտելու ձգտումը: Մ. Սեբաստացին իր գործունեության մասին հետևյալն է գրում. «... թէպէտ ըստ ամենայնի ստորարկեալ եմ և ստորարկանեմ զիս միշտ ի ներքոյ հնազանդութեան գահին Հռոմայ, ըստ որում և հայրն մեր Գրիգորիոս Լուսաւորիչն ինձ օրինակ կայ, բայց այնու սէրն իմ և ջան աշխատանացս առ օգուտն ազգին իմոյ (թէ և զիս վասն այսպիսոյ հնազանդութեան քամահիցէ) ոչ երբեք թուանայ»¹⁵:

Սեբաստացուն մեղադրել են անհարկի զգուշավորության, զիջողականության մեջ, սակայն իրականում նա ծավալել է հաշվենկատ, հավասարակշռված գործունեություն: Ինքն իր հավատամքը ձևակերպել է հետևյալ կերպ. «Ոչ քրիստոնեությունս հայութեանս կը զոհեմ, ոչ ալ հայութիւնս՝ քրիստոնեութեանս»:

*Մխիթար Սեբաստացին և աշխարհաբարի հարցերը. «Դուռն քերականութեան աշխարհաբար լեզուին հայոց» և «Գիրք քրիստոնէականի վարդապետութեան» երկերը*¹⁶

XVII դարում սկզբնավորված նոր գրական հայերենը, որ առավելապես հայտնի է աշխարհաբար¹⁷ անունով և հանդես էր գալիս որպես միասնական լեզվաորակ, XVIII դարում երկփեղկվեց՝ պայմանավորված թե՛ պատմաաշ-

¹⁴ Տե՛ս Մ ա ր գ ա ր յ ա ն. 1957:

¹⁵ Աստուածաշունչ գիրք հնոց և նորոց կտակարանաց. 1733, 1279:

¹⁶ Այս հոդվածում նպատակահարմար չենք համարում կատարել Մ. Սեբաստացու ներկայացրած աշխարհաբարի և գրաբարի հնչյունաբանական, բառապաշարային, քերականական համակարգերի խորքային քննություն: Դրանց վերաբերյալ ստեղծվել է հարուստ գրականություն (Գ. Ջահուկյան, Էդ. Աղայան, Հովհ. Բարսեղյան, Վ. Պետրոսյան, Թ. Ասոյան և այլք): Մեր նպատակն է ներկայացնել նրա հայացքներն ու ընկալումները նշված լեզվաորակների, դրանց փոխհարաբերությունների, այդ ժամանակահատվածում ստեղծված լեզվավիճակի, մտավորականության վերաբերմունքի և հարակից այլ հարցերի վերաբերյալ:

¹⁷ Վ. Աճեմյանը, վկայակոչելով Գ. Ջահուկյանի դիտարկումը (Ջ ա հ ու կ յ ա ն. 1964, 49), գրում է. «17-րդ դարից մինչև 19-րդ դարի կեսերը ընկած ժամանակամիջոցը իրավամբ հայ լեզվաբանության մեջ համարվել է աշխարհաբարի տարերային զարգացման շրջան, որի ընթացքում ի հայտ են գալիս որոշակի միասնականացնող ձգտումներ» (Ա ճ ե մ յ ա ն. 1971, 38):

խարհագրական, թե՛ լեզվական գործոններով: Ձևավորվեցին գրական հայերենի երկու ճյուղերը՝ արևելահայերենն ու արևմտահայերենը, որոնք սկսում են ինքնուրույն զարգանալ՝ ցուցաբերելով հնչյունական, բառապաշարային, քերականական որոշակի տարբերություններ. վերջիններս ժամանակի ընթացքում գնալով ավելի խորացան:

Սկզբնական շրջանում արագ էր զարգանում ու կանոնավորվում արևմտահայերենը, որի կանոնարկման հիմնական օջախները երկուսն էին՝ Կ. Պոլիսը և Վենետիկը: Այդպիսի կենտրոններ արևելահայոց մեջ երևան եկան միայն XIX դարի առաջին կեսին: Արևմտահայերենի ձևավորման, զարգացման և կանոնարկման գործընթացում առանձնահատուկ նշանակություն է ստանում Մխիթարյանների գործունեությունը: Հենց այն փաստը, որ արևմտահայերենի առաջին քերականությունը հրատարակել է Մ. Սեբաստացին, արդեն բավական է որոշակի պատկերացում կազմելու համար նրանց՝ աշխարհաբարի նկատմամբ ունեցած վերաբերմունքի մասին: Այնուամենայնիվ, սկզբնական շրջանում ուշադրության կենտրոնում գրաբարն էր՝ պայմանավորված մի քանի օբյեկտիվ պատճառներով, որոնցից ամենակարևորը աշխարհաբարի քերականական համակարգի անկազմակերպ, անկայուն վիճակն էր, բառապաշարի աղքատությունն ու օտարամուտ տարրերով գերհագեցած լինելը: Սակայն գրաբարն էլ, իր առավելություններով հանդերձ, ուներ մի էական թերություն. այն վաղուց արդեն դադարել էր հաղորդակցման միջոց լինելուց: Գրաբարն իբրև հաղորդակցման միջոց նորից կիրառելու ջանքերը դառնում էին ինքնանպատակ: Աշխարհաբարին դիմելը դարձավ անհրաժեշտություն, ժամանակի պահանջ, սակայն աշխարհաբարին դիմելու նպատակն էր տարօրինակ. կարծիք էր ձևավորվել, թե աշխարհաբարի միջոցով կարելի էր վերադառնալ գրաբարին: Մասամբ նաև սրանով էր պայմանավորված Սեբաստացու կողմից աշխարհաբարի քերականության հրատարակումը: 1727 թ. լույս է տեսնում նրա «Դուռն քերականութեան աշխարհաբառ լեզուին հայոց» աշխատության հայատառ տաճկերեն տարբերակը¹⁸, որը փոքրածավալ, ուսուցողական նպատակ հետապնդող գրքույկ էր և տարրական գիտելիքներ էր պարունակում այդ շրջանի արևմտահայերենի վերաբերյալ: Առաջաբանում Սեբաստացին խոսում է նման աշխատությունների ստեղծման պատճառների ու շարժառիթների մասին: «Բազմիցս մեծաւ աղաչանօք խնդրեցաւ յոմանց բարեպաշտից, զի շարադրիցեմ զհոլովից անուանց և զլծորդութեանց բայից և զորպիսութեանց այլոց մասանց քերականութեան»¹⁹, – գրում է նա: Ինչպես երևում է, Սեբաստացին ընդառաջել է բարեպաշտ խնդարկուններին և գրել աշխարհաբարի քերականություն երկու գրքույկով: Կարծում ենք, որ միայն հասարակական պահանջը չէ, որ ստիպել է Սեբաստացուն գրել այդ քերականությունը: Կարևոր դեր է խաղացել նաև նրա դրական, գիտակցված կողմնորոշումը դեպի աշխարհաբարը:

¹⁸ Հայերեն տարբերակը մնացել է անտիպ: Արևմտահայերենի նմանօրինակ երկրորդ քերականությունը լույս տեսավ 33 տարի հետո՝ 1760թ., որի հեղինակը Պ. Դպիրն էր:

¹⁹ Սեբաստացի. 1727ա, 3:

Ուսուցումը հեշտացնելու նպատակով գրքույկի վերջում Սեբաստացին դնում է նաև փոքրիկ երկլեզվյան բառարան, որում հայերեն բառերն ունեն համապատասխան քերականական նշումներ՝ եզակի սեռականի ձևը, հոգնակի կազմությունը, բայի խոնարհման ձևերը և այլն: Սրա հրատարակումով նա հետապնդում էր ևս մի նպատակ. կարծում էր, որ աշխարհաբարի օգնությամբ կարելի է յուրացնել գրաբարը կամ գոնե հեշտացնել վերջինիս ուսուցումը: «Քերականության» առաջաբանում հենց այդպես էլ նա մեկնաբանում է այն գրելու անհրաժեշտությունը. «... և կամ նախապես ուսանելով զայն, տրամադրիլ առ ուսումն քերականութան գրաբարի լեզուի մերոյ»²⁰:

Այս գրքույկից հետո հենց նույն՝ 1727 թ. Սեբաստացին հրատարակում է ևս մի աշխարհաբար գիրք՝ «Գիրք քրիստոնէականի վարդապետության» վերնագրով, որի գրաբար տարբերակը լույս էր տեսել 1725 թ.: Գրքի առաջաբանը հնարավորություն է տալիս ճիշտ հասկանալու և գնահատելու աշխարհաբարի նկատմամբ Սեբաստացու ցուցաբերած վերաբերմունքը: Այսպես՝ պարզվում է, որ գրքի աշխարհաբար հրատարակությունը իր վաղեմի ցանկությունն է եղել: Առաջաբանում նա գրում է. «Ի բազմաց հետե ըղձայի զքրիստոնէականէ վարդապետութենէ զմանսս հարկաւորս ուսանելիս աշխարհաբարի լեզուաշարադրել»²¹: Եվ չնայած դա կարդալու են «գոեհիկները», այնուամենայնիվ, կարծում է, որ «տակալին արժանի էր աշխատիլ», իսկ նրանք, ովքեր չեն ցանկանա այն կարդալ, թող կարդան արդեն հրատարակված գրաբար տարբերակը: Թերևս Սեբաստացին հնարավորություն է տվել համադրելու գրաբար և աշխարհաբար տարբերակները՝ գրաբարը յուրացնելու համար: Ի դեպ, աշխարհաբարը «մեծ քերականություն» մտնելու «դուռ» է համարել նաև ժամանակի ակտիվ գործիչներից մեկը՝ Պ. Դպիրը²²:

Անկասկած, Սեբաստացու դեպքում աշխարհաբարի քերականություն ստեղծելը չի կարելի համարել սոսկ գրաբարը ուսուցանելու նպատակադրում: Նա լավ էր հասկանում, որ գրաբարը ապագա չունի, այն պատկանում է աշխարհաբարին: «Քերականության» մեջ՝ օրինակների բաժնում, կան այնպիսիները, որոնք ուղղված են սովորողներին, սակայն անուղղակիորեն արտահայտում են Սեբաստացու վերաբերմունքը աշխարհաբարի նկատմամբ: Ահա դրանք. «Ես ժամանակ չունեի, թե չէ շատոնց գրած էի զասոնք ձեզի: Քիչ դժուարութիւն կուքաշէք զասոնք սօրվելու, զի ձեր գիտցած լեզուովն գրեր եմ: Զայս քերականութիւնս գրաբար լեզուով չգրեցի, քանզի ձեզի աշխարհաբար հայերէնն պէտք է: Թէ այս լեզուովս խօսիք, թէ այն լեզուովն, ամէնքն թող ի փառս աստուծոյ լինին, այն է ամէնէն լաւն»²³: Ինչ կարելի է եզրակացնել այս մի քանի արտահայտություններից. Սեբաստացին շատ լավ է հասկացել աշխարհաբար գրելու անհրաժեշտությունը, ցուցաբերել է մեծ շրջահայացություն՝ չխճճելով գրաբարի և աշխարհաբարի փոխհարաբերությունները և դրանց միջև դնելով հավասարության նշան մարդկանց կողմից գործածվելու առումով:

²⁰ Սեբաստացի. 1727ա, 3–4:

²¹ Սեբաստացի. 1727բ, 3:

²² Ասոյան. 2001, 43:

²³ Սեբաստացի. 1727ա, 88–89:

Աշխարհաբարի նկատմամբ դրսևորած այս ուշադրությունը, ըստ էության, չի հակասում Սեբաստացու՝ աշխարհաբարը գրաբարի յուրացման համար «դուռ» համարելու մոտեցմանը: Գրաբարին բացարձակ առավելություն տալը պայմանավորված էր մի քանի հանգամանքներով, որոնցից ամենակարևորը պատմական զարգացման տրամաբանությամբ բացատրելն անհնար է, այն թերևս ազգային նկարագրի բաղադրիչ է և սուբյեկտիվ բնույթ ունի, որը XVII–XVIII դարերում վճռորոշ դեր էր խաղում գրաբարի և աշխարհաբարի փոխհարաբերությունների, կիրառման շրջանակների, դրանց նկատմամբ մտավորականության դրսևորած վերաբերմունքի որոշման առումներով: Բանն այն է, որ Սեբաստացու ժամանակ այն տրամադրությունն էր տիրում, թե գրագետ է այն մարդը, որը լավ է տիրապետում գրաբարին²⁴: Սեբաստացին՝ որպես իր ժամանակի մարդ, չէր կարող տուրք չտալ ժամանակի մտայնությանը: Աշխարհաբար գրելը տգիտության և գոեհկության նշան էր համարվում, սակայն դա էլ ժամանակի պահանջն էր, որը ևս չէր կարելի աչքաթող անել: Մեր մտավորականներից շատերը պարզապես իրենց համոզմունքներից բխող ընտրություն են կատարել. հետևել են կա՛մ ժամանակի մտայնությանը, կա՛մ ժամանակի պահանջին: Սեբաստացին ավելի շրջահայաց, խոհուն ու հանդարտ վերաբերմունք է ցուցաբերում, քան իր ժամանակակիցները. ենթարկվում է ժամանակի մտայնությանը, միաժամանակ հետևում ժամանակի պահանջին²⁵: Նրա գործունեությունը ինքնանպատակ չէր, նրա արածը ազգի համար էր, ուստի գործում էր զգույշ, հայ ժողովրդին օգուտ տալու նպատակալացությամբ: Այդպես և այդ գիտակցությամբ էլ ձեռնամուխ է լինում աշխարհաբարի մշակմանն ու տարածմանը: Ընդհանրապես Սեբաստացին աշխարհաբարի մասին ծավալուն դատողություններ չի արել: «Քերականության» առաջաբանը խիստ հակիրճ է, փոքր-ինչ ընդարձակ է «Գիրք քրիստոնէականի վարդապետութեան» գրքի առաջաբանը («Բան առ ընթերցողս»): Այստեղ արդեն Սեբաստացու վերաբերմունքը աշխարհաբարի նկատմամբ որոշակի է ու կոնկրետ:

²⁴ Իր ժամանակին Հովհ. Հովով Կոստանդնուպոլսեցին ցանկանում է հասարակ ժողովրդի համար գրել աշխարհաբար, սակայն վախենալով, որ իրեն տգետ կարող են համարել՝ գրում է հետևյալը. «Ուստի մի՛ ոք արհամարհիցէ զմեզ իբրև զանհմուտս լեզուին հայոց» (Կ ո ս տ ա ն դ ն ու պ ո լ ս ե ց ի. 1687, 8): Այդ մասին մտայնությունը իշխող էր նույնիսկ XIX դարի 2-րդ կեսին: Դա հաստատում է Լեոն իր «Հայկական տպագրություն» գրքում: Մինչև Գրապայքարը դա շատ էր կաշկանդում նույնիսկ Խ. Աբովյանին:

²⁵ Լեոն խիստ գնահատական է տալիս Սեբաստացու վարվելակերպին՝ գրելով, թե Մխիթարը համարձակ վերանորոգիչ չէր, այլ «կոմպրոմիսների» մարդ, որը շատ լավ ընդունում էր ժամանակի պահանջները, բայց հնության, անշարժության, կույր ավանդապահության դեմ հսկայական կոիվ սկսելու և առաջ տանելու ընդունակությունը չուներ: Կարծում ենք՝ Լեոյի գնահատականը ճիշտ չի ներկայացնում իրողությունը, քանի որ Մխիթարն ու նրա հաջորդները շատ հարցերում եղան առաջինները, որն ավելի ակնառու է երևում, երբ արևմտահայ ու արևելահայ իրողությունները դնում ենք նույն զուգահեռի վրա (Ա ս ոյ ա ն. 2001, 45):

Երևում է ոչ միայն նրա՝ աշխարհաբարի կարևորության գիտակցումը, այլև նրա նկատմամբ զգույշ վարվելու ձգտումն ու պահանջը²⁶:

Աշխարհաբարը, ըստ Սեբաստացու, մարդկանց համար անսովոր է, որովհետև մեր ժողովրդի «անտերունչ» լինելու հետևանքով այն քիչ է գործածվել «ի գրուածս»: Հասարակական-քաղաքական պայմաններից բխեցնելով աշխարհաբարի՝ մարդկանց համար անսովոր լինելու հանգամանքը՝ նա պատվիրում է խիստ զգուշությամբ վերաբերվել դրան:

Կարելի է եզրակացնել, որ Սեբաստացին առաջիններից էր, որ պաշտպանեց աշխարհաբար գրքեր գրելու ձգտումը, հասկացավ, ընդունեց դրա անհրաժեշտությունը և առաջ քաշեց այն մշակելու գաղափարը:

Աշխարհաբարի քերականություն գրելը այնքան էլ հեշտ գործ չէր, եթե նկատի ունենանք, որ այն նոր էր կազմավորվում և, բնականաբար, նորմավորված չէր: Կարևոր հանգամանք էր, թե նոր շրջանի բարբառներից, որոնք զարգանում էին արագորեն և ցուցաբերում էին անհասկանալիության աստիճանի տարբերություններ, որը հիմք կդառնար նոր գրական հայերենի արևմտյան ճյուղի ձևավորման համար: Սեբաստացին կողմնորոշվում է դեպի Փոքր Ասիայի խոսակցական լեզուն. այն լեզվական շատ ընդհանրություններ ուներ մնացած բարբառների հետ²⁷: Այս մասին «Քերականության» մեջ գրում է. «... շարադրիցեմ ... այնպիսեաւ աշխարհաբարոյի ոճիւ, ըստ որում խօսին այնքիկ հայք, որք բնակեալք են ի Փոքրն Ասիա»²⁸:

Նշենք, որ Սեբաստացու վերը հիշված երկու գրքերի (լույս են տեսել նույն՝ 1727 թ.)²⁹, համառոտ քերականական համակարգի և բառապաշարի ուսումնասիրության միջոցով կարելի է որոշակի գաղափար կազմել արևմտահայերենի նախնական վիճակի մասին:

«Դուռն քերականութեան աշխարհաբառ լեզուին հայոց» գրքույկում գիտնականը գործնականորեն բավարար մակարդակով ներկայացրել է իր ժամանակի արևմտահայերենի քերականական հիմնական առանձնահատկությունները, սակայն դա դեռ չի նշանակում, որ գրվող աշխարհաբար գրքերի լեզուն ձևված պիտի լինի նշված առանձնահատկությունների սահմաններում:

²⁶ Մ. Սեբաստացու այս մտեցումը յուրացրին նաև Միաբանության մյուս անդամները: Նույնիսկ XIX դարի կեսերին՝ Գրապայքարի շրջանում, երբ գրաբար թե աշխարհաբար հարցադրումը ենթադրում էր մտավորականության կողմնորոշվածություն գրականության լեզվի ընտրության հարցում, կաճառականների մեծ մասը նիստի ժամանակ «այս կէտս կպնդէր, թէ բացի արտաքսմանէ այլազգի կամ օտար բառից և ածանցներու, պէտք չէ ուրիշ փոփոխություններ ընել աշխարհաբար լեզուին մէջ. ... թողլու է ժամանակին, որ գործէ և կատարելագործէ աշխարհիկ բարբառը» (Ս ա ր - գ ի ս ե ա ն. 1905, 367):

²⁷ Մանրամասն տե՛ս Ջ ա հ ու կ յ ա ն. 1972, 82–119:

²⁸ Մանրամասն տե՛ս Ա ճ ե մ յ ա ն. 1971, 38–49:

²⁹ Երևանի գրադարաններում չկա «Դուռն քերականութեան» գրքի 1727 թ. հրատարակությունը: Ուսումնասիրության նպատակով օգտագործվել է դրա 1771 թ. վերահրատարակությունը:

Իրականում դրանց լեզուն բազմաբնույթ է ու բազմաշերտ, որովհետև կողք կողքի կիրառվել են գրաբարյան, բարբառային, աշխարհաբարյան և օտարամուտ լեզվատարրեր: Սեբաստացին ինքն էլ աշխարհաբարի կոնկրետ դրսևորումներում հաճախ շեղվում է իր նշած օրինաչափություններից այն առումով, որ շատ են գրաբար-աշխարհաբար զուգաձևությունները, նկատելի է հակումը դեպի գրաբար: Մասնավորապես արևմտահայերեն առաջին՝ «Գիրք քրիստոնէականի վարդապետութեան» գրքի լեզվի քննությունը ցույց է տալիս, որ դժվար է եղել միանգամից կտրվել գրաբարից. շատ են գրաբարաբանությունները, որոնք արտահայտված են լեզվական գրեթե բոլոր մակարդակներում:

Սեբաստացին և հայ գիտական բառարանագրության սկզբնավորումը: «Բառգիրք հայկազեան լեզուի» բառարանը

Սեբաստացին արևմտահայերենի քերականությունը կազմելուց հետո սկսեց զբաղվել Հայկազյան բառարանի ստեղծման աշխատանքներով: Պետք է ասել, որ մինչ բառարանի կազմությանը ձեռնամուխ լինելը նա տարբեր նպատակներով կազմում էր բառացանկեր: «Դուռն քերականութեան աշխարհաբար լեզուին հայոց» ձեռնարկում դրված է երկլեզվյան բառացանկ՝ «Բառագիրք, որ հետևի դրան քերականութեան – հայ-թուրքերէն բառարան» վերնագրով³⁰, իսկ «Քերականութիւն գրաբարի լեզուի հայկազեան սեռի» աշխատության երրորդ մասի հավելվածի առաջին գլուխը նվիրված է ուղղագրությանը, մասամբ՝ ուղղախոսությանը՝ «Առաղդեցութիւնք ոմանք սակս յարմարագրութեան, արտաբերութեան և վերծանութեան, որք վերաբերին առ արիեստն քերթողութեան»: «Յարմարագրութեան» քննությունն սկսվում է հաճախ հանդիպող սխալ գրություն ունեցող երկար բառացանկով՝ ճիշտ գրությամբ հանդերձ³¹: Բառացանկերը կարող էին միայն կոնկրետ օրախնդիր հարցեր լուծել, սակայն թե՛ գրաբարի, թե՛ աշխարհաբարի ուղղությամբ XVIII դարում սկիզբ առած ուսումնասիրությունների ընթացքում անհրաժեշտություն էր առաջանում լուծելու բազմաթիվ հարցեր՝ կապված ուղղագրության, ուղղախոսության, բառագործածության, քերականական իրողությունների հետ: Բառարանը կարող էր որոշ չափով կարգավորել նշված հարցերը:

Սեբաստացու «Բառգիրք հայկազեան լեզուի» բառարանը թե՛ մտահղացմամբ, թե՛ իրականացմամբ նոր երևույթ էր հայագիտության մեջ: Այն ընդգրկում էր գրաբարի ամբողջ բառազանձը, որ ավանդված էր «Աստուածաշունչ» մատյանում և հայ մատենագրության մեջ: Սակայն բառարանն արժևորվում է ոչ միայն նրանով, որ ներկայացնում է գրաբարյան բառաշերտը համապատասխան նշումներով, այլև նրանով, որ, փաստորեն, աշխարհաբարի առաջին լուրջ բառարանն է: Այս առումով Սեբաստացին 1749 թ. լույս տեսած բառարանի 1-ին հատորի առաջաբանում նշում է, որ երկրորդ հատորում կան

³⁰ Տե՛ս Սեբաստացի. 1727ա, 91–129:

³¹ Մանրամասն քննությունը տե՛ս Ջահուկյան. 1974, 248–254:

բառացանկեր կամ բառարաններ՝ «... արարեալ ի գրաբառէ յաշխարհաբառն»
և «... յաշխարաբառէ ի գրաբառն»:

Սեբաստացին որոշ ընդհատումներով բառարանի ուղղությամբ աշխատել է մինչև 1745 թվականը: Աշխատանքի մի մասը Մխիթարի հանձնարարությամբ և տրամադրած նյութերի հիման վրա կատարել են նրա աշակերտները, քանի որ ինքն արդեն հիվանդ էր և ի վիճակի չէր մենակ ավարտելու սկսած աշխատանքը: Սակայն պետք է ասել, որ բառարանը մինչև նրա մահը արդեն պատրաստ էր տպագրության, չնայած դրա երկրորդ հատորը լույս տեսավ Սեբաստացու մահվանից միայն 20 տարի անց: Այս հատորի՝ տպագրության պատրաստելու աշխատանքներում մեծ է նրա աշակերտների ավանդը, սակայն այն արտահայտում է ոչ միայն աշակերտների, այլև հենց իր՝ հայագետի մոտեցումները³²:

Մինչև Սեբաստացին հայ իրականության մեջ ստեղծվել էին մի քանի բառարաններ, սակայն այնքան թերություններ են ունեցել, որ շատերն են հրաժարվել դրանք օգտագործելուց: Սեբաստացու «Բառգիրք հայկազեան լեզուի» բառարանի առաջաբանում նշվում են հետևյալ թերությունները. ա) բանապաշարի աղքատությունը, բ) բառերի բացատրությունների խրթին ու անհասկանալի լինելը, գ) սխալների առատությունը, որը վերագրվում է և՛ անհմուտ գրիչներին, և՛ տպագրությանը: Այդ թերությունները ստիպում են Սեբաստացուն վերանայել բառարան կազմելու հայտնի մոտեցումները և մշակել բառարանակազմության նոր մեթոդներ ու սկզբունքներ:

Նոր բառարան ստեղծելու շարժառիթները շատ էին: Նախ՝ դեռևս քերականություն գրելիս Մխիթարն ինքն էր խոստացել ստեղծել նոր բառարան, որի կարիքը շատ էր զգացվում, և ապա, ինչպես ինքն է հավաստում, իրեն շատերն են թախանձանքով դիմել նման խնդրանքով, որը անհնար էր գործնականում բավարարել բանավոր եղանակով: Բացի հասարակական այսպիսի «պատվերից»՝ բառարանը կարևոր դեր կարող էր խաղալ ուսուցման տեսակետից: Այս մասին բառարանի առաջաբանում նա գրում է. «... եւ զի դժուարին է լինիլ քաջ գիտնական առանց գիտելոյ զարուէստ քերականութեան, նույնպէս դժուարին է գոլ քաջ քերական առանց լինելոյ գիտակ հանգամանաց, բառից, զոր ուսանիմք նպաստութեամբ բառարանի»³³: Շարժառիթներից մեկն էլ հայոց լեզվի նկատմամբ ունեցած սերն էր կամ, ինչպես ինքն է ասում, «գուրջ»:

Ինչպես արդեն նշվել է, հայկական գաղթօջախներում ծավալված մշակութային վերելքը միտված էր ազգային ինքնագիտակցության վերականգնմանն ու ամրապնդմանը, ազգային դիմագծի պահպանմանը: Այս գործընթացում շատ կարևոր դեր էր վերապահված հայոց լեզվին, որը պատմականորեն հայտնվել էր աննախանձելի վիճակում: Առավել խիստ մտահոգություն էր առաջացնում Արևմտյան Հայաստանում ստեղծված լեզվավիճակը: Սեբաստացին առավել մտահոգող էր համարում այն, որ շատերը, հաճախ չիմանալով կամ չգտնելով հայերեն ճիշտ բառը, դիմում էին այլազգի կամ «ռամկորենին»

³² Տե՛ս Գ ա ս պ ա ղ յ ա ն. 1968, 73–96:

³³ Ս ե բ ա ս տ ա գ ի. 1749, 4:

(աշխարհաբարին): Այս մասին նա գրում է. «Նաև բազումք առ ի չգոյէ բառարանի, ոչ գտանելով յամենայն պէտս զհայերէն բառս, բունն հարին զայլազգական կամ զոսմական բառից»³⁴: Ահա, իրավիճակի թելադրանքով Սեբաստացին մտածում և ցանկանում է մաքրել ու անաղարտ պահել մեր լեզուն, պահպանել քերականական ճիշտ ձևերը, հասանելի ու մատչելի դարձնել «գրոց լեզուն» հասարակական լայն խավերին: Բառարանը պետք է ուղղություն տար և՛ լեզվի կիրառությանը, և՛ դպրությանը, այլապես եղծվելով այնպես կխանգարվի «որպէս յայտ է յաշխարհաբառ լեզուէն մերմէ, որ յաղագս անկանոն և անառաջնորդ լինելոյ, այնչափ է փռեկտեալ և բազմացեալ, որչափ են գաւառք բնակութեան կամ մանաւանդ որչափ են քաղաքք կամ գիւղորէք: Եւ յոմանս այնչափ է եղծեալ, մինչ զի ոչ երևին հայերէն խօսիլ, այլ իբրև գլտուժ և զդուժ ընդ օդս բարբառիլ որպէս որք կոչել ըզգայլն՝ գուլ, զգառն՝ գօռ, ըզհացն՝ խօց, զմեծն՝ ջօջ ...»³⁵:

Նշված հանգամանքը Սեբաստացուն և նրա աշակերտներին կանգնեցնում է դժվարության առաջ. ինչպե՞ս տալ բառերի բացատրությունները՝ գրաբա՞ր, թե՞ աշխարհաբար: Աշխարհաբարի կիրառումը միանգամից բացառվում է, որովհետև վերջինս այդ շրջանում դեռևս չէր ձևավորվել իբրև ընդհանուր գրական լեզու, այլ ներկայանում էր բարբառների միջոցով, որոնց միջև փոխադարձ հասկանալիության աստիճանը բավականին ցածր էր իբրև հետևանք գաղթելուն և օտար վայրերում բնակվելուն, «... վասն որոյ բնակիչք միոյ գաւառի ոչ հասկանան զբարբառ միւսոյ գաւառի գոնէ ըստ մասին»³⁶: Այսպիսի լեզվական իրադրության պայմաններում Սեբաստացին ուղղորդվում է դեպի գրաբարը՝ երբեմն բացատրությունները տալով աշխարհաբար:

Բառարանի առաջաբանում Սեբաստացին խոստանում է լույս ընծայել մեկ այլ բառարան, որում գրաբարի բառամթերքը կբացատրվի միայն աշխարհաբարով, իսկ աշխարհաբարինը՝ գրաբարով: Այստեղ ևս երևում է Սեբաստացու հեռատեսությունն ու իրատեսությունը: Բանն այն է, որ առաջին հատորի գրաբար բացատրությունները հասկանալու համար պետք էր ունենալ գրաբար-աշխարհաբար բառարան, քանի որ նույնիսկ գրաբարի գիտականներն էին հաճախ դժվարանում գտնել գրաբարի և աշխարհաբարի համապատասխան համարժեքները: Բացի դրանից՝ Սեբաստացին հասկանում էր նաև, որ գրաբար բառարանի օգտագործումը մնալու էր գրաբարին տիրապետող սակավաթիվ մարդկանց մենաշնորհը, ուստի չէր կարող խաղալ հասարակական այն դերն ու նշանակությունը, որոնք ընկած էին Սեբաստացու մտահղացման հիմքում: Այդ նպատակով երկրորդ հատորի մի բաժնում³⁷ տեղադրել է այդ բառացանկերը, որոնք շատ կարևոր նշանակություն են ստանում արևմտահայերենի պատմության ուսումնասիրության տեսակետից:

³⁴ Սեբաստացի. 1749, 5:

³⁵ Սեբաստացի. 1749, 6:

³⁶ Սեբաստացի. 1749, 6:

³⁷ Այս բաժինը Սեբաստացու գլխավորությամբ և ցուցումով մշակել են Սեմեոն Աստվածատրյանը, Իգնատիոս Խաչատրյանը, Ջաքարիա Ալեքսանյանը և այլ Մխիթարյաններ:

Փաստորեն, Սեբաստացին փորձում է աշխարհաբարն օգտագործել գրաբարն ուսուցանելու համար և միանգամայն գիտակցված սկսում ու նպաստում է աշխարհաբարի մշակմանը՝ գործընթացի մեջ ներքաշելով իր միաբաններին: Միաժամանակ ավելացնենք, որ այդ հանգամանքը երևույթի միայն մի կողմն է: Ինչպես տեսանք, Սեբաստացին սթափ էր նայում աշխարհաբարի տարածմանը, հասկանում էր, որ աշխարհաբարը դառնում էր ընդհանուր հաղորդակցման միջոց, ուստի այդ երկու լեզվատրակները չպետք է հակադրել, այլ պետք է ուղղակի որոշարկել դրանց կիրառման ոլորտները՝ մի կողմից մաքրելով գրաբարը, մյուս կողմից՝ մշակել ու կանոնարկել աշխարհաբարը: Ահա այստեղ է, որ առաջանում է մյուս կարևոր խնդիրը, որի լուծմամբ պայմանավորված կլինեք բառարանի կիրառման արդյունավետությունը: Բանն այն է, որ արևմտահայերենը դեռևս ընդհանուր հասարակական հաղորդակցման միջոց չէր և լեզվի ընտրության հարցում պետք էր ճիշտ կողմնորոշվել «բիրատարազ» և «այլազան» բարբառների միջավայրում այնպես, որ գործածված աշխարհաբարը հնարավորինս հասկանալի լինի բարբառախոսներին: Բառարանում ներառվել են նաև գրաբար այնպիսի հասկանալի բառեր, որոնք աշխարհաբար բացատրության կարիք չունեին, այսպիսի դեպքերում հնարավոր է եղել խուսափել թուրքերեն բառերի գերաճախսից. գրաբարյան շատ բառեր փրկել մոռացությունից, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ստեղծել նոր բառեր:

Ավելացնենք նաև, որ աշխարհաբարյան ձևերի վրա խիստ զգացվում է գրաբարի ազդեցությունը: Սակայն դա բխում էր ոչ թե գրաբարամոլությունից, այլ արևմտահայերենը գրաբարի միջոցով մշակելու, կանոնավորելու, հարստացնելու և հայացնելու ձգտումից, քանի որ այլ ճանապարհ պարզապես չկար: Մխիթարյան հայրերից Հովհ. Թորոսյանը այսպես է արժևորում Սեբաստացու «Բառգիրքը». «Այն ժամանակները չգտնուելով տակալին ազգին մեջ կանոնաւոր բառարաններ, մոռցուած և խանգարուած էր բառերուն ճշգրիտ նշանակութիւնը, ամեն մարդ ըստ քմաց կխեղաթիւրէր, կաղճատէր լեզուն, և չգիտնալով բնիկ հայերէն բառերը, անսովոր ու խորթ բառեր կհնարէին: Հարկ էր անոնց առջև ամբարտակ մը կանգնել և ազատել լեզուն խառնակութեան վիհին մէջ գլորելէն. այդ ամբարտակն եղավ «Բառգիրք Հայկազեան լեզուի»՝ աննման իր տեսակին մէջ, դարագլուխ կազմող գործ մը»³⁸: Իսկ հայ բառարանագրության պատմության գիտակ Գ. Գասպարյանն էլ արձանագրել է. «Հին հայկազեան բառարանը փաստորեն հանդիսացավ հայ բառարանագրության այն հիմնաքարը, որի վրա հետագայում կազմվեցին հայերեն բացատրական, թարգմանական և այլ բառարաններ, միաժամանակ այն դարձավ հայոց լեզվի բառային կազմի, քերականական ուսումնասիրությունների աղբյուր»³⁹:

³⁸ Թ ո Ր Ո Ս Ե Ա Ն. 1901, 442:

³⁹ Գ ա ս պ ա Ր Յ Ա Ն. 1968, 97:

Մ. Սեբաստացին և գրաբարի հարցերը: «Քերականութիւն գրաբարի լեզուի հայկազեան սեռի» աշխատությունը: «Հայկաբան» հայերենի վերականգնման գործընթացի սկզբնավորումը

XVIII դարում մեծանում է հետաքրքրությունը գրաբարի նկատմամբ: Դրա համար ստեղծվել էին որոշակի նախադրյալներ⁴⁰: Լեզվական իրավիճակն այնպիսին էր, որ գրավոր խոսքն ակամա մղվում էր դեպի գրաբարը: Աշխարհաբարի, հատկապես արևմտահայերենի անկատար վիճակը չէր բավարարում ազգային ընդհանուր ու միասնական հաղորդակցման պահանջները: Խոսակցական այն լեզուն, որով իրականացվում էր արևմտահայոց հաղորդակցությունը, հայերենախառն թուրքերենն էր (նույնիսկ ոչ թուրքերենախառն հայերենը, որն ավելի հավանական ու բնական կլիներ, եթե նկատի ունենանք թուրքերենի գերիշխող դիրքը հայերենի նկատմամբ): Հայերենն այս վիճակում էր նաև այն բոլոր երկրների հայկական գաղթօջախներում, որոնք նույնպես գտնվում էին թուրքերի տիրապետության տակ (Ռումինիա, Լեհաստան, Բուլղարիա, Հունգարիա և այլն): Այդ մասին Հ. Աճառյանը գրում է. «Վերոհիշյալ (խոսքը վերը նշված վայրերի և ոչ միայն – Ա. Թ.) բոլոր տեղերի հայերը իրենց մայրենի լեզուն կորցրած, խոսում են թուրքերեն թե՛ տանը՝ իրենց ընտանիքում, և թե՛ դուրսը՝ շուկայում կամ փողոցում: Եկեղեցում անգամ, ուր արարողությունը կատարվում է գրաբար, քարոզ և ծանուցում կատարվում են թուրքերեն»⁴¹: Պատճառաբանված էր Սեբաստացու՝ հայատառ թուրքերենով աշխարհաբարի քերականություն գրելը, հայերեն բառերի բացատրությունները թուրքերեն համարժեքներով տալը. ժամանակի մտավորականությունը երկու կարևոր խնդիր պիտի լուծեր. ա) մշակել, մաքրել և կանոնարկել նոր-նոր ձևավորվող արևմտահայ աշխարհաբարը, բ) գրաբարը մաքրել, ուսուցանել և օգտագործել որպես գրի լեզու: Առանց չափազանցության մեջ ընկնելու կարող ենք ասել, որ նշված երկու գործընթացների սկզբնավորողը Մ. Սեբաստացին է:

1730 թ. հրատարակվեց Սեբաստացու «Քերականութիւն գրաբարի լեզուի հայկազեան սեռի» աշխատությունը⁴², որի կարևորագույն նպատակներից մեկն էլ դասական հայերենի վերականգնումն էր: Մինչ այս էլ Սեբաստացին գրում կամ խմբագրում էր գրաբար տեքստեր, իր աշակերտների հետ կատարում թարգմանությունների, ձեռագիր և տպագիր նյութերի լեզվական համե-

⁴⁰ Մանրամասն տե՛ս Ա ս ո յ ա ն. 2001:

⁴¹ Ա ճ ա ռ յ ա ն. 1951, 261:

⁴² Գ. Զահուկյանը, վկայակոչելով վրացական աղբյուրը, գրում է, որ այս քերականությունը «հիմք է հանդիսացել վրացական քերականության սկզբնավորման համար: 1753 թ. վրաց Անտոն կաթողիկոսը Մխիթարի հետևությամբ կազմեց վրացերենի առաջին քերականությունը՝ շատ տեղերում կատարելով բառացի թարգմանություններ և հայաբան փոփոխություններ մտցնելով վրացերենի քերականության մեջ» (Զ ա հ ու կ յ ա ն. 1974, 211):

մատուցություններ, որոնք բացահայտում էին գրաբարի բառակազմական, քերականական այլակերպումները⁴³, իսկ դրանք հետևանք էին նաև կաթոլիկ եկեղեցու լեզվի՝ լատիներենի անմիջական ազդեցության: Ձևավորվում է գրաբարի մի լեզվաորակ, որն ընդունված է անվանել լատինաբան հայերեն⁴⁴: Սեբաստացու և նրա աշակերտների ծավալած մշակութային շարժումը ենթադրում էր նաև դասական գրաբարի վերածննդի գործընթաց: Առաջ է քաշվում «հայկաբան» հայերենի վերականգնման գաղափարը: Ինչպես Հ. Աճառյանն է գրում, լատինաբան հայերենն իր «... մայրամուտն սկսեց Վենետիկում, Մխիթարյանների մոտ, ԺԸ դարին: Լատիներենի ազդեցության հաղթահարման սկզբնավորումը կապվում է Մխիթարի այն երկերի հրատարակման հետ, որոնք գրվել կամ խմբագրվել են հենց նրա կողմից:

Փաստ է, որ Սեբաստացին իր իսկ նախաձեռնած գործընթացում ցուցաբերում է որոշակի զգուշավորություն, որը որոշ հետազոտողների կողմից բնորոշվում է որպես անհետևողականություն և երկչոտություն: Սակայն ճիշտ է նաև այն, որ տեքստից դուրս՝ տողատակին, անպայման արտահայտում է իր ժխտական վերաբերմունքը դրանց նկատմամբ: Գ. Ջահուկյանը գրում է, որ նա քննադատական վերաբերմունք է ցույց տալիս լատինաբանության հանդեպ և նպատակ դնում շարադրել գրաբարի քերականությունը հին ձեռագրերի հիման վրա, ապա ավելացնում է, որ նպատակն իրագործելուն խանգարում են մի քանի հանգամանքներ, որոնցից մեկն էլ այն էր, որ «... լատինաբանությունը վայելում էր Հռոմի հովանավորությունը և գրավում իշխող դիրք. նրա դեմ դուրս գալը կնշանակեր հարուցել Հռոմի կասկածանքը և վաստակել բազմաթիվ հակառակորդներ, ուստի Մխիթարը խոհեմություն է անում նույնությամբ պահելու լատինաբան նորամուծությունները՝ կցելով լայն ծանոթություններ նրանց փոխարեն հին ձեռագրերում տարածված ձևերի մասին»⁴⁵: Սա փաստում է նաև լեզվաբան Հովհ. Բարսեղյանը՝ նշելով, որ «շարունակելով ժամանակի թելադրանքով պահպանել լատինաբան նորամուծությունները՝ Սեբաստացին միաժամանակ վերջիններիս հակադրում է հայերենի հարազատ ձևերը, որով, ինչպես Չամչյանն է նկատել, ճանապարհ է հարթում հայերենի ինքնատիպ ու անադարտ քերականության համար»⁴⁶: Էդ. Աղայանը կարծում է, որ լատինաբան ձևերի առկայությունը «Քերականության» մեջ ոչ միայն իր

⁴³ XVII դ. գրաբարի վիճակի մասին Լ. Հովհաննիսյանը գրում է, որ գրաբարն արդեն «... ինչ-որ չափով կորցրել էր իր դասական հստակությունն ու համակարգայնությունը, և ամենատարբեր բնույթի գործերում երբեմն գրաբարն ու աշխարհաբարը, այլև բարբառային տարրերը հանդես էին գալիս գիրկընդխառը» (Հ ո վ - հ ա ն ն ի ս յ ա ն. 1983, 121): Հետագայում գրաբարն ավելի այլակերպվեց լատիներենի ազդեցությամբ:

⁴⁴ Լատինաբան հայերենի մասին մանրամասն տե՛ս Հ ա մ բ ար ծ ու մ յ ա ն. 2010:

⁴⁵ Ջ ա հ ու կ յ ա ն. 1974, 210:

⁴⁶ Բ ա ր ս ե ղ յ ա ն. 1980, 92:

դեմ չտրամադրելու և լատինաբան քերականությունների ազդեցության արդյունք էր, այլև գրաբարի հարազատ ձևերը չտարբերակելու հետևանք: «Որ Մխիթար արքայի գրքում նկատվում է ժամանակի քերականությունների ազդեցությունը, դա ճիշտ է, և այդպես էլ, անշուշտ, պետք է լիներ, սակայն ընտիր և ոչ ընտիր, հարազատ և ոչ հարազատ գրաբարյան ձևերը չտարբերելու համար ոչ միայն այդ ազդեցությունը պետք է նշել, այլև այն, որ իր ժամանակ այդ ձևերի հարազատությունը դեռ հնարավոր էլ չէր պարզել»⁴⁷, – գրում է նա: Այսպիսով՝ հասկանալի է Սեբաստացու պահվածքը. մի կողմից՝ գտնվել Վատիկանի կրոնապետության տակ և միանգամից հաղթահարել նրա պաշտոնական լեզվի ազդեցությունը, մյուս կողմից էլ՝ հայերեն ձեռագիր մատյանների սակավությունը պահանջում էր խելամիտ դիրքորոշում:

Եզրակացություն

Կատարյալ կրթություն տալու, ազգային մշակույթն ու գիտությունը զարգացնելու նպատակամետ ցանկությունն իրագործելու համար Մխիթար Սեբաստացին եղավ բազմաթիվ տեղերում, դիմեց բազմաթիվ մարդկանց, սակայն սեփական փորձով համոզվեց, որ հայկական միջավայրում տիրում են խավարն ու տգիտությունը: Դա էլ ազդակ հանդիսացավ, որ իրագործի միաբանություն ստեղծելու իր գաղափարն ու նպատակները, այն է՝ հայոց մեջ ծավալել գիտամշակութային, կրթական-լուսավորչական գործունեություն, բարձրացնել հայ ժողովրդի ինքնագիտակցության մակարդակը, նպաստել հայապահպանության խնդիրների լուծմանը: Հատկանշական է այն, որ որպես Միաբանության Սահմանադրություն՝ իրեն առաջարկված Բարսեղի, Օգոստինոսի և Բենեդիկտոսի կանոններից ընտրում է Բենեդիկտոսի կանոնները, որովհետև դրանցում առավել արժևորվում էին մանուկների դաստիարակության ու կրթության, դպրոցների անհրաժեշտության հարցերը:

Սեբաստացու ինքնանվիրումն իր դավանած սկզբունքներին ու մտահղացումներին պսակվեց հաջողություններով ու մեծ ձեռքբերումներով:

Թաթուլ Ասոյան – ք. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արդի հայերենի բաժնի վարիչ, Գավառի պեղական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան: Գիտական հետաքրքրությունները՝ ժամանակակից հայոց լեզու, հայոց լեզվի պատմություն, արևմտահայերեն, բառարանագրություն: Հեղինակ է 3 գրքի և 40-ից ավելի հոդվածի: ORCID: 0009-0004-9484-8797. asoyan.60@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ազեան Մ. 1976, Մխիթար. Մխիթարեան միաբանութեան անմահ հիմնադիր (1676–1976), Բեյրութ, Կ. Տօնիկեան և Որդիք հրատ., 79 էջ [Agian M. 1976,

⁴⁷ Ա ղ ա յ ա ն. 1958, 124:

Mkhitar: Immortal Founder of the Mkhitarist Congregation (1676–1976). Beirut, K. Tonikian and Sons Publishing House, 79 p. (in Armenian):

Ագոնց Ստ. (Գյուվեր). 1810, Պատմություն կենաց և վարուց տեան Մխիթարայ Սեբաստացոյ, Վենետիկ, ի վանս Ս. Ղազարու հրատ., 336 էջ [Agonc St. (Güver). 1810, History of the Life and Conduct of Saint Mkhitar of Sebastia. Venice, S. Ghazar Publishing House, 336 p. (in Armenian)]:

Աղայան Էդ. 1958, Հայ լեզվաբանության պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 385 էջ [Aghayan Ed. 1958, History of Armenian Linguistics. Yerevan, YSU Publishing House, 385 p. (in Armenian)]:

Աճառյան Հ. 1951, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Երևան, «Հայպետհրատ», 1951, 608 էջ [Acharyan H. 1951, History of the Armenian Language, V. 2. Yerevan, “Haypethrat”, 1951, 608 p. (in Armenian)]:

Աճեմյան Վ. 1971, Գրական արևմտափայտերենի ձևավորումը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 292 էջ [Achemyan V. 1971, The Formation of the Literary Western Armenian Language. Yerevan, ASSR Academy of Sciences Publishing House, 292 p. (in Armenian)]:

Այվազովսկի Գ. 1857, Ուրուագիծ ոգոյ և ընթացից Մխիթարեան միաբանութեան Վենետկոյ, Փարիզ, Գրանց ճ. Արամեան, 160 էջ [Aivazovsky G. 1857, Outline of the spirit and course of the Mkhitarist Congregation of Venice. Paris, Library J. Aramian, 160 p. (in Armenian)]:

Ասոյան Թ. 2001, Վենետիկի Մխիթարյանները և աշխարհաբարի հարցերը, Երևան, «Հայաստան» հրատ., 127 էջ [Asoyan T. 2001, The Mkhitarists of Venice and the Questions of the Ashkharabar. Yerevan, “Hayastan” Publishing House, 127 p. (in Armenian)]:

Աստուածաշունչ գիրք հինգ և նորոց կտակարանաց. 1733, Վենետիկ, Անտոնի Բորտոլի հրատ., 1290 էջ [The Holy Bible Old and New Testaments. 1733. Venice, by Anthony Bortoli Publishing House, 1290 p. (in Armenian)]:

Բարսեղյան Հովհ. 1980, Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Երևան, ԵՊՀ հրատ., 527 էջ [Barseghyan Hovh. 1980, The Doctrine of the Parts of Speech of the Armenian Language. Yerevan, YSU Publishing House, 527 p. (in Armenian)]:

Գասպարյան Գ. 1968, Հայ բառարանագրության պատմություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 565 էջ [Gasparyan G. 1968, History of Armenian Lexicography. Yerevan, ASSR Academy of Sciences Publishing House, 565 p. (in Armenian)]:

Դարոնյան Ս. 1979, Մ. Նալբանդյան. կյանքը և գործունեությունը, Երևան, «Սովետական գրող» հրատ., 544 էջ [Daronyan S. 1979, M. Nalbandyan: Life and Activities. Yerevan, "Soviet Writer" Publishing House, 544 p. (in Armenian)]:

Երիցեան Ալ. 1883, Վենետիկի Մխիթարեանք, Թիֆլիս, տպ. Յովհ. Միանսարեանցի, 162 էջ [Yeritsian A. 1883, the Mkhitarists of Venice. Tbilisi, Publishing House by Hovh. Miansaryantsi, 162 p. (in Armenian)]:

Թորոսեան Յովհ. 1901, Վարք Մխիթարայ արքայի Սեբաստացոյ, Վենետիկ, ի վանս Ս. Ղազարու հրատ., 489 էջ [Torosyan Hovh. 1901, The Life of Abbot Mkhitaris of Sebastia. Venice, S. Ghazar Publishing House, 489 p. (in Armenian)]:

Լեո. 1986, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, «Հայաստան» հրատ., 672 էջ [Leo. 1986, Collection of Works, V. 5. Yerevan, “Hayastan” Publishing House, 672 p. (in Armenian)]:

Կոստանդնուպոլսեցի Յովհ. Հովով. 1687, Պարզաբանութիւն հոգեմտագ սաղմոսացն Դավթի, Վենետիկ, տպ. Նահապետ Գյովնազարի, 840 էջ [Hovh. of Constantinople. Holov. 1687, Explanation of the Spiritual Psalms of David. Venice, Printed by Nahapet Gulnazari, 840 p. (in Armenian)]:

Համբարձումյան Վ. 2010, Լատինարան հայերենի պատմություն, Երևան, «Նաիրի» հրատ., 371 էջ [Hambartsumyan V. 2010, History of Latin-Based Armenian. Yerevan, “Nairi” Publishing House, 371 p. (in Armenian)]:

Հովհաննիսյան Լ. 1983, 17-րդ դարի գրաբարը. – «Լեզվի և ոճի հարցեր» (Երևան), էջ 116–196 [Hovhannisyan L. 1983, 17th Century Grabar. – “Issues of Language and Style” (Yerevan), p. 116–196 (in Armenian)]:

Մարգարյան Ա. 1957, Միքայել Նալբանդյանի լեզվագիտական գործունեությունը, Երևան, ԵՊՀ հրատ., 267 էջ [Margaryan A. 1957, The Linguistic Activities of Mikael Nalbandyan. Yerevan, YSU Publishing House, 267 p. (in Armenian)]:

Նալբանդյան Մ. 1980, Երկերի ժողովածու, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 448 էջ [Nalbandyan M. 1980, Collection of Works. Yerevan, ASSR Academy of Sciences Publishing House, 448 p. (in Armenian)]:

Չոպանյան Ա. 1988, Երկեր, Երևան, «Սովետական գրող» հրատ., 872 էջ [Chopanyan A. 1988, Works. Yerevan, “Soviet Writer” Publishing House, 872 p. (in Armenian)]:

Պետրոսյան Վ. 2008, Մ. Սեբաստացու լեզվաբանական հայացքները, Երևան, ԵՊՀ հրատ., 206 էջ [Petrosyan V. 2008, M. Sebastatsi's Linguistic Views. Yerevan, YSU Publishing House, 206 p. (in Armenian)]:

Ջահուկյան Գ. 1964, Հայոց լեզվի զարգացման փուլերը, Երևան, «Միտք» հրատ., 69 էջ [Jahukyan G. Stages of Development of the Armenian Language. Yerevan, “Mitq” Publishing House, 69 p.] (in Armenian):

Ջահուկյան Գ. 1972, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 347 էջ [Jahukyan G. 1972, Introduction to Armenian Dialectology. Yerevan, ASSR Academy of Sciences Publishing House, 347 p. (in Armenian)]:

Ջահուկյան Գ. 1974, Գրաբարի քերականության պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 558 էջ [Jahukyan G. 1974, History of Grabar Grammar. Yerevan, YSU Publishing House, 558 p. (in Armenian)]:

Սարգիսեան Բ. 1905, Երկհարիւրամեայ գրականական գործունեութիւն և նշանատր գործիչներ Վենետկոյ Մխիթարեան միաբանութեան, Վենետիկ, ի վանս Ս. Ղազարու հրատ., 400 էջ [Sargisyan B. 1905, Bicentennial Literary Activity and Prominent Figures of the Venetian Mkhitarist Congregation. Venice, S. Ghazar Publishing House, 400 p. (in Armenian)]:

Սեբաստացի Մ. 1727ա, Դուռն քերականութեան աշխարհաբառ լեզուին հայոց, Վենետիկ, Անտոն Բորտոլի հրատ., 149 էջ [Sebastatsi M. 1727a, The Door to Grammar in the Ashkharabar of the Armenian Language. Venice, Anton Bortoli Publishing House, 149 p. (in Armenian)]:

Սեբաստացի Մ. 1727բ, Գիրք քրիստոնէականի վարդապետութեան, Վենետիկ, Անտոն Բորտոլի հրատ., 132 էջ [Sebastian M. 1727b, Book of Christian Doctrine. Venice, Anton Bortoli Publishing House, 132 p. (in Armenian)]:

Սեբաստացի Մ. 1749, Բաղդիրք հայկազեան լեզուի, հ. 1, Վենետիկ, Անտոն Բորտոլիի հրատ., 1213 էջ [Sebastatsi M. 1749, Dictionary of the Armenian Language, V. 1. Venice, Anton Bortoli Publishing House, 1213 p. (in Armenian)]:

Սեբաստացի Մ. 1769, Բաղդիրք հայկազեան լեզուի, հ. 2, Վենետիկ, Անտոն Բորտոլիի հրատ., 1770 էջ [Sebastatsi M. 1769, Dictionary of the Armenian Language, V. 2. Venice, Anton Bortoli Publishing House, 1770 p. (in Armenian)]:

ОСНОВАТЕЛЬ КОНГРЕГАЦИИ МХИТАРИСТОВ:
МХИТАР СЕБАСТАЦИ

ТАТУЛ АСОЯН

Резюме

The numerous scientific works by Hrachya Acharyan (1876-1953) cover all domains of the study of the Armenian language. He is the founder of such scientific disciplines as the history of the Armenian language, Armenian dialectology, and experimental phonetics of Armenian language. Hr. Acharyan's monumental contributions to Armenian lexicography, etymology of the Armenian language, the study of Armenian personal names, historical and comparative grammar of the Armenian language, typological and contrastive research, and many other fields are of fundamental importance to Armenian studies. The pedagogical legacy of the eminent Armenologist is immense. Throughout his long-standing teaching and lecturing career, he fully imparted his knowledge to numerous generations of students and postgraduate researchers.

How great was he as a scientist, just as noble was he as a person. He was distinguished by inexhaustible kindness and humanism, benevolence, patriotism, simplicity in communication, and modesty. Hr. Acharyan was also noted for his subtle sense of humor, cheerfulness, and care for others.

Hr. Acharyan's enormous contribution to various fields of general and Armenian linguistics has become a solid foundation and starting point for scientific research for many generations of scholars and will continue to be so in the future.

Viktor Katvalyan – Doctor of Sciences in Philology, Director of the Institute of Language after Hr. Acharian of NAS RA. Scientific interests: dialectology, linguistic geography, phonology, lexicology, lexicography, history of language, and cognitive linguistics. Author of 15 books and over 100 articles.

ORCID: 0009-0002-2597-4808. viktorkatvalyan@mail.ru

ՌՈՒՍԵՐԵՆ ՓՈԽԱՌՅԱԼ ԲԱՂԱԴԻԻՉՈՎ ԴԱՐՁՎԱԾՆԵՐԸ
ՂԱՐԱԲԱԴԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ*

ՇՈՂԵՐ ՄԻՆԱՍՅԱՆ, ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Բանալի բառեր՝ Ղարաբաղի բարբառ, ռուսերեն, բառապաշար, փոխառություն, դարձված, իմաստափոխություն, արմատ, ածանց:

Ամփոփում

Ղարաբաղի բարբառի փոխառյալ բառերը ռուսերենում ունեցած իրենց իմաստների համեմատությամբ կարող են պահպանած լինել իմաստը կամ ենթարկվել իմաստային տարբեր փոփոխությունների: Իմաստափոխության դրսևորումներից մեկը քննվող բառերի՝ դարձվածների կազմում հանդես գալու իրողությունն է: Դարձվածները հիմնականում կազմված են փոխառյալ ստորադաս և հայերեն գերադաս բաղադրիչներից: Հաղորդակցական արժեք ունեցող, այսինքն՝ նախադասություն դարձվածային միավորները անհամեմատ քիչ են, դրանք ունեն հիմնականում պարզ կառուցվածք, կան նաև միակազմ նախադասություն դարձվածային միավորներ: Անվանողական արժեք ունեցող դարձվածային միավորներն ունեն բոլոր ենթատեսակները՝ գոյականական, ածականական, բայական, մակբայական և եղանակավորող: Գոյականական և ածականական դարձվածային միավորները հիմնականում երկբաղադրիչ են, շատ քիչ են մակբայական և եղանակավորող դարձվածային միավորները: Բայական դարձվածային միավորները բնորոշվում են բաղադրիչների տարաբնույթ հարաբերություններով և քանակով գերազանցում են մյուսներին: Դրանց մեջ զգալի մաս են կազմում դարձվածի արժեք ստացած հարադրությունները: Բայական երկբաղադրիչ ստորադաս փոխառյալ բաղադրիչը գոյականն է, որը կարող է ձևավորվել տարբեր հոլովներով, կապով, ունենալ եզակի կամ հոգնակի թիվ, հանդես գալ հոդով կամ առանց հոդի: Փոխառյալ բաղադրիչով մի շարք դարձվածներ ռուսերենում ունեն նույն բառով կազմված համարժեք կամ առնչակից դարձված:

* Ներկայացվել է 14. XI. 2025 թ., գրախոսվել է 11. I. 2026 թ., ընդունվել է տպագրության 20. III. 2026 թ.:

© Հեղինակներ, 2026: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:

Նախաբան

Փոխառությունները սովորաբար պայմանավորված են լինում ուրիշ ժողովուրդների հետ տվյալ ժողովրդի ունեցած երկարատև քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ կապերով, բազմաթիվ ազգակից և ոչ ազգակից լեզուների հետ տվյալ լեզվի շփումներով ու փոխադարձ ազդեցությամբ: Հայերենի բազմաբնույթ հարաբերությունները հարևան լեզուների հետ ամենից առաջ ու առավել ակներև արտացոլվում են նրա բառային կազմի մեջ:

Հայոց լեզվի բառապաշարը գտնվում է անընդհատ զարգացման, հարստացման գործընթացում, որի հիմնական միջոցները եղել և մնում են լեզվի ներքին հնարավորությունները՝ բառակազմական կաղապարներով սեփական, նաև փոխառյալ բաղադրիչներից նոր բառերի կերտումը, լեզվում արդեն գոյություն ունեցող բառերի բառիմաստի ընդլայնումը կամ նեղացումը, փոխաբերական իմաստով գործածելը և այլն: Ընդհանուր առմամբ, « ... փոխառությունները թեև դիտվում են իբրև լեզվի բառապաշարի հարստացման օժանդակ միջոց, սակայն նրանց դերը պակաս կարևոր չէ հայերենի բառային կազմի լրացման և ընդլայնման գործում»¹:

Ռուսերենից (և ոչ միայն) փոխառված բառերի յուրացման գործընթացում հայերենը դրանք ենթարկում է հնչյունական, ձևաբանական, իմաստային յուրացման: Իրողությունը վերաբերում է ոչ միայն գրական լեզվին, այլև նրա տարածական տարբերակներին՝ բարբառներին:

Ղարաբաղի բարբառը հայերենի գործածական տարածական տարբերակներից ամենակենսունակն ու տարածվածն է, որով հաղորդակցվում են Լեռնային Ղարաբաղի ու Սյունիքի բնակչության մեծ մասը և աշխարհի տարբեր երկրներում, հատկապես Ռուսաստանի Դաշնությունում բնակվող նրանց հարազատները²: Հայերենի բարբառների ձևաբանական դասակարգման համաձայն՝ այն ընդգրկվում է -ում ճյուղի³, ըստ հնչյունական դասակարգման՝ առաջին տեղաշարժի ենթարկված⁴, իսկ բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման համաձայն՝ արևելյան խմբակցության Ղարաբաղ-Շամախիի կամ ծայր հյուսիսարևելյան միջբարբառախմբի⁵ մեջ: Ղարաբաղի բարբառի մեջ են ընդգրկվում նաև Գորիսի և Հաղրութի ենթաբարբառները⁶, չնայած որոշ լեզվաբաններ դրանք համարում են առանձին բարբառներ⁷:

Ղարաբաղի բարբառում զգալի թիվ են կազմում պարսկերենից, արաբերենից, թյուրքական լեզուներից կատարված փոխառությունները, սակայն առավել շատ են ռուսերենից անցած բառերը⁸, որոնց թիվը հասնում է շուրջ

¹ Ֆ ա լ ա կ յ ա ն. 1985, 168:

² Ս ա ր գ ս յ ա ն, Մ ի ն ա ս յ ա ն. 2025, 57:

³ Ա ճ ա ռ ե ա ն. 1911, 54:

⁴ Ղ ա ր ի բ յ ա ն. 1947, 30:

⁵ Ջ ա հ ու կ յ ա ն. 1972, 136:

⁶ Ջ ա հ ու կ յ ա ն. 1972, 136:

⁷ Պ ո ղ ո ս յ ա ն. 1965, Մ ա ր գ ա ր յ ա ն. 1975:

⁸ Ռուսերենից կատարված փոխառություններ ենք համարել նաև այն բառերը, որոնք այլ, հատկապես եվրոպական լեզուներից Ղարաբաղի բարբառին են անցել ռուսերենի միջնորդությամբ:

2500-ի⁹, ինչն ամենից առաջ կապվում է 1822 թ. Ղարաբաղի խանության վերացման և Ղարաբաղի պրովինցիայի ձևավորման հետ, որը 1840 թ. մտնում է Կասպիական մարզի, իսկ 1868–1917 թթ.¹⁰ ներառվում Ելիզավետպոլի նահանգի կազմում: Անշուշտ, ռուսերեն փոխառյալ բառերի առատությունը պայմանավորված է նաև XIX դարի կեսերից երկրամասում ռուսական զինվորական ստորաբաժանումների, իսկ խորհրդային տարիներին՝ մի շարք բնակավայրերում ռուսական դպրոցների առկայությամբ:

Իմաստափոխված ռուսերեն բառերը Ղարաբաղի բարբառի դարձվածներում¹⁰

Ղարաբաղի բարբառի՝ ռուսերենից փոխառյալ բառերը՝ որպես կենդանի բարբառի բառապաշարի մաս, ենթակա են տարբեր փոփոխությունների: Ռուսերենում ունեցած իրենց իմաստների համեմատությամբ՝ փոխառյալ բառերը բարբառում կարող են պահպանված լինել իրենց իմաստը կամ ենթարկվել իմաստային տարբեր փոփոխությունների: Իմաստային փոփոխության մի դրսևորում է նաև քննվող բառերի՝ դարձվածների կազմում հանդես գալը, քանի որ դարձվածի ամենակարևոր հատկանիշներից մեկը վերաիմաստավորումն է:

Պետք է նշել, որ նման դարձվածները հիմնականում կազմված են փոխառյալ և հայերեն բաղադրիչներից, մինչդեռ միայն փոխառյալ բաղադրիչներից կազմված միավորները շատ քիչ են, ինչպես՝ գրրամ /грамм/ – գրրամ /грамм/, կարդոնի /картонный/ յաշիգ՝ /ящик/ (խախուտ, ոչ ամուր), մայկա /майка/ – տըրուսիկ /трысы/ (ներքնաշորեր), յերալաշու /ералаш/ մատարյալ /материал/ (ծաղրի՝ ծիծաղի առարկա), նեմեցու /немец/ պայոկ /паяк/ (փոքր սննդաբաժին, քիչ ուտելիք), սուխոյ /сухой/ աթկազ /отказ/ (լրիվ մերժում), վեդրա /ведро/ – վեդրա (առատորեն):

Մի քանի դարձվածներ ունեն փոխառյալ երկու բաղադրիչ՝ ըստաքան /стакан/ ըստըքանու թըխել (իբրև բարեկամության նշան՝ բաժակները իրար խփել և միասին խմել), կըպէկին /копейка/ ըզդրաստի /здравствуй/ աւել // չէստ /честь/ տալ (ֆինանսական ծանր կացության մեջ լինել), պապըոզը /папироса/ պապըոզան նի կըցնել (հաճախ ծխել), պարտիյնի /партийный/ բիլէթը /билет/ ծերքան ինք՝ օնել // յօր օնել (կուսակցությունից վտարել):

Որոշ դարձվածներ էլ կազմվել են ռուսերենից փոխառյալ արմատից ու հայերեն արմատից և (կամ) ածանցից բաղադրված բառից, ինչպես՝ կըպըկանուց // մընըթանուց շինիլ (հեղինակագրկել), կըպըկանուց (копейка + անուց) // մընըթանուց (монета + անուց) տը՛ռնալ (հեղինակագրկվել), մամաքուրի (мама + քուր+ի) տալ (մեկի հետ մտերիմ, համերաշխ լինել), սուկըհան (сок + հան) ինիլ

⁹ Ս ա ր գ ս յ ա ն. 2013:

¹⁰ Բոլոր օրինակները բերվում են ըստ Ա. Սարգսյանի (Ս ա ր գ ս յ ա ն. 2013), Ա. Սարգսյանի, Շ. Մինասյանի (Ս ա ր գ ս յ ա ն, Մ ի ն ա ս յ ա ն. 2017) բառարանների և Շ. Մինասյանի (Մ ի ն ա ս յ ա ն. 2007) մենագրության՝ համեմատությամբ Լ. Անտոնովայի (Антонова. 2025), Ա. Տիխոնովի (Тихонов. 2004), Ս. Օժեգովի (Ожегов. 2018) և Պ. Բեդիրյանի (Բ ե դ ի ը յ ա ն. 2011) բառարանների:

// տը՛ռնալ (1. հյուսթը քամվել, մզվել, 2. չարչարվել, կեղեքվել, ուժասպառ լինել) և այլն:

Ռուսերեն փոխառյալ բաղադրիչով դարձվածային միավորները քննվում են՝ 1) ըստ հաղորդակցական արժեքի, 2) ըստ խոսքիմասային պատկանելության, 3) ըստ ռուսերենում համարժեքը ունենալու հանգամանքի:

Փոխառյալ բաղադրիչով դարձվածների դասակարգումը ըստ հաղորդակցական արժեքի

Ըստ հաղորդակցական արժեքի՝ դարձվածները լինում են հաղորդակցական արժեք ունեցող և անվանողական արժեք ունեցող: Դրանց տարբերությունը պայմանավորված է նրանով, որ «դարձվածային միավորները մի դեպքում վերախմաստավորված կերպով նշում են առարկան, փաստը, երևույթը, ինչպես նաև սրանց հատկանիշները, իսկ մյուս դեպքում դատողություններ են առարկաների, երևույթների ու դրանց հատկանիշների վերաբերյալ. առաջին դեպքում դարձվածային միավորները հանդես են գալիս անվանողական արժեքով և համարժեք են բառերին, երկրորդ դեպքում դրանք հաղորդակցական արժեք են ձեռք բերում և հարաբերակից են նախադասություններին»¹¹:

Փոխառյալ բաղադրիչով նախադասություն դարձվածային միավորները, ունենալով հարացուցային արտահայտության սահմանափակ հնարավորություն, բարբառում քիչ են, եթե, իհարկե, հաշվի չառնենք բայական այն դարձվածային միավորները, որոնց գլխավոր անդամ անորոշ դերբայը կարող է հանդես գալ նաև դիմավոր ձևով՝ վերածելով բայական դարձվածային միավորները նախադասություն դարձվածային միավորների: Նախադասություն դարձվածային միավորները հիմնականում ունեն պարզ նախադասության կառուցվածք, միայն մի քանիսն են բարդ նախադասության կառուցվածքով՝ ըրբաշկան /рубашка/ էլ չի կարում, թա մար տա (ասում են ինքնուրույն գործելու ընդունակությունից զուրկ՝ անճարակ մարդկանց մասին), լենինը /ленин/ մը՛ռալ ա, ըստալինը /сталин/ էն ա սաղ¹² (դաժանությունները դեռ շարունակվում են), մը՛զ յէկավ՝ լենինը մը՛ռալ (ասում են այն ժամանակ, երբ անհրաժեշտության դեպքում մի բան սպառվում է, խափանվում է), ներքէ պըռօշը պօլըն /пол/ ա սիրփում, յը՛րէ պըռօշը՝ պատալօկը /потолок/ (ասում են շատ ծեր մարդկանց մասին):

Պարզ կազմություն ունեցող նախադասություն դարձվածային միավորները կարող են լինել համառոտ՝ կօզընէն /kozyрь/ ծէրքէն ա (իրավիճակի վրա ազդելու մեծ հնարավորություն ունի), նավթալինավը՛տ /нафталин/ ա կամ (հին է), չինէրը /чин/ վէր ը՞ն ուննան (հեզնաբար ասում են նրան, ով, պատվից ցածր համարելով, հրաժարվում է որևէ բան անելուց), փասօնըտ /фасон/

¹¹ Բ ա դ ի կ յ ա ն. 1986, 90:

¹² Հաշվի առնելով, որ Վ. Ի. Լենինն ու Ի. Վ. Ստալինը եղել են Խորհրդային Միության ղեկավարներ և ուղղակի կամ անուղղակի առնչվում են ռուսական իրականությանը, նաև հաշվի առնելով այն, որ այդ անձնանունները վերածվել են հասարակ անունների (գրվում են փոքրատառով)՝ դրանցով կազմված դարձվածները ևս համարել ենք ռուսերենից փոխառյալ բաղադրիչով դարձվածներ:

կըտրըվէ (մեռնես, չքանաս – գործածվում է որպես անեծք), և ընդարձակ՝ էս հալիւմ ժուռնալըն /журнал/ ա (դեռ ամեն ինչ նոր է սկսվում, դեռ շարունակություն կլինի), էրկու ժուլիգի /жулик/ անա շընըկօտէգ՝ կինի (խորամանկ ամուսինների գավակը կգերազացի ծնողներին), էրկու կիլօ /кило/ կարու նը-հըտ փօխէլ չըմ (ասում են անարժան մարդու՝ իրի մասին), ժուլիգ՝ /жулик/ ղու-շը կըտուցան ա թալակ ընգնում (շատ խորամանկը առավել է տուժում), լամբը /лампа/ ուրան տակէն իշէղ չի տալ (որևէ բան՝ երևույթ հեռվից ավելի հեշտ է նկատվում, գնահատվում), հիբը խօզը տուռնիգ՝ /турник/ ածէ (երբեք, ոչ մի դեպքում), մին պօլկ /полк/ սըլղաթու մաչի կըկէնա (ասում են համարձակ, հանդուգն կանանց՝ աղջիկների մասին) :

Բոլոր նախադասություն դարձվածային միավորներում ստորոգյալը եր-րորդ դեմք ունի, իսկ մի քանիսը ձևական դիմավոր միակազմ նախադասու-թյան կառուցվածք ունեն՝ մօդում /мода/ ա //մօդա յա (նորաձև է, հասարակու-թյան կողմից ընդունելի է), չինէրը /чин/ վէր չի կըլան // պագօննէտ /погон/ վէր ը՞ն ուննան (քո հեղինակությունը չի տուժի): <Ետաքրքիր է, որ դրանց մի մասը հարցում – ժխտում է արտահայտում, ինչպես՝ լենինը /ленин/ քիննան ա, ըս-տալինը /сталин/ կա՞ // լենինը /ленин/ քիննան չի, ըստալինը /сталин/ կըլան չի (պատվավոր հյուրերի չեմ սպասում), կապէկըս /копейка/ մաչին քէցալ ա՞ // կապէկըս մաչին քէցալ չի (ինձ ի՞նչ փույթ, ես դրա վրա փող չեմ ծախսել), պաժառ /пожар/ ա՞ // պաժառ չի (շտապելու կարիք չկա):

Փոխառյալ բաղադրիչով անվանողական դարձվածները ըստ խոսքիմասային պարկանելության

Անվանողական դարձվածային միավորների մի մասը վերաիմաստավորված նշում է որևէ անձ, առարկա կամ երեւույթ, մյուս մասը՝ հատկանիշ, կան նաև խոսողի դատողական ու գնահատողական վերաբերմունք արտահայտող դարձ-վածային միավորներ: Ըստ ռուս լեզվաբան Ա. Մոլոտկովի՝ այս կարգի դարձվա-ծները իրենց իմաստով բառեր են, իսկ կառուցվածքով՝ կայուն բառակապակցու-թյուններ, այսինքն՝ դրանք արտահայտության պլանում բառակապակցություններ են, իսկ բովանդակության պլանում՝ հասկացություններ¹³:

Ղարաբաղի բարբառի՝ ռուսերեն փոխառյալ բաղադրիչով ոչ հաղորդակցա-կան դարձվածային միավորները, ըստ ձևաբանական դասակարգման, ունեն գոյականական, ածականական, բայական, մակբայական և եղանակավորող տեսակներ: Ընդ որում՝ «... ամեն մի խոսքի մասին հարաբերակից դարձվա-ծային միավոր առաջին հերթին իմաստային առումով պետք է տվյալ խոսքի մասին փոխարինի. այս դեպքում պարտադիր չէ, որ, ասենք, ածականական դարձվա-ծը անպայման ածականներից կազմված լինի, կամ նրա բաղադրիչներից մեկը լինի ածական»¹⁴: Այդ պատճառով, « ... երբ խոսվում է դարձվածային միավոր-

¹³ Молотков. 1977, 15.

¹⁴ Բ ա դ ի կ յ ա ն. 1986, 92:

ների իմաստի և ձևաբանական արժեքի մասին, նկատի է առնվում կապակցության միջոցով ձևավորված հասկացությունը, նրա՝ որևէ խոսքի մասին համարժեք լինելը, այլ ոչ թե բաղադրիչների խոսքիմասային պատկանելությունը»¹⁵:

Գոյականական դարձվածային միավորները սովորաբար երկբաղադրիչ են, հատուկենտ են եռաբաղադրիչ միավորները, ինչպես՝ կրնյազ /князь/ Կուսու-զովեն թօնը//տըղան//ախճիգը (արտոնություն ունեցող մեկը), ռուսու /русский/ բարուշկու /бабушка/ քամակ (1. շատ կարմրած, 2. ծավալուն, մեծ):

Բաղադրիչների միջև հիմնականում ստորադասական հարաբերություն է, բացառությամբ որոշների՝ մայկա /майка/ – տըրուսիկ /трусь/ (ներքնաշորեր), վէդրա /ведра/ – վէդրա (առատորեն): Փոխառյալ բաղադրիչը կարող է լինել ինչպես գերադաս անդամը՝ էշու դոխտուր /доктор/ (անասնաբույժ), էրկու կապէկ /копейка/ (չնչին գումար), կօտրած պըլաստինկա /пластинка/ (նույն բանը տհաճորեն կրկնող մարդ), ճանջու զակուսկի /закуска/ (1. քիչ ուտելիք, 2. հեգն. փոքրամարմին էակ), մադամ /мадам/ բիզ – բիզ (հեգն. մոդայամուլ կին), մըռալու ըզդաչի /сдача/ (հյուծված, նիհար, զունատ մարդ), յէրէ ատաժ /этаж/ (1. գլուխ, 2. խելք), այնպես էլ՝ ստորադաս անդամը, որը հիմնականում տրական հոլովով արտահայտված գոյական է՝ ըստըքանու /стакан/ հընգէր (մեկի հետ կերուխումի մշտական ընկեր, բաժակակից), կալխօզու /колхоз/ ժօղօվ (խառնաշփոթություն, իրարանցում), յէվրէյու /еврей/ ճօտ (1. անխիղճ ու կծծի մարդ, 2. խորամանկ մարդ), պըրիստավէն /пристав/ ախճիգը // տըղան // թօնը (արտոնյալ, արտոնություններ ունեցող անձ), փօշտու /почта/ թընըկաման (անբարոյական կին), փօշտու /почта/ ճօրէ (շատ չարչարվող մարդ): Ինչպես երևում է բերված օրինակներից, բաղադրիչների միջև առկա են հատկացուցիչ-հատկացյալ և որոշիչ-որոշյալ հարաբերությունները: Նման դարձվածներում գերադաս անդամն ունի ուղիղ ձևավորվածություն՝ հողով (նէմէջին /немец/ կըռըվը (1941–1945 թթ. Հայրենական մեծ պատերազմը) կամ առանց հողի (ցիրկու /цирк/ մէյմուն (անլուրջ, թեթևասլիկ անձ՝ խեղկատակ), բայց խոսքում հանդես գալով՝ կարող է թվային և հոլովական տարբեր ձևափոխությունների ենթարկվել՝ կախված դարձվածի՝ նախադասության մեջ կատարած շարահյուսական պաշտոնից:

Չնչին բացառությամբ ածականական դարձվածային միավորները ևս երկբաղադրիչ են՝ կամսամօլէն /комсомол/ զընիշկան /книжка/ կուռնըտակէն (կոյս՝ նորահարսի մասին), կամսամօլէն զընիշկան կուրցըրած (մինչև ամուսնանալը կուսությունից զրկված): Գերադաս անդամը կա՛մ ածական է՝ բաշքօրտ /паспорт/ ըստացած (չափահաս), զըրուշկու /кружка/ ծիլած (վտիտ, նիհար), կատիլօկը /котелок/ տէրտակ (հիմար), մուզէյում /музей/ տինիլի (հազվագյուտ), պըրուժիննէն /пружина/ բօշ // թուլ (խելապակաս), կա՛մ դերբայ (ենթակայական կամ հարակատար)՝ կատու կըրասկա /краска/ տըվօղ (խորամանկ, զեղծարար), կափսուլնէն /капсюль/ տուս տըված (խելապակաս), կըզըրօկը /козырек/ պուք տըվօղ (առույգ, կայտառ, ճարպիկ), կըպէկու /копейка/ հը՛տա¹⁶ մը՛ռած (խիստ ժլատ), հինգիստարանան օտպուսկ /отпуск/ յէկած (զունատ, վտիտ), նէրվը

¹⁵ Բ ա դ ի կ յ ա ն. 1986, 92:

¹⁶ Կապը՝ որպես թերիմաստ խոսքի մաս, դարձվածի, նաև բառակապակցության առանձին բաղադրիչ չի համարվում:

/неб/ հանած // տոնս կալած (սառնասիրտ, չբորբոքվող), սէպարատորավ /сепаратор/ քաշած (շատ նիհար, վտիտ, հյուծված), սրբոկը /срок/ ընցած (փչացած՝ մթերքի մասին), վաղզալան /вокзал/ փրոնած (պատահական ծանոթ): Որոշ դարձվածներ կազմվել են գոյական գերադաս անդամով՝ աշկերը վրխահնայում /выходной/ (վատ տեսողություն ունեցող), դիպլոմը /диплом/ կուռնրտակէն (բարձրագույն կրթություն ունեցող), խօղ /ход/ տուված ռադիօ /радио/ (շատախոս, շաղակրատ), կիտայսկի /китайский/ տախտէղ (1. շատ կծու, 2. սուր, խայթող լեզու ունեցող):

Հատուկենտ են միագագաթ ածականական դարձվածային միավորները՝ յառլիգը /ярлык/ յըրա (1. նոր, 2. կույս), փօրմու /форма/ հըտէ//մըհար (ձևակա-նորեն):

Բայական դարձվածային միավորները քանակապես ամենաշատն են, գործածությամբ՝ ամենահաճախականը, կառուցվածքով՝ ամենաբազմազանը: Դրանց մեջ զգալի տեղ են գրավում բայական հարադրավոր կազմությունները, որոնցում փոխառյալ է անվանական բաղադրիչը: Լեզվաբանության մեջ վիճելի հարցերից մեկը հարադրական բայերի ու դրանց վերախմաստավորումից առաջացած բայական դարձվածների սահմանների որոշումն է: Շատ լեզվաբաններ են անդրադարձել այս հարցին՝ փորձելով տալ հարադրիչներից առաջացած դարձվածային միավորների և սովորական հարադրական բայերի նմանությունն ու իմաստային տարբերությունները: Ընդհանուր առմամբ նրանց կարծիքներն այնքան էլ տարբեր չեն, քանի որ բոլորն էլ ելնում են հարադրության բաղադրիչների իմաստափոխությունից ու վերախմաստավորումից¹⁷: Հայերենի հարադիր բայերի և դրանցից առաջացած բայական դարձվածային միավորների լավագույն քննությունը կատարել է Ա. Մարգարյանը՝ սահմանելով հարադրավոր բայերից առաջացած դարձվածային միավորները. «Դարձվածային են կոչվում այն հարադրավոր բայերը, որոնց հարադիրն ու բայական բաղադրիչը միասին առանձնահատուկ իմաստային նշանակություն են արտահայտում և հանդես են գալիս որպես մտքի արտահայտման պատկերավոր ձևեր»¹⁸:

Ըստ անվանական բաղադրիչի քերականական արժեքի՝ հարադրության կառուցվածք ունեցող բայական դարձվածային միավորները բաժանվում են երկու մասի՝ 1) բայական հարադրավոր կազմություններ, որոնց ստորադաս բաղադրիչը փոխառյալ գոյական է, 2) բայական հարադրավոր կազմություններ, որոնց ստորադաս բաղադրիչը ռուսերենի՝ բարբառում որպես այդպիսին չգիտակցվող ինֆինիտիվն է:

Բայական հարադրությունների մեջ զգալի տեղ են գրավում այն հարադրավոր կազմությունները, որոնցում փոխառյալ է անվանական բաղադրիչը: Փոխառյալ գոյական բաղադրիչով բայական հարադրությունները հիմնականում կազմվում են. ա) անէլ՝ ավզօն /обгон/ անէլ (մեկին մի բանում գերազանցել), լօղրօթուն /лодырь/ անէլ (ծովանալ, գլուխ պահել), կըլիզմա /клизма/ անէլ (անարգ. խիստ հանդիմանել՝ պատժել), կըվիտ /квит/ անէլ (այլևս պահանջ,

¹⁷ Բ ա դ ի կ յ ա ն. 1986, 164:

¹⁸ Մ ա ր գ ա ր յ ա ն. 1966, 225:

պարտք չունենալ), կինոդամոյ /кино+домой/ անել (առանց հարսանիքի ամուսնանալ, կինոյից հետո նշանածին տուն բերել), չաշկա-լոշկա /чашка-ложка/ անել (սիրաբանել, սիրային խոսակցություն վարել), տոլկ /долг/ անել (գրավ դնել), ուռռա /ура/ անել¹⁹ (1. ցնծությունից, հիացմունքից գոռալ, 2. առանց հաշվի առնելու հանգամանքները որևէ բան անել, 3. գործը արագ ու անորակ անել), փանտան /фонтан/ անել (ուժգին հոսանքով շատրվանի նման ժայթքել, ցայտել, բխել), բ) ընգնել²⁰ ազարտ /азарт/ ընգնել (կրքոտվել, մոլուցքի պահին ինքնամոռացության մեջ ընկնել), դումկա /думка/ ընգնել (մտքերի մեջ խորասուզվել, մտածմունքի մեջ ընկնել, մտմտալ), լատարեյը /лотерея/ ընգնել (անակնկալ մեծ հաջողության հանդիպել), պաժառ /пожар/ ընգնել (հրդեհվել), պանիկա /паника/ ընգնել (խուճապ առաջանալ), ռէժիմո /режим/ ընգնել (կարգավորվել), տիորմա /тюрьма/ ընգնել (բանտարկվել), գ) տալ՝ բաղաժ /багаж/ տալ (բեռնավորել, փոխադրելի ծանրությունը փոխադրական միջոցների վրա կամ մեջ դնել), լոսբ /лоб/ տալ (ուժեղ հարվածել), կարտե /карта/ տալ (թղթախաղով զբաղվել), կրասկա /краска/ տալ (կեղծել, արտաքին ձևով բուն էությունը թաքցնել), չէստ /честь/ տալ (մեկին կուրորեն ենթարկվել՝ մեծարել), չոթկը /щетка/ տալ (խոզանակել), տորմոզ /тормоз/ տալ (ինչ-որ գործողություն դադարեցնել), դ) տը՛ռնալ՝ մազոլ /мозоль/ տը՛ռնալ (կոշտանալ, կարծրանալ), նոլ /ноль/ տը՛ռնալ (1. արդյունք չստանալ, երախտիքը իզուր անցնել, 2. անարժեք դառնալ), նոս /нос/ տը՛ռնալ (արհամարհվել), պըրապիսկա /прописка/ տը՛ռնալ (1. մեկի՝ որևէ տեղում բնակվելը պաշտոնական փաստաթղթով վավերացվել, գրանցվել, 2. հեզն. որևէ տեղում հաճախակի լինել), վերացական բայերով:

Որոշ դեպքերում փոխառյալ նույն բաղադրիչը հարադրություն-դարձված է կազմում զուգահեռաբար տարբեր բայերի հետ՝ արտահայտելով նույն կամ բայի սեռով պայմանավորված՝ հակառակ իմաստներ: Նույնիմաստ հարադրություններ են կազմվել. ա) անել // կոխել // նըստըցընել՝ տիորմա /անել // կոխել // նըստըցընել (կալանավորել, բանտ նստեցնել), բ) անել // շինիլ՝ պուբլիկացի /публикация/ անել // շինիլ (մամուլում հրապարակել), գ) անել // տալ՝ պարելկա /побелка/ անել // տալ (կրաջրով սպիտակեցնել), նակազաննի /наказание/ անել // տալ (պատժել), դ) ընգնել // ինիլ՝ դումկա /думка/ ընգնել // ինիլ (մտքերի մեջ խորասուզվել, մտածմունքի մեջ ընկնել, մտմտալ), ե) ընգնել // տը՛ռնալ՝ մո՛դա /мода/ ընգնել // տը՛ռնալ (1. իբրև մոդա ընդհանրանալ, 2. ավանդույթ դառնալ), գ) ընցընել // տը՛ռնալ՝ զարաժէննի /заражение/ ընցընել // տը՛ռնալ (վարակվել), է) ինիլ // տը՛ռնալ՝ ըռաշոտ /расчет/ ինիլ // տը՛ռնալ (որևէ բանի կամ որևէ մեկի հետ հաշիվները վերջացնել), կըվիտ /квит/ ինիլ //

¹⁹ Այս հարադրության ստորադաս բաղադրիչը ձայնարկություն է, որը, փոխաբերական իմաստով գործածվելով, նյութական իմաստ է ստացել:

²⁰ Ընգնել բայով և մոդա փոխառյալ բաղադրիչով կազմվել են երկու հակառակ իմաստ ունեցող հարադրություններ, որոնց իմաստային հականիշությունը ստեղծում է մոդա բառի՝ տարբեր շեշտադրումներով հանդես գալը՝ մո՛դա ընգնել (1. իբրև մոդա ընդհանրանալ, 2. ավանդույթ դառնալ) և մոդա՛ ընգնել (մոդա լինելուց դադարել, այլևս մոդայական չլինել):

տրե՛նալ (այլևս պարտք, պահանջ չունենալ), ը) կաղնել // վրե՛նը կէ՛նալ՝ աթկազ /отказ/ կաղնել // վրե՛նը կէ՛նալ (հրաժարվել), թ) տալ // քըցիլ՝ պաժառ /пожар/ տալ // քըցիլ՝ (հրդեհել), սուդի /суд/ տալ // քըցիլ (մեկի դեմ դատական գործ հարուցել), և այլ բայերով:

Հակառակ իմաստ արտահայտող հարադրություններ են կազմվել անէլ-ինիլ // տրե՛նալ՝ փուկ /фук/ անէլ (դուրս թողնել, մասնակից չդարձնել) – փուկ ինիլ // տրե՛նալ (դուրս թողնվել, մասնակից չդառնալ), ընգնել – քըցիլ՝ ըշտրափու /штраф/ տակ ընգնել (տուգանվել) – ըշտրափու տակ քըցիլ (տուգանել), նագրուզկու /нагрузка/ տակ ընգնել (ծանրաբեռնվել) – նագրուզկու տակ քըցիլ (ծանրաբեռնել), պանիկա /паника/ ընգնել (խուճապ առաջանալ) – պանիկա քըցիլ (խուճապ առաջացնել), վէր օնէլ – վէր կ'ալ՝ չինէրը /чин/ վէր օնէլ (աստիճանից՝ կոչումից՝ պաշտոնից գրկել) – չինէրը վէր կ'ալ (աստիճանից՝ կոչումից՝ պաշտոնից գրկվել), շինիլ – տրե՛նալ՝ պուբլիկացի /публикация/ շինիլ (հրապարակել) – պուբլիկացի տրե՛նալ (հրապարակվել), տըրյափկա /тряпка/ շինիլ (վարկաբեկել, հեղինակագրկել) – տըրյափկա տրե՛նալ (վարկաբեկվել, հեղինակագրկվել), և այլն:

Բայական հարադրավոր այն կազմություններում, որոնց ստորադաս բաղադրիչը ռուսերենի՝ բարբառում որպես այդպիսին չգիտակցվող ինֆինիտիվն է, հիմնականում հանդես է գալիս անէլ բայը, ինչպես՝ զանիտ /занять/ անէլ (զբաղեցնել), զուբրիտ /зубрить/ անէլ (մի բան շատ լավ սովորել, իմանալ), ժարիտ /жарить/ անէլ (1. յուղի մեջ առանց ջրի եփել՝ տապակել), 2. մեկին հոգեկան տառապանք, տանջանք պատճառել, 3. կոտորել, 4. շատ վարժ խոսել, ճառախոսել), ծապնուտ /тяпнуть/ անէլ (հեզն. կոնծել), նարուշիտ /нарушить/ անէլ (կարգը խախտել), շըպարիտ /шпарить/ անէլ (ջեշտակի՝ ուժգին ինչ-որ բան անել), պադավատ /подавать/ անէլ (հրամցնել մատուցել), պապրավիտ /поправить/ անէլ (գլուխը խուզել, մազերը կարգի բերել), ռուլիտ /рулить/ անէլ (կառավարել, ղեկավարել), տէրպէտ /терпеть/ անէլ (համբերել): Այս հարադրությունների իմաստները հիմնականում ելնում են փոխառյալ բառի որևէ իմաստից կամ իմաստներից: Առանձնանում են ժարիտ /жарить/ անէլ և պապրավիտ /поправить/ անէլ դարձվածները, որոնցում վերաիմաստավորումն ավելի ուժեղ է: Ժարիտ անէլ-ի երկրորդ, երրորդ և չորրորդ իմաստները ռուսերենի жарить (1. готовить, держать на сильном жару без воды, в масле, жире, 2. подвергать действию сильного жара, 3. обжигать лучами /о солнце/) բառը չունի, իսկ պապրավիտ անէլ-ը ռուսերենի поправить (1. исправить, 2. указать кому-то на его ошибку, 3. привести в порядок, сделать лучше) բառի իմաստներից միայն երրորդի հետ ունի հեռավոր կապ:

Որոշ դարձվածներ կազմվել են ինիլ և տրե՛նալ բայերով՝ զանիտ /занять/ ինիլ // տրե՛նալ (սիրած ունենալ), ժարիտ /жарить/ ինիլ // տրե՛նալ (1. յուղի մեջ առանց ջրի եփվել՝ տապակվել, 2. մեկից, մի բանից հոգեկան տառապանք, տանջանք ունենալ, 3. կոտորվել), յավից /явиться/ ինիլ (որևէ նպատակով մի տեղ՝ հիմնարկություն կամ որևէ անձի մոտ գնալ՝ գալ՝ ներկայանալ), նարուշիտ /нарушить/ տրե՛նալ (կարգը խախտվել):

Բայական երկբաղադրիչ դարձվածային միավորների ստորադաս անդամը մեծ մասամբ գոյական է, որը կարող է դրվել. ա) ուղղական՝ ադրէսը /адрес/

կուրցընել (շփոթվել, մոլորվել, ինչ անելը չիմանալ), ախտը /акт/ կապել (1. մահվան շեմին լինել, 2. ավարտին՝ պաշտոնանկ արվելուն մոտ լինել), դէպուտատատ /депутат/ անց կըցնել (ներել, չարչարել), կազէթ /газета/ քըցիլ (հրապարակել), դարավուլ /караул/ քաշիլ (պահակ կանգնել), ներվը /нерв/ օտել (դիտավորյալ որևէ մեկին գրգռել, ջղայնացնել), բ) տրական՝ ըշփիշկու /спичка/ կարօփկա /коробка/ տըճնալ (վթարի ենթարկվել՝ ավտոմեքենան լրիվությամբ ջարդվել), ըշփիշկու /спичка/ չօփ տըճնալ (նիհարել, հյուծվել), շօտու /учет/ կաղնել (գրանցվել, հաշվառման մեջ մտնել), չօթկէն /щетка/ տակը տալ (համրիչով հաշվել, քանակը՝ գինը որոշել), դիսկու /риск/ քինիլ (հանդգնել, համարձակվել), ռուլին /руль/ նըստել (մեքենա վարել), գ) բացառական՝ ըռամկան /рамка/ տիուս կիլ (պատշաճ սահմաններից դուրս գալ, կարգը խախտել), դ) գործիական՝ ներվավը /нерв/ խաղ անել (դիտավորյալ մեկին գրգռել, ջղայնացնել), ե) ներգոյական՝ ըռամկու /рамка/ պահել (հսկել, զսպել, չթողնել, որ չափն անցնի), հոլովներով: Դրանց մեջ գերակշռում են ուղղական հոլովով դրված ստորադաս անդամ ունեցող դարձվածային միավորները, որոնց բաղադրիչների միջև կարող են լինել. ա) ենթակայական՝ զավօղը /завод/ կապվել (այլևս չձննդաբերել), ըստօղը /стол/ թըքանալ (խնջույքն աշխուժանալ), լատարելը /лотерея/ ընգնել (անակնկալ մեծ հաջողության հանդիպել), պերանը պաժառ /пожар/ ընգնել (ուտելու մեծ ցանկություն ունենալ), բ) ուղիղ խնդրային՝ արէնտիրը /ориентир/ կուրցընել (շփոթվել, մոլորվել, չկողմնորոշվել), կըրվաթ /кроваты/ քըշիլ (ոչինչ չանել, ամբողջ օրը հանգստանալ), մազգին /мозг/ կըրուտիտ անել (մեկի մտադրությունը՝ գաղտնիքները և այլն իմանալու համար խոսեցնել՝ հարցուփորձ անել), պըլաստինկան /пластинка/ փոխել (խոսակցության նյութը՝ թեման փոխել), պըրօբը /проба/ տըճնալ (փորձել, համտեսել), փազերը քըցիլ /фаза/ խելքը թոցնել, խենթանալ, գ) տեղի պարագայական՝ զազա /ЗАГС/ քիինիլ (ամուսնությունը օրինականորեն գրանցել), կազէթ /газета/ ընգնել (լրագրի նյութ դառնալ), սիբիր /сибирь/ ղարկել // քըշիլ (աքսորել), ուզուլ /угол/ կաղնել (պատժվել), հարաբերություններ:

Որոշ դարձվածներում գոյականը հանդես է գալիս հոգնակի թվով՝ կարտերը /карта/ խառնել (ծրագրերը խախտել), կարտերը /карта/ պէց անել (մեկի գաղտնի մտադրությունները՝ ծրագրերը բացահայտել), շարիկնէն /шарик/ բուշանալ (հեգն. խելքը պակասել), վէշէրը /вещь/ հըրվաքել (հեռանալ, գաղթել, գաղթելուն պատրաստվել):

Գոյական ստորադաս անդամը կարող է ձևավորվել նաև կապով, ինչպես՝ առանց կըպէկի /копейка/ մընալ (ընդհանրապես փող չունենալ), ըստօլէն /стол/ յըրա մընալ (վիրահատվելիս մահանալ), կըլէյու /клей/ նըման նըստա կէնալ (մեկի հետ շատ մտերիմ լինել, շատ սիրել), կըպէկու /копейка/ հըճտէ տըղտօղալ // ըստակել // գիանքը տալ (խիստ ժլատ լինել), նագրուզկու /нагрузка/ տակ ընգնել (ծանրաբեռնվել), նագրուզկու /нагрузка/ տակ քըցիլ (ծանրաբեռնել), ամնիստյու /амнистия/ տակ ընգնել (համաներվել):

Բայական բազմաբաղադրիչ դարձվածային միավորները քիչ են՝ աշկէն տակէն փանար /фонарь/ տինիլ (բռունցքով աչքատակին հարվածելով՝ կապտուկ գոյացնել), ըռաշկէն դուժուռնի /дежурный/ վըճնը կէնալ (մեկին սպասարկել՝ ծառայել), ըստօլէն /стол/ յըճրէ կըլխէն նըստըցնել (հարգել, պատվել,

մեծարել), հրէտան պըրիգլասիտելնի /пригласительный/ դարկել (հանդիսավոր հրավիրել), յըհսան բըլափկա /булавка/ քաղել (ստիպել), յումբրուղը ըստուլեն /стол/ կալ (սաստիկ բարկանալ), պարտիյնի /партийный/ բիլէթը /билет/ ծէրքան ինք՝ օնէլ // յօր օնէլ (կուսակցությունից վտարել), ռուլը /руль/ միշտ աջ ինիլ // շօռ տալ (բարեմաղթանք՝ վարորդներին, հատկապես նոր մեքենա գնելու առիթով):

Հետաքրքիր կազմություն ունի պաշյօլը քաշիլ դարձվածը, որի առաջին բաղադրիչը ռուսերենի *пояел* բայածնն է. վերջինիս իմաստին առնչվում է դարձվածի՝ բարբառում ունեցած իմաստը՝ վոնդվել, արտաքսվել (անրգ.):

Շատ քիչ են ա) մակբայական՝ ծուծուլ նա ծուծուլ /тютелька в тютельку/ (լիարժեք համընկնում, չափի առումով լրիվ ճիշտ), կապէկ /копейка/ – կապէկ /копейка/ (կոպէկ առ կոպէկ, քիչ-քիչ), մին մունուտումը /минута/ սէկունդումը /секунда/ (ակնթարթորեն, շատ արագ), վէդրա /ведро/ – վէդրա /ведро/ (առատորեն), փօրմու /форма/ հրէտէ // մըհար (ձևականորեն), բ) եղանակավորող՝ մամուն /мама/ արէվ (երդման արտահայտություն), պապուն /папа/ արէվ (երդման արտահայտություն), դարձվածային միավորները:

Փոխառյալ բաղադրիչ ունեցող դարձվածներն ըստ ռուսերենում համարժեք ունենալու հանգամանքի

Ընդհանրապես դարձվածաբանությունն աչքի է ընկնում ազգային ինքնատիպությամբ և կրում է այն ստեղծող ժողովրդի մտածողության յուրահատուկ կնիքը: Ինչպես նշում է դարձվածաբան Ա. Նազարյանը, «Դարձվածաբանության ազգային առանձնահատկությունները դրսևորվում են նրա ուսումնասիրության բոլոր տեսանկյուններով»²¹: Սակայն տարբեր լեզուներում կարող են լինել ընդհանուր նշանակության և նույն կամ նման կառուցվածք ունեցող դարձվածներ: Այդպիսի դարձվածների գոյության պատճառ կարող է լինել թարգմանությունը, որի միջոցով ամբողջ աշխարհի սեփականությունն են դարձել հին հունական ու լատինական մի շարք դարձվածներ՝ ավգյան ախոռներ, աքիլլեսյան գարշապար, գորդյան հանգույց, դանայան տակառ²², ինչպես նաև լեզվական աշխարհընկալման ընդհանրությունները: Պ. Բեդիրյանը ընդգծում է, որ հայոց լեզուն դարձվածների բնագավառում ևս սերտ կապեր ունի թե՛ արևելյան, թե՛ եվրոպական լեզվամտածողության հետ²³:

Հաշվի առնելով Ղարաբաղի բարբառի՝ ռուսերեն փոխառյալ բաղադրիչով դարձվածների՝ ռուսերենում նույն բառով կազմված համարժեք կամ առնչակից դարձված ունենալու հանգամանքը՝ կարելի է առանձնացնել հետևյալ խմբերը.

ա) Միայն փոխառյալ բաղադրիչներից կազմված և նույն իմաստն ունեցող դարձվածներ, որոնք ուղղակի ռուսերենից փոխառված դարձվածներ են և նույն իմաստով էլ գործածվում են բարբառում՝ *ноль внимания* (полное отсутствие интереса или невнимание к чему-либо или кому-либо) – նօլ՝ վընիմաննի (բացարձակ անտարբերություն), *тютелька в тютельку* (совершенно точно, точно-в-точь) – ծուծուլ նա ծուծուլ (լիարժեք համընկնում, չափի առումով լրիվ

²¹ Назарян. 1976, 41.

²² Բ ա դ ի կ յ ա ն. 1986, 54:

²³ Բ ե դ ի ղ ա ն. 1973, 26:

ծիշտ): Կապէկ – կապէկ (կոպէկ առ կոպէկ, քիչ-քիչ) դարձվածի համարժեքը ռուսերենում կա՝ копейка в копейку (совершенно точно, точь-в-точь), բայց դարձվածների իմաստները լրիվ տարբեր են: Սուխոյ աթկազ արտահայտությունը բարբառում դարձվածի արժեք ունի և նշանակում է լրիվ մերժում, մինչդեռ ռուսերենում сухой отказ արտահայտությունը չի համարվում համընդհանուր գործածություն ունեցող կայուն կապակցություն:

բ) Ամենամեծ խումբը նույնիմաստ այն դարձվածներն են, որոնց անվանական բաղադրիչը փոխառյալ է, իսկ բայական բաղադրիչը նույնիմաստ հայերեն համարժեքն է, ինչպես՝ без копейки остаться (полностью лишиться денег) – առանց կրպէկի մընալ (ընդհանրապես փող չունենալ), впасть в панику (внезапно испытать сильный страх и растерянность, потерять контроль над собой) – պանիկա ընգնել (խուճապի մեջ ընկնել), курить папиросу за папиросой (много курить) – պապրոզը պապրոզան նի կըցընել (հաճախ ծխել), козырь // козыри в руках (кто-либо имеет преимущество в чем-либо) – կոզրընէն ծէրքէն ա (իրավիճակի վրա ազդելու մեծ հնարավորություն ունի), маменькин сынок (избалованный, изнеженный мальчик или молодой человек) – մամուն բալա (փափկասուն, դժվար իրավիճակներին անընտել մարդ), потерять адрес (потерять ориентировку, направление в жизни) – ադրէսը կուրցնել (շփոթվել, մոլորվել, ինչ անելը չիմանալ), смешать карты (разрушать, расстраивать чьи-либо замыслы, планы) – կարտէրը խառնել (մեկի ծրագրերը խառնել):

գ) Կան մի քանի նույնիմաստ դարձվածներ, որոնց հայերեն բաղադրիչը ռուսերեն գերադաս բաղադրիչի հոմանիշ է, ինչպես՝ держать оборону (упорно сопротивляться, не сдаваться) – արարօն փըռնել (պաշտպանողական դիրք գրավել), устраивать концерт (поднять шум, ругань) – կանցէրտ տալ (աղմուկ բարձրացնել ի նշան բողոքի), утратить чины (потерять должность) – չինէրը վէր օնէլ (աստիճանից՝ կոչումից, պաշտոնից գրկել):

դ) Մի քանի դարձված, ունենալով ընդհանուր ռուսերեն բաղադրիչ, արտահայտում են առնչակից իմաստներ, բայց հայերեն բաղադրիչը չի համընկնում ռուսերեն դարձվածի մյուս բաղադրիչին, տարբեր են նաև դարձվածների խոսքիմասային պատկանելությունները: Орինակ՝ без чинов (без церемоний, просто, неформально) – չինէրը վէր կալ (աստիճանից, կոչումից, պաշտոնից գրկվել), как накрахмаленный (описывает человека, который держится очень строго, неестественно – կըրախմալ տըրված (փափկասուն, փափկակյաց), музейная редкость (не имеющее практического применения, вышедшее из употребления, устаревшее) – մուզէյում տինիլի (հազվագյուտ), пружины ослабли (человек стал вялым, немощным, утратил жизненные силы) – պըրուժիննէն բօշ // թուլ (խելապակաս):

ե) Փոխառյալ ընդհանուր բաղադրիչ ունեցող նույնիմաստ որոշ դարձվածներում մյուս՝ հայերեն բաղադրիչը բոլորովին այլ է, ինչպես՝ держать фасон (вести себя важно, важничать, форсить) – փափօն տալ (երկակայել), жать на газ (ускоряться, увеличивать скорость, придавать больше энергии, решительности чему-либо) – գազ տալ (ինչ-որ գործընթաց արագացնել), стоять как труба (быть неподвижным, застывшим, как столб, не двигаться, не проявлять активность) – դուրբա տըրնալ (ցցվել, անշարժ կանգնել):

Եզրակացություն

Ղարաբաղի բարբառի՝ ռուսերեն փոխառյալ բաղադրիչ ունեցող դարձվածները բնորոշվում են հետևյալ հատկանիշներով.

ա) դարձվածներն ունեն հաղորդակցական և անվանողական տեսակներ. նախադասություն դարձվածային միավորների մեջ առավել տարածված են պարզ կառուցվածք ունեցողները, կան նաև միակազմ նախադասություն դարձվածային միավորներ:

բ) Անվանողական դարձվածային միավորները հանդես են գալիս գոյականական, ածականական, բայական, մակբայական, եղանակավորող տեսակներով, ընդ որում թե՛ քանակապես, թե՛ կառուցվածքային բազմազանությամբ քննվող դարձվածները համապատասխանում են գրական լեզվում գործող օրինաչափություններին:

գ) Գոյականական դարձվածային միավորները հիմնականում երկբաղադրիչ են, ածականական դարձվածային միավորները կարող են կազմվել նաև առանց ածականի, շատ քիչ են մակբայական և եղանակավորող դարձվածային միավորները:

դ) Ամենամեծ խումբը կազմում են բայական դարձվածային միավորները, որոնց մի ենթատեսակը կազմող բայական հարադրությունները հանդես են գալիս երկու կաղապարով՝ անվանական փոխառյալ բաղադրիչ + հայերեն վերացական բայ (անել, տալ, ընգնել, տը՞ռնայ) և բարբառում որպես այդպիսին չգիտակցվող ռուսերեն ինֆինիտիվ + անել վերացական բայ: Բայական երկբաղադրիչ ստորադաս փոխառյալ բաղադրիչը գոյականն է, որը կարող է ձևավորվել ուղղական, տրական, բացառական, գործիական, ներգոյական հոլովներով, կապով, ունենալ եզակի կամ հոգնակի թիվ, հանդես գալ հոդով կամ առանց հոդի: Բազմաբաղադրիչ բայական դարձվածները քիչ են:

ե) Փոխառյալ բաղադրիչով դարձվածային միավորների մի մասը առնչություն ունի ռուսերենի համապատասխան դարձվածների հետ, ընդ որում կան առնչության տարբեր արտահայտություններ՝ ձևային, իմաստային, իմաստային առնչակցության և այլն:

Շողեր Մինասյան – ք. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արդի հայոց լեզվի բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հնչյունաբանություն, բառագիտություն, դարձվածաբանություն, ձևաբանություն, շարահյուսություն, հայ բարբառագիտություն: Հեղինակ է 3 գրքի, համահեղինակ՝ 6 գրքի, շուրջ 30 հոդվածի:

ORCID: 0009-0003-5923-4020. shogermiasyan@gmail.com

Արմեն Սարգսյան – ք. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանագիտության բաժնի գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ բարբառագիտություն, բանահյուսություն, ազգագրություն: Հեղինակ է 36 գրքի, համահեղինակ՝ 4 գրքի, շուրջ 60 հոդվածի: ORCID: 0009-0002-5556-8165. armen.sargsyan@iae.am

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աճառեան Հ. 1911, Հայ բարբառագիտություն. Ուրուագիծ եւ դասավորություն հայ բարբառների (բարբառագիտական քարտէսով). – «Էմինեան ազգագրական ժողովածու», հ. Ը, Մոսկուա-Նոր Նախիջեան, Լազարեան ճեմարանի հրատ., 318 էջ [Acharyan H. 1911, Armenian Dialectology: Outline and Classification of Armenian Dialects (with a dialectological map). – “Eminian Ethnographic Collection”, V. 8, Moscow–Nor Nakhichevan, Lazarian Seminary Press, 318 p. (in Armenian)]:

Բադիկյան Խ. 1986, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 354 էջ [Badikyan Kh. 1986, Phraseological Units of Modern Armenian. Yerevan, Press AS, SSR of Armenia, 354 p. (in Armenian)]:

Բեդիրյան Պ. 1973, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Երևան, «Լույս» հրատ., 232 էջ [Bediryan P. 1973, Modern Armenian Idiomatics. Yerevan, “Luys” Press, 232 p. (in Armenian)]:

Բեդիրյան Պ. 2011, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 1408 էջ [Bediryan P. 2011, Extensive Explanatory Dictionary of Armenian Idioms. Yerevan, YSU Press, 1408 p. (in Armenian)]:

Ղարիբյան Ա. 1947, Հայ բարբառագիտություն, Երևան, Հայաստանի մանկավարժական ինստիտուտի հրատ., 296 էջ [Gharibyan A. 1947, Armenian Dialectology. Yerevan, Press of the Pedagogical Institute of Armenia, 296 p. (in Armenian)]:

Մարգարյան Ա. 1966, Հայերենի հարադիր բայերը, Երևան, ԵՊՀ հրատ., 502 էջ [Margaryan A. 1966, Continuous Verbs of Armenian. Yerevan, YSU Press, 502 p. (in Armenian)]:

Մարգարյան Ա. 1975, Գորիսի բարբառը, Երևան, ԵՊՀ հրատ., 568 էջ [Margaryan A. 1975, The Dialect of Goris. Yerevan, YSU Press, 568 p. (in Armenian)]:

Մինասյան Շ. 2007, Ղարաբաղի բարբառի դարձվածները, Ստեփանակերտ, 2007, «Դիզակ պլյուս» հրատ., 128 էջ [Minasyan Sh. 2007, The Idioms of the Karabakh Dialect. Stepanakert, “Dizak Plus” Press, 128 p. (in Armenian)]:

Պողոսյան Ա. 1965, Հադրուտի բարբառը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 372 էջ [Poghosyan A. 1965, The Dialect of Hadrut. Yerevan, Press of the AS, SSR of Armenia, 372 p. (in Armenian)]:

Ջահուկյան Գ. 1972, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 348 էջ [Jahukyan G. 1972, Introduction to Armenian Dialectology. Yerevan, Press of the Academy of Sciences of ASSR, 348 p. (in Armenian)]:

Սարգսյան Ա. 2013, Ղարաբաղի բարբառի բառարան, Երևան, «Էդիթ Պրինտ» հրատ., 848 էջ [Sargsyan A. 2013, Dictionary of the Karabakh Dialect. Yerevan, “Edit Print” Press, 848 p. (in Armenian)]:

Սարգսյան Ա., Մինասյան Շ. 2017, Ղարաբաղի բարբառի դարձվածաբանական բառարան, Երևան, «Էդիթ Պրինտ» հրատ., 568 էջ [Sargsyan A., Minasyan Sh. 2017, Phraseological Dictionary of the Karabakh Dialect. Yerevan, “Edit Print” Press, 568 p. (in Armenian)]:

Սարգսյան Ա., Մինասյան Շ. 2025, Ղարաբաղի բարբառ. արդի վիճակը և պահպանման հեռանկարները. – Հայ բանասիրության հեռանկարներ. ուսումնասիրության և ուսուցման արդի խնդիրներ, Լոս Անջելես – Երևան, ԱՄՆ Արևմտյան թեմի հրատ., էջ 57–71 [Sargsyan A., Minasyan Sh. 2025, The Karabakh Dialect: Current State and Prospects for Preservation, Perspectives of Armenian Philology: Modern Issues of Study and Teaching, Los Angeles – Yerevan, Publishing House of Western Diocese of the Armenian Church of America, p. 57–71 (in Armenian)]:

Ֆալակյան Մ. 1985, Ռուսերենից և ռուսերենի միջոցով հայերենում կատարված բառային փոխառությունները (Ըստ ռուս-հայերեն ընդհանուր բառարանների նյութերի). – «Բանբեր Երևանի համալսարանի», № 2, էջ 168–184 [Falakyan M. 1985, Word Borrowings from Russian and Through Russian into Armenian (According to Materials from General Russian-Armenian Dictionaries). – “Bulletin of Yerevan University”, № 2, p. 168–184 (in Armenian)]:

Антонова Л. 2025, Большой фразеологический словарь русского языка. Москва, изд. «Славянский дом книги», 928 с. [Antonova L. 2025, Large Phraseological Dictionary of the Russian Language. Moscow, “Slavyanskiy dom knigi” Press, 928 p. (in Russian)].

Молотков А. 1977, Основы фразеологии русского языка. Ленинград, изд. «Наука», 284 с. [Molotkov A. 1977, Fundamentals of Phraseology of the Russian Language. Leningrad, “Nauka” Press, 284 p. (in Russian)].

Назарян А. 1976, Фразеология современного французского языка. Москва, изд. «Высшая школа», 318 с. [Nazaryan A. 1976, Phraseology of the Modern French Language. Moscow, “Vysshaya shkola” Press, 318 p. (in Russian)].

Ожегов С. 2018, Толковый словарь русского языка. Москва, изд. «Мир и образование», 1375 с. [Ozhegov S. 2018, Explanatory Dictionary of the Russian Language. Moscow, “Mir i obrazovanie” Press (in Russian)].

Тихонов А. 2004, Фразеологический словарь современного русского литературного языка, т. 1-2. Москва, изд. «Наука», 1664 с. [Tikhonov A. 2004, Phraseological Dictionary of Modern Russian Literary Language, V. 1-2. Moscow, “Nauka” Press, 1664 p. (in Russian)].

ФРАЗЕОЛОГИЗМЫ С РУССКИМ ЗАИМСТВОВАННЫМ КОМПОНЕНТОМ В КАРАБАХСКОМ ДИАЛЕКТЕ

ШОГЕР МИНАСЯН, АРМЕН САРГСЯН

Резюме

Ключевые слова: карабахский диалект, русский язык, словарный запас, заимствование, фразеологизм, семантическое изменение, корень, аффикс.

Займствованные слова в Карабахском диалекте, по сравнению с их значениями в русском языке, могут либо сохранять своё первоначальное значение, либо подвергаться различным семантическим изменениям. Одним из проявлений семантических изменений является употребление этих слов в составе фразеологизмов. Фразеологические единицы в основном состоят из заимствованных подчинённых и армянских главных компонентов. Фразеологизмы с коммуникативным значением – то есть выполняющие функцию предложения – сравнительно редки; они в основном имеют простую структуру, встречаются также односоставные предложения-фразеологизмы. Фразеологические единицы с номинативным значением включают все подтипы: именные, прилагательные, глагольные, наречные и модальные. Именные и прилагательные

фразеологизмы, как правило, двухкомпонентные, наречные и модальные встречаются редко. Глагольные фразеологизмы характеризуются разнообразными отношениями между компонентами и количественно преобладают над другими типами. Значительную часть среди них составляют словосочетания, получившие фразеологическое значение. В глагольных двухкомпонентных единицах подчинённым заимствованным компонентом выступает существительное, которое может употребляться в различных падежах, с послелогом или без него, в единственном или множественном числе, с артиклем или без артикля. Многие фразеологизмы с заимствованным компонентом имеют в русском языке аналогичные или родственные по составу выражения.

Шогер Минасян – к. филол. н., доцент, старший научный сотрудник отдела современного армянского языка Института языка им. Г. Ачаряна НАН РА. Научные интересы: фонетика, лексикология, фразеология, морфология, синтаксис, армянская диалектология. Автор 3 книг, соавтор 6 книг, около 30 статей. ORCID: 0009-0003-5923-4020. shogermiasyan@gmail.com

Армен Саргсян – к. филол. н., доцент, научный сотрудник отдела фольклора Института археологии и этнографии НАН РА, старший научный сотрудник отдела диалектологии Института языка им. Г. Ачаряна НАН РА. Научные интересы: армянская диалектология, фольклор, этнография. Автор 36 книг, соавтор 4 книг, около 60 статей. ORCID: 0009-0002-5556-8165. armen.sargsyan@iae.am

RUSSIAN-DERIVED PHRASEOLOGICAL UNITS IN THE KARABAKH DIALECT

SHOGER MINASYAN, ARMEN SARGSYAN

Summary

Keywords: Karabakh dialect, Russian, vocabulary, borrowing, phraseological unit, semantic change, root, affix.

The borrowed words in the Karabakh dialect, when compared to their meanings in Russian, may have either retained their original meaning or undergone various semantic changes. One of the manifestations of semantic changes is the use of these borrowed words in phraseological units. The phraseological units are mainly composed of borrowed subordinate components and Armenian dominant components. Phraseological units with communicative meaning – that is, those functioning as a sentence – are relatively few; they mainly have a simple structure; one-member phraseological units are also encountered. Phraseological units with nominative value include all subtypes: nominal, adjectival, verbal, adverbial, and modal. The

nominal and adjectival phraseological units are mostly two-component, while adverbial and modal ones are quite rare. Verbal phraseological units are characterized by diverse relationships between their components and quantitatively predominate over other types. A significant number of them make word combinations that have acquired phraseological meaning. In verbal two-component units, the subordinate borrowed component is the noun, which can be used in various cases, with or without a postposition, in singular or plural form, and with or without an article. Many phraseological units containing borrowed components have similar or related expressions in Russian.

Shogher Minasyan – PhD. in Philology, Associate Professor, Senior Researcher at the Department of Modern Armenian Language of the Institute of Language after H. Acharyan of NAS RA. Scientific interests: phonetics, lexicology, phraseology, morphology, syntax, Armenian dialectology. Author of 3 books, co-author of 6 books, about 30 articles. ORCID: 0009-0003-5923-4020. shogherminasyan@gmail.com

Armen Sargsyan – PhD. in Philology, Associate Professor, Researcher at the Department of Folklore of the Institute of Archaeology and Ethnography of NAS RA; Senior Researcher at the Department of Dialectology of the Institute of Language after H. Acharyan of NAS RA. Scientific interests: Armenian dialectology, folklore, ethnography. Author of 36 books, co-author of 4 books, about 60 articles. ORCID: 0009-0002-5556-8165. armen.sargsyan@iae.am

ՀՏԴ: 929:78(479.25) Գալանդերյան+782.1/7

DOI: 10.54503/0135-0536-2026.1-161

TO THE 145TH ANNIVERSARY
OF THE BIRTH OF NIKOL GALANDERYAN

THE OPERA “PARVANA” BY NIKOL GALANDERYAN:
THE FORGOTTEN ECHO OF ARMENIAN ROMANTICISM*

ANNA ASATRYAN, LILIT HAKOBYAN

Keywords: Nikol Galanderyan, Hovhannes Tumanyan, the opera “Parvana”, musical Tumanyaneana, Iranian–Armenian music.

Abstract

In the history of Armenian music, certain names endure forever. One of them is the Iranian-Armenian composer, pedagogue, and musical-public figure Nikol Galanderyan (1881–1944).

His opera “Parvana”, whose libretto is written to Hovhannes Tumanyan’s legend of the same name, is a unique fusion of folk mysticism. Oriental lyricism and traditions of European classical opera.

Galanderyan created the said opera in a historically complicated period (the first half of the XX century), while living and creating in Tehran. “Parvana” is the first and, perhaps, for now the only attempt to bring to the opera stage Tumanyan’s profound national, almost mystical text. “Parvana” became one of Galanderyan’s large-scale pieces, as he is better known for his songs, many of which have become folk songs. With this work, the composer created his own model of chamber opera.

This soft and lyrical piece – tragic and luminous at the same time – holds a special place in the history of Armenian classical music of the early XX century. Because of the composer’s remoteness from Armenia, on the one hand, and absence of operatic theaters in the cities of Iran, where he lived, on the other, “Parvana” had not had the stage life, which the operas, written by his contemporaries in Yerevan, enjoyed. This opera can be rightfully considered an “unsung song”, since it hasn’t been produced to this day.

*Submitted as of 07. III. 2026, reviewed on 16. III. 2026, approved for publication on 20. III. 2026.

© Author/s, 2026. Available under Creative Commons Attribution 4.0 License.

Nevertheless, “Parvana” can be attributed to the best examples of the XX century Armenian musical theater. It is perceived as the epoch’s soft echo, in which the music tried – through Tumanyan’s genius – to conceptualize the perpetual problems of love and death.

The rebirth of interest towards Nikol Galanderyan’s opera today is not just a tribute to the past, but a vital process of preservation of musical memory between Armenia and Diaspora.

Introduction

As is known, musical Tumanyaneana has traversed a fruitful path. On Tumanyan themes, operas and ballets, symphonic, vocal-symphonic, chamber-instrumental, choral works were created, songs and romances. Children’s operas and songs, music for cartoons constitute a notable page in musical Tumanyaneana.

- Özterzi S. 2011, *Anadolu'da Neolitik ve Kalkolitik dönemdeki mezar tiplerinin ve ölü gömme geleneklerinin sosyokültürel açıdan değerlendirilmesi*, Yüksek lisans tezi, Ankara, Ankara Üniversitesi, 162 s. [Özterzi S. 2011, *A sociocultural evaluation of burial types and traditions in Neolithic and Chalcolithic periods in Anatolia*, Master's thesis, Ankara, Ankara University, 162 p. (in Turkish)].

Ramishvili A. 2004, A Threshing Board of the Middle Bronze Age from Georgia. – Journal of Georgian Archaeology (Tbilisi), № 1, p. 114–119.

Salvini M. 2012, Corpus dei testi urartei, vol. IV, Roma, CNR–Istituto SSCEVO, 323 p.

Tumanyan G. S. 2015, The Burials Discovered during Excavations of the Trench H12 at Agarak Archaeological Complex. – Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies (Yerevan), vol. 9/2, p. 110–121.

Wilkinson K. N., Gasparyan B., Pinhasi R., Avetisyan P., Hovsepian R., Zardaryan D., Areshyan G. E., Bar-Oz G. and Smith A. 2012, Areni-1 Cave, Armenia: A Chalcolithic–Early Bronze Age Settlement and Ritual Site in the Southern Caucasus. – Journal of Field Archaeology (Boston), V. 37, № 1, p. 20–33.

Woolley L. 1934, Ur excavations 2, The royal cemetery, Oxford, Oxford University Press, 604 p.

Zehren E. 2006, The Crescent and the Bull: A Survey of Archaeology in the Near East, Translated by J. Cleugh, New York, Hawthorn Books, INK, 388 p.

Արեշյան Գ. Ե. 1986, Մասիսի-բլուր (Ենգիջա) բնակավայրի պեղումները, ԵՊՀ հնագիտության գիտահետազոտական լաբորատորիայի գիտական հաշվետվությունը 1985 թ. հնագիտական արշավախմբերի աշխատանքների մասին, Երևան, էջ 1–18 [Areshyan G. E. 1986, Excavations of Masisi-Blur (Yengidja) Settlement, Scientific Report of the Scientific Research Laboratory of Archeology of the YSU on the Work of Archaeological Expeditions in 1985. Yerevan, p. 1–18 (in Armenian)]:

Արեշյան Գ. Ե. 1987, Մասիսի-բլուր բնակավայրի պեղումները, ԵՊՀ հնագիտության գիտահետազոտական լաբորատորիայի «Հայաստանի հնագիտական սկզբնաղբյուրները» պետությունատանի թեմայի 1986 թ. դաշտային հնագիտական աշխատանքների հաշվետվություն, Երևան, էջ 4–7, 75–80 [Areshyan G. E. 1987, Excavations of Masisi-Blur Settlement, Report on Archaeological Fieldwork Carried out in 1986 on the Theme "Archaeological Sources of Armenia" State-funded by the Scientific Research Laboratory of Archaeology of the YSU. Yerevan, p. 4–7, 75–80 (in Armenian)]:

Դեվեյան Ս. 2022, Լոռի բերդ III. ուշբրոնզեդարյան դամբարաններ, Երևան, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատ., 392 էջ [Devejian S. 2022, Lori Berd III: Late Bronze Age Burials. Yerevan, Publishing House of the Institute of Archaeology and Ethnography, 392 p. (in Armenian)]:

Թորոսյան Ռ. Մ., Խնկիկյան Օ. Ս., Պետրոսյան Լ. Ա. 2002, Հին Շիրակական (1977–1981 թթ. պեղումների արդյունքները), Երևան, «Գիտություն», 259 էջ [Torosyan R. M., Xnkikyan O. S., Petrosyan L. A. 2002, Ancient Shirakavan (Results of the 1977–1981 Excavations), Yerevan, "Gitutyun", 259 p. (in Armenian)]:

Թումանյան Գ. Ս. 1993, Ուջանի դամբանաթումբը. – ՊԲՀ, № 1–2, էջ 133–146 [Tumanyan G. S. 1993, The Tomb at Udjan, HPH], № 1–2, p. 133–146 (in Armenian)]:

Թումանյան Գ. Ս. 1997, Աշտարակի հոջաբաղերի ուշբրոնզեդարյան դամբարանները. – ՊԲՀ, № 2, էջ 249–262 [Tumanyan G. S. 1997, Sepulchres of the Late Bronze Age in the Site Khodjabagher in Ashtarak. – HPH], № 2, p. 249–262 (in Armenian)]:

Թումանյան Գ. 2005, Արուճի դամբարանադաշտի ուշբրոնզեդարյան № 5 դամբարանը (թաղման ծեսը մեկնաբանելու փորձ). – ՊԲՀ, № 3, էջ 160–172 [Tumanyan G. 2005, Late Bronze Age Barrow № 5 in Aruch Cemetery, (an Attempt of Funeral Rites Interpretation). – HPH], № 3, p. 160–172 (in Armenian)]:

Թումանյան Գ. 2010ա, Նկատառումներ Հայաստանի ուշբրոնզեդարյան թաղումների գույքին առնչվող որոշ հարցերի վերաբերյալ. – ՊԲՀ, № 3, էջ 147–160 [Tumanyan G. 2010a, Remarks on some Issues Related to the Goods of Late Bronze Age Burials of Armenia. – HPH], № 3, p. 147–160 (in Armenian)]:

Թումանյան Գ. 2010բ, Արուճի № 4 դամբանաբլուրը, Խալդյան զորությամբ ... Հողվածների ժողովածու նվիրված Բորիս Պիոտրովսկու 100–ամյակին, Ավետիսյան Պ., Պետրոսյան Ա. (խմբ.), Երևան, «Գիտություն», էջ 109–131 [Tumanyan G. 2010b, The Tombe № 4 of Arouch, Trough Haldi's Power, Studies in Honour of the 100th Anniversary of the Birth of Boris Piotrovsky, Avetisyan P., Petrosyan A. (eds). Yerevan, “Gitutyun”, p. 109–131 (in Armenian)]:

Իսրայելյան Ա. 2021, Հայ կանանց զարդերի գործառույթները (XVIII–XX դդ.). – «Լրաբեր հասարակական գիտությունների», № 2, էջ 266–290 [Israelyan A. 2021, The Functions of Armenian Female Adornments (18th–20th centuries CE). – “Herald of Social Sciences”, № 2, p. 266–290 (in Armenian)]:

Խանզադյան Է. 1979, Էլար–Դարանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 191 էջ [Khanzadyan E. 1979, Ēlar–Darani. Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, 191 p. (in Armenian)]:

Հարությունյան Ա. 1975, Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 270 էջ [Harutyunyan S. 1975, The Genre of Curses and Blessings in Armenian Folklore. Yerevan, Publishing House of Academy of Sciences of Armenian SSR, 270 p. (in Armenian)]:

Շախմուրադյան Մ. Ս. 2022, «Անապատի օդապարուկների» կառուցվածքը, ձևերը, թվագրությունը և գործառույթը: «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 130 էջ [Shakhmuradyan M. S. 2022, The “Desert kites”: Structure, Forms, Dating and Function. Dissertation for the Degree of Candidate of Historical Sciences in the Specialty “Archeology”. Yerevan, Institute of Archeology and Ethnography of the NAS RA, 2022, 130 p. (in Armenian)]:

Պետրոսյան Լ. Ա. 2018, Լճաշենի դամբանադաշտը I, Երևան, ՀԱԻ հրատ., 416 էջ [Petrosyan L. A. 2018, Necropolis of Lchashen I. Yerevan, IAE Publishing House, 416 p. (in Armenian)]:

Սրուանձտեանց Գ. 1876, Մանանայ, Կ. Պոլիս, Տպագրութիւն Ե. Մ. Տնտեսան, 456 էջ [Srwandztiants G. 1876, Manana. K. Polis, Printing House of E. M. Tntesean, 456 p. (in Armenian)]:

Տիրացյան Գ. 1982, Նեմրութ, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 8, խմբ. Արզումանյան և այլք, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 219 [Tiratsyan G. 1982, Nemrut, in Armenian Soviet Encyclopedia, V. 8, Edited by M. Arzumanyan et al. Yerevan, Publishing House of Academy of Sciences of Armenian SSR, p. 219) (in Armenian)]:

Алëкшин В. А. 1995, Мустьерские погребения Западной Европы. – Археологические вести (С.-Петербург), № 4, с. 188–216 [Alekhshin V. A. 1995, Mousterian burials of Western Europe. – Archaeological News (St. Petersburg), № 4, p. 188–216 (in Russian)].

Гуммель Я. И. 1940, Археологические очерки: сборник статей. Баку, изд. АзФАН, 166 с. [Hummel Ya. I. 1940, Archaeological Essays: a Collection of Articles. Baku, AzBAS Publishing House, 166 p. (in Russian)].

Гуммель Я. И. 1948, Некоторые памятники раннебронзовой эпохи Азербайджана. – Краткие сообщения Института истории материальной культуры (Москва–Ленинград), вып. XX, с. 15–28 [Hummel Ya. I. 1948, Some Monuments of the Early Bronze Age of Azerbaijan, Brief Reports of the Institute of the History of Material Culture (Moscow–Leningrad), V. 20, p. 15–28 (in Russian)].

Иванов В. В. 1974, Опыт истолкования древнеиндийских ритуальных и мифологических терминов, образованных от *aśva* – “конь” (жертвоприношение коня и дерево *aśvattha* в древней Индии). – Проблемы истории языков и культуры народов Индии, ред. Г. Зограф, В. Топоров. Москва, «Наука», с. 75–138 [Ivanov V. V. 1974, The Experience of Interpreting Ancient Indian Ritual and Mythological terms Derived from *Aśva* - "Horse" (the Sacrifice of a Horse and *Aśvattha* Tree in Ancient India), in Problems of the History of Languages and Culture of the Peoples of India, Edited by G. Zograf and V. Toporov. Moscow, “Nauka”, p. 75–138 (in Russian)].

Исраелян А. Р. 1993, Колокольчики и бубенцы в армянских народных верованиях. – ИФЖ, № 1–2, с. 147–156 [Israelyan A. R. 1993, Bells and Harebells in Armenian Folk Beliefs. – НФж, № 1–2, p. 147–156 (in Russian)].

Ковалевская В. Б. 1984, Кавказ и аланы. Века и народы. Москва, «Наука», 192 с. [Kovalevskaya V. B. 1984, Caucasus and Alans. Centuries and Nations. Moscow, “Nauka”, 192 p. (in Russian)].

Куфтин Б. А. 1941, Археологические раскопки в Триалети, I. Тбилиси, изд. АН Гр. ССР, 491 с. [Kuftin B. A. 1941, Archaeological Excavations in Trialeti, V. 1. Tbilisi, Publishing House of Academy of Sciences of Georgian SSR, 491 p. (in Russian)].

Лосев А. Ф. 1957, Античная мифология в ее историческом развитии. Москва, «Учпедгиз», 620 с. [Losev A. F. 1957, Ancient Mythology in its Historical Development. Moscow, “Uchpedgiz”, 620 p. (in Russian)].

Медникова М. Б. 2004, Трепанации в древнем мире и культ головы. Москва, «Алетейа», 208 с. [Mednikova M. B. 2004, Trepanation in the Ancient World and the Cult of the Head. Moscow, “Aleteya”, 208 p. (in Russian)].

Мерперт Н. Я., Мунчаев Р. М. 1982, Погребальный обряд племен халавской культуры. – Археология Старого и Нового света, ред. В. И. Гуляев. Москва, «Наука», с. 28–49 [Merpert N. Ya., Munchaev R. M. 1982, Funeral rite of the Tribes of Halav Culture. – Archaeology of the Old and New World, Edited by V. I. Gulyaev. Moscow, “Nauka”, p. 28–49 (in Russian)].

Монгайт А. Л. 1973, Археология Западной Европы. Каменный век. Москва, «Наука», 356 с. [Mongait A. L. 1973 Archaeology of Western Europe. The Stone Age. Moscow, “Nauka”, 356 p. (in Russian)].

Петросян Л. А. 1989, Раскопки памятников Кети и Воскеаска (III–I тыс. до н. э.). Ереван, изд. АН Арм. ССР, 180 с. [Petrosyan L. A. 1989, Excavations of the Monuments of Keti and Voskehask (III–I millennia BC). Yerevan, Publishing House of Academy of Sciences of Armenian SSR, 180 p. (in Russian)].

Симонян А. 1988, Обсидиан и кремьен как атрибуты погребального обряда. – Вопросы изучения армянской народной культуры (Культура и язык), VIII Конференция молодых ученых, Тезисы докладов, ред. З. В. Харатян, Г. Л. Петросян.

Երևան, Институт археологии и этнографии, с. 79–81 [Simonyan H. 1988, Obsidian and Flint as Attributes of Funerary Rites. – Issues of Studying Armenian Folk Culture (Culture and Language), 8th Conference of Young Scientists, Abstracts of Reports, Edited by. Z. V. Kharatyan and H. L. Petrosyan. Yerevan, Institute of Archaeology and Ethnography, p. 79–81 (in Russian)].

Смирнов Ю. А. 1997, Лабиринт: морфология преднамеренного погребения. Москва, «Восточная литература», 279 с. [Smirnov Yu. A. 1997, Labyrinth: The Morphology of Deliberate Burial. Moscow, “Vostochnaya Literatura”, 279 p. (in Russian)].

Тирацян Г. А. 1988, Культура древней Армении. VI в. до н. э. – III в. н. э. (по археологическим данным). Ереван, изд. АН Арм. ССР, 206 с. [Tiratsyan G. A. 1988, Culture of Ancient Armenia: 6th century BC – 3rd century AD (Based on Archaeological data). Yerevan, Publishing House of Academy of Sciences of Armenian SSR, 206 p. (in Russian)].

Топоров В. Н. 1987, Тезисы к предыстории «портрета» как особого класса текстов. – Исследования по структуре текста, ред. Т. В. Цивьян. Москва, «Наука», с. 278–288 [Toporov V. N. 1987, Theses to the Prehistory of “Portrait” as a Special Class of Texts. – In Research on the Structure of the Text, Edited by T. V. Tsiv’yan. Moscow, “Nauka”, p. 278–288 (in Russian)].

Топоров В. Н. 1988, О ритуале. Введение в проблематику. – Архаический ритуал в фольклорных и раннелитературных памятниках, ред. Е. С. Новик. Москва, «Наука», с. 7–60 [Toporov V. N. 1988, On the Ritual. Introduction to the Agenda. – In Archaic Ritual in Folklore and Early Literary Monuments, Edited by E. S. Novik. Moscow, “Nauka”, p. 7–60 (in Russian)].

Хачатрян Т. С. 1975, Древняя культура Ширака (III–I тыс. до н. э.). Ереван, изд. Ереванского университета, 278 с. [Khachatryan T. S. 1975, Ancient Culture of Shirak (III–I millennia BC). Yerevan, Yerevan University Press, 278 p. (in Russian)].

Худавердян А. Ю., Гаспарян Б. З., Пинхаси Р., Канаян А. С., Ованесян Н. А. 2017, Комплексное исследование антропологических материалов позднего энеолита из пещеры Арени 1. – Вестник археологии, антропологии и этнографии (Тюмень), № 2, с. 72–93 [Khudaverdyan A. Yu., Gasparyan B. Z., Pinhasi R., Kanayan A. S., Hovanesyan N. A. 2017, A Comprehensive Study of Anthropological Materials of the Late Eneolithic from the Areni 1 Cave. – Bulletin of Archaeology, Anthropology and Ethnography (Tyumen), № 2, p. 72–93 (in Russian)].

ՆՆՋԵՅՅԱԼԻ ԳԼԽԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՉԱՐԽԱՓԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ
(Ավանդաներ նախապատմական ժամանակաշրջանից)

ԳԱՐԵԳԻՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Ա մ փ ո փ ու մ

Բանալի բառեր՝ դամբարան, ննջեցյալի գլուխը, մարդ, ծխական առարկաներ, թաղման ծես, չարխափան, մեղադրական առարկաներ:

Հին քարի դարից սկսած՝ թաղման ծեսը կազմող բոլոր ծիսակարգերը նպատակաուղղված էին մեկ նպատակի՝ մահը հաղթահարելուն: Ննջեցյալի գլուխը դիտարկվում էր որպես տվյալ էակին լիարժեք փոխարինող, ընկալվում էր որպես զետեղարան, որտեղ կենտրոնացած էր կենսական էներգիան: Հետևաբար գլուխը պաշտպանության կարիք ուներ, որն ապահովվում էր գլխի մոտ կայծքարից, վանակատից կամ մետաղից պատրաստված ծիսական առարկաներ տեղադրելով, գլուխը կավով ծեփելով, այն կավանոթի մեջ կամ քարի վրա դնելով և այլն: Գլխանոցը, բացի գեղագիտական նպատակներից, ուներ նաև պաշտպանիչ նշանակություն: Այս պաշտպանական միջոցառումները դեռևս չէին ապահովում հանգուցյալի վերածնունդը, սակայն թույլ էին տալիս հուսալ, որ վերածնված մարմնում հոգին փոփոխության չի ենթարկվի և անձի էությունը կպահպանվի: Այս ուսումնասիրությունը ցույց է տալիս Մերձավոր Արևելքում և Եվրոպայում հանգուցյալի գլուխը պաշտպանելու համար կիրառվող մեթոդների բազմազանությունը՝ ընդգծելով մեր հեռավոր նախնիների հոգևոր կյանքի այս կարևոր կողմը:

Գարեգին Թումանյան – պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վաղ հնագիտության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Հայկական լեռնաշխարհի բրոնզ-երկաթեդարյան հնագիտական մշակույթներ, թաղման ծես, կիմերական հնագիտական մշակույթ, մշակութային փոխառնչություններ: Հեղինակ է 5 գրքի և 78 հոդվածի: ORCID: 0000-0002-6696-0093. gstumanyan@gmail.com

ЗАЩИТА ГОЛОВЫ УСОПШЕГО АПОТРОПЕИЧЕСКИМИ СРЕДСТВАМИ (очерки доисторического периода)

ГАРЕГИН ТУМАНЯН

Резюме

Ключевые слова: погребение, голова усопшего, человек, ритуальные предметы, погребальный обряд, апотропеический, металлические предметы.

Начиная с палеолита, все ритуалы, составляющие погребальный обряд, были направлены на достижение одной цели – преодоление смерти. В ритуальной практике голова рассматривалась как полноценный заменитель данного существа. Считалось, что она является неким вместилищем, в котором сконцентрирована жизненная энергия, она воспринималась как резервуар для последней. Поэтому голова нуждалась в защите, чему способствовало размещение ритуальных предметов из кремня, обсидиана или металла рядом с головой, обмазывание головы глиной, помещение ее в глиняный горшок или установление на камень и т. д. Головной убор, кроме эстетических целей, имел также

апотропеическое значение. Эти защитные меры не обеспечивали возрождения покойного, но вселяли надежду, что в возрожденном теле душа не подвергнется изменениям, идентичность личности будет сохранена. Настоящее исследование явствует о разнообразии методов, применяемых на Ближнем Востоке и в Европе для защиты головы усопшего, подчеркивая этот важный аспект духовной жизни наших далеких предков.

Гарегин Туманян – д. и. н., старший научный сотрудник отдела ранней археологии Института археологии и этнографии НАН РА. Научные интересы: археологические культуры Армянского нагорья эпохи бронзы и железа, погребальные обряды, киммерийская археологическая культура, культурные взаимосвязи. Автор 5 книг и 78 статей. ORCID: 0000-0002-6696-0093. gstumanyan@gmail.com

ՈՌՈԳՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ*

ԱՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Բանալի բառեր՝ Վ. Լենին, Ֆ. Նանսեն, ոռոգում, «վիշապ» կոթողներ, խորհրդային գաղափարախոսություն, սոցիալիստական ռեալիզմ, հնագիտական հետազոտություններ:

Ամփոփում

1921 թ. Կովկասի կոմունիստներին ուղղված ՌԽՖՍՀ ժողկոմխորհի նախագահ Վ. Լենինի նամակում ձևակերպվում է ոռոգման կարևորության մասին գաղափարը, ինչը դառնում է տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման վերաբերյալ առանցքային ելակետ:

Նորվեգացի բևեռախույզ և հասարակական գործիչ Ֆրիտյոֆ Նանսենի 1925 թ. մարդասիրական առաքելությունը Հայաստանում ուղղակիորեն կապվում է ոռոգման ծրագրերի հետ ու միջազգային մակարդակում հիմնավորում է լենինյան գաղափարների արդիականությունը: Նույն ժամանակաշրջանում ակտիվանում են հնագույն ոռոգման համակարգերին և դրանց առնչվող «վիշապ» կոթողներին վերաբերող հնագիտական հետազոտությունները, ինչի արդյունքում ձևավորվում է գիտական խոսույթ (նարատիվ) առ այն, որ ոռոգումը հնագույն ժամանակներում նպաստել է պետականության առաջացմանը: Սոցիալիստական ռեալիզմի շրջանակներում Լենինի կերպարը առասպելականացվում էր՝ ստանալով «ջուր բացող հերոսի» հատկանիշներ, ինչը ծառայում էր քարոզչական նպատակների: Այսպիսով՝ ոռոգման ծրագրերը ներկայացվում են ոչ միայն որպես տնտեսական անհրաժեշտություն, այլև որպես խորհրդային և մասնավորապես խորհրդահայ նոր պետականության կայացման խորհրդանիշ:

Նախաբան

1920-ական թվականներին Խորհրդային Հայաստանը վերապրեց սոցիալ-քաղաքական ու մշակութային արմատական փոփոխություններ, որոնք ուղեկցվում էին տնտեսական և, մասնավորապես, ոռոգման մեծածավալ ծրագրերով:

* Ներկայացվել է 08. I. 2026 թ.: Հոդվածը տպագրության է երաշխավորել գիտական ղեկավար, պ. գ. դ. Ա. Բորոխյանը (10. I. 2026 թ.): Ընդունվել է տպագրության 20. III. 2026 թ.:

© Հեղինակներ, 2026: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:

Ոռոգման կարևորության մասին Վ. Լենինի մտքերը Կովկասում դարձան ոչ միայն տնտեսական զարգացման առանցք, այլև գաղափարական հենք, որի վրա կառուցվեց խորհրդային իշխանության նոր նարատիվը: Այս ուղղությամբ կարևոր դեր խաղաց Ֆրիտյոֆ Նանսենի մարդասիրական առաքելությունը, որի արդյունքում Հայաստանի վերածննդի գաղափարը ներկայացվեց միջազգային հարթակում, իսկ դրա առանցքային կետը ոռոգումն էր:

Նշված գործընթացները զուգորդվեցին հնագիտական ուսումնասիրություններով, որոնց միջոցով ձևավորվեց մի տեսակետ, ըստ որի՝ ոռոգման համակարգերը հնուց ի վեր էական դեր են խաղացել պետականության ստեղծման և զարգացման գործում:

Վ. Լենինի նամակը Կովկասի կոմունիստներին

Վ. Լենինը 1921 թ. ապրիլի 24-ին նամակ է ուղղում Կովկասի կոմունիստներին, որը տեղ է հասցնում Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհի նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանը: Այն առաջին անգամ տպագրվում է «Պրավդա Գրուզիի» թերթի մայիսի 8-ի համարում: Նամակում Լենինը մասնավորապես նշում է, որ Կովկասն ունի բազմաթիվ բնական պաշարներ, ինչը կարող է հնարավորություն տալ տարածաշրջանի տնտեսական առաջընթացի համար: Տեքստի միջնամասում և հատկապես վերջում երեք անգամ հատուկ շեշտում է այդ հարցում ոռոգման կարևորությունը. «Ոռոգումը հատկապես կարևոր է, որպեսզի վերականգնվի երկրագործությունն ու անասնապահությունը, ինչ գնով էլ որ լինի ... Անհրաժեշտ է սկսել էլեկտրաֆիկացիայի և ոռոգման մեծ աշխատանքներ ... Ոռոգումն ամենապետքականն է, այն կվերստեղծի, կվերածնի տարածաշրջանը, կթաղի անցյալը, կամրապնդի անցումը դեպի սոցիալիզմ»¹: Ստորև փորձելու ենք ցույց տալ այս մտքի գաղափարական և իրական ազդեցությունը հայ իրականության վրա:

Նանսենի առաքելությունը

1925 թ. Թիֆլիսում գտնվելու ընթացքում Լենինի վերոհիշյալ նամակով հետաքրքրվում է մեծ մարդասեր Ֆրիտյոֆ Նանսենը, ով ձեռք է բերում այդ «հիանալի փաստաթղթի պատճենը»՝ գիտակցելով, որ իր առաքելության նպատակը սերտորեն առնչվում է առաջնորդի նամակում քննարկվող խնդիրներին²:

Իսկ ո՞րն էր Նանսենի առաքելությունը Կովկասում: Նանսենը, ի թիվս այլոց, զբաղվում էր 1915 թ. Հայոց ցեղասպանությունից հետո աշխարհով մեկ ցրված հայ գաղթականների՝ Խորհրդային Հայաստան տեղափոխման խնդրով՝ փորձելով նպաստել երկրի խոպան հողերի յուրացմանը՝ ոռոգման ու ճահիճների չորացման միջոցով: Ազգերի լիզան նրա գլխավորությամբ կազմում է հատուկ հանձնաժողով, որը Հայաստանում պետք է ուսումնասիրեր այդ

¹ Ленин. 1950, 296–297; հմմտ. Арутюнян, Оганесян. 1955, 12; Агаханян. 1957, 233; Շիրմազան, Դարբինյան. 1961, 49, Գալստյան. 1968, 190, նաև՝ Киквидзе. 1964, 3; Առաքելյան. 1987, 8:

² Вержбицкий. 1961, 237; Вержбицкий. 1978, 240; Արզումանյան. 1977, 146:

հարցը՝ քննարկման ներկայացնելով համապատասխան եզրակացություններ: Նանսենը գյուղատնտես ու ջրաշինարար մասնագետների ուղեկցությամբ շուտով մեկնում է Հայաստան: Անցնելով Պոլիս–Բաթում–Թիֆլիս ճանապարհով՝ 1925 թ. հունիսի 17-ին նա հասնում է Երևան: Հայաստանի կառավարության ներկայացուցիչների հետ այցելում է անջրդի գոտիներ, քննարկում հնարավոր ոռոզման ու գաղթականներին այդ տարածքներում բնակեցնելու խնդիրները և այդ ամենն իրականացնելու մեխանիզմները: Հուլիսի 2-ին մեծ հայասերը Երևանից մեկնում է Մոսկվա՝ տանելով Հայաստանի մասին իր պատկերացումը, ըստ որի՝ երկիրը դրախտ դառնալու համար կարիք ունի միայն մեկ բանի՝ ջրի: Հայաստան այցելության ընթացքում Նանսենը ոչ միայն ծանոթանում է երկրի խնդիրներին, այլև ուսումնասիրում հայ ժողովրդի պատմությունը՝ այցելում հնագիտական հուշարձաններ, թանգարաններ, Երևանի պետական համալսարան: Այս ամենի արդյունքում նա գրում է «Խաբված ժողովուրդ» (1928 թ.) գիրքը, որն ընթերցողին էր ներկայացնում Հայաստանն իր ներկայով ու անցյալով և պատասխան էր տալիս այն հարցին, թե ինչու արևմտյան տերությունները մերժեցին իր մեծ ծրագրերը³:

Լենինը բարձր էր գնահատում Նոբելյան մրցանակի մեծ մասը Խորհրդային Միությունում գյուղատնտեսական կայանների կառուցմանը նվիրաբերած Ֆ. Նանսենին: Պատահական չէ, որ վերջինիս միջնորդությամբ Նանսենն ընտրվում է Մոսկվայի խորհրդի պատվավոր անդամ ու պարգևատրվում Խորհուրդների համառուսաստանյան IX համագումարի պատվոգրով⁴:

Ոռոզման մասին պատմական նարատիվի ստեղծումը

Լենինյան սկզբունքով մեծ ջրաշինարարական ծրագրերի (Այդրը լճի ջրամբար, Շիրակի և Սարդարապատի ջրանցքներ) իրականացման ժամանակաշրջանը համընկավ հնագույն Հայաստանի ուշագրավ երևույթ համարվող ջրաբաշխական համակարգերի և դրանց առնչվող «վիշապ» կոթողների հետազոտության հիմնական շրջանին (1924–1927 թթ.):

Հայկական լեռնաշխարհին բնորոշ այդ կոթողների ուսումնասիրությունը սկսվեց XX դարի սկզբին ու շարունակվում է մինչ օրս⁵: Քանի որ այդ հուշարձանները գտնվում են բարձր լեռնային գոտիներում, լճակների և հոսող ջրի ակունքների մոտ, իսկ դրանց մի տեսակն էլ ձուկ է պատկերում, ուստի առաջին հետազոտողները առնչություն նկատեցին այդ կոթողների, ջրի հնագույն պաշտամունքի և ջրօգտագործման միջև: 1920-ական թվականներին Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեն և, մասնավորապես, դրա գիտական քարտուղար Աշխարհբեկ Քալանթարը այս երևույթը հետազոտելու

³ Նանսեն. 2000, հմմտ. նաև Շիրմազան. 1963, Արզումանյան. 1974, Արզումանյան. 1977:

⁴ Արզումանյան. 1974, 42:

⁵ Марр, Смирнов. 1931; Пиотровский. 1939; Աբեղյան. 1941, Капанцян. 1952; Պետրոսյան, Բոբոխյան. 2015, Gilbert et al. 2012; Hnila et al. 2019; Bobokhyan et al. 2024.

նպատակով հատուկ ծրագիր իրագործեցին՝ «Զրի կուլտը հին Հայաստանում և «վիշապների» պրոբլեմը» վերնագրով⁶:

Այս ծրագիրը հիմնականում փորձարկվեց Արագած լեռան վրա ու Գեղամա լեռներում, ինչի արդյունքում զարգացվեց տեսակետ, ըստ որի՝ նախապատմական շրջանին վերաբերող «վիշապ» կոթողները գտնվել են Արարատյան դաշտը ջրով ապահովող ջրաբաշխական համակարգերի կարևոր կետերում և ուղղակիորեն կապված են դրանց հետ՝ որպես ջրի պաշտամունքի խորհրդանիշ, ջրի պահապան, ջրանցքաշինության հովանավոր: Իրականացված հետազոտությունների արդյունքում պարզվեց, որ ջրաբաշխական համակարգերը արհեստական լճակների ու ջրանցքների բարդ կառուցվածքներ են, որոնք տարածվում են լեռների լանջերին ու ստորոտներին՝ նպատակ ունենալով զարգացնել դաշտավայրային գոտիների երկրագործությունը և այգեգործությունը, ինչպես նաև անասնապահությունը: Այդ նպատակով օգտագործվել են ձյան ու անձրևի ջրերը, որոնք լեռներից վար են հոսել գարնանը: Արագածյան հնագույն ոռոգման ցանցում, ըստ տեղադրության առանձնահատկությունների, եղել են երկու տիպի ջրամբար-լճակներ՝ 1. ջրահավաք լճակներ (որոնք գտնվել են ցանցի վերին մասում և ամբարել ձնհալի ջրերը՝ սնուցելով դրանցից սկիզբ առնող ջրանցքները), և 2. ջրանցքների ուղղությամբ դասավորված ու արհեստական պատվարներով բնորոշվող լճակ-ջրամբարներ: Վերջիններս կարելի է սահմանել որպես գլխավոր ջրանցքներ (որոնք սկիզբ են առնում ջրհավաք լճերից) և գլխավոր առուներից կամ ավելի ցածր գոտում գտնվող լճակներից սկսվող ջրատարներ (որոնք ջրաբաշխական առուներ են ու օգտագործվում են առանձին տարածքներ ոռոգելու նպատակով): «Վիշապ» կոթողները գտնվել են հենց այս ոռոգման համակարգերի հանգուցակետերում⁷:

Հիշյալ վարկածը գերիշխող դարձավ հետագա հետազոտողների շրջանում⁸: Իր վերոհիշյալ գրքում այս վարկածին է անդրադառնում նաև Նանսենը՝ այդ մասին տեղեկություններ ստանալով Ա. Քալանթարից, որին նա հղում և շնորհակալություն է հայտնում իր գրքում⁹: Այստեղ Նանսենը շեշտում է նաև, որ Հայաստանի հնագույն բնակիչներն ունեին «զարգացած ոռոգման համակարգ և ջրի պաշտամունքի տարածման շրջանում յուրովի երկրպագում էին «վիշապին»՝ ձկնակերպ հսկային, որ համարվում էր ջրի աստվածություն»¹⁰:

⁶ Ք ա լ ա ն թ ա թ . 1931, 9, 13, Ք ա լ ա ն թ ա թ . 1933, Ք ա լ ա ն թ ա թ . 1937, 171–194, հմմտ. Թ ա մ ա ն յ ա ն . 1988, 10–16, B r e n t j e s . 1973, 20.

⁷ Ք ա լ ա ն թ ա թ . 1937, Շ ի Ր մ ա զ ա ն . 1962, 50–55:

⁸ М а р р , С м и р н о в . 1931, 80–81; S e r -Մ ո վ ս ի ս յ ա ն . 1936, 13, П и о - т р о в с к и й . 1949, 76; Ա դ ա խ ա ն յ ա ն . 1960, 19–20, Շ ի Ր մ ա զ ա ն . 1962, 7, 50, 53, 106–107, Խ ա չ ա տ Ր յ ա ն . 1971, 128, 136, B u r n e y , L a n g . 1971, 214, 220; X a ч а т р я н . 1976, 121; S a n t r o t . 1996, 74; K u s h n a r e v a . 1997, 187; N a l - b a n d y a n . 2016, 305–306.

⁹ Ն ա ն ս ե ն . 2000, 189–192, հմմտ. Ա Ր զ ու մ ա ն յ ա ն . 1977, 269–271:

¹⁰ Ն ա ն ս ե ն . 2000, 189–190. տեքստը գրելիս, բացի Քալանթարի կողմից տրամադրված գրավոր հաղորդումներից, Նանսենի համար կարևոր սկզբնաղբյուր է եղել Ա. Քալանթարի «Քարե դարը Հայաստանում» հոդվածը (Ք ա լ ա ն թ ա թ . 1925),

Այսուհանդերձ, կարծում ենք, որ ռոռզման համակարգի և դրա համատեքստում վիշապների հետազոտման աշխուժությունը 1920-ական թվականներին ուներ գաղափարական որոշակի հենք և, հավանաբար, պարունակում էր պետապատվերի որոշակի տարրեր: Ելնելով Վ. Լենինի 1921 թ. Կովկասի կոմունիստներին ուղղված վերոհիշյալ նամակում արտահայտված այն մտքից, թե ռոռզման ամենից կարևորն է և կվերածնի երկիրը, հայ իրականության մեջ սկսեցին մեծ ուշադրություն դարձել ռոռզման խնդրին: Այս կապակցությամբ իրականացվեցին ոչ միայն լայնածավալ ջրատնտեսական աշխատանքներ, այլև այդ աշխատանքները գաղափարապես հիմնավորող գիտական հետազոտություններ, որոնք ուղղված էին հնագույն Հայաստանի ջրատնտեսության ու ջրի հետ կապված պաշտամունքի ուսումնասիրությանն ու համապատասխան նարատիվի կերտմանը:

Առաջին հայացքից այս նարատիվի գերխնդիրը ռոռզման պատմական կարևորության շեշտումն էր տևականության մեջ՝ նախնիներից սկսած: Այս տեսակետի տարածողն ու հասարակությանը միջնորդողը մտավորականներն էին, որոնք մի կողմից՝ հետազոտության, մյուս կողմից՝ նաև հասարակական գործունեության միջոցով տրամադրություններ պետք է ստեղծեին: Այսպես՝ Այդըր լճի ջրամբարի 1925–1927 թվականների շինարարության կապակցությամբ հայտնի պետական գործիչ և պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը մի գրառման մեջ նշում է քարեդարյան ու բրոնզեդարյան հուշարձաններ (կրոմլեխներ, մեգալիթներ, դոլմեններ և այլն), այդ թվում՝ ռոռզման հնագույն հետքեր, որոնք խոսում են ջրաշինարարության վաղ ակունքների մասին¹¹: Ներկայացնելով ռոռզման կարևորությունը Հայաստանում՝ գրող ու ճանապարհորդ Ատրպետը կապ է տեսնում հին և նոր ժամանակների Հայաստանի ջրաշինարարության միջև ու շեշտում, որ, եթե ներկայիս աշխատանքներն իրականացվեն նույն սկզբունքներով, ինչ հնում, ապա հայկական հողերը կվերակենդանան: Ատրպետն իդեալականացնում է հնագույն Հայաստանը (Նաիրի երկիրը, Վիշապների դարաշրջանը) և Խորհրդային Հայաստանում տեղի ունեցող գործընթացները ներկայացնում որպես հնի վերածնունդ¹²: Նա նույնիսկ զուգահեռներ է տեսնում տարածքի օգտագործման սկզբունքների մեջ. այսպես՝ ջրային պաշարներն իջեցվում են այն բարձր լեռներից, որտեղ, ինչպես հնում, այժմ էլ ջրի պաշտամունքի ուխտատեղեր կան (դրանց մոտ սովորաբար վիշապների արձաններ են դրվել). «Այս եռանդով ներկա դարի աշխատավորությունը կանգնած է այն շավղի վրա, ուր յոթանասուն դար առաջ, երկրամշակության բազմապիսի արտաբերություններով արբած ժողովուրդը Արագածի, Գառնիի, Մասիսի, Նեբրովթի, Վարագի և Կազանֆերի լանջերին ու կողերը, ջրանցքներ էր փորում, ջրին ճանապարհ էր բաց անում դեպի իր հանդերն ու ագարակները, ռոռզելու ցանքսերը և ծաղկեցնելու Նաիրի երկիրը: Կարծես թե լճակների մեջ

որի մասին Նանսենը գրում է, թե այն շուտով կիրատարակվի անգլերեն թարգմանությամբ. տե՛ս Ն ա ն ս ե ն. 2000, 189:

¹¹ Շ ի Ր մ ա զ ա ն. 1961, 146:

¹² Ա տ Ր պ ե տ. 1924, 44:

դարավոր քնից զարթնել են վիշապամայրերը, օձերից մտրակ շինած աշխատավորին մղում են դեպի այն բազմաթիվ լճակները, որտեղերից սկիզբն էին առնում մեր գետերն ու ջրանցքները, ցանկանում են վերանորոգել վիշապազանց դարը և անապատները դրախտի վերածել»¹³:

Հատկանշական է, որ այս նարատիվի հիմքում ընկած է ոռոգման միջոցով պետականության ստեղծման և ամրապնդման գաղափարը: Մասնավորապես, Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության առանցքային գոտին՝ Արարատ և Արագած լեռների միջև ընկած Արարատյան դաշտն ու դրա ոռոգման խնդիրը դառնում են նոր պետականության կայացման կարևորագույն հարցը, ճիշտ այնպես, ինչպես հնագույն ժամանակներում էր և միջնադարում¹⁴: 1920 թ. հայկական պետականությունը Արագածի լանջերին վերստին վերականգնվեց: Հայ մտավորականները սկսեցին Արագածին մոտենալ թե՛ հոգևոր և թե՛ կիրառական տեսանկյուններից: Ինչպես հին ժամանակներում, այնպես էլ այժմ նրանց ուշադրության կենտրոնում էր Արագածի ջրային պաշարների կառավարման խնդիրները: Այս իմաստով պատահական չէ, որ 1920-ական թվականներին և 1930-ական թվականների սկզբներին սկսում են հետազոտվել Արագածի երկրաբանությունը, ջրային աղբյուրները, կառուցվում է օդերևութաբանական կայանը¹⁵, ինչի հետ մեկտեղ իրականացվում են հնագիտական ուսումնասիրություններ:

Ասվածը հիշեցնում է մեզ գերմանացի պատմաբան Կ. Ա. Վիթֆոգելի «իրիզացիոն» պետության հայտնի տեսությունը, ըստ որի՝ պետությունն առաջանում է ոռոգովի երկրագործության կազմակերպման արդյունքում, ինչը ենթադրում էր համայնական աշխատանք, ուժերի ընդհանրական համախմբում և վարչարարության առաջացում¹⁶: Եթե այս տեսությունը բացատրում է պետության առաջացման ընդհանուր դրդապատճառները, ապա 1920-ական թվականներին Հայաստանում ոռոգմանն ուղղված միջոցառումները բացահայտում են նման նախաձեռնությունների իրականացման մեխանիզմները: Ընդ որում, այդպիսի հզոր նախաձեռնությունների կարևոր բաղադրիչը պատմական նարատիվով հիմնավորված տնտեսական ծրագրերն էին¹⁷: Այն իր բնույթով արհեստական չէր, այլ, մասնակի պետական պատվերով համեմված լինելով հանդերձ, վերարտադրում էր պատմական իրականությունը:

Սոցոնախոսը և ջուրը բացող հերոսի կերպարը

Լենինի խոսքերից բխող վերոհիշյալ նարատիվը, անշուշտ, ունենալով տնտեսական դրդապատճառներ, այնուամենայնիվ, ինչ-որ նախնական, արքեոտիպային կառուցվածքներ է հիշեցնում, որոնք կարող են մեզ վերադարձնել դեպի առասպելամտածողություն:

¹³ Ա տ ր պ ե տ. 1924, 134–135, տե՛ս նաև՝ Ա տ ր պ ե տ. 1912, 3:

¹⁴ А га х а н я н. 1957, 234.

¹⁵ Ле в и н с о н-Ле с с и н г. 1931; Թ ա մ ա ն յ ա ն. 1960, 16:

¹⁶ W i t t f o g e l. 1957, 49–100.

¹⁷ Խնդիրն առնչվող տեսական հարցերի մասին տե՛ս Մ ո լ ր ա դ յ ա ն. 2025, 14–23:

Արդեն սոցոեալիզմի հիմնադիր Մաքսիմ Գորկին խորհրդային գրողների առաջին համամիութենական համագումարի իր ելույթում, խոսելով մշակույթներում առասպելների ընդհանրության և իրականության առասպելականացման անհրաժեշտության մասին, նշում է. «Ֆոլկլորը մեր օրերում Վլադիմիր Լենինին բարձրացրեց հնության առասպելական հերոսին՝ Պրոմեթևսին հավասար բարձրության»¹⁸:

Եվ իրոք, արդեն Լենինի կենդանության օրոք, բայց հատկապես մահվանից անմիջապես հետո, նրա անվան շուրջ ձևավորվեցին բազմաթիվ ժողովրդական երգեր ու հեքիաթներ, որոնցում առաջնորդը խորհրդային մարդկանց համար հանդես է գալիս որպես մշակույթային հերոս, դեմիուրգ, առաջին նախնի, ընտրյալ / մարգարե, հերոս-հսկա-դյուցազն, արդարության մարտիկ, հրաշագործ, փրկարար¹⁹, բայց նաև՝ որպես ընդհանուր կանոններին չենթարկվող և աշխարհը կտրուկ վերափոխող / նոր աշխարհի ստեղծող տրիքստեր²⁰:

Հայ ժողովուրդը ևս ստեղծել է լենինյան շարք, որը բաղկացած է ծոներգերից, հեքիաթներից, ավանդություններից և «Լենին փաշա» վիպերգից: Ժողովրդական բանասացները հյուսում են լենինյան հերոսապատումը և պատմական իրադարձությունների ֆոնի վրա ներկայացնում առաջնորդի կերպարը²¹: Դրանցում Լենինը գլխավոր հերոս է, որը սպանում է ցար-վիշապին, պարփակվում ժայռ-դամբարանում²²: Ակնհայտ է, որ Լենինի այս կերպարը մի կողմից՝ պատվերով էր ստեղծված, բայց մյուս կողմից՝ կրում էր տարերայնորեն ձևավորված ժողովրդական ստեղծագործության կնիքը²³:

Լենինի մասին այս պատկերացումները լիովին դիտարկելի են, այսպես կոչված, սոցոեալիզմի տեսանկյունից, որին բնորոշ էր խորհրդային իրականության առասպելականացումը²⁴: Այստեղ ժողովրդական խոսույթի միջոցով այլընտրանքային իրականություն էր առաջարկվում, այնպիսի իրականություն, որը խորհրդային մարդուն ապագայի նկատմամբ հավատ էր ներշնչում: Ահա այստեղ է, որ ամեն հինը և ամեն կրոնականը մերժող խորհրդային իրականությունը, փաստորեն, ոչ թե ստեղծում էր նորը, այլ վերադառնում դեպի հինը, դեպի առասպելամտածողություն: Այս իմաստով խորհրդային պաշտոնական գաղափարախոսությունը ձեռք էր բերում վերին աստիճանի արխայիկ հատկանիշներ, իսկ խորհրդային հասարակությունը տիպաբանորեն նմանվում էր նախնադարյան համայնքին՝ իրեն բնորոշ հիերարխիկ կառուցվածքով, «կրո-

¹⁸ Лупполи др. 1934, 10.

¹⁹ Пясковский. 1930, 37, 40, 51, 57, 68, 86; Соловьев. 1930, 36, 55, 85, 92.

²⁰ Abrahamian. 1999. խորհրդային առաջնորդների հերոսական կերպարի մասին տե՛ս Абрамян. 1990; Josephson. 2024.

²¹ Մելիք-Օհանջանյան. 1936, Մելիքյան. 1941, Մուրադյան. 1949, հմմտ. Աղաբաբյան. 1963, 233:

²² Պետրոսյան. 1990, 48, Պետրոսյան. 2014, 138–139, Պետրոսյան. 2019, 97–98, Պետրոսյան. 2023:

²³ Պետրոսյան. 2019, 97–98:

²⁴ Հմմտ. Святославский. 2015.

նական» համակարգով, նվիրաբերման ծեսերով և գաղտնի կազմակերպություններով, որի գլխավոր խորհրդանիշն ու հիմնադիր-նախնին դամբարանում միշտ ապրող հանգուցյալ առաջնորդն էր՝ Լենինը²⁵: Այս ամենը ձևավորում էր Լենինի պաշտամունքը՝ արխաիկ հասարակությանը բնորոշ մեկ այլ կարևոր հատկանիշ²⁶:

Լենինի այս բոլոր հատկանիշներին ավելանում է ևս մեկը՝ նա դառնում է ջուր բացող հերոս, վիշապամարտիկ²⁷: Չէ՞ որ բազմաթիվ ժողովուրդների պատկերացումներում վիշապասպան հերոսը հենց ջուր բացող է, ոռոգում կազմակերպող, որի արդյունքում հին աշխարհը կործանվում է, և նոր աշխարհ է ստեղծվում²⁸: Ընդ որում, Լենինը իր ծրագիրն ավանդում է նախ լեզվով՝ օգտագործելով բառեր, որոնք հնարամիտ կերպով ուղղորդում են մարդկանց և նրանց հավատ ներշնչում (ինչը տրիքստերին բնորոշ կարևոր հատկանիշ է²⁹):

Ուշագրավ է, որ վիշապամարտության մասին հիշատակում է նաև Նանսենը: Կովկասում վերջինիս ուղեկցող ռուս գրող Ալեքսանդր Կուպրինը հիշում է, որ մի առիթով Նանսենը խոսում է այն մասին, որ կենարար ջուրը և դրա հսկողությունը տարբեր ժողովուրդների հեքիաթներում կապվում են վիշապի և նրան հաղթող ու ջուրը բացող հերոսի հետ: Մեկնելով Նանսենին՝ Կուպրինը նշում է, որ Կովկասի բոլոր ժողովուրդները պաշտում են Աբ. Գևորգ վիշապամարտիկին, որի շղարշի տակ թաքնված է հարսնացուին վիշապի իշխանությունից ազատագրող հնագույն հերոսը: Գյուղացիները մինչ օրս պահպանել են հիշողությունը Վիշապի / Գվելեշապի մասին, որը գետերի և ջրերի տիրակալն էր ու ջուր էր բաշխում միայն աղջիկների զոհաբերության դիմաց: Ապա գրողը դիպուկ ավելացնում է. «Մեր խորհրդային իրականությունը, ոչնչացնելով հին լեգենդները, ստեղծում է նորերը: Ժողովուրդն արդեն հեքիաթներ է գրում այն մասին, թե ինչպես սոցիալիզմի մեծ երկրում բնակվող բոլոր ցեղերի տասնյակ հազարավոր նորաթուփ ասպետներ, ոչ թե արևոտ շրթայական զրահներով և ոչ թե նիզակներով, այլ բարդ ու հզոր մեխանիզմներով, համատեղ հասցնում են վերջնական հարվածները անգիտության վիշապին: Հզոր էլեկտրակայաններ կառուցելով արագահոս գետերի վրա, հարյուր կիլոմետրանոց ոռոգման ջրանցքներ անցկացնելով, նավագնացություն հաստատելով՝ նրանք արթնացնում են հարուստ երկիրը դարավոր քնից»³⁰:

Եվ այս ամենի հիմքում ընկած է Լենինի անունը, ով տվյալ պարագայում հանդես է գալիս որպես կովկասյան ժողովուրդների, այդ թվում՝ հայերի փրկիչ, նրանց վերածննդի և կայուն զարգացման խորհրդանիշ, որպես ջուր ու

²⁵ А б р а м я н. 1993, 36–38; Պ ե տր ո ս յ ա ն. 2019, 97–98:

²⁶ Այս մասին մանրամասն տե՛ս T u m a r k i n. 1983.

²⁷ Պ ե տր ո ս յ ա ն. 1990, 49, A b r a h a m i a n. 1999, 14.

²⁸ L y l e. 2025; հմմտ. Ա բր ա հ ա մ յ ա ն. 2019, Հ ա յր ա պ ե տ յ ա ն. 2019, Դ ա - լ ա լ յ ա ն. 2024:

²⁹ A b r a h a m i a n. 1999, 19.

³⁰ В е р ж б и ц к и й. 1978, 248; Վիշապի պատմության համար հմմտ. նաև Ն ա ն - ս ե ն. 2000, 54:

դրանց գաղափարական ենթատեքստը վկայում են, որ խորհրդային քարոզչությունը ներկան և ապագան կերտելիս օգտագործում էր վաղուց հայտնի գործիքակազմեր:

*Անի Պետրոսյան – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ հնագիտության պատմություն, հնագիտության և քաղաքականության առնչություններ, գիտական նարատիվների ձևավորման պատմություն: Հեղինակ է 5 հոդվածի:
ORCID: 0009-0003-5699-1253. petrosyanani33@gmail.com*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Մ. 1941, «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ, Երևան, «Արմֆան», 98 էջ [Abeghyan M. 1941, The Monuments Called “Dragons” as Statues of the Goddess Astghik-Derketo. Yerevan, “Armfan”, 98 p. (in Armenian)]:

Աբրահամյան Լ. 2019, Վիշապը աղբյուրի ակին. – Բոբոխյան Ա., Զիլիբերտ Ա., Հնիլա Պ. (խմբ.), Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին, Երևան, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատ., էջ 119–130 [Abrahamyan L. 2019, The Dragon at the Source. – Bobokhyan A., Gilibert A., Hnila P. (ed.), The Dragon on the Border of Fairy Tale and Reality. Yerevan, Institute of Archaeology and Ethnography Press, p. 119–130 (in Armenian)]:

Աղաբաբյան Ս. 1963, Ակսել Բակունց, Երևան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ., 502 էջ [Aghababyan S. 1963, Aksel Bakunts. Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press, 502 p. (in Armenian)]:

Աղախանյան Գ. Ա. 1960, Զրային տնտեսության զարգացումը Հայաստանում, Երևան, «Հայպետհրատ», 151 էջ [Aghakhanyan G. A. 1960, The Development of Water Economy in Armenia. Yerevan, “Haypethrat”, 151 p. (in Armenian)]:

Առաքելյան Հ. Մ. 1987, Սիսիան (Տեղեկատու-ուղեցույց), Երևան, ՀԿԿ Կենտրոնի հրատ., 131 էջ [Arakelyan H. M. 1987, Sisian (Information Guide). Yerevan, Publishing House of the Central Committee of the Communist Party of Armenia, 131 p. (in Armenian)]:

Ատրպետ. 1912, Վիշապամայր. պատմվածք, Ալեքսանդրապոլ, «Շիրակ», 48 էջ [Atrpet. 1912, Dragon Mother: Story. Alexandrapol, “Shirak”, 48 p. (in Armenian)]:

Ատրպետ. 1924, Շիրակի ջրանցքը. – «Հանդես ամսօրեայ» (Վիեննա), էջ, 31–46, 131–142 [Atrpet. 1924, Shirak Canal. – “Handes Amsoreay” (Vienna), p. 31–46, 131–142 (in Armenian)]:

Արզումանյան Մ. 1974, Նանսենի միսիան Հայաստանում. – «Բանբեր Երևանի համալսարանի», № 3, էջ 42–65 [Arzumanyan M. 1974, Nansen's Mission in Armenia. – “Bulletin of Yerevan University”, № 3, p. 42–65 (in Armenian)]:

Արզումանյան Մ. Վ. 1977, Նանսենը և Հայաստանը, Երևան, «Հայաստան», 341 էջ [Arzumanyan M. V. 1977, Nansen and Armenia. Yerevan, “Hayastan”, 341 p. (in Armenian)]:

Բագոյան Ա. 2019, Վիշապի մոտիվը հայ նոր գրականության մեջ. – Բորոխյան Ա., Զիլիբերտ Ա., Հնիլա Պ. (խմբ.), Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին, Երևան, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատ., էջ 257–272 [Bagoyan A. 2019, The Dragon Motif in New Armenian Literature. – Bobokhyan A., Gilibert A., Hnila P. (ed.), The Dragon on the Border of Fairy Tale and Reality. Yerevan, Institute of Archaeology and Ethnography Press, p. 257–272 (in Armenian)]:

Գալստյան Հ. 2024, Շիրակի ջրանցքի կառուցման նշանակությունը և դրա արտացոլումը բանահյուսության մեջ. – Բորոխյան Ա., Հովսեփյան Ռ. (խմբ.), Ջրագրության մշակույթը Հայաստանում հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, ԱԻԿԱ-Արմենիա, էջ 243–253 [Galstyan H. 2024, The Significance of the Construction of the Shirak Canal and its Reflection in Folklore. – Bobokhyan A., Hovsepyan R. (ed.), The Culture of Water Use in Armenia from Ancient Times to the Present Day. Yerevan, AICA-Armenia, p. 243–253 (in Armenian)]:

Գասպարյան Ա. 1968, «Նորք» հանդես. – «Բանբեր Հայաստանի արխիվների», № 1, էջ 183–192 [Gasparyan A. 1968, “Nork” Journal. – “Bulletin of the Archives of Armenia”, № 1, p. 183–192 (in Armenian)]:

Դալալյան Ա. 2024, Առասպելաբանական վիշապը և ոռոգման համակարգերի առաջացումը. – Բորոխյան Ա., Հովսեփյան Ռ. (խմբ.), Ջրագրության մշակույթը Հայաստանում հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, ԱԻԿԱ-Արմենիա, էջ 99–105 [Dalalyan A. 2024, The Mythological Dragon and the Emergence of Irrigation Systems. – Bobokhyan A., Hovsepyan R. (ed.), The Culture of Water Use in Armenia from Ancient Times to the Present Day. Yerevan, AICA-Armenia, p. 99–105 (in Armenian)]:

Թամանյան Ա. 1960, Հողվաճներ, փաստաթղթեր, ժամանակակիցները նրա մասին, Երևան, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատ., 284 էջ [Tamanyan A. 1960, Documents, Contemporaries About Him. Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press, 284 p. (in Armenian)]:

Թամանյան Յու. 1988, Հուշարձաններին նոր կյանք, Երևան, «Հայաստան», 208 էջ [Tamanyan Yu. 1988, New Life for Monuments. Yerevan, “Hayastan”, 208 p. (in Armenian)]:

Իսախանյան Մ. Մ. 1971, Արագածոտնի նախաուրարտական ջրաբաշխական համակարգի փորագրված գծագիրը. – ՊԲՀ, № 3, էջ 128–137 [Khachatryan M. M. 1971, The Engraved Drawing of the Pre-Urartian Water Distribution System of Aragatsotn. – HPhj, № 3, p. 128–137 (in Armenian)]:

Հայրապետյան Թ. 2019, Վիշապը հայկական հրաշապատում հեքիաթներում. – Բորոխյան Ա., Զիլիբերտ Ա., Հնիլա Պ. (խմբ.), Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին, Երևան, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատ., էջ 108–118 [Hayrapetyan T. 2019, The Dragon in Armenian Fairy Tales. – Bobokhyan A., Gilibert A., Hnila P. (ed.), The Dragon on the Border of Fairy Tale and Reality. Yerevan, Institute of Archaeology and Ethnography Press, p. 108–118 (in Armenian)]:

Մելիքյան Հ. 1941, Լենինը և Ստալինը հայկական ֆոլկլորում, Երևան, «Հայպետհրատ», 76 էջ [Melikyan H. 1941, Lenin and Stalin in Armenian Folklore. Yerevan, “Haypethrat”, 76 p. (in Armenian)]:

Մելիք-Օհանջանյան Կ. 1936, Լենինը հայ ֆոլկլորի մեջ, Երևան, «Հայպետհրատ» 176 էջ [Melik-Ohanjanyan K. 1936, Lenin in Armenian Folklore. Yerevan, “Haypethrat”, 176 p. (in Armenian)]:

Մուրադյան Մ. 1949, Լենինի և Ստալինի կերպարները սովետական հայկական երաժշտական ստեղծագործություններում. – «Տեղեկագիր հասարակական գիտությունների», Երևան, № 10, էջ 111–128 [Muradyan M. 1949, The Characters of Lenin and Stalin in the Soviet Armenian Musical Works. – “Bulletin of Social Sciences”. Yerevan, № 10, p. 111–128 (in Armenian)]:

Մուրադյան Հ. 2025, Մշակութային քաղաքականությունը խորհրդային և հետխորհրդային Հայաստանում, Երևան, «Անտենոր», 207 էջ [Muradyan H. 2025, Cultural Policy in the Soviet and Post-Soviet Armenia. Yerevan, “Antenor”, 207 p. (in Armenian)]:

Նանսեն Ֆ. 2000, Խաբված ժողովուրդ, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 288 էջ [Nansen F. 2000, Deceived People. Yerevan, Yerevan University Press, 288 p. (in Armenian)]:

Շիրմազան Գ. 1960, Շիրակի Լենինի անվան ջրանցքը. – ՊԲՀ, № 4, էջ 92–103 [Shirmazan G. 1960, The Lenin Canal in Shirak. – HPh], № 4, p. 92–103 (in Armenian)]:

Շիրմազան Գ. 1961, Այդրը լճի ջրհան կայանի շինարարության այցելուների տպավորությունների մատյանը. – «Բանբեր Հայաստանի արխիվների», № 1, էջ 143–155 [Shirmazan G. 1961, The Log of Impressions of Visitors to the Construction of the Aghir Lake Pumping Station. – “Bulletin of the Archives of Armenia”, № 1, p. 143–155 (in Armenian)]:

Շիրմազան Գ. Վ. 1962, Դրվագներ Հայաստանի ոռոգման պատմությունից, Երևան, Հայպետգյուղհրատ, 176 էջ [Shirmazan G. V. 1962, Episodes from the History of Irrigation in Armenia. Yerevan, Haypetgyughrat, 176 p. (in Armenian)]:

Շիրմազան Գ. Վ. 1963, Ֆրիտյոֆ Նանսենը Հայաստանում. – ՊԲՀ, № 1, էջ 195–210 [Shirmazan G. V. 1963, Fridtjof Nansen in Armenia. – HPh], № 1, p. 195–210 (in Armenian)]:

Շիրմազան Գ. Վ., Դարբինյան Ա. Ա. 1961, Ջրատնտեսական աշխատանքները Սովետական Հայաստանում (1920–1940 թթ.). – «Բանբեր Հայաստանի արխիվների», № 1, էջ 49–56 [Shirmazan G. V., Darbinyan A. A. 1961, Waterworks in the Soviet Armenia (1920–1940). – “Bulletin of the Archives of Armenia”, № 1, p. 49–56 (in Armenian)]:

Պետրոսյան Ա. 1990, Առասպելաբանական մի սխեմայի արտացոլումը հասարակական գիտակցության մեջ. – Հանրապետական գիտական նստաշրջան՝ 1986–1988 թթ. ազգաբանական և բանագիտական դաշտային հետազոտությունների հիմնական արդյունքները, Ձեկուցումների հիմնադրույթներ, Երևան, Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ., էջ 47–50 [Petrosyan A. 1990, Reflection of a Mythological Scheme in Public Consciousness. – Republican Scientific Session: 1986–1988. Main Results of Ethnographic and Folcloristic Field Research, Theses of Reports. Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press, p. 47–50 (in Armenian)]:

Պետրոսյան Ա. 2014, Հայոց պատմությունը և վիպական բանահյուսությունը. – «Բանբեր Մատենադարանի», № 21, էջ 131–142 [Petrosyan A. 2014, Armenian History and Epic Folklore. – “Bulletin of the Matenadaran”, № 21, p. 131–142 (in Armenian)]:

Պետրոսյան Ա. 2019, Առասպել և ժամանակակից իրականություն, Երևան, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատ., 215 էջ [Petrosyan A. 2019, Myth and Modern Reality. Yerevan, Press of the Institute of Archaeology and Ethnography, 215 p. (in Armenian)]:

Պետրոսյան Ա. 2023, Խորհրդային լենին-ստալինյան «էպոսը» հայ վիպական բանահյուսության համատեքստում. – Անտոնյան Յ. (խմբ.), Խորհրդահայ մշակույթը. կոնցեպտը, ընկալումներն ու դրսևորումները, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 233–250 [Petrosyan A. 2023, The Soviet Leninist-Stalinist “Epic” in the Context of Armenian Epic Folklore. – Antonyan Y. (ed.), Soviet Armenian Culture: Concept, Perceptions and Manifestations. Yerevan, YSU Press, p. 233–250 (in Armenian)]:

Պետրոսյան Ա., Բոբոխյան Ա. (խմբ.). 2015, Վիշապ քարակոթողները, Երևան, «Գիտություն», էջ 13-52 [Petrosyan A., Bobokhyan A. (ed.). 2015, Dragon Stone Stelae. Yerevan, “Gitutyun”, p. 13-52 (in Armenian)]:

Տեր-Մովսիսյան Մ. 1936, Պատմական տեղեկություններ Հայաստանի հողերի ոռոզման մասին, Երուսաղեմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 142 էջ [Ter-Movsisyan M. 1936, Historical Information on the Irrigation of Armenian Lands. Jerusalem, Srbot's Hakobyans Press, 142 p. (in Armenian)]:

Քալանթար Ա. 1925, Քարե դարը Հայաստանում. – «Նորք» (Երևան), № 5/6, էջ 207–232 [Kalantar A. 1925, The Stone Age in Armenia. – “Nork” (Yerevan), № 5/6, p. 207–232 (in Armenian)]:

Քալանթար Ա. 1931, Հայաստանի հնությունների պահպանության կոմիտե, Երևան, Պետհրատ, 15 էջ [Kalantar A. 1931, Committee for the Preservation of Antiquities of Armenia. Yerevan, Pethrat, 15 p. (in Armenian)]:

Քալանթար Ա. 1937, Մի հնագույն ջրաբաշխական սիստեմ Խորհրդային Հայաստանում. – «Տեղեկագիր Հայկական ԽՍՀ պատմության և գրականության ինստիտուտի» (Երևան), № 2, էջ 171–194 [Kalantar A. 1937, An Ancient Water Distribution System in the Soviet Armenia. – “Bulletin of the Institute of History and Literature of the Armenian SSR” (Yerevan), № 2, p. 171–194 (in Armenian)]:

Абрамян Л. 1990, Перестройка как карнавал. – «Век XX и мир» (Москва), № 6, с. 45–48 [Abrahamyan L. 1990. Perestroika as a Carnival. – “The 20th Century and the World” (Moscow), № 6, p. 45–48 (in Russian)]:

Абрамян Л. А. 1993, Тайная полиция как тайное общество: страх и вера в СССР. – «Этнографическое обозрение» (Москва), № 5, с. 35–42 [Abrahamyan L. A. 1993, The Secret Police as a Secret Society: Fear and Faith in the USSR. – “Ethnographic Review” (Moscow), № 5, p. 35–42 (in Russian)]:

Агаханян Г. А. 1957, Развитие орошения в Советской Армении. – «Труды армянского научно-исследовательского Института гидротехники и мелиорации» (Ереван), «Айастан», № 2, с. 233–252 [Aghakhanyan G. A. 1957, The Development of Irrigation in the Soviet Armenia. – “Transactions of the Armenian Research Institute of Hydraulic Engineering and Land Reclamation” (Yerevan), “Hayastan”, № 2, p. 233–252 (in Russian)]:

Арутюнян В. М., Оганесян К. А. 1955, Архитектура Советской Армении. Ереван, Академия наук Армянской ССР, 290 с. [Harutyunyan V. M., Oganesyanyan K. A. 1955, Architecture of the Soviet Armenia. Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR, 290 p. (in Russian)]:

Бегиян А. З. 1970, Ленин и становление советской национальной государственности в Закавказье. – «Вестник общественных наук» (Ереван), № 4, с. 78–86 [Begiyān A. Z. 1970, Lenin and the Formation of Soviet National Statehood in Transcaucasia. – “Herald of Social Sciences” (Yerevan), № 4, p. 78–86 (in Russian)].

Вержбицкий Н. 1961, Записки старого журналиста. Москва, Советский писатель, 248 с. [Verzhbitsky N. 1961, Notes of an Old Journalist. Moscow, Sovetsky Pisatel, 248 p. (in Russian)].

Вержбицкий Н. К. 1978, Встречи. Москва, «Советская Россия», 256 с. [Verzhbitsky N. K. 1978, Meetings. Moscow, “Sovetskaya Rossiya”, 256 p. (in Russian)].

Егиазаров И. В. 1970, Ленин, электрификация и плановое хозяйство. – «Вестник общественных наук» (Ереван), № 9, с. 12–21 [Egiazarov I. V. 1970, Lenin, Electrification and the Planned Economy. – “Herald of Social Sciences” (Yerevan), № 9, p. 12–21].

Капанцян Г. 1952, О каменных стелах на горах Армении. Ереван, Академия наук Армянской ССР, 51 с. [Kapantsyan G. 1952, Towards the Stone Stelae on the Mountains of Armenia. Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR, 51 p. (in Russian)].

Киквидзе Я. И. 1964, Орошение в древней Грузии (историко-археологический очерк). – Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук. Тбилиси, Тбилисский государственный университет, 33 с. [Kikvidze Ya. I. 1964, Irrigation in Ancient Georgia (Historical and Archaeological Essay). – Abstract of a Dissertation for the Degree of Candidate of Historical Sciences. Tbilisi, Tbilisi State University, 33 p. (in Russian)].

Левинсон-Лессинг Ф. Ю. (ред.). 1931, Алагез: потухший вулкан Армянского нагорья. Ленинград, Академия наук СССР, 397 с. [Levinson-Lessing F. Yu. (ed.). 1931, Alagez: An Extinct Volcano of the Armenian Highlands. Leningrad, USSR Academy of Sciences, 397 p. (in Russian)].

Ленин В. И. 1950, Товарищам-коммунистам Азербайджана, Грузии, Армении, Дагестана, Горской Республики. – Сочинения, т. 32, Издание четвертое. Москва, Госиздательство политической литературы, с. 295–297 [Lenin V. I. 1950, To Comrade Communists of Azerbaijan, Georgia, Armenia, Dagestan, and the Mountainous Republic. – Collection of Works, V. 32, Fourth Edition. Moscow, State Press of Political Literature, p. 295–297 (in Russian)].

Луппол И. К., Розенталь М. М., Третьяков С. М. (ред.). 1934, Первый Всесоюзный съезд советских писателей: стенографический отчет. Москва, Художественная литература, 718 с. [Luppol I. K., Rozental M. M., Tretyakov S. M. (ed.). 1934, First All-Union Congress of Soviet Writers: Verbatim Report. Moscow, Khudozhestvennaya literatura, 718 p. (in Russian)].

Марр Н. Я., Смирнов Я. И. 1931, Вишапы. Ленинград, Огиз, 133 с. [Marr N. Ya., Smirnov Ya. I. 1931, Vishaps. Leningrad, Ogiz, 133 p. (in Russian)].

Пиотровский Б. Б. 1939, Вишапы: каменные статуи в горах Армении. Ленинград, АН СССР, 40 с. [Piotrovsky B. B. 1939, Vishaps: Stone Statues in the Mountains of Armenia. Leningrad, USSR Academy of Sciences, 40 p. (in Russian)].

Пиотровский Б. Б. 1949, Археология Закавказья. Ленинград, Государственный университет имени А. А. Жданова, 134 с. [Piotrovsky B. B. 1949, Archaeology of Transcaucasia. Leningrad, State University after A. A. Zhdanov, 134 p. (in Russian)].

Пясковский А. В. 1930, Ленин в русской сказке и восточной легенде. Москва, Молодая гвардия, 95 с. [Pyaskovsky A. V. 1930, Lenin in Russian Tale and Eastern Legend. Moscow, Molodaya Gvardiya, 95 p. (in Russian)].

Саркисов Е. Г. 1950, Ленин и народы Закавказья. – «Известия Академии наук Армянской ССР. Общественные науки» (Ереван), № 5, с. 3–19 [Sarkisov E. G. 1950, Lenin and the Peoples of Transcaucasia. – “Bulletin of the Academy of Sciences of the Armenian SSR. Social Sciences” (Yerevan), № 5, p. 3–19 (in Russian)].

Святославский А. В. 2015, Социалистический реализм: проблемы веры и интерпретации. – «Культурологический журнал» (Москва), № 2, с. 1–10 [Svyatoslavsky A. V. 2015, Socialist Realism: Problems of Faith and Interpretation. – “Cultural Studies Journal” (Moscow), № 2, p. 1–10 (in Russian)].

Соловьев Л. В. 1930, Ленин и творчество народов Востока. Москва, Московский рабочий, 125 с. [Soloviev L. V. 1930, Lenin and the Creativity of the Peoples of the East. Moscow, Moskovsky Rabochy, 125 p. (in Russian)].

Хачатрян М. М. 1976, О древней ирригационной сети Арагацотн. – «Вестник Ереванского университета» (Ереван), № 1, с. 121–129 [Khachatryan M. M. 1976, On the Ancient Irrigation Network of Aragatsotn. – “Bulletin of Yerevan University” (Yerevan), № 1, p. 121–129 (in Russian)].

Abrahamian L. 1999, Lenin as a Trickster. – “Anthropology & Archeology of Eurasia” (New York), № 38/2, p. 7–26.

Bobokhyan A., Iraeta-Orbegozo M., McColl H., Mkrtychyan R., Simonyan H., Ramos-Madrigal J., Andrades-Valtueña A., Hnila P., Gilibert A., Margaryan A. 2024, Burial of Two Closely Related Infants under a “Dragon Stone” from Prehistoric Armenia. – “Journal of Archaeological Science: Reports” (Amsterdam), № 57, p. 1–15.

Brentjes B. 1973, Drei Jahrtausende Armenien. Leipzig, Koehler und Amelang, 239 S.

Burney Ch., Lang D. M. 1971, The Peoples of the Hills. London, Weidenfeld and Nicolson, p. 324.

Gilibert A., Bobokhyan A., Hnila P. 2012, Dragon Stones in Context: The Discovery of High-Altitude Burial Grounds with Sculpted Stelae in the Armenian Mountains. – “Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft” (Berlin), № 144, p. 93–132.

Hnila P., Gilibert A., Bobokhyan A. 2019, Prehistoric Sacred Landscapes in the High Mountains: The Case of the Vishap Stelae between Taurus and Caucasus. – Engels B., Huy S., Steitler Ch. (Hrsg.), Natur und Kult in Anatolien, BYZAS 24: Veröffentlichungen des Deutschen Archäologischen Instituts. Istanbul, S. 283–302.

Josephson P. R. 2024, Hero Projects: The Russian Empire and Big Technology from Lenin to Putin. Oxford, Oxford University Press, p. 344.

Kushnareva K. K. 1997, The Southern Caucasus in Prehistory. Philadelphia, Pennsylvania Museum, p. 279.

Lyle E. 2025, The Hero who Releases the Waters and Defeats the Flood Dragon. – “Comparative Mythology” (Baltimore), № 1/1, p. 1–12.

Malkhasyan R. S. 1970, V. I. Lenin Shirak Irrigation and Waterpower Canal – A Pioneering Multi-Purpose Water Resources Utilization Project. – “Hydrotechnical Construction” (New York), № 4, p. 334–338.

- Nalbandyan M. 2016, Ancient Aqueducts and the Irrigation System in Armenia. – Angelakis A. N., Chioti E., Eslamian S., Weingartner H. (ed.), *Underground Aqueducts Handbook*. London-New York, CRC Press, p. 305–321.
- Santrout J. (ed.) 1996, *Arménie: Trésors de l’Arménie ancienne des origines au IV^e siècle*. Paris, Musée Dobrée, p. 287.
- Tumarkin N. 1983, *Lenin Lives! The Lenin Cult in Soviet Russia*. Cambridge MA, Harvard University Press, p. 352.
- Wittfogel K. A. 1957, *Oriental Despotism: A Comparative Study of Total Power*. New Haven-London, Yale University Press, p. 556.

ФОРМИРОВАНИЕ ИСТОРИЧЕСКОГО НАРРАТИВА ОБ ИРРИГАЦИИ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ

АНИ ПЕТРОСЯН

Резюме

Ключевые слова: В. Ленин, Ф. Нансен, ирригация, стелы «вишاپ», советская идеология, социалистический реализм, археологические исследования.

В 1921 году в письме Председателя Совета народных комиссаров РСФСР Владимира Ленина к коммунистам Кавказа была сформулирована идея о важности ирригации, ставшей ключевой отправной точкой социально-экономического развития региона. Гуманитарная миссия норвежского полярного исследователя и общественного деятеля Фритьофа Нансена в Армении, напрямую связанная с ирригационными проектами, обосновывала актуальность идей Ленина на международном уровне. В тот же период активизировались археологические исследования по древним ирригационным системам и имеющим к ним отношение памятникам «вишاپ», в результате которых сформировался научный дискурс о том, что в древности ирригацией было обусловлено возникновение государственности.

В рамках социалистического реализма образ Ленина мифологизировался, приобретая черты «героя, открывающего воду», что служило пропагандистским целям. Таким образом, ирригационные проекты представляются не только как экономическая необходимость, но и как символ новой советской и, в частности, армянской советской государственности.

Ани Петросян – научный сотрудник Института археологии и этнографии НАН РА. Научные интересы: история армянской археологии, взаимосвязь археологии и политики, история формирования научных нарративов. Автор 5 статей. ORCID: 0009-0003-5699-1253. petosyanani33@gmail.com

FORMATION OF THE HISTORICAL NARRATIVE
ON IRRIGATION IN THE SOVIET ARMENIA

ANI PETROSYAN

Summary

Keywords: V. Lenin, F. Nansen, irrigation, "vishap" stelae, soviet ideology, socialist realism, archaeological investigations.

In the letter of 1921, addressed to the communists of the Caucasus, the Chairman of the Council of People's Commissars of the RSFSR, Vladimir Lenin formulated an idea of importance of irrigation, which became a key starting point for the social and economic development of the region. The humanitarian mission of the Norwegian polar explorer and public figure Fridtjof Nansen in Armenia, directly related to irrigation projects, proved the relevance of Lenin's ideas at the international level. During the same period, archaeological research on ancient irrigation systems and related monuments called "vishap" were intensified resulting in a scientific discourse according to which irrigation in ancient times conditioned the emergence of statehood. Within the framework of socialist realism, the image of Lenin was mythologized acquiring the features of a "hero who discovers water", which served propaganda purposes. Thus, irrigation projects are presented not only as an economic necessity, but also as a symbol of the new Soviet and, in particular, Soviet Armenian statehood.

Ani Petrosyan – Researcher at the Institute of Archaeology and Ethnography of NAS RA. Scientific interests: history of Armenian archaeology, interrelation between archaeology and politics, formation of scientific narratives. Author of 5 articles. ORCID: 0009-0003-5699-1253. petosyanani33@gmail.com


ՀՏԴ: 929:809.198.1-187 Կատվայան

DOI: 10.54503/0135-0536-2026.1-246

ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ. Հայոց լեզվի բարբառագիտական ատլաս. պրակ Ա, Գեղարքունիքի մարզ, Երևան, Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի էլեկտրոնային հրատ., 2025, 325 էջ*:

Բանալի բառեր՝ բարբառային միավորներ, Գեղարքունիքի մարզ, զուգաբանություններ, բարբառագիտական ատլաս, քարտեզ, բարբառային հատկանիշներ, լեզվաբանական աշխարհագրություն:

Լեզվի պատմության ուսումնասիրության համար առանձնակի կարևորություն ունի բարբառների փոխառնչությունների գիտական քննությունը: Թեև հայերենի բարբառների ուսումնասիրության փորձերը սկսվել են XIX դարի կեսերից, և այդ ժամանակից ի վեր դրանք ենթարկվել են ինչպես միահատկանիշ, այնպես էլ բազմահատկանիշ դասակարգումների, այնուամենայնիվ բարբառային միավորների միջև գոյություն ունեցող բարդ փոխհարաբերությունների պարզաբանումը, հստակեցումն ու ճշգրտումը մինչ օրս շարունակում են մնալ չլուծված խնդիրներ:



Բարբառագիտական հարցերի համակողմանի քննությունը հնարավոր է միայն բարբառագիտական ատլասի առկայության պայմաններում, որի ստեղծումը նշանակալից երևույթ է ցանկացած լեզվի ուսումնասիրության պատմության մեջ: Վաղուց կազմ-

ված են շատ լեզուների բարբառագիտական ատլասներ: Հայերենի քննությունը այդ բնագավառում բավականին հետ է մնացել, և լեզվաբանական աշխարհագրությունը՝ որպես հետազոտական մի մեթոդ, որի օգնությամբ կարելի է ուսումնասիրել լեզվական երևույթների տարածական բաշխման օրինաչափությունները, ուշ է սկսել կիրառվել հայագիտության մեջ: Այս առումով խիստ կարևորվում է բանասիրական գիտությունների դոկտոր Վիկտոր Կատվայանի «Հայոց լեզվի բարբառագիտական ատլաս» էլեկտրոնային գրքի առաջին պրակը՝ նվիրված Գեղարքունիքի մարզի բարբառային միավորներին: Այն ամբողջական, մեթոդապես համակարգված ուսումնասիրություն է՝ հիմնված 2013–2015 թթ. դաշտային հետազոտությունների արդյունքների վրա: Գրքում ներկայացված են մարզի բնակավայրերի խոսվածքների բարբառային հատկանիշները՝ հնչյունական և քերականական մակարդակներում, ինչպես նաև դրանց տարածական ու ժողովրդագրական տվյալները:

* Ներկայացվել է 18. II. 2026 թ., ընդունվել է տպագրության 20. III. 2026 թ.:

Աշխատությունն ունի ներածական մաս, որում Վ. Կատվայանը ներկայացնում է հայ իրականության մեջ լեզվաբանական աշխարհագրության ուղղությամբ կատարված աշխատանքները: Խոսելով լեզվաբանական աշխարհագրության մեթոդի մասին՝ նա նկատում է, որ դրա «... էությունը բարբառագիտական ատլասների ձևավորումն է և դրանցում ընդգրկված քարտեզներում իրենց բաշխման ու դրսևորումների յուրահատկություններով ներկայացված հատկանիշների նկարագրությունն ու մեկնաբանումը» (էջ 5):

Անդրադառնալով հայերենի բարբառագիտական ատլասի ստեղծման ուղղությամբ արված քայլերին՝ հեղինակը նշում է, որ բարբառագիտական քարտեզ կազմելու առաջին փորձը կատարել է Հ. Աճառյանը, որի համար հեռավոր երազանք է եղել ատլասի կազմումը: Նա, սակայն, կազմել է «Հայոց խոսած լեզուներու ու բարբառներու քարտեսը»: Այն ներկայացնում է 337 հայաբնակ վայր, որոնց ճյուղային պատկանելությունը ցույց է տրվում պայմանական նշանների օգնությամբ¹:

Ըստ Վ. Կատվայանի՝ հայ բարբառների տեղային քարտեզ կազմելու առաջին փորձը Ռ. Բաղրամյանի «Դերսիմի բարբառային քարտեզը» աշխատությունն է: Այն ներկայացնում է Դերսիմի շրջանում գործածված բարբառային միավորների (Խարբերդ-Երզնկա, Չմշկածագ, Չարսանճագ, Քղի, Միրաքներ) ընդհանուր, իսկ առանձին դեպքերում՝ նաև համեմատական բնութագրերը, բարբառային նմուշներ ու բարբառային բառերի բառարան: Գրքում զետեղված երեք քարտեզները վերաբերում են պայթական բաղաձայնների համակարգին, բայի սահմանական ներկայի և անկատարի, ինչպես նաև շարունակական ներկայի կազմություններին: Քարտեզներն ուղեկցվում են համառոտ մեկնաբանություններով²:

Վ. Կատվայանն անդրադառնում է նաև Կ. Դավթյանի «Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը» աշխատությանը, որում, ըստ նրա, հեղինակը կատարել է Լեռնային Ղարաբաղի տարածքում գործածվող խոսվածքների հնչյունական ու ձևաբանական իրողությունների համակարգված քարտեզագրական քննություն՝ համաժամանակյա դիտանկյունից: Նա կազմել է լեզվական առանձին հատկանիշների տարածական բաշխվածությունն արտացոլող 53 քարտեզ, որոնցից ութը զետեղված է աշխատության մեջ³: Թեև տվյալ ուսումնասիրությունը բնութագրվել է միայն որպես առանձին տեղային խոսվածքների նկարագրության մի փորձ, այնուամենայնիվ, ըստ Վ. Կատվայանի, այն ներկայացնում է հայ բարբառագիտության մեջ տարածական լեզվաբանական վերլուծության մեթոդաբանական կարևոր քայլ. «Կարծում ենք, որ նման աշխատանքների շարունակական և համակարգված իրականացումը կարող էր հայերենի բարբառագիտական ատլասի համապատասխան հատվածի մշակման նախադրյալներ ստեղծել» (էջ 4):

¹ Հ. Ա ճ ա ռ ե ա ն. Հայ բարբառագիտություն. – «Էմինեան ազգագրական ժողովածու», հ. Ը, Մոսկուա–Նոր-Նախիջեան, 1911, էջ 14:

² Ռ. Բ ա ղ Ր ա մ յ ա ն. Դերսիմի բարբառային քարտեզը, Երևան, 1960, էջ 105–107:

³ Կ. Դ ա վ թ յ ա ն. Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, 1966, էջ 296, 504:

Հայ իրականության մեջ, ըստ Վ. Կատվայանի, լեզվաբանական աշխարհագրությանն ու քարտեզագրությանը առնչվող հիմնարար ուսումնասիրություններ սկսվել են 1970-ական թվականներից, երբ Գ. Ջահուկյանն առաջ քաշեց և կիրառեց հայ բարբառների դասակարգման բազմահատկանիշ-վիճակագրական մեթոդը. «Թեև նրա ուշադրության կենտրոնում բարբառային հատկանիշներն էին և դրանց տարածական դրսևորումներն ու բաշխվածությունը, ինչն առերևույթ մեթոդաբանական առնչություն էր ստեղծում լեզվաբանական աշխարհագրության հետ, այնուամենայնիվ վիճակագրական բարբառագիտության հիմնական նպատակը բարբառային միավորների առանձնացումը, խմբավորումն ու դասակարգումն էր՝ վիճակագրական հաշվումների կիրառմամբ: Վերջինս իրականացվում էր աղյուսակների կազմմամբ և բարբառային ընդհանրությունների ու տարբերությունների թվային արտահայտմամբ» (էջ 5):

Վ. Կատվայանի կարծիքով՝ նոր մեթոդի առաջընթացմամբ լեզվաբանական աշխարհագրությունը ոչ թե մղվում էր երկրորդ պլան, այլ, ընդհակառակը, ստանում էր լրացուցիչ արժևորում: Հայ իրականության մեջ առաջին անգամ Լեզվի ինստիտուտի կողմից ձեռնարկվեցին նպատակաուղղված նախապատրաստական քայլեր՝ բարբառագիտական ատլասի ձևավորման ուղղությամբ: Դրանց արդյունքում 1977 թ. հրատարակվեց «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիրը», մշակվեցին նյութերի հավաքման սկզբունքներ, և սկսվեց տվյալների հավաքագրումը: Սակայն ներկայումս աշխատանքները դադարեցված են, և քարտեզներ չեն կազմվել:

Ներկայացնելով «Հայոց լեզվի բարբառագիտական ատլասի» ստեղծման նախապատրաստական աշխատանքները և նախադրյալները՝ Վ. Կատվայանը կարծում է, որ «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով» գրանցված ծավալուն նյութը, ինչպես նաև ատլասի ստեղծման ուղղությամբ իրականացված նախապատրաստական աշխատանքներն ու մշակված մեթոդաբանական սկզբունքները բավարար հիմք էին՝ անհրաժեշտ ռեսուրսների և համապատասխան հնարավորությունների առկայության դեպքում ձեռնամուխ լինելու համահայկական բարբառագիտական ատլասի կազմմանը» (էջ 6):

Գործընթացի սկզբնական փուլում հեղինակը նպատակահարմար է համարում նախ մշակել Հայաստանի Հանրապետության տարածաշրջանների բարբառագիտական առանձին ատլասներ՝ շարունակական դարձնելով դրանց համալրումն ու ընդլայնումը նոր տվյալներով, որոնք կնպաստեն համահայկական ատլասի աշխատանքները փուլային կարգով իրականացնելուն:

Ատլասի Ա պրակը, ինչպես ասվել է, նվիրված է Գեղարքունիքի մարզին: Այս պրակում զուգաբանությունները ձևակերպվել են՝ նկատի ունենալով «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր» աշխատությունում ներկայացված բարբառային հատկանիշները: Ընդգրկվել են նաև այն զուգաբանությունները, որոնք ընդհանուր տարածում ունեն Արցախի և հարևան շրջանների բարբառային հայերենում և բնորոշ են Ճամբարակի ու Վարդենիսի տարածաշրջանների բարբառային խոսքին:

Ատլասը ներառում է 2 ընդհանուր և 65 զուգաբանական քարտեզներ, որոնք ընդգրկում են շուրջ հինսուն բնակավայր: Առաջին ընդհանուր քարտեզում տարբեր գույն ունեցող կետերով սահմանազատված են մարզի տարածաշրջանները՝ Սևանի, Գավառի, Մարտունու, Վարդենիսի, Ճամբարակի: Երկրորդ ընդհանուր քարտեզում նույնպես կիրառված են տարբեր գույնի կետեր՝ մարզում գործածվող բարբառային միավորների (Մշո, Բայազետի, Դիադինի, Ղարաբաղի բարբառներ, Գանձակի միջբարբառ, Մակուի և Արծափի խոսվածքներ) տարածման գոտիները ներկայացնելու նպատակով: Սա հատկապես կարևոր է այն դեպքերում, երբ վարչատարածքային սահմանները չեն համընկնում բարբառային սահմանների հետ, և նույն տարածաշրջանում գործածվում են մեկից ավելի բարբառային միավորներ:

Քարտեզներից յուրաքանչյուրում սովորաբար ներկայացվում է մեկ զուգաբանություն, որը կարող է ունենալ տարբերակային դրսևորումներ: Տարբերակների առկայության դեպքում յուրաքանչյուրի համար սահմանվում են կետերի տարբեր գունավորումներ, որոնցով նշվում են այն բնակավայրերը, որտեղ առկա է տվյալ հատկանիշը: Հատկանիշի լիարժեք առկայությունը ցուցադրվում է ամբողջական կետով, իսկ մասնակի դրսևորումը՝ կիսված կետով: Մի շարք դեպքերում նույն քարտեզում ներկայացվում են համանման և զուգահեռ զուգաբանություններ, առավել ընդհանուր իրողության տարաբնույթ դրսևորումներ, որևէ զուգաբանություն ու դրան առնչվող հարակից հատկանիշ, որևէ զուգաբանություն ու իբրև դրա առկայության հետևանք դրսևորվող հատկանիշ և այլն:

Ատլասի՝ զուգաբանությունները ներկայացնող քարտեզները ուղեկցվում են հայերեն և անգլերեն մեկնաբանություններով: Դրանք սկսվում են զուգաբանության կարճ, երբեմն գրեթե բանաձևային ներկայացմամբ, այնուհետև բերվում են օրինակներ Գեղարքունիքի մարզի խոսվածքներից: Եթե առկա են տարբերակային իրողություններ, ներկայացվում են նաև դրանք: Այնուհետև նշվում է տվյալ հատկանիշի դրսևորումների ընդհանուր պատկերը բարբառային հայերենում, ապա՝ արտահայտությունը Գեղարքունիքի մարզում՝ ըստ տարածքային շրջանների և բնակավայրերի: Անհրաժեշտության դեպքում տրվում են երևույթին վերաբերող բացատրություններ: Վերջում ներկայացվում են զուգաբանության կամ դրա տարբերակային դրսևորումների առնչությունները մարզի բարբառային միավորների հետ:

Ատլասը համալրված է նաև ժողովրդագրական տեղեկություններով՝ ներկայացնելով մարզի յուրաքանչյուր բնակավայրի բնակչության թվաքանակը և բարբառային միավորների տարածական ընդգրկումը: Առանձին աղյուսակում զուգաբանությունների և դրանց տարբերակային դրսևորումների համարակալմամբ ներկայացվում է բնակավայրերին բնորոշ հատկանիշների խումբը, ինչը ոչ միայն ամբողջացնում է տվյալ խոսվածքի պատկերը, այլև դյուրին է դարձնում խոսվածքների համեմատական դիտարկումը:

Ատլասը եզրափակվում է մարզում գործածվող բարբառային միավորների ընդհանուր բնութագրերով և դրսևորումներով, ինչպես նաև զուգաբանությունների և քարտեզների ցանկով:

Գիրքն անկասկած նոր խոսք է բարբառագիտական ատլասի կազմման ճանապարհին և հատկանշվում է մի շարք առավելություններով՝

– համակարգված և մեթոդապես հիմնավորված դաշտային տվյալներ՝ բնակավայրերի մակարդակով,

– բազմակողմանի ներկայացված բարբառային հատկանիշներ,

– զուգաբանությունների և քարտեզների կիրառմամբ տարածքային ու համեմատական վերլուծության հնարավորություն,

– բարձր գիտական արժեք՝ մասնավոր և եզակի երևույթների արձանագրմամբ,

– նախադրյալների ստեղծում համահայկական բարբառագիտական ատլասի շարունակականության համար:

«Հայոց լեզվի բարբառագիտական ատլաս» աշխատանքը կարևոր ներդրում է հայերենի բարբառների ուսումնասիրության ոլորտում և կարող է ծառայել որպես օրինակ՝ այլ մարզերի ատլասների ստեղծման ժամանակակից մեթոդների մշակման համար: Այն կարևորվում է հայ բարբառների վերաբերյալ իր մատուցած նյութով, արժեքավոր դիտարկումներով՝ նպաստելով հայ բարբառագիտության, հայոց լեզվի պատմության շատ հարցերի պարզաբանմանը: Ատլասի օգնությամբ ճշտվել են Գեղարքունիքի մարզի բարբառային միավորների փոխհարաբերությունները, բացահայտվել են բարբառային կարևոր հատկանիշների ընդհանրություններն ու տարբերությունները: Այն, գիտական շրջանառության մեջ դնելով նոր տվյալներ, եզակի փաստեր, կնպաստի հայերենի բարբառների ուսումնասիրությանը, հնարավորություն կտա պարզելու բարբառախոս վայրերի պատմական ընդհանրությունները, ավելի ստույգ ու ճշգրիտ մեկնաբանելու լեզվական փոխազդեցություններն ու իրակությունները:

Լեզվաբանական նշանակությունից բացի՝ ատլասն ունի նաև պատմական և մշակութային արժեք: Նրա օգնությամբ հնարավոր կլինի լուսաբանել ոչ միայն բանասիրական, լեզվաբանական, այլև պատմագիտական, ազգագրական ու բազմաթիվ այլ հարցեր:


ԳԱՅԱՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ք. գ. դ., պրոֆեսոր, Ռուս-հայկական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ ժամանակակից հայոց լեզու, հայ բարբառագիտություն, հայոց լեզվի պատմություն, հայերենը որպես օտար լեզու: Հեղինակ է 12 գրքի և 81 հոդվածի: ORCID: 0000-0002-7828-8695. gevgayane@gmail.com

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ. Հայ կերպարվեստը «Արաքս» հանդեսի էջերում (Սանկտ Պետերբուրգ, 1887–1898), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2025, 89 էջ*:

Բանալի բառեր՝ Արարատ Աղասյան, հայ կերպարվեստ, Սանկտ Պետերբուրգ, «Արաքս» հանդես, Այվազովսկի:

Վերջերս ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս է ընծայել ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական ղեկավար, կերպարվեստի բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանի հերթական աշխատությունը՝ «Հայ կերպարվեստը «Արաքս» հանդեսի էջերում (Սանկտ Պետերբուրգ, 1887–1898)» մենագրությունը: Աշխատության գլխավոր նպատակն է հայ արվեստագիտության պատմության մեջ առաջին անգամ քննության առնել «Արաքս»-ում զետեղված գեղարվեստական նյութերը՝ առանձնապես կարևորելով XIX դարի հայ կերպարվեստին վերաբերող հոդվածներն ու հաղորդումները և բացահայտել «Արաքս»-ի դերը այդ դարի հայ կերպարվեստի



հանրահռչակման գործում:

«Արաքս» հանդեսը հրատարակվել է ժամանակի հայկական մամուլի համար բավական բարձր տպաքանակով և տարածվել է ինչպես Սանկտ Պետերբուրգում, այնպես էլ Ռուսական կայսրության՝ հայկական խոշոր համայնքներ ունեցող շուրջ 30 քաղաքներում, այդ թվում՝ Երևանում, Ալեքսանդրապոլում, Վաղարշապատում, Թիֆլիսում, Բաքվում, Աստրախանում, Դոնի Ռոստովում, Նոր Նախիջևանում, ինչպես նաև արտասահմանյան մի շարք հայաշատ երկրներում՝ Ֆրանսիայում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Բուլղարիայում, Հունաստանում, Կիպրոսում, Պարսկաստանում և այլուր:

Պրոֆեսոր Արարատ Աղասյանի աշխատությունը, որի խմբագիրը լինելու պատիվն ունեմ, կարևոր ու լուրջ ներդրում է հայ արվեստագիտության մեջ ինչպես հետազոտության թեմայի արդիականությամբ և հրատապությամբ, այնպես էլ գիտական նորոյթով, մասնագիտական բարձր մակարդակով ու գիտական

* Ներկայացվել է 02. II. 2026 թ., ընդունվել է տպագրության 20. III. 2026 թ.:

բարեխղճությամբ: Թեև սա Ա. Աղասյանի 18-րդ մենագրությունն է, սակայն առաջինն է, որտեղ վաստակաշատ արվեստաբանն անդրադառնում է գեղարվեստական քննադատության խնդիրներին՝ հանգամանորեն վերլուծության ենթարկելով հայ կերպարվեստի հարցերի լուսաբանումը Ռուսաստանի հյուսիսային մայրաքաղաքում հայերեն հրատարակված «Արաքս» հանդեսում և բացահայտելով «Արաքս»-ի ներդրումը հայ կերպարվեստագիտության զարգացման գործում:

Ակնհայտ է այն վիթխարի դերը, որն ունեցել է պարբերական մամուլը գեղարվեստական, երաժշտական և թատերական քննադատության ձևավորման ու կայացման գործում: Ներկայացնելով ժամանակի գեղարվեստական, երաժշտական ու թատերական կյանքի անցուդարձը՝ մամուլը ոչ միայն դառնում է այդ կյանքի հայելին, այլև հետագա ուսումնասիրողների համար աղբյուրագիտական կարևորագույն հենք:

Եվ ահա վաստակաշատ արվեստաբանի գիտական հետաքրքրությունների կենտրոնում այս անգամ հայտնվեց Սանկտ Պետերբուրգում 1887–1898 թվականներին կարճատև ընդմիջումներով հրատարակված «Արաքս» հանդեսը, որը հիմնել և խմբագրել է Երևանում ծնված, Թիֆլիսի ռեալական դպրոցում սովորած, ապա «ազատ ունկնդրի» կարգավիճակով Սանկտ Պետերբուրգի համալսարանի լեզվագրական ֆակուլտետում ուսանած Սիմեոն Գուլամիրյանցը (1857–1899):

«Արաքս»-ը բացառիկ տեղ է գրավում հայկական մամուլի պատմության մեջ հենց միայն նրանով, որ սա, ըստ էության, հայկական իրականության մեջ գրական-գեղարվեստական առաջին պատկերազարդ հանդեսն էր, որն ուներ առանձին գեղարվեստական բաժին, և որտեղ տպագրվել են հայ նկարիչների ու քանդակագործների ստեղծագործությունների լուսանկարները:

Ինչպես նկատում է հեղինակը, «Հանդեսին առանձնահատուկ փայլ և շքեղություն էին հաղորդում դրա էջերում առատորեն զետեղված բարձրորակ՝ սև ու սպիտակ բազմաթիվ լուսանկարները, փորագիր պատկերները և հայագգի, ռուս ու եվրոպացի անվանի նկարիչների և քանդակագործների ստեղծագործությունների վերատպությունները: Վերջիններս հիմնականում ընդգրկված և ամփոփված էին հանդեսի գեղարվեստական բաժնում, որի տեքստային՝ ներածական կամ բացատրական հատվածները (ծանուցումները), ինչպես նաև վերը հիշատակված գրական հավելվածները, ունեին առանձին էջակարգություն: Այդ լուսանկարներն ու փորագրությունները լույս են ընծայվել ընտիր տպագրությամբ՝ ինչպես ավտոտիպական, այնպես էլ վիմագրական և ֆոտոտիպական նորագույն միջոցներով ու եղանակներով, որոնք հնարավորություն էին տալիս պահպանելու և արտացոլելու բնօրինակների տոնային հարստությունը, լուսաստվերային փոխանցումների և երանգների նրբությունները: Եթե ֆոտոտիպ պատկերները սովորաբար պատրաստվում էին Սանկտ Պետերբուրգում՝ շատերին հայտնի հրատարակիչ-գրատպիչներ Էդուարդ Գոպպեի և Վլադիմիր Շտեյնի մասնավոր տպարաններում, ապա ավտոտիպ նկարներն ու վիմագրությունները Սիմեոն Գուլամիրյանցը պատվիրում էր Վիեննայում՝ տպագրական գործի հմուտ վարպետներ Կառլ Անգերերի և Ալեքսանդր Գյոշլի աշխատանոցում» (էջ 10–11):

Նշեմ, որ 1893 թ. ի վեր «Արաքս»-ի շապիկը զարդարել է Վասիլի Մատեի փորագրանկարը, որը նույնությամբ վերարտադրում է Կոնստանտին Կրիժիցկու՝

Արարատ լեռը Արաքսի ափից՝ Խոր Վիրապ վանքի մերձավայրից պատկերող ջրանկարը, որի ստորին աջ անկյունում՝ կլոր շրջանակի մեջ, տեսնում ենք նաև ազգային տարազով հանդերձավորված երիտասարդի՝ մեզ անհայտ հայուհու կերպարը:

Ինչպես նկատել է հեղինակը, «Արաքս»-ի էջերում զետեղված հայ և այլազգի արվեստագետների ստեղծագործությունները, հայկական սրբավայրերն ու ուխտատեղերը, միջնադարյան ճարտարապետության կոթողները, Հայաստանի բնության տեսարանները, հայ նշանավոր անձանց ու ազգային տիպերը ներկայացնող լուսանկարներից շատերը հատ-հատ դրվում էին շրջանակների մեջ, ցուցադրվում ու վաճառքի հանվում մատչելի գնով: Իսկ 1893, 1895 և 1898 թվականներին Ս. Գուլամիրյանցի նախաձեռնությամբ Պետերբուրգում սահմանափակ տպաքանակով հրատարակվում են հանդեսի՝ տարբեր գրքերից քաղված պատկերների ոսկեզարդ շքեղակազմ ալբոմները (տե՛ս էջ 11):

«Արաքս»-ն աչքի է ընկել ոչ միայն իր հարուստ բովանդակությամբ ու կերպարվեստին վերաբերող բազմազան հարցերի լուսաբանմամբ, այլև տպագրական և պոլիգրաֆիական բարձր որակով ու գեղարվեստական հետաքրքիր ձևավորմամբ: 1893 թ. մայիսի 1-ին ԱՄՆ Կոնգրեսի հովանու ներքո Չիկագոյում բացված՝ ամերիկյան մայրցամաքի հայտնագործության 400-ամյակին և Քրիստափոր Կոլումբոսի հիշատակին նվիրված Համաշխարհային ցուցահանդեսի մասնաժողովի որոշմամբ «Արաքս»-ի ոսկեկազմ ցուցանմուշներն արժանացել են «շքադրամի ..., և մրցագրի ..., նախ՝ մաքուր տպագրության, և երկրորդ՝ նկարները գեղարվեստորեն լավ արտահայտելու համար» (էջ 12):

Խիստ տրամաբանական է մենագրության կառուցվածքը: Աշխատությունը բաղկացած է հինգ գլուխներից: «Սանկտ Պետերբուրգի «Արաքս» հանդեսը» գլխում ընդհանուր գծերով ներկայացվում է «Արաքս»-ի տեղն ու դերը հայ պարբերական մամուլի պատմության մեջ: ««Արաքս» հանդեսի գեղարվեստական բաժինը» գլխում հեղինակը հանգամանորեն քննության է առել գեղարվեստական բաժնի բովանդակությունը:

Աշխատության ամենաձավալուն գլուխը, բնականաբար, նվիրված է Հովհաննես Այվազովսկուն (1817–1900), քանի որ հանճարեղ ծովանկարիչը XIX դարի հայազգի միակ արվեստագետն էր, ով արդեն իսկ արժանացել էր համաշխարհային համբավի, և որի արվեստով հիանում էր ու հպարտությամբ խոսում համայն հայությունը: Ինչպես բացահայտել է պրոֆեսոր Աղասյանը, այստեղ իր դերն է խաղացել նաև սուբյեկտիվ գործոնը. «Արաքս»-ի գեղարվեստական բաժնի պատասխանատուն՝ Լևոն Մազիրյանցը, Հովհաննես Այվազովսկու զարմիկն էր ու նրա գործավարը:

Հովհաննես Այվազովսկու անունն «Արաքս»-ի էջերում հանդիպում է բազմիցս: Ինչպես նկատում է Ա. Աղասյանը, նա միակ արվեստագետն էր, որին հանդեսն անդրադարձել է ինչպես իր գեղարվեստական բաժնում, այնպես էլ ականավոր վարպետի կյանքն ու արվեստը համառոտակի լուսաբանող կենսագրական ակնարկում, որը ծովանկարչի ստեղծագործական գործունեության հիսունամյա տարեդարձի առիթով գրել է երիտասարդ բանասեր ու մանկավարժ Սեթ Հա-

րությունյանցը, և որտեղ խոսվում է նաև այդ կապակցությամբ Սանկտ Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի նիստերի մեծ դահլիճում 1887 թ. սեպտեմբերի 26-ին տեղի ունեցած հոբելյանական ցերեկույթի մասին:

«Արաքս»-ի էջերում տեղ են գտել նաև հոչակավոր ծովանկարչի ստեղծագործությունների վերատպությունները: Հանդեսում զետեղվել է Այվազովսկու կտավները վերարտադրող տասնմեկ լուսանկար: Դրանք են՝ «Ոչխարները փոթորկից ծովն են թափվում» (1861), «Դարյալի կիրճը» (1862), «Փոթորիկը Ազովի ծովում» (1887), «Ալիքը» («Ահեղ ըրպեն օվկիանոսում», «Վերջին ըրպեն օվկիանոսում», 1889), «Նոյն իջնում է Արարատից» («Ջրհեղեղից հետո», 1889), «Հրեաների անցումը Կարմիր ծովով» (1891), «Նիագարայի ջրվեժը» (1893), «Տիեզերքը» («Տիեզերքն ու մոլորակները», 1893), «Ատլանտյան օվկիանոսը» («Փոթորիկ», «Օվկիանոս», 1892), «Եղիկուլեն» («Յոթ աշտարակ») և «Մրրկահույզ ծովը» («Մրրկածուխ ծով»):

Ուշագրավ է այն փաստը, որ Այվազովսկու այս նկարների արտատիպերից յուրաքանչյուրը հանդեսի խմբագրությունը դրել է ոսկեգույն շրջանակների մեջ և ցուցադրել ու վաճառքի հանել 1895 թ. փետրվարի 15-ից հունիսի 15-ը Պետերբուրգում բացված Տպագրական գործի համառուսաստանյան առաջին ցուցահանդեսի ընթացքում: «Արաքս»-ի ներկայացրած այդ պատկերներն անմիջապես գրավել են այցելուների ուշադրությունը և «վաճառվել մեծ քանակությամբ» (էջ 27–28):

Աշխատության հաջորդ երկու գլուխները նվիրված են արևելահայ ու արևմտահայ նկարիչներին և քանդակագործներին: Ինչպես նկատել է Ա. Աղասյանը, Այվազովսկու ստեղծագործությունների հետ մեկտեղ «Արաքս»-ի գեղարվեստական բաժնում վերատպվել են նաև արևելահայ ու արևմտահայ ևս վեց արվեստագետների՝ Երվանդ Ոսկանի, Գևորգ Բաշինջաղյանի, Մանուկ Մահտեսյանցի, Գրիգոր Գաբրիելյանցի, Արշակ Ֆեթվաճյանի և Էդգար Շահինի յուղաներկ կտավների, գծանկարների ու քանդակների լուսանկարները: Երեքական աշխատանքով են ներկայացվել Գ. Բաշինջաղյանը, Մ. Մահտեսյանցը և Գ. Գաբրիելյանցը, երկու աշխատանքով՝ Ե. Ոսկանը, մեկական աշխատանքով՝ Ա. Ֆեթվաճյանը և Է. Շահինը: Ընդ որում, ի տարբերություն Այվազովսկու, նրանցից ոչ մեկի արվեստին հանդեսը չի անդրադարձել առանձին հոդվածով և բավարարվել է գեղարվեստական բաժնում զետեղված կենսագրական, տեղեկատվական և նկարագրական հակիրճ ակնարկներով ու պարզաբանությամբ:

Իր գոյության ընթացքում «Արաքս»-ն այս կամ այն չափով՝ հանգամանորեն կամ համառոտակի, անդրադարձել է նաև XIX դարում ապրած ու ստեղծագործած շուրջ երկու տասնյակ ինչպես ճանաչված, այնպես էլ սկսնակ հայ արվեստագետների՝ Ջաքար Ջաքարյանի, Սարգիս Տիրանյանի, Վարդգես Սուրենյանցի, Արսեն Շապանյանի, Եղիշե Թադևոսյանի և այլոց կենսագրությանը, ընդհանուր գծերով ներկայացրել նրանց ստեղծագործական ուղին, վերատպել նրանցից մի քանիսի առավել հայտնի աշխատանքները, նկարագրել ու մեկնաբանել դրանք, հաղորդել այդ դարաշրջանի ազգային կերպարվեստին վերաբերող ուշագրավ փաստեր ու տեղեկություններ:

Այսպիսով՝ հայկական մամուլի պատմության մեջ գրական-գեղարվեստական պատկերազարդ այդ անդրանիկ հանդեսում հրատարակված, XIX դարի հայ արվեստագետներին նվիրված հոդվածներն ու հրապարակումները, ինչպես նաև «Արաքս»-ի գեղարվեստական բաժնում ընդգրկված պատկերները, մի կողմից՝ նշանակալից դեր ունեցան հայ ուսումնասեր հանրությանը նոր շրջանի ազգային կերպարվեստին թեկուզ մոտավոր ծանոթացնելու գործում, մյուս կողմից՝ հետագայում դրանք կարևոր աղբյուրներ դարձան տվյալ դարագլխի հայկական կերպարվեստի պատմության գիտական ուսումնասիրության համար:

Թեև Ս. Գուլամիրյանցի նախաձեռնությամբ ու խմբագրությամբ Սանկտ Պետերբուրգում հրատարակված «Արաքս» վեցամսյա հանդեսը, որը հայկական պարբերական մամուլի բազմերանգ խճանկարում գրավեց իր կարևոր և առանձնահատուկ տեղը, ունեցավ կարճատև կենսագրություն՝ ընդմիջումներով հրատարակվեց ընդամենը 11 տարի (1887–1898) և դադարեցրեց իր գոյությունը հիմնադիր-խմբագրի վաղաժամ մահվան պատճառով, սակայն ճանապարհի հարթեց մոտ ապագայում հայկական նմանատիպ այլ պարբերականների, օրինակ՝ Արշակ Չոպանյանի «Անահիտ» (Փարիզ, 1898–1911 և 1929–1949), Նիկողայոս Ադոնցի «Բանբեր գրականության և արվեստի» (Սանկտ Պետերբուրգ, 1903–1904), Գարեգին Լևոնյանի «Գեղարվեստ» (Թիֆլիս և Վենետիկ, 1908–1921) հանդեսների ստեղծման համար (տե՛ս էջ 84):


Ակնհայտ է Արարատ Աղասյանի արժեքավոր այս ուսումնասիրության նաև գործնական նշանակությունը: Վստահ ենք, որ այս մենագրությունն օրինակ կծառայի ու ճանապարհի կհարթի հայկական գեղարվեստական մամուլի հետագա բազմակողմանի ու մանրազնին հետազոտության համար:

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ. 6, Երևան, ՀԱԻ հրատարակչություն, 2024, 268 էջ*:

Բանալի բառեր՝ համաշխարհայնացում, սոցիալ-մշակութային գործընթացներ, արտագաղթ, ներգաղթյալներ, բռնի տեղահանվածներ, Սփյուռք, աուտենտիկ զբոսաշրջություն, լեզվական քաղաքականություն, հագուստ, ուրեստ:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատությունների (ՀԱԻԱ) 6-րդ համարում զետեղված են 2023 թ. հոկտեմբերի 18-19-ը



Հնագիտության և ազգագրության ինստիտուտում (ՀԱԻ) ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ տեղի ունեցած «Համաշխարհայնացումը և սոցիալ-մշակութային գործընթացները Հայաստանում. հիմնախնդիրներ և հեռանկարներ» խորագրով գիտաժողովի զեկուցումները: Գիտաժողովի նպատակն էր՝ քննարկել Հայաստանում ընթացող սոցիալ-տնտեսական և սոցիալ-մշակութային մի շարք խնդիրներ՝ համաշխարհայնացման գործընթացների համապատկերում: Հոդվածների մեթոդաբանական հենքը հեղինակների կատարած հետազոտություններն են (հարցում, դիտարկում, փաստաթղթերի վերլուծություն), որոնց արդյունքները համադրվել են մասնագիտական գրականության (տեսական և վերլուծական) տվյալների հետ: Կարևորելով դրանց գիտական ու կիրառական նշանակությունը՝ ՀԱԻԱ խմբագրական խորհուրդը [Արսեն Բոբոխյան (գլխ. խմբագիր), Տորք Դալայյան (գլխ. խմբագրի տեղակալ), Լևոն Աբրահամյան, Պավել Ավետիսյան, Միհրան Գալստյան և այլք] նախաձեռնեց զեկուցումների հրապարակումը պարբերականի հերթական համարում: Հոդվածները խմբավորված են վեց թեմատիկ բաժիններում, որոնց հաջորդում են ևս երկուսը՝ մեկ գրախոսություն և հեղինակների մասին տեղեկություններ:

Պարբերականի առաջին՝ «Համաշխարհայնացում և միգրացիոն գործընթացներ» բաժնում ընդգրկված հոդվածներում քննարկվում են վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում և աշխարհում կատարված քաղաքական, սոցիալ-տնտեսական, ռազմական գործողությունների համապատկերում ընթացող միգրացիոն որոշ գործընթացներ (ներգաղթ ու արտագաղթ) և Սփյուռքի ու հայրենադարձության վերաբերյալ քաղաքականության մշակման հիմնախնդիրներ:

Պարբերականի առաջին՝ «Համաշխարհայնացում և միգրացիոն գործընթացներ» բաժնում ընդգրկված հոդվածներում քննարկվում են վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում և աշխարհում կատարված քաղաքական, սոցիալ-տնտեսական, ռազմական գործողությունների համապատկերում ընթացող միգրացիոն որոշ գործընթացներ (ներգաղթ ու արտագաղթ) և Սփյուռքի ու հայրենադարձության վերաբերյալ քաղաքականության մշակման հիմնախնդիրներ:

* Ներկայացվել է 28. XI. 2025 թ., ընդունվել է տպագրության 20. III. 2026 թ.:

Գիտաժողովի գաղափարի հեղինակ և շուրջ քառասուն տարի Հայաստանի Հանրապետության միգրացիոն գործընթացների սոցիալ-մշակութային ազդեցություններն ուսումնասիրող *Միհրան Գալստյանը* (պ. գ. դ., ՀԱԻ) «Մնա՛լ, թե՛ գնալ. Հայաստանից հնարավոր նոր արտագաղթի սոցիալ-մշակութային հիմնախնդիրների շուրջ» հոդվածում քննարկել է արտագաղթի պատճառները: Հետազոտության հիմքում ընկած են 2021 թ. ՀՀ բոլոր մարզերի քաղաքային ու գյուղական բնակավայրերի 639 տնային տնտեսություններում անցկացված հարցումները, 2021-ին և 2023-ին անցկացված համապատասխանաբար 13 ու 29 փորձագիտական հարցազրույցների վերլուծական պատկերը: Հեղինակը եզրակացնում է, որ հավանական արտագաղթի հիմնական պատճառները սոցիալ-տնտեսական, քաղաքական իրավիճակներն են ու հնարավոր ռազմական բախման մտավախությունը: Մ. Գալստյանը գրում է, որ արտագաղթի ուղղությունը պայմանավորված է նախևառաջ էթնիկ ցանցի (ազգական-բարեկամներ, ընկերներ), այսինքն՝ հարմարման նախնական փուլում աշակցող ուժի առկայությամբ: Այս համատեքստում հեղինակը կարևոր է համարում Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում Սփյուռքի դերի վերանայումը, քանի որ այն միգրացիոն ցանցի միջոցով պարարտ հող է ստեղծում ծագման երկրից արտագաղթի համար:

Լուսինե Տանաջյանի (պ. գ. թ., ՀԱԻ) «Հայ և այլազգի ներգաղթյալների ինտեգրումը Հայաստանում. համեմատական կողմեր» հոդվածում քննարկվել են 2022 թ. փետրվարին սկսված ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով Հայաստան տեղափոխվածների ինտեգրման հիմնահարցերը՝ հայ ներգաղթյալների և ռուս միգրանտների համեմատական համապատկերում: Վերլուծությունը ցույց է տվել, որ ՀՀ տեղափոխվածներն ինտեգրման փուլում առերեսվում են իրավական (անհրաժեշտ չափով իրավական դաշտի չիմացություն) և մշակութային (լեզվական խնդրի անհաղթահարելիություն ու սոցիալական կապեր) խնդիրների հետ:

2022 թ. փետրվարին սկսված ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով Հայաստան տեղափոխված հայերի և ռուսաստանցիների՝ ՀՀ-ն ընտրելու պատճառներն է վերլուծում *Սոնա Ներսիսյանը* (պ. գ. թ., ՀԱԻ) «Հայաստանը ռուսաստանցի ներգաղթյալների ընկալումներում» հոդվածում՝ հետազոտության հենք ընդունելով սոցիալ-մշակութային, իրավական ու տնտեսական ուղղությունները: Հեղինակը եզրակացնում է, որ ռուսաստանցի ներգաղթյալների մեծ մասը Հայաստանը դիտարկում է որպես ժամանակավոր կամ տարանցիկ երկիր:

«Հայաստանի հայրենադարձության քաղաքականության հիմնահարցերն արդի իրողությունների համատեքստում» հոդվածում *Սյուզաննա Բարսեղյանը* (պ. գ. թ., ՀԱԻ) հիմնավորում է միգրացիոն և Սփյուռքի ու (կամ) հայրենադարձության քաղաքականությունների միջև հստակություն մտցնելու անհրաժեշտությունը: Բարձրաձայնում է Սփյուռքի և հայրենադարձության քաղաքականության վերանայման հրամայականը, հայրենադարձության ամբողջական շղթայի արդյունավետ կազմակերպման համար պետական քաղաքականությամբ

յան ու ռազմավարության մշակման անհրաժեշտությունը: Հեղինակը վերջինիս վերաբերյալ ներկայացնում է մի շարք առաջարկներ՝ կարիքների գնահատումից մինչև օրենսդրական կարգավորումներ:

Երկրորդ՝ «Ներգաղթյալներ և տեղահանվածներ. Հայաստանի սոցիալ-մշակութային լանդշաֆտը» բաժնում ներառված հոդվածներում քննարկվում են ռազմական գործողությունների հետևանքով ՀՀ-ում ապաստանած հայերի և այլազգիների սոցիալ-մշակութային հարմարման ու մշակութային ժառանգության իրացման իրավունքի խնդիրները:

«Հայկախի շուկա»-ն՝ որպես սիրիահայերի ձեռնարկատիրական գործունեության միկրոմոդել՝ հոդվածում Գայանե Հակոբյանը (պ. գ. թ., ՀԱԻ) վերլուծում է 2011 թ. Սիրիայում բռնկված պատերազմի պատճառով Հայաստան գաղթած սիրիահայերի՝ աշխատաշուկայում հարմարվելու ընթացքը: Որպես օրինակ դիտարկելով սիրիահայերի համատեղ գործունեության միջավայրը՝ Երևանի «Հայկախի շուկա»-ն, հեղինակը եզրակացնում է հետևյալը. 1) «Հայկախի շուկա»-ում հիմնականում ներկայացված են սիրիահայերի կողմից Հայաստանում ծավալված ձեռնարկատիրական գործունեության հիմնական ոլորտները, 2) սիրիահայերը հաղթահարել են ձեռնարկատիրական գործունեություն ծավալելուն ուղղված թե՛ օրենսդրական, թե՛ սոցիալ-մշակութային դժվարությունները:

Գարիկ Աթանեսյանը (պ. գ. թ., ՀԱԻ) «Աուտենտիկության խոսույթը և բեմադրված ժառանգությունը հետխորհրդային Հայաստանի զբոսաշրջային պրակտիկաներում» հոդվածում փաստում է, որ Հայաստանում աուտենտիկ զբոսաշրջության ուղղության ձևավորման վրա մեծ ազդեցություն ունեն 2022-ի փետրվարին բռնկված ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով Հայաստան տեղափոխված ռեյդականները (բնակության հիմնական վայրը ժամանակավորապես փոխած անձինք) և բլոգերները: Հեղինակը գրում է, որ աուտենտիկ զբոսաշրջության աճը պայմանավորված է զբոսաշրջիկների կողմից առկա պահանջարկով, ինչն էլ հաճախ պատճառ է դառնում աուտենտիկ զբոսաշրջության միջոցով «ավանդականի» և «ազգայինի» բեմականացման՝ այդ եզրույթների բովանդակությանը ոչ այնքան համապատասխան իրականություններ ներկայացնելով:

Արմինե Տիգրանյանը (պ. գ. թ., Երևանի պետական համալսարան) «Ադրբեջանի կողմից բռնի տեղահանված արցախահայերի մշակութային կյանքին մասնակցության սահմանափակումները (Արցախի Հադրուֆի շրջանի օրինակով)» հոդվածում քննարկում է 2020 թ. 44-օրյա պատերազմի հետևանքով Արցախի Հանրապետության մի շարք բնակավայրերից, այդ թվում՝ Հադրուֆի շրջանի համանուն քաղաքից և 48 գյուղերից բռնի տեղահանված հայերի մշակութային իրավունքի իրացման խնդիրները: Վկայակոչելով միջազգային իրավունքը՝ հեղինակը հիմնավորում է, որ հադրուֆիները զրկված են իրենց նյութական մշակութային ժառանգության հետ հաղորդակցվելու իրավունքից, իսկ ոչ նյութական մշակութային ժառանգության հետ հաղորդակցումը սահմանափակված է՝ ձևավորման տարածքից հեռու գտնվելու և պահպանմանն ու վերարտադրմանը նպաստող միջավայրի ու հնարավորությունների սահմանափակության կամ բացակայության պատճառներով:

Պարբերականի երրորդ՝ «Կրթություն և համաշխարհայնացում» բաժնում ընդգրկված հոդվածներում վերլուծվում են խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջաններում գրահրատարակչության, լեզվական քաղաքականության և կրթական համակարգի վրա համաշխարհայնացման գործընթացների ունեցած ազդեցությունը՝ պետական և հասարակական մակարդակներում:

Ռուբեն Օհանջանյանի (պ. գ. թ., ՀԱԻ) «Պրոֆեսիոնալ մշակութային արժեքների փոփոխման որոշ հարցեր ՀՀ-ում գլոբալիզացիայի համատեքստում» հոդվածը նվիրված է խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանների թարգմանական գրականության խնդիրներին: Հոդվածի հիմքում ընկած են «Հայ թարգմանական գրականություն» մատենաշարը, ՀՀ առաջատար հրատարակչությունների («Անտարես» մեդիա հոլդինգ, «Զանգակ» հրատարակչություն) թարգմանչական շարքերը, 1980, 2014-2019 և 2023 թթ. Լոռու, Տավուշի, Կոտայքի և Սյունիքի մարզերում անցկացված դաշտային ազգագրական հետազոտությունները և այլ աղբյուրներ: Ուսումնասիրությունը պարզել է. ա) եթե խորհրդային տարիներին արտասահմանյան հեղինակների գործերը գերազանցապես ռուսերենից են թարգմանվել, ապա հետխորհրդային շրջանում մեծ թիվ են կազմում բնագիր լեզվից արված թարգմանությունները, բ) մեծացել է արտասահմանյան գրողների թարգմանությունների քանակը, ինչն արևմտյան արժեքների տարածման ցուցիչներից է:

ՀՀ-ում իրականացված լեզվական քաղաքականության խնդիրներն է ներկայացնում *Լուսինե Անգելուշը* (ՀԱԻ)՝ «Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականությունն արդի շրջանում» հոդվածում: Հեղինակն անդրադառնում է ՀՀ-ում լեզվական քաղաքականության մշակման իրավական հիմքերին, հետխորհրդային շրջանում Հայաստանում օրենքով ամրագրված հայերենի՝ որպես պետական լեզվի գերակայությանը և այլ լեզուների ուսուցման կազմակերպման պետական ու միջպետական մոտեցումներին: Ամփոփելով փորձագիտական հարցազրույցների և հրապարակումների տվյալների վերլուծությունները՝ հեղինակը գրում է, որ լեզվական քաղաքականությունն ու լեզվական օրենսդրությունը շարունակական բարեփոխումների կարիք ունեն՝ ապահովելու համար գիտակրթական և հասարակական կյանքում հայերենի առաջնայնությունը և օտար լեզուների հետ հարաբերակցությունը:

«Գլոբալացման խոսույթը հայկական ԶԼՄ-ներում. կրթության հիմնախնդրի համատեքստը» (խոսքը համացանցային տիրույթի ԶԼՄ-ների մասին է) հոդվածի հեղինակ *Մակիշ Վարդանյանը* (ՀԱԻ), հիմնվելով տեղական քսաներեք կայքերում 2003-2024 թթ. ընթացքում հրապարակված երեսուհինգ հոդվածների վրա, վերլուծում է, թե տնտեսական, քաղաքական, մշակութային, ընտանեկան, ազգային արժեքների պահպանության տեսանկյունից դրական ու բացասական ինչ կողմերով է ներկայացված համաշխարհայնացումը: Գրում է, որ հանրակրթության և բուհական համակարգերում կատարվող փոփոխությունները դրական տեսանկյունից չեն ընկալվում, քանի որ մեկնաբանվում են կրթության գլոբալացման համատեքստում: Որպես մասնագիտական կարծիք՝ մեջբերում է կրթության ոլորտի մասնագետների մոտեցումը,

ըստ որի՝ կրթական համակարգում կատարվող փոփոխությունները ոչ թե «կրթության գլոբալացում», այլ «կրթության միջազգայնացում» են:

Չորրորդ՝ «Ավանդականն ու արդիականը սոցիալ-մշակութային փոխակերպումներում» բաժնում զետեղված հոդվածներում քննարկվում են կենսապահովման մշակույթին, ի մասնավորի՝ հագուստին և ուտեստին առչվող փոխակերպումներ:

Սվեդրյանա Պողոսյանը (պ. գ. թ., ՀԱԻ, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան) ներկայացնում է Հայաստանում վաղխորհրդային, ուշխորհրդային և հետխորհրդային ժամանակափուլերում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական ու հայրենադարձության գործընթացների համապատկերում հագուստի համալիրի կրած փոփոխությունները: Դրանք դիտարկում է գյուղ-քաղաք, կին-տղամարդ ցուցիչների համեմատական տիրույթում: Հեղինակն անդրադառնում է նաև խորհրդային շրջանում Հայաստանում կազմակերպված հագուստի արտադրության որոշ հարցերի:

Հասմիկ Աբրահամյանի (պ. գ. թ., ՀԱԻ) և *Ռոման Հովսեփյանի* (կ. գ. թ., ՀԱԻ) համահեղինակած «Ուտեստի էթնոմշակութային դերը միգրացիայի շրջապատույտում (նախնական հետազոտություն՝ ըստ Սյունիքից գրառված նյութերի)» հոդվածում քննարկվում է միգրանտի ծագման երկրի սննդատեսակների՝ ընդունող երկրում որպես էթնիկ ինքնության ցուցիչ լինելու խնդիրը: Հետազոտությունը հիմնված է 2021–2022 թթ. Սյունքի տասնհինգ բնակավայրերում անցկացված խորին հարցազրույցների և էթնոբուսաբանական հետազոտությունների վրա: Քննարկվում են գյուղական ծագման սննդի՝ ընդունող երկրում հայտնվելու ուղիները, «միգրացվող» սննդատեսակները և այլ հարցեր: Վերլուծությունը ցույց է տալիս, որ՝ ա) միգրացիայի համատեքստում ուտեստը կատարում է էթնոմշակութային գործառույթ՝ նպաստելով միգրանտի և ընտանիքի կապի պահպանմանն ու օտար միջավայրում էթնիկ ինքնության դրսևորմանը, բ) միգրանտի ավանդական ուտեստը ևս «գաղթում է» ու նոր միջավայրում ճանաչելիություն ձեռք բերում:

Պարբերականի հինգերորդ՝ «Սփյուռքյան հիմնախնդիրներ» բաժնի հոդվածներում հայկական ու այլէթնիկ սփյուռքների օրինակներով քննարկվում են վերջիններիս ինքնակազմակերպմանը և էթնիկ ինքնության պահպանությանն ուղղված քաղաքականությունների վերաբերյալ խնդիրներ:

Ռուբեն Կարապետյանը (պ. գ. դ., ՀԱԻ) «Սփյուռքի համայնքային կառույցներում հայերի ներգրավվածության խնդիրը» հոդվածում քննարկում է Սփյուռքում համայնքային կառույցների ձևավորման ու գործունեության մասնակցային խնդիրներ: Վերլուծությունները հիմնված են Բեյրութի, Թեհրանի, Պրահայի և Լոս Անջելեսի հայության շրջանում շուրջ յոթանասուն գործիչների հետ անցկացված խորին հարցազրույցների և 1260 ձևայնացված հարցազրույցների նյութերի վրա: Ուսումնասիրության համար ընտրվել են երեք տիպի համայնքներ. 1) XX դարասկզբին ձևավորված (Բեյրութ և Թեհրան), 2) խառը տիպի՝ տեղաբնակներից (ավանդական Սփյուռք) և վերջին շրջանում գաղթած հայերից բաղկացած (Լոս-Անջելես), 3) վերջին տասնամյակների

միգրանտներից ու նրանց սերունդներից բաղկացած (Պրահա): Յուրաքանչյուր տիպի համար հեղինակն առանձնացրել է սփյուռքահայերի կողմից համայնքային կյանքին ներգրավվածության մի շարք օրինաչափություններ:

Նարե Գալստյանը (ս. գ. թ., Սիրակուզայի համալսարան, ԱՄՆ) «Հայրենիքի մասին պատկերացումները Լոս Անջելեսի հայկական համայնքում» հոդվածում առաջարկում է վերանայել Սփյուռքին նվիրված ակադեմիական ուսումնասիրություններում և պետական քաղաքական կողմնորոշման մեջ արմատացած «հայրենիք» – «պետություն» հասկացությունները, քանզի Սփյուռքում դրանց վերաբերյալ հայերի ընկալումները տարբեր են: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայրենիքի ընկալումը պայմանավորված է հին և նոր սփյուռքների առկայությամբ, անձերի կամ նրանց նախնիների ծննդավայրով, պատմական ու իրական Հայաստանի մասին ընկալումներով և այլն: Հեղինակը եզրակացնում է, որ այս համատեքստում վերանայման կարիք ունեն Սփյուռքը որպես մեկ ամբողջական համակարգ դիտարկելու մոտեցումը և հայրենադարձության խնդիրները:

Նելլի Խաչատրյանի (ս. գ. թ., ՀԱԻ), *Սալվինե Մարկոսյանի* (ՀԱԻ) և *Մարիամ Հարությունյանի* (ՀԱԻ) «Էթնոկրոնական վերափոխարկումը համաշխարհայնացման համատեքստում (հնդկական, թուրքական և իռլանդական սփյուռքների փորձի հիման վրա)» հոդվածում վեր են հանվում տարբեր կրոնների (հինդուիզմ, իսլամ, քրիստոնեության կաթոլիկ ուղղություն) պատկանող վերոնշյալ ազգերի սփյուռքների կառավարման և դրանց հետ համագործակցության մոտեցումները: Հեղինակները փաստում են, որ սփյուռքների հետ կազմակերպվող աշխատանքները պետական քաղաքականության մաս են կազմում, հիմնված են ազգային-կրոնական որոշակի գաղափարախոսությանը պատկանելու գիտակցության վրա և հիմնականում ընթանում են կրթական, մշակութային, կրոնական, սոցիալական ուղղություններով:

Վեցերորդ՝ «Հաղորդում» բաժնում ընդգրկված է *Հոփսիմե Ասատրյանի* (ս. գ. թ., ՀԱԻ) «Մանկական բանախոսության որոշ արդի դրսևորումներ» հաղորդումը: Հեղինակը ներկայացնում է մանկական խաղային մշակույթում, անեկդոտներում և զվարճախոսություններում տեղի ունեցող այն փոփոխությունները, որոնք ներազդված են քաղաքական գործընթացներից ու երեխաների միջէթնիկ շփումներից: Ուշագրավ է այն, որ այդ փոփոխություններն ի հայտ են բերում սոցիալ-մշակութային և հասարակական կյանքում տեղի ունեցող իրողությունների վերաբերյալ երեխաների ընկալումները:

Պարբերականն ամփոփվում է յոթերորդ բաժնում տեղ գտած «Հայկազեան հայագիտական հանդես»-ի 2022 թ. երկու հատորների (42/1, 42/2) գրախոսությամբ: Այն արժևորում է հոդվածներում ներկայացված խնդիրները, հարցադրումները, վերլուծությունները, ուսումնասիրությունները, որոնց ժամանակագրությունն ընդգրկում է միջնադարից մինչև մեր օրերը: Ընդհանուր առմամբ «Հայկազեան հայագիտական հանդես»-ի 2022 թ. երկու հատորներն ունեն թեմատիկ մի քանի ուղղվածություն, որոնք ներկայացված են վաթսուն հոդվածներում (բնագավառները՝ «Պատմություն», «Տնտեսագիտություն», «Արվեստ և արհեստ», «Ընկերաբանություն», «Եկեղեցի, կրոն և փիլիսոփա»:

յություն»), չորս քննարկումներում, հինգ հրապարակումներում և չորս հաղորդումներում: Հատորներում ընդգրկված են նաև արևմտահայերենի ու արևելահայերենի վերաբերյալ հարցումներ, գրախոսականներ և մահագրականներ:

Ամփոփելով «Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ»-ի վեցերորդ համարը (թվային տարբերակը՝ հետևյալ հղմամբ. <http://serials.flib.sci.am/Publications/ethnography2024/book/content.html>)՝ կարող ենք արձանագրել, որ դրանց գիտագործնական արժեքն ապահովում է հեղինակների կողմից թիրախային խնդիրների վերահանումը, լուծման տարբերակների առաջարկումը, նոր հարցադրումների ձևակերպումն ու իրավիճակների սահմանումները:


ՀԱՍՄԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

*Պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայոց տոնածիսական մշակույթ, պահքի մշակույթ: Հեղինակ է 22 հոդվածի: ORCID:0009-0001-8313-0323.
hasmik.abrahamyan@iae.am*

ԱՌԱՋԱՎՈՐԱՍԻԱԿԱՆ ՊԱՏՄԱՎԻՊԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ԳԻՐՔ Ա / Աշխատասիրությամբ Է. Հ. Խեմյանի, Երևան, ՀԱԻ հրատ., 2025, 576 էջ*:

Բանալի բառեր՝ առաջավորասիական, պատմական դեմքեր, ժողովրդականություն, փոխներթափանցում, արխիվային նյութ, ավանդական բանահյուսություն, մշակույթ:

Հայ ժողովրդի բանահյուսական երկացանկի ձևավորման ու զարգացման վրա նշանակալի ազդեցություն են թողել մերձավորարևելյան տարածա-



շրջանի ժողովուրդների հետ ունեցած մշակութային ու քաղաքակրթական դարավոր շփումները: Այդ բազմաշերտ հարաբերությունների արդյունքում թե՛ բանավոր և թե՛ գրավոր ճանապարհով մի շարք պատմական դեմքերի վիպական կերպարների հետ կապված պատմություններն ու զրույցները փոխառնվել, տեղայնացվել, յուրովի վիպականացվել են՝ էապես հարստացնելով հայ վիպական բանահյուսական ժառանգությունը:

2025 թ. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատարակած «Առաջավորասիական պատմավիպական կերպարները հայ բանահյուսության մեջ» ժողովածուն հենց այս համատեքստում իրականացված առաջին համապարփակ ու համակարգված գիտական փորձն է՝ ի մի բերելու հայ բանահյուսության մեջ տարածված այն պատումները, որոնց առանցքում Առաջավոր Ասիայի պատմության մեջ նշանակալից դեր խաղացած պատմական անձինք են:

Ակադեմիական այս հրատարակությունը հենվում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվային նյութերի և բանահավաքչական հարուստ ավանդույթի վրա՝ ընթերցողին ներկայացնելով հիմնականում անտիպ ու առաջին անգամ հրապարակվող բնագրեր: Ժողովածուն ընդգրկում է մ. թ. ա. X դ. մինչև մ. թ. XVII դ. առաջավորասիական նշանավոր պատմական գործիչների (Սողոմոն Իմաստուն, Խիկար Իմաստուն, Ալեքսանդր Մակեդոնացի, Լոխման Հեքիմ, Դանանդա Բահլուլ, Լենկ Թեմուր, Շահ Աբաս, Սուլթան Մուրադ) շուրջ հյուսված պատումները: Ժողովածուի գրախոսներն են բ. գ. թ. Ա. Յ. Սարգսյանը, բ. գ. թ. Ս. Մ. Ռամազյանը: «Խմբագրի կողմից» խոսքում

* Ներկայացվել է 06. III. 2025 թ., ընդունվել է տպագրության 20. III. 2026 թ.:

(էջ 5–6) ք. գ. թ. Տորք Դալայանը կարևորում է, որ այն հայ իրականության մեջ առաջին փորձն է՝ համակարգված ներկայացնելու պատմական անձանց, որոնք լրացրել են մեր բանահյուսության մեջ առկա հայ վիպապատմական հերոսների շարքը: Ըստ խմբագրի՝ հերոսների ընտրությունը պայմանավորված է նախ՝ նրանց առաջավորասիական պատկանելությամբ, և երկրորդ՝ հայ ավանդական բանահյուսության մեջ նրանց լայն ճանաչելիությամբ: Դալայանն ընդգծում է, որ նշված կերպարները չի կարելի դիտարկել ազգային էպոսների հերոսների հետ նույն հարթության մեջ, քանի որ վերջիններս, թեև ունեն պատմական նախահիմքեր, սակայն լիովին վերածվել են վիպական կերպարների, մինչդեռ ժողովածուի հերոսների առաջնային բնորոշումը հենց նրանց իրական պատմական դեմք լինելն է: Խմբագիրը համաձայն է «վիպապատմական» եզրույթին, քանի որ վերջինս արտացոլում է բանահյուսական այն մեխանիզմները, որոնց միջոցով ժողովրդական մտածողությունը պատմական անձերին «տեղավորել» է առասպելաբանական և վիպաբանական կաղապարների մեջ: Ի վերջո, խմբագիրն արժևորում է ժողովածուն կազմող էսթեր Խեմչյանի բանագիտական և բանահավաքչական գործունեությունը, որի պտուղն է հիշյալ աշխատությունը:

Ժողովածուն կազմող և առաջաբանի հեղինակ էսթեր Խեմչյանը, խորանալով նյութի բովանդակային շերտերի մեջ, նշում է, որ ժողովրդական պատումներն իրենց խորքում պահել են հեռավոր անցյալի արձագանքները, որտեղ իրական անհատները վերածվել են առանցքային վիպական կերպարների: Նա նշում է, որ ժողովածուում ընդգրկվել են այն հերոսները, որոնց իրական գործունեությունը ծավալվել է Հայաստանից դուրս, սակայն նրանց մասին զրույցները հայկական միջավայրում տեղայնացվել են՝ ձեռք բերելով ազգային դիմագծեր: Ժողովածուն կազմողը նշում է, որ ի տարբերություն աստվածաշնչյան կերպարների (Ադամ, Նոյ նահապետ, Հոր և այլն), որոնք լիովին «ազգայնացվել» են, վիպապատմական այս հերոսները հայ իրականության մեջ գիտակցվել են որպես «համընդհանուր արևելյան» կերպարներ (էջ 7–8):

Առաջաբանում մանրամասնվում է հերոսների ընտրության սկզբունքը, որը հենվում է ոչ միայն նրանց պատմական նշանակության, այլև հայ բանահյուսության մեջ ունեցած լայն տարածվածության և ժողովրդականության վրա: Հեղինակը բացատրում է նաև որոշ կերպարների բացակայությունը. օրինակ՝ Մովսես Նաբեդդինը դուրս է մնացել նյութի ծավալի և ժանրային առանձնահատկության, իսկ Քյոռոլին՝ էպոսագիտական հետազոտության նյութ լինելու պատճառով (էջ 7–8):

Է. Խեմչյանը հատուկ անդրադառնում է գրավոր ու բանավոր ավանդույթների փոխներթափանցմանը՝ մատնանշելով, որ միջնադարյան թարգմանական հուշարձանները, ինչպիսիք են Կեղծ-Կալիսթենեսի «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացոյ»-ն ու «Պատմութիւն և խրատք Խիկարայ Իմաստոյ»-ն էական դեր են խաղացել այս կերպարների (Սողոմոն Իմաստուն, Խիկար Իմաստուն, Ալեքսանդր Մակեդոնացի, Լոխման Հեքիմ, Դանանդա Բահլույ) ժողովրդականացման և բանահյուսական մշակման գործում: Առանձնակի շեշտվում են կերպարների գործառույթային նմանությունները, որոնք հանգեցնում են սյուժետային միահյուսումների. օրինակ՝ «Իմաստուն» պատվանունը կրող հերոսների շուրջ

հյուսված որոշ պատումներ կարող են նույնությամբ անցնել մի հերոսից մյուսին: Նաև նկատվում է «եղջերակիր թագավորի» հնագույն մոտիվի տեղափոխումը Ալեքսանդր Մակեդոնացուց դեպի Շահ Աբաս կամ Սուլթան Մուրադ: Փաստվում է, որ եթե որոշ կերպարներ (Լենկ Թեմուր, Շահ Աբաս, Սուլթան Մուրադ) հայ բանահյուսության մեջ պահպանել են իրական պատմական դաժանության հետքերը, ապա մյուսները (Սողոմոն Իմաստուն, Խիկար իմաստուն, Դանանդա Բահուլ և Լոխման Հեքիմ) վերածվել են իմաստության տիպարների, որոնց արմատները հասնում են մինչև շումերական մշակութային շերտեր (էջ 9):

Բնագրերն ընտրելու և դասակարգելու հարցում կազմողը առաջնորդվել է պատումների սյուժետային անադարտությունը և բարբառային առանձնահատկությունները պահպանելու սկզբունքով:

Ժողովածուի ութ բաժնից յուրաքանչյուրը սկսվում է տվյալ հերոսի պատմական անձը ներկայացնող հակիրճ տեղեկատվությամբ, իսկ ծանոթագրություններում տրված են բնագրերի արխիվային համարները, նյութի գրառման վայրը, ժամանակը և տեղեկություններ բանասացիների ու բանահավաքների մասին: Ընդարձակ բառարանը և անձնանունների ու տեղանունների ցանկերը լրացնում և դյուրացնում են բանահյուսական տեքստերը ճիշտ ընկալելու և ուսումնասիրելու գործընթացը: Մեթոդաբանական տեսանկյունից կիրառվել է բանագիտական համեմատական մոտեցումը. որոշ պատումներ դասակարգված են ըստ ATU (Aarne-Thompson-Uther) միջազգային համացուցի տիպերի, ինչը հնարավորություն է տալիս հայ բանահյուսությունը դիտարկել համաշխարհային մշակութային ժառանգության համատեքստում:

Ժողովածուն ունի նաև հապավումներ և համառոտագրություններ, գրականության ցանկ, հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփումներ:

Է. Խեմչյանի ջանքերով ստեղծված սկզբնաղբյուրային այս հավաքածուն, որը միավորում է արխիվային անտիպ էջերն ու կազմողի շուրջ կեսդարյա դաշտային գրառումները, դառնում է անփոխարինելի գիտական ավանդ ինչպես բանագետների ու բարբառագետների, այնպես էլ պատմաբանների և հայագիտական հետաքրքրություն ունեցողների համար: Ժողովածուն կարևոր նշանակություն ունի բանահյուսական թանկարժեք նմուշները պահպանելու, ինչպես նաև հայկական մշակույթն առաջավորասիական ընդհանուր քաղաքակրթական համատեքստում դիտարկելու առումով:


ԼՈՒՍԻՆԵ ՂՈՒԵՋՅԱՆ

Ք. գ. թ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանագիտության բաժնի գիտաշխատող, Գավառի պետական համալսարանի դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ ժողովրդական ասոյթաբանության հմայական բանաձևերի հիմնապետակներ: Հեղինակ է 1 գրքի և շուրջ 50 հոդվածի: ORCID: 0000-0001-8755-3967. ghrejan76@mail.ru

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ. Հայ գրականություն, գիրք յոթերորդ, Երևան, «Տիգրան Մեծ», 2023, 580 էջ*:

Բանալի բառեր՝ Դավիթ Գասպարյան, հայ գրականություն, գրական քննադատություն, ուսումնասիրություն, Րաֆֆի, Դուրյան, Համասարեղ, Սևակ, սրախնյան բռնություն, հայկական վերածնունդ:

Դավիթ Գասպարյանն ահա արդեն հինգ տասնամյակից ավելի իրեն դրսևորում է գրականագիտության տարբեր բնագավառներում՝ որպես գրականության պատմաբան, գրական քննադատ, տեսաբան, աղբյուրագետ:



Դրա վկայությունը նրա բազմաթիվ գրքերն են՝ մենագրություններ, գրականության պատմություններ, տեսական հիմնահարցեր, դասական գրողների անտիպ ժառանգության, նրանց նվիրված անտիպ հուշերի հրապարակումներ, որոնք ընդունվել են որպես հայագիտության այդ բնագավառի հաստատուն հենակետեր:

Ահա լույս է տեսել նրա «Հայ գրականություն» մատենաշարի յոթերորդ գիրքը: Սա լուրջ ու ծանրակշիռ վաստակ է՝ հագեցած նորանոր գրականագիտական պրպտումներով, որոնք էլ Դ. Գասպարյանի վերլուծականները դարձնում են թարմ ու հետաքրքրական:

Ստեղծագործական աշխատանքի բնույթը, մտածողության ձևը, շարադրանքի լեզուն համատեղ ձևավորում են նրա գրականագիտական ոճը: Այդ ոճի գլխավոր բաղադրիչը նյութի համակարգային ու համադրական ամբողջական քննությունն է՝ լինի ծավալուն ուսումնասիրություն թե համեմատաբար փոքր հոդված: Այստեղ և՛ ուսումնասիրվող հեղինակի կենսագրությունն է ու ժամանակը, և՛ վերլուծվող երկի ստեղծագործական պատմությունն ու լրացուցիչ հանգամանքները, և՛ մամուլի ու արխիվային նյութերի տվյալները, և՛ հուշերն ու այլապես վկայություններ, և՛ նախորդող վերլուծականները, գրքերը, վեճերն ու բանավեճերը: Ոչ մի մանրամասն չի անտեսվում, ամեն ինչ նպաստում է գրականագետի հիմնադրույթների հաստատմանն ու վերլուծվող նյութի լիարժեք բացահայտմանը: Համակարգային ու համադրական վերլուծության մեթոդը բերում է ներքին կապակցումների բացահայտման մեծ հնարավորություն, ընդ որում՝ ոչ միայն տեքստային, այլև արտատեքստային, որով շրջանակված է հեղինակի կյանքն ու գործը:

* Ներկայացվել է 03. III. 2025 թ., ընդունվել է տպագրության 20. III. 2026 թ.:

Գասպարյանի ոճի կարևոր բաղադրիչներից է խոսքի սեղմությունը, որը գալիս է մտածողության արագությունից ու համադրականությունից, կարևորն ու լրացուցիչը առանձնացնելու և ամեն ինչ իր տեղում ամբողջությամբ բացահայտելու հմտությունից: Այստեղ և՛ արագությանը նպաստող թռիչքաձև մտածողությունն է, և՛ աննկատ մնացած մանրամասների գեղեցկությունը:

Այս ամենը պահանջում է նյութի համակողմանի իմացություն, որը գրադարաններում, արխիվներում ու թանգարաններում ձեռք է բերվում դժվար աշխատանքով: Դա նաև պայմանավորված է նրանով, որ, ըստ Գասպարյանի, ինչ պահանջ գրականագետը դնում է գրողի առջև, նույնը պետք է պահանջի նաև իրենից՝ սկսած լեզվից ու արդիական մտածողությունից մինչև նյութին տիրապետելու լիարժեք կարողությունը: Եվ իրավացի է հետազոտողը, երբ աշխույժ ու պատկերավոր կենդանի լեզուն տարբերակում է եզրույթներով խեղդված սխեմատիկ և ըստ ամենայնի մեռած լեզվից: Գասպարյանի ոճի գրավչությունը պայմանավորված է այդ կենդանի լեզվով:

Որպես գրականագետ՝ նա ստեղծում է տվյալ հեղինակի կենդանի կերպարը, գեղարվեստական երկի բացահայտման բնական միջավայրը: Իսկ այս ամենի հիմքում պատմականությունն է, պատմական հայացքը, ինչն էլ խորքից կարգավորում է վերլուծվող նյութի ներքին ճարտարապետությունը:

Ինչպես գրախոսվող գիրքը, այնպես և նախորդները ունեն ընդգրկված ուսումնասիրությունների ու հոդվածների խմբավորման ընդհանուր առմամբ միանման կառուցվածք՝ «Գրականության պատմություն», «Պատմություն և արդիականություն», «Տեսական-գեղագիտական հարցադրումներ», «Գրական քննադատություն», «Դիմանկարներ և ուրվագծեր», «Ետադարձ հայացք», «Բաց պատուհան», «Հարցեր և պատասխաններ»: Առկա է նաև «Հավելված» բաժինը՝ աղբյուրագիտական նշանակություն ունեցող բնագրերի հրապարակումներով: Այստեղ «Պարույր Սևակի կյանքն ու մահը» փաստական կարևոր նշանակություն ունեցող հուշագրությունն է:

Առանձին երկերի ուսումնասիրությամբ գրքում ներկայացված են Ռաֆֆին, Պ. Դուրյանը, Համաստեղը: Ի դեպ, նախորդ հատորներում այս շարքում են Լ. Շանթը, Հ. Օշականը, Կ. Ջարյանը, Ռենը (Ռուբեն Վարդանյան), Վ. Սարոյանը, Ե. Չարենցը, Ա. Բակունցը (գիրք I), Սայաթ-Նովան, Պ. Դուրյանը, Վ. Թեքեյանը, Ռ. Սևակը, Մ. Ջարիֆյանը, Հ. Թումանյանը, Ե. Չարենցը, Ա. Բակունցը, Գ. Մահարին, Խ. Դաշտենցը, Լ.-Ջ. Սյուրմեյանը, Հ. Շիրազը, Հ. Սահյանը, Հ. Կարապետցը, Ա. Կիրակոսյանը, Մ. Գալշոյանը, Ռ. Դավոյանը, Ջ. Գազանճյանը, Մ. Պաքսյանը, իրանահայ բանաստեղծները, օտարագիր հայ գրողները, Ա. Հարությունյանը, Ա. Համբարձումյանը (գիրք II), Կարա-Դարվիշը, Լեռ Կամսարը, Հ. Սահյանը, Պ. Սևակը, Ա. Ալիքյանը, Գ. Էմինը, ժամանակակից բանաստեղծներն ու արձակագիրները (գիրք III), Խ. Աբովյանը, Ջիվանին, Սիամանթոն, Դ. Վարուժանը, Վ. Տերյանը, Լեռ Կամսարը, Հ. Կոստանդյանը, Գ. Մահարին, Պ. Սևակը, Մ. Սարգսյանը, Սոնա Վանը (գիրք IV), Յ. Իսանգադյանը, Մ. Պաքսյանը, ժամանակակից գրողները (գիրք V), Վ. Տերյանը, Ե. Չարենցը, Ա. Բակունցը, Ն. Ջարյանը, Հ. Սահյանը, Հ. Մաթևոսյանը և 1960 ականների մյուս արձակագիրները (գիրք VI):

Նորից հանդիպող հեղինակները ներկայացվում են միանգամայն նոր բացահայտումներով, կրկնությունը բացառվում է: Անունների այս փունջը թեև դեռևս ամբողջը չէ, բայց տպավորիչ մի շարք է, որ սերունդներ կարող է կրթել, տալ գրականության իմացություն և ճաշակ, սովորեցնել երկն ընկալելու ու վերլուծելու արվեստը, այսինքն՝ ամբողջական կերպարով ճանաչել գրողին:

Գրախոսվող գրքում առանձին քննության նյութ են դարձել հայկական վերածննդի ու կլասիցիզմի, ստալինյան բռնությունների ու հայ գրողների ճակատագրի, Հայրենական պատերազմի տարիներին ստեղծված գրականության հարցերը:

Առանձնահատուկ պետք է անդրադառնալ ստալինյան բռնությունների և հայ գրողների ճակատագրերի մասին հողվածներին: Դ. Գասպարյանն առաջինն էր, որ դեռևս 1980-ական թվականների վերջերին, այսպես կոչված, հրապարակաչնության ու ազատամտության առաջին իսկ տարիներին, արխիվներից հանեց և ժողովրդի սեփականությունը դարձրեց բազմաթիվ վավերագրեր, որոնք լույս սփռեցին պատմության մութ ծայքերի վրա և բացահայտեցին հայ գրողներին վիճակված այդ նոր դժոխքի իրական պատկերը: Նա հայտնաբերեց և հրապարակեց ոչ միայն վավերագրեր, այլև գեղարվեստական անտիպ ժառանգություն, որոնք էպպես փոխեցին պատկերացումները ժամանակի և ժամանակակիցների վերաբերյալ: Այդ նյութերի հրապարակումից ու հանրայնացումից հետո տարբեր մտավոր ժամանակներ են և այլևս անհնար է առաջնորդվել հին պատկերացումներով: Իսկ դա նշանակում է, որ ընձեռված նոր հնարավորությունները ճիշտ օգտագործելով՝ Դ. Գասպարյանը մտավոր հեղաշրջում կատարեց, և սա երբեք պետք չէ մոռանալ:

Դեռևս 1988-ից հրապարակված հողվածներից հետո՝ 1994-ին, նա հրատարակեց «Փակ դռների գաղտնիքը» գիրքը, որի հարցադրումները, ահա, շարունակում ու լրացնում են այս գրքում զետեղված «Ստալինյան բռնաճնշումները և հայ գրողների ճակատագիրը», «Չարենցը, Բակունցը և մյուսները», «Ստալինը վերադառնում է» հողվածները:

Ինչպես նախորդ, այնպես և այս գրքում Գասպարյանի գլխավոր «գրական հերոսը» Եղիշե Չարենցն է: Գնահատելով գրականագիտության նախկին ձեռքբերումները՝ անվանի ուսումնասիրողը չարենցագիտությունը դուրս բերեց միանգամայն նոր ասպարեզ, որը պայմանավորված է ինչպես արխիվային նոր նյութերի հայտնաբերմամբ, այնպես և Չարենցի խորքային ստեղծագործությունների նոր ընթերցումով: Վեցերորդ գրքում մանրակրկիտ քննությամբ նա ցույց տվեց, որ «Ամբոխները խելագարված» և «Սոմա» պոեմները ոչ թե սոսկ հեղափոխության երգեր են, այլև Հայաստանի պետականության վերականգնման օրհներգեր, «Չարենց նամե», «Ստամբոլ» պոեմում բացահայտեց ռուս-թուրքական դաշինքի ամբողջ կործանարարությունը հայ ժողովրդի համար: Այս վերլուծումներից հետո կոպիտ սխալ է կառչած մնալ խորհրդային տարիներին շրջանառության մեջ դրված ձևակերպումներին: Եվ լավ է, որ Գասպարյանն է խմբագրում Չարենցի գիտական հրատարակության նոր հատորաշարը:

Գրախոսվող գրքում նոր հարցադրումներ են պարունակում «Գրական Երևան. 1910-1930-ական թվականներ», «Խորհրդային Հայաստանի պետական-պաշտոնական հյուրերը» ուսումնասիրությունները:

Հետաքրքրական են ինչպես այս, այնպես էլ նախորդ գրքերում տեղային նշանակությամբ ի մի բերված նյութերը. «Գրական Երևան»-ն ու «Գրական Արցախ»-ը, «Գրական Սյունիք»-ն ու «Գրական Վան-Վասպուրական»-ը: Սա էլ գրական նյութը ներկայացնելու մի նոր դիտակետ է: Այստեղ առանձնահատուկը նյութն է, բարբառն է, բնաշխարհն է, պատմության հետազիծն է: Հետաքրքրական կլինի այս տեսանկյունով գրել նաև «Գրական Թիֆլիս», «Գրական Կոստանդնուպոլիս», «Գրական Բեյրութ» ուսումնասիրությունները և սեղմ ուրվագծերով ցույց տալ այդ բնակավայրերի գրական քարտեզը:

«Բաց պատուհան» խորագրի ներքո հեղինակն առանձնացնում է դասական ու ժամանակակից արտասահմանյան գրականությանը նվիրված հետազոտությունները: Այստեղ գետնդրված են հետևյալները՝ «Արվեստի փառքը», «Հավերժական շարժիչ» (Զիակունո Կազանովայի «Իմ կյանքի պատմությունը» հուշավեպը), «Դավիթ Խրոյանի կյանքի գլխավոր գործը» (նվիրված անգլիագիր հայ գրողի «Ճանապարհ տնից» վեպին), «Մահվան ֆուգա» (Գաբրիել Գարսիա Մարկեսի «Նահապետի աշունը» վեպը), «Բատյայի կրտսեր որդին» (ուկրաինացի այլախոհ Վասիլ Ստուսի պոեզիան), «Արաբական աշխարհի վեպը» (եգիպտացի գրող Ալասա ալ-Ասուանիի «Յակոբյան շենքը» վեպը): Այս վերլուծականները նվիրված են նշված գրողների համապատասխան երկերի հայերեն թարգմանություններին: Հեղինակը քննում է նաև արվեստի հարցեր:

«Հայ գրականություն» գրքի յոթերորդ հատորը բավականին հարուստ գեղարվեստական մի աշխարհի շատ անհրաժեշտ ու խոր անդրադարձ է, որին զուգահեռ հայ գրականությունը երևում է իր կապերով ու ազդեցություններով, ընդհանրություններով ու ձեռքբերումներով: Այս բնույթի վերլուծականներում նաև պարզվում է հայ գրականության պատկերը համաշխարհային գեղարվեստական մարտահրավերների տեսադաշտում: Այստեղ և՛ ավանդույթի ձգողական ուժն է, և՛ նորարարության գայթակղությունը, որոնց արդյունավետ համադրումն էլ նորոգում է ազգային գրականությունների գեղարվեստական ընթացքը:

Տպավորիչ է Մարկեսի վեպերի վերլուծությունը մոզական ռեալիզմի հոչակված գեղարվեստական մեթոդի գործադրմամբ: Հարակից կոլումբիացի գրողի տեսական դատողություններն են, իր կենսագրական փաստերի մանրամասները, որոնք ամբողջությամբ հյուսում են համաշխարհային փառքի հասած այդ ինքնատիպ գրողի կերպարը: Բացահայտվում է մոզական ռեալիզմի մոզականության գաղտնիքը, որի հիմքը չափազանցությունն է, առասպելաբանությունն ու հեքիաթը: Իսկ շարադրանքին թև տվողը պատկերավոր խոսքն է, Կարիբյան ավազանի բնիկների ու եկվորների կենսաբանության իմաստությունն է: Պատումի գրավչությունը նաև կենցաղի ու սովորույթների վառ նկարագրությունն է: Գրականագետն ահա այսպես հմտորեն բացահայտում է լատինաամերիկյան գեղարվեստական այս նոր ալիքի տեսական-գեղագիտական առանձնահատկությունները, որոնք հեղաշրջիչ նշանակություն ունեցան համաշխարհային գրականության

մեջ՝ ասպարեզ հանելով Նորբեյյան մրցանակակիր մի քանի գրողների և հաստատելով լատինաամերիկյան վեպի երևույթը:

Անկախ տվյալ հոդվածի հարցադրումների նպատակային ուղղվածությունից՝ Դ. Գասպարյանը միշտ առաջնային է համարում բարձր արվեստի պահանջը, որն էլ հենց արվեստի գոյության նախապայմանն է: Այս դիրքորոշումով են գրված գրախոսվող գրքի «Ետադարձ հայացք», «Մարդը», «Հանրակրթություն և ազգային վիճակ», «Հողմաշունչ ժամանակներ», «Ժամանակի ձայնը. անդրադարձներ» բաժինների նյութերը:

Նախ՝ չափանիշը, ապա՝ միայն գնահատությունը. այդպե՛ս, որովհետև հակառակ դեպքում թույլ ու երկրորդական գեղարվեստական երկն անգամ կարելի է քննել և ներկայացնել այնպես, որ գրավի առաջինի տեղը: Վերջին տասնամյակների մեր գրական կյանքում այդպիսի օրինակները շատ են, որով և պայմանավորված է գրական ընթացքի խառնաշփոթը: Գասպարյանն այս հարցերը սուր ընկալմամբ է բացահայտում, որովհետև շատ կարևորում է արվեստի, այս դեպքում՝ բարձր գրականության հոգեկերտիչ դերը:

Այս դիրքորոշմամբ անվանի գիտնականը իր երևացող տեղն ունի ժամանակակից գրական ընթացքի մեջ: Գրականությանն առնչվող իր սկզբունքները պաշտպանելու նպատակով նա բազմիցս մտել է բանավեճերի մեջ. մեկ քննարկվել են ժամանակակից արձակի ու պոեզիայի հարցերը, մեկ տարբեր տեսանկյուններից լուսաբանվել է գրողի առանձին գրական մի ստեղծագործություն կամ գիրք, մեկ ճշգրտվել է մոտակա պատմական անցյալի նկատմամբ ժամանակակից հայացքը, մեկ հերթական անգամ քննվել է գրական քննադատության տեղի ու դերի հարցը: Առանձին հոդվածներով դրանք կամ դրանց արձագանքները կան նաև ներկայացվող գրքում («Մոլախոտը շատ է», «Մտավոր դեղնախտ», «Վրիպակի հերթական զոհը» և այլն):

Արագ զարգացումների մեր այս զարմանալի դարում կայուն են մնում միայն հոգևոր ու պատմական հաստատուն արժեքները, որոնցով էլ պահպանվում ու զարգանում է ազգային հոգեկերտվածքը: Այս հարցերի քննարկումների ժամանակ Գասպարյանը միշտ հեռու է եղել ձևից ու ձևականությունից և հարցերին տվել է միմիայն գեղարվեստական զարգացման պատմական տրամաբանությունից բխող հիմնավոր պատասխաններ:

Ահա այս ամենով ստեղծվում է քննադատի գրական կերպարը: Բուն քննադատությամբ զբաղվողներից պատմական ոչ հեռու ժամանակի մեջ տեսնում եմ Նիկոլ Աղբալյանին, Հարություն Սուրխաթյանին, Պողոս Մակինցյանին, Հակոբ Օշականին, Պողոս Մնայանին: Մոտիկ տարածության վրա Գասպարյանի անմիջական նախորդներն են ... Գասպարյանը շարունակում է նրանց լավագույն ավանդույթները, որը առաջին հերթին ուսումնասիրվող հեղինակի կյանքի ու գործի համակողմանի հետազոտական բնույթն է, ծայրահեղ ուշադրությունը տողի ու բառի հանդեպ: Անպայման նաև խորապես արդիական հայացքը, որ պայմանավորվում է գիտության զարգացմամբ, մարդու իմացության և դրանով պայմանավորված՝ մտածողության թարմությամբ:

Թեև մեր իրականության մեջ քննադատի վաստակն այնպես չի գնահատվում, ինչպես գրողինը, որովհետև քննադատից միայն պահանջում են ու նաև դժգոհում, թե ինչու իրենց չի անդրադառնում, ինչու մեկին գնահատեց, իսկ իրենց՝ ոչ, բայց, թեկուզ այդ տեսադաշտում, ներքին լուռ գնահատությունն առկա է և լավ գիտեն, թե ով է նա իր ասպարեզում: Դ. Գասպարյանն այդ լուռ գնահատվածներից է, որի շենքուշնորհքով քննադատությունը վերջնականապես դարձրեց լինել որպես գրականության հավելված և գրական կյանքում պահպանեց մասնագիտական իր բարձր արժանապատվությունը:


Այդ առջև ստեղծագործական բուռն ու հարուստ ճանապարհ անցած գրականագետ Դավիթ Գասպարյանի «Հայ գրականություն» մատենաշարի հերթական՝ յոթերորդ գիրքն է՝ որպես հերթական հաջողություն:

ԹԱՄԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*Բ. գ. թ.: Գիտական հետաքրքրությունները՝ Վահան Թեքեյան, արևմտահայ պոեզիա, արվեստագիտություն: Հեղինակ է 6 գրքի և շուրջ 100 հոդվածի:
tamara2cthis@gmail.com, tamara@collectors-galleries.com*

ԲԱԳՐԱՏ ՌԻԼՈՒԲԱԲՅԱՆ
(Ծննդյան 100-ամյակի առթիվ)*

2025 թ. դեկտեմբերի 9-ին լրացավ Բագրատ Ուլուբաբյանի ծննդյան 100-ամյակը: Աստված շոպյաշատ է եղել հասարակական, քաղաքական, պետական գործչի, գրողի և մեծ գիտնականի հանդեպ: Նրա մեջ այդ ամենը փոխլրացնող ու ներդաշնակ էին: Բ.



Ուլուբաբյանի անունը անխզելիորեն կապված է հայ ժողովրդի, Հայաստանի, մասնավորապես, Արցախի հետ. գիտնականի ստեղծագործությունների առանցքային թեման հանդիսացել է հայրենի հողը, իր ծննդավայրի անկրկնելի բնաշխարհն ու մարդիկ:

Ծնվել է 1925 թ. դեկտեմբերի 9-ին Մեծ Հայքի տասներորդ նահանգում՝ Արցախ աշխարհի Մուշկապատ գյուղում: Նա հետաքրքիր, փորձություններով առլեցուն, բայց բովանդակալից կյանք է ունեցել: Ընտանիքի միակ զավակն է եղել և սիրված՝ Ուլուբաբյան գերդաստանի բոլոր անդամների կողմից: Սկզբում սովորել է ծննդավայրի յոթնամյա, այնուհետև՝ հարևան Հաղորտի գյուղի միջնակարգ դպրոցում: Շուտով ուշիմ պատանին հասավ Շուշի, որտեղ իրենց նախնական կրթությունն էին ստացել գիտության ու մշակույթի հայազգի մեծերից, հասարակական-քաղաքական, պետական կյանքին նոր լիցք հաղորդած գործիչներից շատերը: Շուշիի երկամյա ուսուցչական ինստիտուտի շրջանավարտը հետագայում պետք է լրացներ հայ մեծերի պատվավոր շարքը: 1944 թ. նա դառնում է Բաքվի հայկական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի ուսանող: Ինստիտուտն ավարտելուց հետո աշխատանքային գործունեությունն սկսել է Մուշկապատի հարևանությամբ գտնվող Մարտունու շրջանի Գիշի գյուղի միջնակարգ դպրոցում:

Շուտով բանիմաց ու ստեղծագործական միտք ունեցող մտավորականի կարիքը զգացվեց մարզկենտրոնում, որտեղ գործում էր Շուշիից Ստեփանակերտ տեղափոխված ուսուցչական երկամյա ինստիտուտը: 1949 թ. Բ. Ուլուբաբյանը վերոհիշյալ ուսումնական հաստատության հայոց լեզվի և գրականության դասախոսն էր: Կարճ ժամանակահատվածում նա դարձավ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի (ԼՂԻՄ) գրական, իրավամբ հզոր, ընտանիքի կարևոր դեմքերից մեկը: Սկզբում նրա բանաստեղծությունները տեղ էին գտնում թերթերում, իսկ բանաստեղծությունների առաջին ժողովածուն՝ «Երգեր աշխա-

* Ներկայացվել է 18. XII. 2025 թ., ընդունվել է տպագրության 20. III. 2026 թ.:

տանքի և խաղաղության» խորագրով, 1952 թ. տպագրվել է Բաքվում: Բանաստեղծությունների երկրորդ ժողովածուն՝ «Այս առավոտ» վերնագրով, 1956 թ. հրատարակվեց Երևանում:

Բեղուն էր նաև Բ. Ուլուբաբյանի գրիչը արձակի ասպարեզում: 1959 թ. Երևանում տպագրվեց «Հայրենի հող» վեպը, իսկ 1960 թ. Բաքվում՝ «Այգեստան» վիպակը: Արդեն հանրային ընկալում և մեծ ճանաչում ունեցող գրողի ստեղծագործությունների ժողովածուն ռուսերեն՝ «В горах Карабаха» վերնագրով, 1962 թ. տպագրվեց Մոսկվայում:

Վերոհիշյալ աշխատանքները հայտ էին հետագայում նոր, առավել արժեքավոր գործեր ստեղծելու համար: 1963 թ. Բաքվում լույս տեսավ «Մարդը» վեպը, նույն թվականին Երևանում՝ «Թարթառ» վերտառությամբ վիպակը: Ստեղծագործական բուռն վերելքի պայմաններում մեկը մյուսի հետևից 1966 թ. Բաքվում տպագրվեց «Լեռնաստան», իսկ 1967 թ. Երևանում՝ «Հատիկը չի մահանում» վիպակների և պատմվածքների ժողովածուները: Պատահական չէ, որ նրան վստահեցին գրողների միության մարզային բաժանմունքի ղեկավարի, «Խորհրդային Ղարաբաղ» թերթի, այնուհետև Կուլտուրայի մարզային վարչության պետի պաշտոնները: Շուտով նրան նշանակեցին մարզգործկոմի նախագահի տեղակալ: Նա համակարգում էր մարզի մշակութային ոլորտի աշխատանքները: Բ. Ուլուբաբյանի գեղարվեստական գործերի թեման Արցախն էր, իսկ գործող կենտրոնական դեմքերը՝ արցախցիները:

Ադրբեջանի բռնատիրական վարչակարգի ճնշումների պայմաններում նա կատարեց անհնարինը՝ գրական-մշակութային կամուրջ կապելով ՀԽՍՀ այդ ոլորտի նշանավոր դեմքերի հետ: Ավետիք Իսահակյանի, Պարույր Սևակի, Համո Սահյանի, Սերո Խանզադյանի և մյուս մեծերի ամեն մի այցը Արցախ երևույթ էր ու մի նոր երանգ էր ավելացնում երկրամասի հայկական կերպարին: ԽՍՀՄ տարածքում հայկական ազգային-պետական երկու միավորները միասնական դարձնելու ապագային միտված տեսլականը խանդավառում և նոր լիցք էր հաղորդում ժողովրդին:

1968 թ. տեղափոխվելով Երևան՝ նա շարունակեց ստեղծել գեղարվեստական նոր գործեր, մասնավորապես՝ «Կանթեղ» խորագրով (Երևան, 1976 թ.) պատմվածքների և վիպակների ժողովածուն: Հերթական գործերում Բ. Ուլուբաբյանն արդեն գեղարվեստական խոսքի ուժով ներկայացրեց հայոց պատմության բախտորոշ անցքերը: Նա ընթերցողի սեղանին դրեց «Իսրայել Օրի» կինովիպակը: Առավել տպավորիչ էր նրա «Սարդարապատ» պատմավեպը, որը 1987 թ. առաջին անգամ տպագրվեց Բեյրութում, իսկ 1988 թ.՝ Երևանում: Արցախյան ազգային-ազատագրական պայքարի գաղափարական հիմնավորման տեսանկյունից այն անչափ կարևոր էր: Բ. Ուլուբաբյանն իր ուժերը փորձեց նաև թատերագիտության ասպարեզում և հաջողեց. «Հողի լեզուն», «Ու՛մ հետ ես դու» դրամաների թեմաները նորից հողի, հայրենիքի նկատմամբ մարդու պատասխանատվությունից բխող հարցերն էին:

Ստեփանակերտում Բ. Ուլուբաբյանի՝ որպես գրողի, ԼՂԻՄ-ում գրական, մշակութային կյանքի կազմակերպչի կայացման ժամանակաշրջանը համապատասխանեց երկրամասում ազգային-ազատագրական պայքարի նոր խմորումների:

1960-ական թվականների սկզբներին տեղական բնույթի դժգոհությունները ահագնանալով վեր էին ածվում համաժողովրդական շարժման: 1963 թ. Ստեփանակերտի ավտոտնտեսության 300 աշխատակիցներ բողոք-նամակ հղեցին ԽՍՀՄ ղեկավարությանը: Նույն թվականին ԽՄԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ն. Իրուշչովին հասցեագրված նամակի տակ այս անգամ արդեն կար 2500 ստորագրություն¹: 1965 թ. հունիսի սկզբին ԼՂԻՄ-ի 13 ղեկավար աշխատողներ ու մտավորականներ Բ. Ուլուբաբյանի ղեկավարությամբ առավել հանգամանալից նամակ հղեցին ԽՄԿԿ Կենտկոմի, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի, Մինիստրների խորհրդի ղեկավարությանը: Նամակում տարաբնույթ փաստերով ներկայացված էր մարզի գաղութային վիճակը և, հատկապես, ցույց էր տրված Ադրբեջանի ղեկավարության վերաբերմունքը ԼՂԻՄ-ի նկատմամբ²: Արցախահայությանը հուզող հարցերը քննարկելու նպատակով Բ. Ուլուբաբյանը հանդիպել է Լ. Բրեժնևի և Ա. Միկոյանի օգնականների ու Կենտկոմի համապատասխան բաժինների պատասխանատուների հետ, ովքեր խոստացել են անհապաղ միջոցառումներ ձեռնարկել՝ մարզում սոցիալ-տնտեսական ծանր կացությունը շտկելու և հայության համար բարվոք վիճակ ստեղծելու համար: «Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիացնելու առաջարկության վերաբերյալ էլ նրանք ասել են, որ դա միանգամայն իրավացի է ու արդար, սակայն կուսակցության Կենտկոմը առայժմ չի կարող նման հարց լուծել, քանի որ տերիտորիալ նույնպիսի կնճիռներ կան նաև ուրիշ հանրապետությունների միջև, և Ղարաբաղի մասին որոշում հանելը կնշանակի կրքեր բորբոքել այդ հանրապետություններում»³, – հետագայում իր հուշերում գրել է Բ. Ուլուբաբյանը:

Հարցը փակուղի մտցնելու նպատակով նամակը քննարկվում է ԱԽՍՀ Մինիստրների խորհրդի նիստում, և մարզի սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքի վերափոխման մասին 42 կետից բաղկացած որոշում ընդունվում⁴: Դրանից հետո նամակի հեղինակներից չորսը՝ Բ. Ուլուբաբյանը, Ս. Շաքարյանը, Լ. Գասպարյանը և Գ. Ստեփանյանը, 1965 թ. սեպտեմբերի 22-ին նոր նամակ են հղում ԽՄԿԿ Կենտկոմի նախագահություն⁵:

ԽՍՀՄ կենտրոնական մարմինների թողտվության պայմաններում Ադրբեջանի ղեկավարությունը սկսեց ճնշումներ գործադրել ազատագրական շարժման ղեկավարների նկատմամբ. Բ. Ուլուբաբյանին, Ս. Շաքարյանին, Ա. Մանուչարյանին, Յա. Բաբայանին, Բ. Ջանյանին, Ժ. Անդրյանին արտաքսեցին ԼՂԻՄ-ից:

¹ Վ. Բ ա լ ա յ ա ն. Ազատագրության և պետականության համար պայքարի պատմական ու գաղափարական դրսևորումներն Արցախում (XVII երկրորդ կես – 2021 թ.), Երևան, 2022, էջ 260:

² Բ. Ուլուբաբյան. Արցախի պատմություն, Երևան, 1994, էջ 260:

³ Բ. Ուլուբաբյան. Փորձության օրերի խորհուրդը, Ստեփանակերտ, 2010, էջ 77:

⁴ Նույն տեղում:

⁵ Բ. Ուլուբաբյան. Արցախի պատմություն, էջ 261:

Փաստորեն, այդ օրերից սկսած Բ. Ուլուբաբյանը դարձավ արցախյան ազատագրական շարժման հոգևոր առաջնորդն ու ժողովրդի հիշողության մեջ մնաց որպես անձնվեր մաքառումների խորհրդանիշ:

Երևան տեղափոխվելուց հետո էլ նա շարունակեց նվիրված մնալ Արցախի ազատագրության գործին: Խորհրդային Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանի հանձնարարությամբ Բ. Ուլուբաբյանը 1975 թ. մարտի վերջին արցախյան հիմնահարցի և ԼՂԻՄ-ում տիրող իրավիճակի մասին հանգամանալից տեղեկանք պատրաստեց⁶: Չնայած 1988 թ. նա արդեն վատառողջ էր, բայց և այնպես կանգնած էր ազատագրական շարժման առաջնորդների կողքին:

1968 թ. Բ. Ուլուբաբյանի՝ արդեն որպես պատմաբանի կյանքի և գործունեության հետազոտության ուղին կապվում է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի գիտական միջավայրի հետ: Այդ օրերին Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը նույնպես մտահոգ էր Արցախի ճակատագրով: Հայկական երկրամասի իրական պատմությունը ինչպես հայ, այնպես էլ օտար ընթերցողներին ծանոթացնելու նկատառումով՝ ՀԽՍՀ Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանի հորդորով Բ. Ուլուբաբյանը գրում է «Արցախի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև 10-րդ դարը» աշխատությունը: 1969 թ. նույն վերնագրով պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն:

Պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ստանալուց հետո նա առավել մեծ եռանդով ձեռնամուխ եղավ պատմագիտական նոր գործերի ստեղծմանը: 1973 թ. պաշտպանեց «Խաչենի իշխանությունը 10–16-րդ դարերում» խորագրով դոկտորական ատենախոսությունը: Այդ ուսումնասիրությամբ նա փաստերով ցույց տվեց միջնադարյան Արցախի վերաբերյալ ադրբեջանական պատմագիտության մեջ ձևավորված թեզերի սնանկությունը: Ստեղծված իրավիճակից ելք որոնելու նպատակով՝ Խորհրդային Ադրբեջանի Կենտկոմի առաջին քարտուղար Հ. Ալիևը, ով մեծ ազդեցություն ուներ Մոսկվայում, պահանջեց ատենախոսության նոր պաշտպանություն կազմակերպել:

Չնայած ԽՍՀՄ Մինիստրների խորհրդին կից գործող բարձրագույն ատեստացիոն հանձնաժողովի գործունեության շրջանակներում վերոնշյալ միջադեպը աննախադեպ էր ու եզակի, այնուամենայնիվ, Քաղբյուրոյի անդամության թեկնածուի ճնշման տակ հինգ տարի անց՝ 1978 թ., Մոսկվայում ադրբեջանցի «մասնագետների» ներկայությամբ ու ակտիվ մասնակցությամբ անվանի գիտնականը տառացիորեն հողմացրիվ արեց վերջիններիս կեղծ փաստերն ու շինծու թեզերը: Բարձրագույն ատեստացիոն հանձնաժողովին այլ բան չէր մնում, քան նորից վավերացնել Բ. Ուլուբաբյանի՝ մինչ այդ օրինական կերպով ստացած պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանը: Դոկտորականի պաշտպանության ձգձգված գործընթացը քննության առնելով՝ ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ Մորուս Հասրաբյանը իրավացիորեն նկատել է. «... իբրև դոկտորական դիսերտացիա, Բագրատ Ուլուբաբյանը պաշտպանության էր ներկայացրել «Խաչենի իշխանությունը 10–16-րդ դարերում»: Դոկտորի աստիճանը մեծագույնն է գիտության ասպարեզում և այդ աստիճանին նա

⁶ Բ. Ուլուբաբյան. Արցախյան գոյապայքարը, Երևան, 1994, էջ 287:

արժանի է այս պատմության յուրաքանչյուր գլխով՝ առանձին-առանձին վերցրած: Իսկ գիրքը բաղկացած է վեց մեծադիր գլուխներից: Ուրեմն, մեր դիտերտացիան այս բարձրագույն աստիճանին արժանի է վեցապատիկ»⁷:

Խորհրդային տարիներին ամեն կերպ արգելվում էին հայ պատմաբանների փորձերը՝ զբաղվելու ՀԽՍՀ տարածքից դուրս գտնվող պատմական Հայաստանի անցյալի, ներկա իրավիճակի, սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական, մշակութային ժառանգության, այնտեղ բնակվող հայ ժողովրդի համար կենսական անհրաժեշտություն ներկայացնող բազում այլ հարցերի լուսաբանմամբ: Դրան հակառակ՝ Ադրբեջանում պատմաբանների համար ստեղծվել էր, իսկ այսօր՝ էլ առավել շատ, չափազանց արտոնյալ իրավիճակ: Հաշվի չնստելով պատմական փաստերի և իրողությունների հետ, կեղծելով ու եղծելով պատմությունը իրենց ցանկություններին համապատասխանեցնելու ճանապարհով՝ հորինվեց մի մտացածին վարկած, ըստ որի՝ Մեծ Հայքի մաս կազմող Արցախը, Ուտիքը, Նախիջևանը և Խորհրդային Հայաստանի տարածքի զգալի մասը պատմականորեն Ադրբեջանի բաղկացուցիչ մասերն են: Դեռևս կոմունիստական դիկտատուրայի տարիներին առաջիններից մեկը Բ. Ուլուբաբյանն էր, որ համարձակորեն փորձեց ցրել այդ հեղձուցիչ ու թանձրախիտ մուժը և անհերքելի փաստարկներով ներկայացնել Հայոց արևելից նահանգների իրական պատմությունը:

Բ. Ուլուբաբյանը անհաշտ էր հայոց պատմությունը նենգափոխողների ու, հատկապես, կողոպտողների հետ: Հազար անգամ իրավացի է Համո Սահյանը՝ «Բազրատ Ուլուբաբյանը հայ պատմության աջալուրջ սահմանապահն է»⁸:

Պատմաբանն իր աշխատությունների մեջ անհերքելի փաստերով ցույց է տվել, որ Արցախի և Ուտիքի պատմությունը սերտորեն միահյուսված է հայոց պատմությանը, և այդ տրամաբանության մեջ մասնագետներին ու հանրության լայն շրջանակներին ներկայացրել է Հայոց արևելից նահանգների կենսագրությունը: Նա այդ փաստերի զորությամբ ու տրամաբանությամբ էլ կարողացել է ջարդ ու փշուր անել ադրբեջանական պատմագրության մեջ արմատավորված կեղծ տեսությունները և բացահայտել աղավաղումներն ու խեղաթյուրումները: «Խաչենի իշխանությունը 10–16-րդ դարերում» աշխատությունը մենագրության տեսքով հրատարակվեց 1975 թ. Երևանում: Դա իսկապես նոր խոսք էր Արցախի X–XVI դարերի քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքի ուսումնասիրման գործում: Բ. Ուլուբաբյանը, «պեղելով» և պատմական տարաբնույթ սկզբնաղբյուրներից գտնելով հետաքրքիր փաստեր, ստեղծեց քննարկվող ժամանակաշրջանի Հայոց արևելից նահանգների իշխանական տների տոհմաբանությունը: Վերջիններս մեծ մաքառումներով ու զոհաբերություններով կարողացել են պաշտպանել հայոց վտանգված ինքնությունը և պետականության բեկորները: Ընդհանրապես պատմագիտության մեջ տիրական էր այն կարծիքը, որ Բազրատունյաց և Կիլիկյան թագավորությունների անկումից հետո հայ ժողովուրդը կորցրեց իր պետականությունը: Բ. Ուլուբաբյանին հաջողվեց

⁷ Բ. Ուլուբաբյան. Ժամանակի քննությունը, Ստեփանակերտ, 2006, էջ 429–430:

⁸ Նույն տեղում, էջ 431:

աղբյուրների ու համապատասխան գրականության վրա հենվելով ապացուցել, որ դրանից հետո էլ կար հայկական պետականություն՝ մասնավորապես Արցախում: Եվ այդ իշխանությունների հիմքերի վրա ձևավորվեցին մեյիքությունները, որոնք նոր որակ հաղորդեցին հայոց պետական կյանքին:

Վաղ միջնադարից մինչև X դարը Արցախում տեղի ունեցած քաղաքական, տնտեսական, մշակութային զարգացումները բացահայտելու նպատակով Բ. Ուլուբաբյանը 1981 թ. մասնագետների և ընթերցողների լայն շրջանակի սեղանին է դնում տարիների գիտական պրպտումների արդյունքը՝ «Դրվագներ Հայոց արևելից կողմանց պատմության» մենագրությունը, որը նոր լույս է սփռում Արցախի և Ուտիքի նախարարական-թագավորական տոհմերի գործունեության չբացահայտված էջերի վրա: Գրքում հանգամանորեն քննարկվել են նաև Հայոց արևելից նահանգների վրա քոչվորների՝ հոների, խազարների, Հյուսիսային Կովկասի խառնամբոխ ցեղերի արշավանքների հետ կապված հարցերը: Նույն թվականին հրատարակվում է նաև «Գանձասար» գիրքը: Երբ տակավին նա ուսուցչություն էր անում Գիշիում, մի քանի անգամ այցելելով Գանձասար, ուսումնասիրել է հուշարձանի և տարածքի պատմական գերեզմանների տապանաքարերի վրա եղած արձանագրությունները⁹: Ուսումնասիրության արդյունքում պարզել է, որ նշանավոր վանական համալիրի 1907 թ. վերականգման ժամանակ բազմաթիվ արձանագրություններ ոչնչացվել են: Այդ կապակցությամբ նա գրել է. «Երևում է, որ գործի գլուխ են կանգնած եղել երկրամասի պատմությունն ու նրա հիշատակները չհարգող մարդիկ ...»¹⁰: Հեղինակը հանգամանորեն ներկայացրել է Աղվանից կաթողիկոսների, թերևս, ամենանշանավոր նստավայրի պատմությունը և կառույցի ճարտարապետական նկարագիրը:

Բ. Ուլուբաբյանի գիտական պրպտումների առանցքում են եղել Աղվանքի պատմության հիմնահարցերը¹¹: Տարբեր աղբյուրների հիման վրա տրամաբանական կուռ կտրվածքի մեջ մի կողմից՝ ներկայացրել է բուն Աղվանքի վարչական ու էթնիկ սահմանները, քաղաքական վայրիվերումները, մյուս կողմից՝ հանգամանորեն քննարկել բուն Աղվանքի հետ Հայաստանի ունեցած հյուսիս-արևելյան նահանգների սահմանը, ազգագրական, մշակութային, քաղաքական կացությունը: Բ. Ուլուբաբյանը իրավացիորեն նկատել է, որ Արցախի և Ուտիքի

⁹ Հ. Սիմոնյան. Բ. Ուլուբաբյան (ծննդյան 75 ամյակի առթիվ). – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2001, № 1, էջ 262:

¹⁰ Բ. Ուլուբաբյան. Գանձասար, Երևան, 1981, էջ 73:

¹¹ Բ. Ուլուբաբյան. Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ. – «Բանբեր Երևանի համալսարանի», 1971, № 1, էջ 176–187, նույնի՝ «Ալբանիա», «Աղվանք» և «Առան» տեղանունները. – ՊԲՀ, 1971, № 3, էջ 115–126, նույնի՝ Հայոց լեզվի հյուսիս-արևելյան եզրի և հարակից հարցերի մասին. – ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1968, № 1, էջ 51–78, նույնի՝ Աղվանից թագավորական տան հարցի շուրջը. – ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1971, № 7, էջ 53–66, նույնի՝ Դադի կամ Խույա վանք. – «Էջմիածին», 1971, № 6, էջ 62–72:

հայրությունը կարևոր դերակատարություն է ունեցել Կուրի ճախափնյակի աղվանական ցեղերի հոգևոր ու մշակութային կյանքի կազմակերպման գործում: Այդ հողավաճներն ինչ-որ ձևով ցրել են այն խառնաշփոթը, որը տասնամյակներ շարունակ ստեղծվել էր «վայ գիտնականների» կողմից, որոնք բուն Աղվանքի մշակութային, քաղաքական կյանքի մեջ կամայականորեն տարրալուծել էին հայ ժողովրդի՝ հայրենիքի մի հատվածում ստեղծվածը: Վերոհիշյալ աշխատությունների մեջ զարմանալի բժախնդրությամբ հեղինակը հետամուտ է եղել ժամանակագրությանը: Ամեն մի նշանավոր անձի՝ թագավորի, իշխանի կամ հազարապետի գահակալությունն աշխատել է որոշել ժամանակագրությամբ: Այստեղ տեղին է հիշել Մ. Խորենացու խոսքերը. «Ո՛չ է պատմություն ճշմարիտ, առանց ժամանակագրության»¹²:

Բազմազան է ու տարաբնույթ Բ. Ուլուբաբյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը: Այն բավականաչափ լայն է ու ընդգրկում է Հայոց պատմության առանցքային հիմնահարցերը: Այդ տեսանկյունից արժեքավոր է 1987 թ. հրատարակված «Ջրուցարան» երկհատոր մենագրությունը: Դրա Ա գրքում հակիրճ ու հանրամատչելի ձևով ներկայացված է հայոց հինգհազարամյա պատմությունը: Բ. Ուլուբաբյանին հաջողվել է փաստերի հիման վրա բացահայտել այն գաղտնիքը, թե ինչպես հայ ժողովուրդը՝ թշնամական երկրներով շրջապատված, կարողացավ պահպանել իր ինքնությունն ու այդ ընթացքում մի քանի անգամ ստեղծել ազգային պետականություն: Իրավացիորեն նկատել է, որ հայկական պետականության հիմքում ի սկզբանե դրված է եղել ազգի ազատության ու անկախության գաղափարը: Եվ ինչպես նա նշում է՝ դա սկսվել է Հայկից: Սակայն դժնդակ դարերում, երբ մեզ քեց ազատության, միասնականության ու պայքարի ոգին, և նիհիլիզմը պաշարեց ժողովրդին, մենք գրկվեցինք ամեն ինչից, անգամ՝ արժանապատվությունից: Այդ տեսանկյունից Բ. Ուլուբաբյանը անզիջում է բոլոր դարերի դավաճանների նկատմամբ, որոնց գործունեությունը կործանարար էր հայ ժողովրդի համար ու դժբախտաբար շարունակում է նաև այդպես մնալ մեր օրերում: Նա անարգանքի սյունին է գամում այդօրինակ մարդկանց: Ըստ էության՝ այդ տեսանկյունից նրա խոսքերը պատգամ էին ապագա սերունդների համար:

«Ջրուցարան»-ի Բ հատորը նվիրված է հայկական բազմադարյան մշակութային առնչվող հարցերին: Բ. Ուլուբաբյանի կարծիքով՝ հայկական ինքնատիպ մշակույթը դարերի հորձանուտում դարձել էր հայկական ինքնության պահպանության հիմնական կռվանն ու զենքը: Տարբեր դարերի հոգևոր-մշակութային գործիչների գործունեությանն անդրադառնալով՝ մեծ գիտնականը նրանց նույնացնում է հայրենի սահմանների պահապան զինվորների հետ: 1991 թ. «Ջրուցարան»-ը լրամշակվեց և մեկ գրքով վերահրատարակվեց՝ դրանով իսկ գիտական տրամաբանությամբ մի ամբողջական շրջայի մեջ ներառելով հայոց հինգհազարամյա կենսագրությունը:

¹² Մ ո վ ս ե ս Խ ո Ր Ե ն ա ց ի. Պատմություն Հայոց, աշխարհաբար թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Բագրատ Ուլուբաբյանի, Երևան, 2003, էջ 31:

1979 թ. Երևանում տպագրված «Ոսկե շրթա» գրքում հետազոտողը քննության նյութ է դարձրել հայ-ռուսական քաղաքական ու մշակութային կապերը:

1991–1994 թթ. Ղարաբաղյան առաջին պատերազմում կերտված փայլուն հաղթանակը և երկրորդ հայկական հանրապետության ծնունդը առավել մեծացրին ինչպես հայ հանրության, այնպես էլ օտարազգի մարդկանց հետաքրքրությունը Արցախի հազարամյակների պատմության առանձին դրվագների, մասնավորապես, վերջին զարգացումների նկատմամբ: Եվ այսպես, մեկը մյուսի հետևից հրատարակվեցին «Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը» (1994), «Արցախյան գոյապայքարը» (1994), «Արցախի գոյապայքարի տարեգրությունը» (1997), «Հայոց արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը» (1998) ստվարածավալ ու արժեքավոր մենագրությունները: Նա, առաջնորդվելով միջնադարյան հայ ժամանակագիրների լավագույն ավանդույթներով, «Արցախի գոյապայքարի տարեգրություն» աշխատության մեջ հանգամանորեն ներկայացրել է 1988 թ. փետրվարի 20-ից մինչև 1994 թ. կեսերը ընկած ժամանակաշրջանի Արցախյան հերոսամարտի մանրամասները: Վերոնշյալ ուսումնասիրությունը սոսկ փաստերի չոր հանրագումար չէ: Այդ ամենին ուղեկցում են հեղինակի խոսքն ու կուռ մեկնաբանությունները, ինչը նյութն ավելի ընկալելի է դարձնում: Շրջանառության մեջ դնելով ոչ միայն հայ, այլ նաև ռուս, ադրբեջանցի ու այլ ազգերի պետական, քաղաքական, կուսակցական գործիչների ելույթները, հարցազրույցները, մի շարք երկրների, միջազգային կառույցների պաշտոնական որոշումներն ու հայտարարությունները՝ աշխատությունն ավելի անաչառ ու շահեկան է դարձնում: Այն հայոց նորագույն շրջանի պատմությունը հետազոտողների համար լավագույն սկզբնաղբյուր է համարվում:

Բ. Ուլուբաբյանի մահվանից հետո հայրենի Ստեփանակերտում հրատարակվել են «Ժամանակի քննությունը» (2006) և «Փորձության օրերի խորհուրդը» (2010) ստվարածավալ ժողովածուները, որտեղ ներկայացված են անվանի գիտնականի անտիպ գործերը: Փաստական հարուստ նյութի օգտագործմամբ վաստակաշատ գիտնականը, վերլուծելով խորհրդային տարիներին ԼՂԻՄ-ի հասարակական, քաղաքական կյանքը, բացահայտել է հայկական երկրամասում Ադրբեջանի իշխանությունների իրականացրած քաղաքականության բուն նպատակը: Նրա կարծիքով՝ հակահայ այդ քաղաքականությանը դիմակայելու նպատակով խորհրդային 70 տարիների ընթացքում արցախահայությունը մի քանի անգամ ընդվզել է Բաքվի ու նրանց աջակցող կենտրոնական իշխանությունների դեմ: Եվ դա է պատճառը, որ 1988 թ. արցախահայությունը նորից ոտքի ելավ՝ պաշտպանելու իր տարրական իրավունքները: Նմանօրինակ հարցեր նա քննարկել է նաև մամուլում տպված հոդվածներում ու հեռուստատեսություններում: Եթե այս ամենին գումարենք նրա թարգմանչական գործունեությունը՝ Բ. Ուլուբաբյանի գիտնականի, գրողի կերպարն ավելի ամբողջական կդառնա: Այդ ասպարեզում նա ոչ միայն հաջողեց, այլ նաև նոր հնարավորություններ ստեղծեց հայոց պատմության հիմնահարցերի ուսումնասիրման ասպարեզում: Պատմաբանը գրաբարից աշխարհաբարի վերածեց ու հրատարակեց Ղազար Փարպեցու «Թուղթ Վահան Մամիկոնյանին» (1982), Եսայի Հասան-Ջալալյանի «Համառոտ պատմություն Աղվանից երկրի» (1997) գործերը, Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» (2000):

Կարևոր են նաև այլազգի հայտնի գրողների գեղարվեստական ստեղծագործությունների թարգմանությունները, մասնավորապես, Չինգիզ Այթմատովի «Մնաս բարով Գյուլսարի» վիպակը (1968) և Յուրի Բոնդարևի «Տաք ձյուն» (1972) վեպերը: Նվիրյալ հայագետի շատ աշխատանքներ թարգմանվել և առանձին գրքերով լույս են տեսել ռուսերեն, լիտվերեն, չեխերեն, մոլդովերեն:

Բ. Ուլուբաբյանը մեծ ուշադրություն է դարձրել նաև երիտասարդ գիտական կադրերի պատրաստման գործին: Նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ պաշտպանվել են ինչպես թեկնածուական, այնպես էլ դոկտորական ատենախոսություններ:

Արցախահայության նորագույն շրջանի ազատագրական պայքարի հոգևոր առաջնորդի, նրա գոյապայքարի տարեգրի վաստակը բարձր է գնահատվել Արցախի Հանրապետության ժողովրդի և իշխանությունների կողմից: 2001 թ. հայկական երկրորդ հանրապետության կառավարության կողմից նա պարգևատրվեց «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով: Նրա անունով էր կոչվում հայրենի Ստեփանակերտի փողոցներից մեկը:

Բ. Ուլուբաբյանը հայրենասեր է այս բառի ամենաազնիվ նշանակությամբ: Նա ուրախակից է ազգի ուրախություններին, ցավակից է նրա ցավերին: «Ես երջանիկ եմ, որ հայ եմ ծնվել, հայավարի եմ ապրել ու աշխարհին հրաժեշտ պիտի տամ որպես հայ ազգի որդի»¹³, – գրել է մեծ հայորդին:

ՎԱՀՐԱՄ ԲԱԼԱՅԱՆ

Պ. գ. դ. պրոֆ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Արցախի պատմամշակութային ժառանգության և արդի քաղաքական զարգացումների պրոբլեմային գիտական խմբի ղեկավար: Գիտական հեղափոխությունները՝ Հայոց արևելից նահանգների՝ Արցախի և Ուրդիքի քաղաքական, տնտեսական, մշակութային, Հայաստան-Ադվանք հարաբերությունների պատմության հիմնահարցեր: Հեղինակ է 22 գրքի և 128 հոդվածի: ORCID: 0009-0002-5696-9411. vahrambalayan@mail.ru

¹³ Ն. Ալեքսանյան. Նվիրյալը. – «Եղիցի լույս» (Ստեփանակերտ), 2015, № 6–7, էջ 4:

ՎԼԱԴԻՄԻՐ ՂԱԶԱԽԵՑՅԱՆ
(Ծննդյան 100-ամյակի առթիվ)*

Հայաստանի նորագույն շրջանի պատմագիտության զարգացումը սերտորեն առնչվում է այն գիտնականների գործունեությանը, ովքեր, աշխատելով գաղափարական տարբեր համակարգերում, կարողացան պահպանել գիտական ազնվությունն ու աղբյուրագիտական խստապահանջությունը: Այդպիսի բացառիկ կերպարներից է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Նահապետի Ղազախեցյանը, որի գիտական ժառանգությունը ձևավորվել է խորհրդային պատմագիտության գաղափարական սահմանափակումների և Հայաստանի անկախության շրջանի մեթոդաբանական ազատությունների պայմաններում:



Վ. Ղազախեցյանը ծնվել է 1926 թ. փետրվարի 11-ին Ղարաքիլիսա (ներկայիս՝ Վանաձոր) քաղաքում, ուր նաև ստացել է միջնակարգ կրթությունը: 1944–1949 թթ. սովորել և գերազանցությամբ ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը: 1949–1952 թթ. ուսումնառությունն անցել է ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի ասպիրանտուրայում՝ ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանի ղեկավարությամբ: 1953 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1976 թ.՝ դոկտորական ատենախոսություն: Պրոֆեսորի կոչում է ստացել 1982 թ.: Նա իր աշխատանքային գործունեությունը սկսել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում (1953–1959 թթ.)՝ որպես դասախոս: Այնուհետև՝ 1959 թ., աշխատանքի է անցել ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում՝ սկզբում որպես ավագ գիտաշխատող, հետո, 30 տարի շարունակ (1980–2010 թթ.), որպես Նորագույն պատմության բաժնի վարիչ: Ապա մինչև իր մահը (2015 թ. մարտի 3) զբաղեցրել է գլխավոր գիտաշխատողի պաշտոնը: Այս ընթացքում նա համատեղությամբ դասավանդել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտում, Երևանի «Քվանտ» վարժարանում: Վ. Ղազախեցյանը երկար տարիներ հանդիսացել է Պատմության ինստիտուտի սկզբնական կուսակցական կազմակերպության քարտուղարը:

Վ. Ղազախեցյանի գիտական գործունեության արդյունքներն ամփոփված են երկու տասնյակ գրքերում և շուրջ 100 հոդվածներում: Ընդգծենք, որ գիտնականը մեծ ներդրում ունի ակադեմիական «Հայոց պատմություն» նոր բազմա-

* Ներկայացվել է 17. III. 2026 թ., ընդունվել է տպագրության 20. III. 2026 թ.:

հատորյակի չորրորդ հատորի (1918–1991 թթ.) ստեղծման գործում, որի առաջին գրքի խմբագիրը և տեքստերի զգալի մասի հեղինակն է: Ղազախեցյանի գիտական գործունեությանը բնորոշ էր խստապահանջությունը և բարեխիղճ մոտեցումը պատմական ճշմարտությանը: Հրաշալի տիրապետելով արխիվային նյութին՝ նրա գիտական գործերն աչքի են ընկնում աղբյուրագիտական տվյալների հարստությամբ, դրանցից բխող ընդհանրացումներով ու եզրակացություններով:

Վ. Ղազախեցյանի՝ իբրև պատմաբան գիտնականի ձևավորումը տեղի է ունեցել խորհրդային ակադեմիական միջավայրի պայմաններում: Իր բազմաթիվ սերնդակիցների նման նա ևս ստիպված է եղել գիտական աշխատանքով զբաղվել գաղափարական սահմանափակումների պայմաններում, երբ պատմությունը դիտարկվում էր որպես սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացման օրինաչափությունների արտահայտություն, իսկ դասակարգային պայքարը ներկայացվում էր որպես պատմական գործընթացների շարժիչ ուժ: Նա պատմում էր, որ նախապես ցանկացել է զբաղվել XIX դարասկզբի պատմության խնդիրներով, իսկ խորհրդային շրջանի պատմության մեջ մասնագիտացել է հանգամանքների բերումով. միևնույն տարում ՀԽՍՀ ԳԱ ասպիրանտուրա ընդունված ընկերը՝ Համբարձում Նիկոլայի Կարապետյանը (հետագայում՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր), ով բռնադատված հարազատներ ունենալու պատճառով կոմկուսի փաստաթղթերին հասանելիություն չէր կարող ունենալ, առաջարկել է, որ ինքը մասնագիտանա XIX դարի, իսկ Ղազախեցյանը՝ խորհրդային տարիների պատմության խնդիրներում (հետստալինյան շրջանում Հ. Կարապետյանը փոխում է հետազոտական թեմատիկան՝ սկսելով զբաղվել խորհրդային տարիների պատմությամբ):

Շեշտենք, որ Վ. Ղազախեցյանի գիտական ժառանգությունն առանձնահատուկ է ոչ միայն թեմատիկ ընդգրկման ընդարձակությամբ, այլև իր մեթոդաբանական էվոլյուցիայով: Նրա աշխատությունները հնարավորություն են տալիս դիտարկել հայ պատմագիտության անցումը կառուցվածքային-դասակարգային մեկնաբանություններից դեպի բազմագործոն, աղբյուրագիտական քննադատության վրա հիմնված վերլուծության:

Վաստակաշատ պատմաբանի թեկնածուական և դոկտորական ատենախոսությունները նվիրված էին Խորհրդային Հայաստանի գյուղացիության պատմությանը: Խորհրդային պատմագրության մեջ գյուղացիությունը հաճախ ներկայացվում էր որպես կոլեկտիվացման և սոցիալիստական վերափոխումների օբյեկտ: Վ. Ղազախեցյանն իր մենագրություններում¹ փորձեց ընդլայնել խնդրի ուսումնասիրման շրջանակը՝ կիրառելով սոցիալական պատմության տարրեր: Այդ իրողությունն առավել առարկայական դրսևորում ստացավ Հայաստանի անկախության շրջանում հրատարակված «Հողային հարցը և

¹ Վ. Ն. Ղազախեցյան. Սովետական Հայաստանը մեծ բեկման տարում, Երևան, 1962, 184 էջ, ն ույ ն ի՝ Էջմիածնի շրջանի № 3 սովխոզը (1921–1962), Երևան, 1964, 141 էջ, ն ույ ն ի՝ Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը 1920–1929 թթ., Երևան, 1975, 412 էջ, ն ույ ն ի՝ Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության պատմությունը (1929–1937), Երևան, 1978, 324 էջ:

հողային բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում» գրքում (2005, 95 էջ): Իր աշխատություններում նա համադրել է արխիվային վավերագրերը, վիճակագրական տվյալները, մամուլը, իրավական ակտերը՝ գյուղացիությանը ներկայացնելով որպես պատմական գործընթացների ակտիվ մասնակից: Խորհրդային պատմագիտության համատեքստում այս մոտեցումը կարելի է դիտարկել որպես ներքին մեթոդաբանական զարգացում: Վ. Ղազախեցյանի աշխատություններում փաստաթղթային հենքը դառնում էր գիտական վերլուծության հիմնական բաղադրիչ: Այս առումով նա պատկանում է այն պատմաբանների թվին, ովքեր, չխախտելով գաղափարական սահմանները, ընդլայնում էին փաստական դաշտը և հիմքեր պատրաստում խորհրդային շրջանի պատմության ապագա վերախմաստավորման համար:

1991 թ. Հայաստանի անկախության վերականգնումից հետո նոր իրավիճակ ստեղծվեց պատմագիտության համար: Արխիվների փակ ֆոնդերի բացումը և գաղափարական վերահսկողության ավարտը պատմաբաններին հնարավորություն տվեցին վերանայել խորհրդային շրջանի պատմությունը: Վ. Ղազախեցյանն այս գործընթացում հանդես եկավ որպես «արխիվային շրջադարձի» հայաստանյան առաջամարտիկներից մեկը: Նա առաջիններից էր, որ նվիրվեց Հայաստանի առաջին Հանրապետության և խորհրդային առաջին տասնամյակների պատմությանն առնչվող նախկինում փակ արխիվային ֆոնդերի փաստաթղթերը ուսումնասիրելուն և գիտական շրջանառության մեջ դնելուն, ինչը մեծապես ավելացրեց պատմական իրականության ճշմարտացի լուսաբանման մակարդակը, ինչպես նաև հանրության հետաքրքրությունը պատմագիտական ուսումնասիրությունների նկատմամբ:

Նորահայտ փաստաթղթերի օգտագործմամբ 2006 թ. նրա հրատարակած «Հայաստանը 1920–1940 թթ.» հիմնարար մենագրությունը (563 էջ) առանձնանում է ոչ միայն ընդգրկված նյութի ծավալով, այլև մեթոդաբանական նոր որակով: Պատմագրական առումով աշխատությունն անցումային կամուրջ է խորհրդային և անկախության շրջանի հայկական պատմագիտության փուլերի միջև ու ամփոփում է նախորդ շրջանի փաստական կուտակումները՝ միաժամանակ դրանք վերախմաստավորելով գիտական նոր հայեցակարգերի լույսի ներքո: Այստեղ հեղինակը կիրառում է բազմագործոն վերլուծություն՝ բացահայտելով քաղաքական իշխանության, տնտեսական վերափոխումների, սոցիալական կառուցվածքի և մշակութային քաղաքականության փոխազդեցությունները: Նա քաղաքական բռնաճնշումները ներկայացնում է ոչ միայն որպես վարչական-քաղաքական գործընթաց, այլև որպես հասարակական ու հոգեբանական երևույթ: Խորհրդային Հայաստանում իրականացված քաղաքական բռնաճնշումներին Վ. Ղազախեցյանը մինչ այդ անդրադարձել էր առանձին գրքույկով² զարգացնելով տոտալիտարիզմի սոցիալական պատմության մոտեցումը: Այստեղ նա կարևորում է անհատի և պետության հարաբերությունների խնդիրը՝ ընդլայնելով բռնաճնշումների պատմության ուսումնասիրման դաշտը: Նորահայտ փաստաթղթերի լայն օգտագործումը գիտ-

² Վ. Ն. Ղազախեցյան. 1937-ը Հայաստանում, Երևան, 2004, 75 էջ:

նականին հնարավորություն տվեց վերանայելու խորհրդային պատմագրության մի շարք կարծրատիպեր և առաջարկելու հավասարակշռված, քննադատական գնահատականներ:

Ի շարս այլ հարցերի՝ Վ. Ղազախեցյանը զբաղվել է նաև հայ ազատագրական շարժման ականավոր գործիչ ու տեսաբան Գարեգին Նժդեհի գործունեության ուսումնասիրությամբ³, աշխատություններ գրել Երկրորդ աշխարհամարտի տարիների հայ պարտիզանների մասին⁴: Այս ուսումնասիրություններում նա համադրում է ռազմական, քաղաքական ու կենսագրական պատմության մեթոդները: Կարևոր է, որ հետազոտողը խուսափում է բացառապես հերոսապատումային ներկայացումից՝ փորձելով ցույց տալ անհատների ներքին հակասությունները, կազմակերպչական խնդիրները և գաղափարական բազմազանությունը: Այս մոտեցումը համահունչ է սոցիալական պատմության այն ուղղությանը, որը զարգացավ եվրոպական պատմագիտության մեջ XX դարի երկրորդ կեսին՝ ընդգծելով հասարակական խմբերի ներգրավվածությունը պատմական գործընթացներում: Թեև պատմաբանը չի օգտագործում արևմտյան պատմագիտական տերմինաբանություն, այնուհանդերձ նրա գործերում նկատելի է պատմական երևույթների բազմաշերտ ընկալումը:

Վ. Ղազախեցյանը նկատելի ներդրում ունի նաև հայ անվանի գրողներ Ակսել Բակունցի, Եղիշե Չարենցի, Ավետիք Իսահակյանի կյանքի ու գործունեության անհայտ էջերի լուսաբանման բնագավառում⁵: Նրա հրատարակությունները հարուստ փաստական նյութ են գրականագետների համար:

Հետխորհրդային տարածքում պատմագիտությունը հաճախ անցել է գաղափարական հակադարձումների փուլով՝ խորհրդային ժառանգության կտրուկ ժխտմամբ: Ղազախեցյանի մոտեցումը, սակայն, բնութագրվում է քննադատա-

³ Վ. Ն. Ղազախեցյան. Նժդեհը Չանգեզուրում. 1920 թ. վերջ – 1921 թ. հունիս, Երևան, 2001, 109 էջ, Գարեգին Նժդեհ, Նամականի (1920–1921) / հրատ. պատրաստողներ՝ Վ. Ղազախեցյան, Հ. Գևորգյան, Երևան, 2002, 45 էջ, Չանգեզուրի հերոսամարտը հրամաններում (1921 թ.) / կազմողներ՝ Վ. Ղազախեցյան, Հ. Գևորգյան, Երևան, 2008, 110 էջ:

⁴ Վ. Ն. Ղազախեցյան. Միկոյանի անվան պարտիզանական ջոկատը, Երևան, 1965, 109 էջ, նույնի՝ Հայ պարտիզանները, Երևան, 2004, 157 էջ:

⁵ Ա. Բակունց. Երկեր չորս հատորով, հ. IV / բնագիրը պատրաստեցին և ծանոթագրեցին Ջ. Ավետիսյանը, Ռ. Իշխանյանը, Պ. Հակոբյանը, Վ. Ղազախեցյանը, Ս. Վարդանյանը, Ի. Վարժապետյանը, Երևան, 1984, 663 էջ, Վ. Ն. Ղազախեցյան. Եղիշե Չարենցը Երևանի ուղղիչ տանը. – «Բանբեր Հայաստանի արխիվների», 1990, № 2, էջ 113–126, նույնի՝ Երկու նամակ Ավետիք Իսահակյանին (Հայաստանի Հանրապետության ժամանակ բանաստեղծի հասարակական-քաղաքական գործունեությունից). – «Նորք» (Երևան), 1997, № 2, էջ 105–109, նույնի՝ Եղիշե Չարենցի կյանքի էջերից (1926–1927 թթ. բանտային օրեր). – «Նորք», 1997, № 4, էջ 62–67, նույնի՝ Ակսել Բակունցը նախախորհրդային մամուլում. – «Նորք», 1999, № 2, էջ 3–33, նույնի՝ Ակսել Բակունցի կուսակցականության հարցի շուրջ. – «Բանբեր Հայաստանի արխիվների», 2004, № 1, էջ 60–75 և այլն:

կան, բայց ոչ հրապարակախոսական շեշտադրումներով: Նա ձգտում էր վերականգնել պատմական իրողությունների ամբողջական պատկերը՝ խուսափելով թե՛ արդարացնող, թե՛ միակողմանի դատապարտող դիրքորոշումներից: Այս մոտեցումը, կարծում ենք, սպասելի պետք է լիներ՝ մանավանդ իր հավասարակշիռ և համեմատաբար մեղմ բնավորության պարագայում: Վ. Ղազախեցյանը հատուկ կարևորում էր անհատի ու պետության հարաբերությունների խնդիրը՝ փորձելով հասկանալ, թե ինչպես էր ամբողջատիրական համակարգը ներթափանցում առօրյա կյանք: Այս տեսանկյունից նրա աշխատությունները երկար ժամանակ պահանջված կմնան. դրանք նպաստում են ոչ միայն քաղաքական, այլև սոցիալական հիշողության ձևավորմանը:

Վ. Ղազախեցյանի գործունեության կարևորագույն ուղղությունը սկզբնաղբյուրների հրատարակությունն էր: Գործընկերների հետ նրա հրատարակած «Նախիջևան–Շարուրը 1918–1921 թթ.» և «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն)» փաստաթղթերի ժողովածուները⁶ արժանահավատ աղբյուրներ են Հայաստանի առաջին Հանրապետության պատմության ուսումնասիրման համար: Նա իր առջև խնդիր էր դնում փաստերի բազմակողմանի ներկայացմամբ ընթերցողին հնարավորություն տալ առանց ուղղորդման հանգել սեփական գնահատականի: Խորհրդային Հայաստանում Հ. Յ. Դաշնակցության ընդհատակյա գործունեության և կուսակցության անդամների նկատմամբ իրականացված հալածանքների վերաբերյալ գիտության երախտավորի կազմած փաստաթղթերի ժողովածուներն⁷ առաջին անգամ լույս աշխարհ են հանում պաշտոնական գաղտնի փաստաթղթեր՝ բացառելով քաղաքական կամ անձնական մեկնաբանության աղավաղումները: Փաստաթղթերի ընտրության ու ներկայացման նրա մոտեցումը ներառում էր հետևյալ հիմնական սկզբունքները՝ բնագրերի արժանահավատության, հավաստիության ստուգում, պատմական համատեքստի վերականգնում՝ ընդարձակ ծանոթագրությունների միջոցով, մեկնաբանությունների հարցում հավասարակշռվածություն՝ բացառելով քաղաքական-գաղափարական մոտեցումը:

Վ. Ղազախեցյանը մեծ վաստակ ունի Հայաստանի առաջին Հանրապետության շրջանի գործիչների (Հովհաննես Քաջազունի, Գարեգին Նժդեհ,

⁶ Նախիջևան–Շարուրը 1918–1921 թթ.: Փաստաթղթեր և նյութեր / կազմողներ՝ Ռ. Ա. Գրիգորյան, Ա. Մ. Կիրիմյան, Վ. Ն. Ղազախեցյան, Հ. Մ. Շաթիրյան, Ա. Ս. Վիրաբյան, խմբագիր՝ Վ. Ն. Ղազախեցյան. – «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993, № 1–2, էջ 22–391, Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու / կազմողներ՝ Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան, Վ. Մելիքյան, Ս. Միրզոյան, Ա. Վիրաբյան, խմբագիրներ՝ Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան, Երևան, 2000, 455 էջ:

⁷ Հ. Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու) / պատասխանատու խմբագիր և կազմող՝ Վ. Ն. Ղազախեցյան, Երևան, 1999, 370 էջ, ՀՅ Դաշնակցությունը ԽՍՀՄ Արտակարգ հանձնաժողովի և Պետական քաղաքական վարչության գաղտնիթերցումներում (1920-ական թվականներ): Փաստաթղթերի ժողովածու / կազմող և խմբագիր՝ Վ. Ղազախեցյան, հրատ. պատրաստեց Հ. Սուքիասյանը, Երևան, 2016, 228 էջ:

Աստվածատուր Խաչատրյան, Միքայել Թումանյան, Ա-Դո) անտիպ աշխատանքների տպագրության պատրաստման գործում⁸: Նշյալ աշխատությունները հրատարակվել են ընդարձակ առաջաբաններով ու մանրամասն ծանոթագրություններով՝ ավելացնելով պատմաբանների ունեցած գիտելիքները հայության համար այդ բախտորոշ ժամանակաշրջանի վերաբերյալ:

Հայաստանի անկախացումից հետո Վ. Ղազախեցյանը կարևոր դերակատարություն է ունեցել հանրակրթական դպրոցների՝ Հայոց պատմության դասագրքերի ստեղծման գործում՝ հատկապես ուշադրություն դարձնելով նորագույն պատմության գիտական ու հավասարակշռված ներկայացմանը: Անկախ Հայաստանում նա առաջին է դպրոցական դասագրքերի համար շարադրել Հայաստանի առաջին Հանրապետության և Խորհրդային Հայաստանի առաջին տասնամյակների պատմությունը՝ ներկայացնելով պետականաշինության, քաղաքական և սոցիալ-տնտեսական գործընթացների համակարգված վերլուծություն⁹: Հիմնվելով արխիվային աշխատանքի փորձառության վրա և ընտրելով հիմնարար փաստական նյութեր՝ պատմաբանն ստեղծել է գիտականորեն ճշգրիտ և դյուրընկալելի տեքստեր՝ աշակերտներին և ընթերցող լայն հանրությանը հնարավորություն ընձեռելով պատկերացում կազմել մինչ այդ «տաբու» համարվող բազմաթիվ հիմնախնդիրների վերաբերյալ: Դասագրքերի համար նրա գրած տեքստերը հետագայում որոշ խմբագրումներով մի քանի անգամ վերահրատարակվել են:

Երեք տասնամյակ ղեկավարելով Պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժինը՝ Վ. Ղազախեցյանը մեծ ներդրում է ունեցել պատմաբան մասնագետների պատրաստման բնագավառում: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են բազմաթիվ ատենախոսություններ, երկար տարիներ հանդիսացել է ինստիտուտի գիտական խորհրդի և գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի անդամ: Նա բաժնի ասպիրանտներին և երիտասարդ գործընկերներին փոխանցում էր ոչ միայն գիտելիք, այլև գիտական էթիկա՝

⁸ Յ. Ք ա ջ ա զ ն ու ի. Հայաստանի Հանրապետություն / հրատ. պատրաստող՝ Վ. Ղազախեցյան, Երևան, 1993, 31 էջ, Գ. Ն ժ դ ե հ. Նամականի (1920–1921) / հրատ. պատրաստողներ՝ Վ. Ղազախեցյան, Հ. Գևորգյան, Երևան, 2002, 45 էջ, Ա. Խ ա չ ա տ ը յ ա ն. Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները / կազմողներ և խմբագիրներ՝ Վ. Ղազախեցյան, Ա. Վիրաբյան, Ս. Միրզոյան, Երևան, 2010, 287 էջ, Մ. Կ ա ղ ա յ ա ն. Дипломатическая история Республики Армения 1918–1920 гг. / подготовили к изданию А. Вирабян, В. Казахецян, С. Мирзоян. Ереван, 2012, 473 с.; Ա-Դո (Տ ե ը -Մ ա ը ի ը ո յ ա ն Հ ո վ հ ա ն ն ե ս). Հայության երկունքը / հրատ. պատր.՝ Վ. Ղազախեցյան, Ռ. Գասպարյան, Ռ. Սահակյան, Հ. Սուքիասյան, Երևան, 2019, 765 էջ:

⁹ Հ. Ա. Ա վ ե տ ի ս յ ա ն, Վ. Ն. Ղ ա զ ա խ ե ջ ա ն, Ռ. Հ. Գ ա ս պ ա ը յ ա ն, Ռ. Օ. Ս ա հ ա կ յ ա ն, Հայոց պատմություն. 1900–1939 թթ. (նյութեր 9-րդ դասարանի համար), Երևան, 1993, 272 էջ, Պ. Ա. Չ ո բ ա ն յ ա ն, Վ. Բ. Բ ա ը ի ո ղ ա ը յ ա ն, Ա. Ս. Հ ա մ բ ա ը յ ա ն, Դ. Ա. Մ ո ը ը ա ղ յ ա ն, Ռ. Օ. Ս ա հ ա կ յ ա ն, Հ. Ա. Ա վ ե տ ի ս յ ա ն, Վ. Ն. Ղ ա զ ա խ ե ջ ա ն, Գ. Մ. Գ ե ղ ա մ յ ա ն, Ռ. Լ. Ա զ ի զ բ ե կ յ ա ն, Կ. Ս. Խ ո ղ ա վ ե ը ը յ ա ն. Հայոց պատմություն. դասագիրք միջնակարգ դպրոցի 7–8-րդ դասարանների համար, Երևան, 1994, 463 էջ:

փաստի նկատմամբ պատասխանատվություն և քննադատական մտածողություն: Հայտնի իրողություն է, որ անցումային շրջաններում գիտական դպրոցների շարունակականությունը հաճախ խաթարվել է գաղափարական և ինստիտուցիոնալ փոփոխությունների պատճառով: Վ. Ղազախեցյանի պարագայում կարելի է խոսել սերնդափոխության հաջողված մոդելի մասին, որտեղ պահպանվում է ավանդույթի և նորարարության հավասարակշռությունը:

Վ. Ղազախեցյանի գիտական ժառանգությունը հայկական պատմագիտության ընդհանուր համակարգում զբաղեցնում է միջանկյալ, բայց առանցքային տեղ: Նա հանդես եկավ որպես կամուրջ խորհրդային և անկախության շրջանի պատմագրական ավանդույթների միջև: Վաստակաշատ հայագետի գործունեությունն արտացոլում է XX դարի երկրորդ կեսի և XXI դարասկզբի հայաստանյան պատմագիտության զարգացման հիմնական միտումները: Նրա աշխատանքները նպաստեցին հայ պատմագիտության վերազինմանը՝ փաստաթղթային հիմքի ընդլայնման և գաղափարական կաղապարներից աստիճանական ձերբազատման միջոցով: Անվանի մասնագետը կարողացավ միավորել խորհրդային պատմագիտական դպրոցի խստապահանջությունը և անկախության շրջանի նոր հնարավորությունները:


Վ. Ղազախեցյանը ոչ միայն վաստակաշատ գիտնական էր, այլև մարդկային ու գիտական պարկեշտությունը համատեղող պարզ ու բարի անհատ: Նրա թողած պատկառելի գիտական ժառանգությունը շարունակում է ծառայել հայկական պատմագիտությանը՝ ամուր գիտական հիմք ապահովելով Հայաստանի XX դարի պատմության հետագա ուսումնասիրությունների համար:

ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Պ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար: Գիտական հետաքրքրությունները՝ Հայաստանի XIX–XX դարերի պատմության խնդիրներ: Հեղինակ է 18 գրքի և շուրջ 120 հոդվածի:
ORCID: 0009-0009-3062-2285. hamosukiasyan@gmail.com

ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ
(Ծննդյան 100-ամյակի առթիվ)*

Հայագիտության և հայ արևելագիտության անվիճելի առաջատարներից մեկը՝ ականավոր գիտնական, ակադեմիկոս Գագիկ Խորենի Սարգսյանը, կյանքից հեռացավ անժամանակ. մի մարդ, ով դեռ լեցուն էր գիտական և գիտակազմակերպական գործունեության ոլորտներում խոշոր ծրագրերով, ով վայելում էր հայաստանյան և արտերկրի մասնագետների անվերապահ հարգանքը:



Գ. Սարգսյանը ծնվել է 1926 թ. ապրիլի 6-ին Երևանում՝ անվանի գրականագետ, բ. գ. դ., պրոֆ., ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ Խորեն Սարգսյանի ընտանիքում: Սովորել է Երևանի Ն. Կրուպսկայայի անվան միջնակարգ դպրոցում: Այնուհետև ընդունվել է Լենինգրադի (այժմ՝ Սանկտ-Պետերբուրգ) համալսարանի պատմության ֆակուլտետ, որն ավարտելուց հետո՝ 1951–1954 թթ., եղել է ԽՍՀՄ ԳԱ Լենինգրադի բաժանմունքի ասպիրանտ:

Այստեղ էր, որ Գ. Սարգսյանը ձևավորվեց որպես գիտնական՝ ժամանակի խոշորագույն արևելագետների անմիջական ղեկավարությամբ (Վ. Ստրովե, Ի. Մեչչանինով, Ի. Դյակոնով և այլք), որոնց հետ նրա մշտական շփումները և իր անհատական որակները սկիզբ դրեցին հայաստանյան հայագիտության վերընթաց զարգացմանը: Նա հաղթահարեց մի շարք հին լեզուներ՝ հին հունարեն, լատիներեն, աքքադերեն, որոնք թույլ տվեցին անկաշկանդ մուտք գործել հնագույն և վաղ միջնադարյան Հայաստանի պատմության ոլորտը, ինչն իր ժամանակ հասու էր միայն առանձին հայագետների: Անկասկած, հին և ժամանակակից լեզուների իմացությունն ու մեծ էրուդիցիան այն գրավականներն էին, որոնք Գ. Սարգսյանին իրավամբ դասում են խոշորագույն հայագետներ Ն. Ադոնցի և Հ. Մանանդյանի արժանի հետևորդների շարքում:

Լենինգրադում նա պաշտպանելով թեկնածուականատենախոսությունը [«Հին Հայաստանի քաղաքը» (ռուսերեն), 1954]՝ վերադարձավ Հայաստան և աշխատանքի անցավ Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում: 1967 թ. պաշտպանեց դոկտորականատենախոսություն՝ «Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին» թեմայով (որպես գիրք լույս էր տեսել 1966 թվականին): Այդուհետ նրա գիտական ու գիտակազ-

* Ներկայացվել է 19. III. 2026 թ., ընդունվել է տպագրության 20. III. 2026 թ.:

մակերազական ողջ գործունեությունը ծավալվեց հայաստանյան գիտության կաճառում: Հենց գիտակազմակերպչական մեծ ունակություններն էին, որ նկատվեցին Ակադեմիայի ղեկավարության կողմից: Գ. Սարգսյանն այդ համակարգում վարեց պատասխանատու պաշտոններ. աշխատեց որպես Ակադեմիայի հասարակագիտական բաժանմունքի գիտական քարտուղար, ապա՝ Պատմության ինստիտուտի տնօրենի՝ գիտական հարցերի գծով փոխտնօրեն:

Սակայն Գ. Սարգսյանի գիտական և գիտակազմակերպչական գործունեության բարձրակետը դարձավ 1971 թ., երբ նշանակվեց Ակադեմիայի նորաստեղծ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն: Այնուհետև՝ 1988–1990 թթ., վարեց ԳԱ փոխնախագահի, 1994–1998 թթ.՝ Հասարակագիտական բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնները:

1974 թ. նա ընտրվեց ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, իսկ 1986-ին՝ իսկական անդամ: 1984 թվականից եղել է ԽՍՀՄ արևելագետների միության ՀԽՍՀ մասնաճյուղի նախագահը: 1985 թ. արժանացել է ՀԽՍՀ պետական մրցանակի՝ «Հայ ժողովրդի պատմություն» ութհատորյակի կազմմանը մասնակցելու համար:

Արևելագետ-հայագետ ակադեմիկոսը պատկանում էր այն գիտնականների թվին, որոնց ուսումնասիրությունները չէին սահմանափակվում մասնավոր խնդիրներով: Փայլուն կրթությունը, անձնական որակները, լայն մտահորիզոնը և լայնախոհությունն այն գրավականներն էին, որոնք թույլ տվեցին նրան ժամանակի ընթացքում վերածվելու հայագիտության ոլորտում անվերապահ հեղինակության:

Գ. Սարգսյանի աշխատություններում դասական հայագիտությունը չի սահմանափակվում այս կամ այն դարաշրջանի իրողությունների մեխանիկական վերականգմամբ: Յուրաքանչյուր քննարկվող հիմնախնդիր դիտարկվում էր համաաշխարհային պատմության համաժամանակյա իրողությունների և գործընթացների լայն ետնախորքի վրա, և այդ ամենը՝ տեսական խոր գիտելիքների կիրառմամբ: Նա հեռու էր գավառական նեղ մտայնությունից և գտնում էր, որ հայագիտությունը չի կարող գոյատևել միայն ազգային շրջանակներում: Համոզված և հետևողականորեն իրականացնում էր հայ արևելագիտության ու մասնավորապես հայագիտության միջազգայնացման ծրագիրը: Իսկ դրա համար անհրաժեշտ էին իրենց մասնագիտությանը և արևելյան ու եվրոպական լեզուներին լավ տիրապետող գիտական կադրեր, ովքեր կարող էին հայաստանյան գիտությունը դուրս բերել միջազգային լայն ասպարեզ: Եվ նա այդ ուղղությամբ իրականացրեց հայագետների ու մասնավորապես արևելագետների կադրային բազան ընդլայնելու և որակապես ամրապնդելու հեռահար քաղաքականությունը:

Անվիճելի է Գ. Սարգսյանի ներդրումը հայ արևելագիտության ոլորտում: Նրա և իր համախոհների (Հ. Ինճիկյան, Ն. Հովհաննիսյան, Ն. Հարությունյան, Պ. Մուրադյան) ջանքերով սկսվեց արևելագիտության տարբեր բնագավառների գծով որակյալ մասնագիտական կադրերի պատրաստումը, որի նպատակով ԽՍՀՄ առաջատար գիտական կենտրոններ (Մոսկվա, Լենինգրադ, Թբիլիսի) ուղարկվեցին եվրոպական լեզուների գիտակ տասնյակ երիտասարդներ, ովքեր վերադառնալով՝ Հայաստանում դրեցին դասական արևելագիտության հիմքերը: Գ. Սարգսյանի նպատակը տեղում գիտական ինքնուրույն դպրոցի ստեղծումն էր, որը կապահովեր գիտնականների հաջորդ սերունդների պատրաստումը: Այդ քաղաքականությունը շուտով տվեց իր ցանկալի

արդյունքը. կայացավ հայ արևելագիտական դպրոցը, որը ժամանակի ընթացքում ինքը սկսեց պատրաստել սեփական կադրեր:

Գիտնականի անմիջական նախաձեռնությամբ և ղեկավարությամբ Արևելագիտության ինստիտուտում ստեղծվեցին նախկինում Հայաստանում միայն առանձին անհատներով ներկայացված գիտական մի շարք ուղղություններ՝ սեպագրագիտություն, կովկասագիտություն, արևելյան աղբյուրագիտություն: Դրա վկայությունը նշված ուղղություններին նվիրված պարբերականների («Հին Արևելք», «Կովկաս և Բյուզանդիա», «Արևելյան աղբյուրագիտություն»), ինչպես նաև «Խորհրդեր և ուրարտներ» վերտառությամբ շարքի հրատարակություններն էին:

Հայագիտական ու արևելագիտական կադրերի մասնագիտական գիտելիքների և ունակությունների ամրապնդման նպատակով նրա նախաձեռնությամբ ավելի քան երբևէ ընդլայնվեցին արտերկրի մասնագետների հետ անմիջական շփումները: Արևելագիտության ինստիտուտի աշխատակիցները պարբերաբար մասնակցում էին արտերկրում և Հայաստանում կազմակերպվող միջազգային գիտաժողովներին, հրատարակվում էին արտասահմանյան գիտական պարբերականներում: Գ. Սարգսյանի անձի՝ որպես գիտնականի կարևորագույն առանձնահատկությունը գիտական և գիտակազմակերպչական գործունեության օրգանական համադրումն էր: Նրա գիտահետազոտական գործունեության կարևոր առանձնահատկությունը սկզբունքայնությունն էր: Ակադեմիկոսը վերին աստիճանի սկզբունքային էր գիտական հարցերում և երբեք չէր առաջնորդվում պահի թելադրանքով կամ փոխում իր տեսակետները ճնշման տակ: Նրան բնորոշ էր մշտական պայքարը մակերեսայնության և հատկապես գավառականության դեմ: Գ. Սարգսյանը մարմնավորում էր գիտնական-քաղաքացու կերպարը, ով փորձում էր պահպանել գիտության մաքրությունը և այն զերծ պահել սիրողական մակարդակի ոտնձգություններից:

Ակադեմիկոսն այն եզակի մասնագետներից էր, ում գիտական հետաքրքրությունները զուգահեռաբար ընդգրկում էին հայագիտության գրեթե բոլոր հիմնական ոլորտները, ինչպես նաև ասուրագիտությունը, ընդ որում՝ հավասար համամասնությամբ: Դրանք ներառում էին հայագիտության բազմաթիվ խնդիրներ՝ 1. հինարևելյան քաղաքային համայնք, 2. հելլենիստական դարաշրջանի Միջագետքի սոցիալ-քաղաքական կյանք, 3. ուշբաբելոնյան և հելլենիստական դարաշրջանների սեպագիր տեքստերի հրատարակություն և ուսումնասիրություն, 4. հին Հայաստանի սոցիալ-քաղաքական պատմություն, 5. Մովսես Խորենացու Հայոց պատմության ժամանակագրություն և պատմագիտական առանցքազաղափար, 6. Ուրարտու-Հայաստան և հայ ժողովրդի կազմավորման խնդիրներ:

Գ. Սարգսյանի ուսումնասիրություններին հատուկ էր յուրաքանչյուր պատմական իրադարձության կամ երևույթի հետազոտությունը պատմական լայն ետնախորքի լույսի ներքո: Դրա վառ օրինակը հին Հայաստանի քաղաքների ու քաղաքային մշակույթի ուսումնասիրությունն էր հելլենիստական պոլիսի և Բաբելոնիայի «քաղաքացիական-տաճարային համայնքի» հետ զուգահեռ հետազոտության միջոցով: Հենց շնորհիվ այդպիսի մոտեցման նա պարզեց, որ Հայաստանի քաղաքներն իրենցից ներկայացնում էին հելլենիստական աշխարհին բնորոշ կիսանկախ քաղաքային համայնքներ («Тигранакерт. Из истории древнеармянских городских общин», Москва, 1960): Առաջնորդվելով

Գ. Սարգսյանն իր ուսումնասիրություններում անդրադարձել է նաև Ուրարտու-Հայաստան խնդրին⁴: Այստեղ նա փորձել է հանգամանորեն վերլուծել հայոց ծագումնաբանության ժամանակագրական և աշխարհագրական հիմնախնդիրները, դրան մասնակից էթնիկ խմբերի տեղաշարժերն ու դրանց փոխհարաբերությունները:

Գ. Սարգսյանի գիտական գործունեության անվիճելի լուսապսակը Պատմահայր Մովսես Խորենացուն նվիրված հետազոտություններն են: Այստեղ է, որ լիովի դրսևորվում է նրա ստեղծագործական ողջ ավյունը, լայնախոհությունը, գիտության մեջ գերիշխող կարծրատիպերից հրաժարումը: Խորենացուն նվիրված բազմաթիվ մենագրություններում և հոդվածներում նա մատենագրի Պատմությունն արժևորեց այնպիսի խորությամբ, որ այսօր դժվար է պատկերացնել ավելի ամբողջական մեկնաբանություն: Շնորհիվ Գ. Սարգսյանի՝ Մովսես Խորենացին հառնում է որպես հայ հոգևոր մշակույթի ու հայոց պետականության հենասյուները կերտող իսկական հայրենասեր անձնավորություն, ում անմահ աշխատությունը դաստիարակել է բազմաթիվ սերունդներ ու այդպիսին կմնա նաև հետագայում:

Մովսես Խորենացու Պատմության ուսումնասիրությունը Գ. Սարգսյանը իրականացրեց ամենայն բարեխղճությամբ՝ առաջարկելով այն դիտարկել որպես մեկ միասնական համակարգ, որտեղ թե՛ փաստերը, թե՛ ժամանակագրությունը և թե՛ հեղինակի կողմից մշակված աշխատության առանցքագաղափարը եզակի տեղ ունեին հայ միջնադարյան պատմագրության մեջ: Ասվածը վերաբերում է հատկապես Պատմահոր օգտագործած սկզբնաղբյուրներին և դրանց ընտրությանը: Դրանց շարքում նա առանձնահատուկ նշանակություն տվեց բանավոր աղբյուրներին (առասպելներ, ավանդազրույցներ, երգեր), ինչպես նաև նյութական մշակույթի հուշարձաններին (քաղաքներ, ամրոցներ, տաճարներ, ջրանցքներ), որոնց նկարագրությունը պահպանվել էր նրա երկասիրության մեջ: Կարևոր նշանակություն ունեին նաև լեզվական աղբյուրները՝ հատուկ անունների ստուգաբանությունը, որոնք թույլ տվեցին Գ. Սարգսյանին վերականգնել Խորենացու կողմից ներկայացվող հոգևոր աշխարհը⁵:

Գ. Սարգսյանի ուսումնասիրությունների խորենացիական շարքի կարևոր ներդրումը արևմտյան մասնագիտական շրջանակներում գերիշխող գերքննադատական մոտեցման ժխտումն էր, ըստ որի՝ Պատմահոր աշխատությունը չէր կարող ստեղծվել V դարում, բացի այդ՝ չի կարող հավաստի պատմական սկզբնաղբյուր լինել: Հայագետ-ակադեմիկոսը բազմիցս անդրադարձել է այդ խնդիրներին և հենց հիմնականում նրա շնորհիվ հակախորենացիական դիրքորոշման հեղինակները տեղի տվեցին: Նրա մեկնաբանմամբ՝

⁴ Գ. Սարգսյան. Ուրարտական տերությունը և հայերը, Երևան, 1988, էջ 47–126, նույն ի՝ Նախահայրենիքի, ժողովրդի կազմավորման և Ուրարտուի մասին. – ՊԲՀ, 1990, № 1, էջ 23–40:

⁵ Գ. Սարգսյան. Մովսես Խորենացու Հայոց պատմությունը, Երևան, 1991, նույն ի՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» և սեպագրական աղբյուրները (Հայկի և Հայկյանների առասպելի պատմականության և զարգացման փուլերի խնդիրները). – ՊԲՀ, 1992, № 2–3, էջ 27–50, նույն ի՝ Մովսես Խորենացու նախարարական տոհմերի ցանկը. – ՊԲՀ, 1996, № 1–2, էջ 73–90:

Խորենացու աշխատության արժևորումը հնարավոր է միայն Պատմահոր աշխատանքային լաբորատորիան ընկալելու դեպքում, ինչը Գ. Սարգսյանն ավելի քան համոզիչ վերականգնեց և ամբողջացրեց:

Ի հավելումն իր հիմնարար ուսումնասիրությունների՝ Գ. Սարգսյանը զգալի ավանդ ունի հայագիտության երախտավորների գիտական ժառանգության պահպանման և արժևորման գործում: Նա խմբագրեց ու հրատարակության պատրաստեց Ն. Ադոնցի, Հ. Մանանդյանի, Թ. Ավդալբեգյանի, Ե. Տեր-Մինայանի աշխատությունները:

Հայագիտական հետազոտություններին զուգահեռ Գ. Սարգսյանը զբաղվում էր նաև հելլենիստական դարաշրջանի միջագետքյան սեպագրական տեքստերով: Նրա գրչին են պատկանում այդ տեքստերի գիտական հրատարակությունները և ուսումնասիրությունները⁶:

Վերոգրյալ աշխատությունները մեկ անգամ ևս ցուցադրում են Գ. Սարգսյանի խորագիտակությունը հինարևելյան և հունական քաղաքակրթական իրողություններում:

Գ. Սարգսյանը մահացել է 1998 թ. օգոստոսի 25-ին Մոսկվայում: Երջանկահիշատակ ակադեմիկոսը հեռացավ կյանքից գիտական և գիտակազմակերպչական մեծ ու հեռահար ծրագրերի իրականացման փուլում, սակայն այն, ինչ նա հասցրեց անել հայ արևելագիտության և հայագիտության համար անզնահատելի է: Գ. Սարգսյանի հիշատակը միշտ վառ կմնա նրա հետ անձամբ շփված մասնագետների սրտերում:

ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ

*Պ. Գ. դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի բաժնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ Հին Արևելքի քաղաքակրթությունների պատմություն: Հեղինակ է 10 գրքի և շուրջ 100 հոդվածի:
ORCID: 0000-0003-2475-7115. aramkosyan@yahoo.com*

⁶ New Cuneiform Texts from Uruk of the Seleucid Period in the Staatliche Museen zu Berlin, Staatliche Museen zu Berlin. Forschungen und Berichte. Archäologische Beiträge, 1975, Bd. 16; Bruchstücke von seleukidischen Wirtschaftstexten aus Uruk in den Staatlichen Museen zu Berlin, Altorientalische Forschungen, 1977, 5 և այլն), ինչպես նաև դրանց ուսումնասիրությունը (City Land in Seleucid Babylonia, Ancient Mesopotamia. Moscow, 1969; Greek Personal Names in Uruk and the Graeco-Babyloniaca Problem, Acta Antiqua Acad. Scient. Hungaricae, T. 22. Budapest, 1974, p. 495–501; Греческая ономастика в Уруке и проблема Граeco-Babyloniaca. – «Древний Восток» (Ереван), 2, 1976, с. 181–217; Довольство-išqu в городе древней Вавилонии – аналог полисных раздач. – «Древний Восток», 3, 1978, с. 88–92; Манумиссии в селевкидско-аршакидском Уруке. – «Древний Восток», 5, с. 41–56 և այլն):

ՀՏԴ:947.925 Մելքոնյան

DOI: 10.54503/0135-0536-2026.1-294

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ
(Ծննդյան 65-ամյակի առթիվ)*

Լրացավ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Պատմության ինստիտուտի երկարամյա տնօրեն, «Պատմաբանասիրական հանդես»-ի խմբագրական խորհրդի նախագահ Աշոտ Աղասու Մելքոնյանի ծննդյան 65-ամյակը: Հայագետի վաստակաշատ անունն ուղեկցում է նրան աշխատանքային առաջին իսկ քայլերից, ով իր ճանապարհն անցել է Պատմության ինստիտուտում:



Աշոտ Մելքոնյանը ծնվել է 1961 թ. փետրվարի 16-ին Ախալքալաքում: 1977 թ. ոսկե մեդալով ավարտել է տեղի Դերենիկ Դեմիրճյանի անվան թիվ 4 հայկական միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ: Ուսումնառության տարիներին գերազանց առաջադիմության համար ստացել է Հակոբ Մանանդյանի անվան

կրթաթոշակ: 1982 թ. գերազանցության դիպլոմով ավարտելով բուհը մինչև 1985 թ. եղել է ԵՊՀ-ի հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ: 1989 թ. Ա. Մելքոնյանը պաշտպանել է թեկնածուականատենախոսություն «Արևմտյան Հայաստանի Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դարի առաջին երեսնամյակին» թեմայով՝ ստանալով պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1986 թ. հոկտեմբերից Ա. Մելքոնյանն աշխատանքի է անցել Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում, նախ՝ որպես լաբորանտ, ապա՝ գիտաշխատող, գիտական քարտուղար և գիտական հարցերով փոխտնօրեն: 2002 թ. պաշտպանել է դոկտորականատենախոսություն՝ «Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին» թեմայով: Նույն թվականին ընտրվել է ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն: 2004 թ. ստացել է պրոֆեսորի գիտական կոչում: 2006 թ. ընտրվել է ԳԱԱ թղթակից անդամ, 2014 թ.՝ ԳԱԱ ակադեմիկոս:

Ա. Մելքոնյանի կենսագործունեության ոլորտը լայն է և ընդգրկուն. փայլուն հետազոտող է, հմուտ գիտակազմակերպիչ, մանկավարժ, մեր երկրի հասարակական-քաղաքական կյանքի ակտիվ ու սկզբունքային մասնակից: Եվ այս ամենի համար նախևառաջ պարտական է հայրական՝ մանկավարժ, վաստակավոր ժուռնալիստ Աղասի Հարությունի Մելքոնյանի օջախին:

* Ներկայացվել է 23. II. 2026 թ., ընդունվել է տպագրության 20. III. 2026 թ.:

Որպես հետազոտող ու գիտության կազմակերպիչ Ա. Մելքոնյանն իրավամբ մեծ հեղինակություն է վայելում ինչպես հայրենական և արտերկրի հայագիտական ու հասարակագիտական շրջաններում, այնպես էլ ընթերցող լայն հասարակայնության միջավայրում: Արտակարգ աշխատասիրությունը և գիտական հետաքրքրությունների ընդարձակ շառավիղը՝ Արևմտյան Հայաստանի պատմական ժողովրդագրություն, Հայկական հարց, Հայոց ցեղասպանություն, Ջավախքի պատմություն, հայ-վրացական, հայ-թուրքական հարաբերություններ, Հայաստանի պետականության պատմություն և այլն, նրան հնարավորություն է տվել հեղինակել 20 գիրք և շուրջ 500 գիտական հոդված: Դրանց հրատարակության աշխարհագրական սահմանները շատ լայն են՝ լույս են տեսել ոչ միայն մեզանում, այլև Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, Վրաստանում, Լիբանանում, Եգիպտոսում, Իրանում, Արգենտինայում, Հունգարիայում, Լեհաստանում:

Ա. Մելքոնյանի մենագրական առաջին երախայրիքը 1994 թ. լույս տեսած «Էրզրում. Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը 19-րդ դարի առաջին երեսնամյակին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն)» աշխատությունն է: Ինչպես հայտնի է, թուրքական պատմագիտությունը ազգայնական ու պանթուրքիստական դիրքերից տասնամյակներ շարունակ այն միտքն է զարգացնում, թե պատմական բոլոր ժամանակներում Արևմտյան Հայաստանում կամ, ինչպես իրենք են գրում, Արևելյան Անատոլիայում, չի եղել մի վարչամիավոր, որտեղ հայերը կազմեին բնակչության մեծամասնություն: Հեռուն գնացող մի կեղծիք, որի նպատակն այդ տարածքների նկատմամբ մեր ժողովրդի իրավունքի ժխտումն է: Թուրքերի այս պնդումների մերկացման տեսակետից խիստ արժեքավոր է Արևմտյան Հայաստանի զգալի մասը կազմող Էրզրումի նահանգի պատմաժողովրդագրական խնդիրների ուսումնասիրության ուղղությամբ Ա. Մելքոնյանի տքնաջան աշխատանքի շնորհիվ ստեղծված այս մենագրությունը: Ուսումնասիրություն, որը լույս է սփռում ժողովրդագրական բուռն գործընթացներով անցնող ընկնող մի ժամանակահատվածի՝ XIX դ. առաջին երեսնամյակի պատմական բազմաթիվ անցուդարձերի վրա: «Մելքոնյանի մենագրության հաջողությունը պայմանավորված է եղել երկու էական հանգամանքով, – այս գրքի մասին գրած «Արժեքավոր աշխատություն Կարնո նահանգի մասին» վերնագրով գրախոսականում մասնավորապես նշել է ԳԱԱ թղթակից անդամ Հ. Բարթիկյանը: – Առաջին՝ հեղինակը օգտագործել և շրջանառության մեջ է դրել բազմաբնույթ և հարուստ աղբյուրագիտական նյութ: Օգտագործվել են ինչպես Երևանի (հատկապես Մատենադարանի մի շարք ֆոնդեր), այնպես էլ Մոսկվայի և Թբիլիսիի տարբեր արխիվների նյութեր: ... Երկրորդ՝ մանրակրկիտ համատեղվել է հավաքված հարուստ նյութը և Կարնո նահանգի 16 գավառների ժողովրդագրության, նրանցում ազատագրական շարժումների, սոցիալ-տնտեսական կյանքի վերաբերյալ ստեղծվել է աշխատությունների մի ինքնատիպ շարք:

Հեղինակի ուշադրության կենտրոնում են այնպիսի կարևոր հիմնախնդիրներ, ինչպիսիք են նահանգի բնակավայրերի տեղագրությունը, ազգաբնակչության թվաքանակը, ազգային կազմը, էթնիկական տեղաշարժերը, դրանց սոցիալ-քաղաքական նախադրյալների բացահայտումը և այլն» («Հայաստանի Հանրապետություն», 22. XI. 1994):

Իր այս աշխատությամբ, փաստորեն, Ա. Մելքոնյանը հայ պատմագիտության ասպարեզում միանգամայն նոր բնագավառի՝ Հայաստանի շրջանների ժողովրդագրական հետազոտության սկիզբ է դրել՝ խիստ կարևորելով դրա հրատապությունն ու քաղաքական նշանակությունը:

Այս մենագրության տրամաբանական շարունակությունը կարելի է համարել Ա. Մելքոնյանի «Ջավախք. պատմության ուրվագծեր» (1999) և «Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին» (2003) աշխատությունները, քանզի ջավախահայերի մեծ մասի նախնիները տեղափոխվել էին Էրզրումի նահանգից 1829-1830 թթ.: Նշված գրքերից երկրորդը ներառում է հետազոտական իմաստով տարողունակ ժամանակաշրջան ու նվիրված է հայ պատմագրության մեջ սակավ ուսումնասիրված, բայց մեծ կարևորություն ներկայացնող բնագավառներից մեկին՝ Հյուսիսային Հայաստանի պատմական ժողովրդագրության խնդիրներին, որոնք, պայմանավորված ներկա ժամանակաշրջանում տարածաշրջանային նոր զարգացումներով, զուտ գիտական նշանակությունից բացի, ձեռք են բերում նաև քաղաքական, գործնական, այժմեական հնչեղություն ու կարող են ուղեցույց լինել քաղաքագետների, ռազմավարությամբ զբաղվող մեր պետական, քաղաքական գործիչների համար: Մենագրությունն ընդգրկում է Ջավախքի քաղաքական պատմության, պատմական աշխարհագրության, Հայ առաքելական եկեղեցու պատմության, երկրագիտության ու քարտեզագրության, մշակութաբանության, վիճակագրության բնագավառները իրենց ամբողջության մեջ: Արդեն իսկ նկատվել է, որ չնայած գրքի վերնագրին՝ այն ավելի ընդգրկում է և շոշափում է բազմաթիվ ու բազմապիսի հարցեր: Գիտական շրջանառության մեջ դնելով արխիվային հարուստ նյութեր՝ այն խիստ օգտակար է ինչպես Ջավախքի, այնպես էլ հարևան Ախալցխայի, Ասպինձայի, Ծալկայի և այլ գավառների, առհասարակ հայ-վրացական հարաբերությունների ու ողջ տարածաշրջանի պատմության ուսումնասիրության համար: «Ա. Մելքոնյանն ընտրել է թեմայի բազմաքանակ ու բազմաբնույթ, հաճախ խճողված հարցերը քննարկելու և լուսաբանելու միանգամայն ճիշտ ու արդարացված եղանակ՝ պատմաքննական մեթոդը, – նկատել է ակադեմիկոս Վ. Բարխուդարյանը՝ գրախոսելով սույն գիրքը: – Շնորհիվ լեզուների և առաջին հերթին վրացերենի իմացության, բոլոր անհրաժեշտ սկզբնաղբյուրների ու գրականության նյութը ներառելու և պատմագիտական հիմնավոր պատրաստվածության՝ Աշոտ Մելքոնյանը ստեղծել է բարձրարժեք ու մնայուն աշխատություն: Տեսական լավ պատրաստվածությունը, պատմական աշխարհագրության և ժողովրդագրության՝ հեղինակի մասնագիտական իմացությունները մեծապես նպաստել են հաջողված մենագրություն ստեղծելուն: Հաջողության գրավականներից մեկն էլ եղել է այն, որ հետազոտողը պատմական երկարատև ժամանակաշրջանում իրեն զբաղեցնող հիմնահարցերը քննարկել է Անդրկովկասի և Ռուսաստանի պատմության ընդհանուր հետնախորքի վրա: Մենագրության ընդհանրացումներն ու եզրահանգումները փաստագրված են ու համոզիչ» (ՊԲՀ, 2003, № 2, էջ 297):

Ա. Մելքոնյանի գրչին է պատկանում նաև «Նյութեր Ախալցխայի և Ախալքալաքի դարոցների պատմությունից (19-րդ դար – 20-րդ դարի սկիզբ)» (2005) աշխատությունը, որտեղ եկեղեցու թեմական կառույցների ընդհանուր հենքի վրա նկարագրվում են հիշյալ երկու գավառների հոգևոր-կրթական կյանքը, 1829 թ.

Ռուսաստանին միացումից հետո Սամցխե-Ջավախքում հայ քաղաքական ու հոգևոր-կրթական կյանքի աշխուժացման միտումները, երբ ծխական, մասնավոր ու պետական հարյուրավոր դպրոցներ էին բացվել տարածաշրջանում: Աշխատությունը համալրված է արխիվային բազմաթիվ փաստաթղթերով՝ որպես առարկայական հետազոտվող նյութ:

Ի մի բերելով իր բազում հոդվածները՝ Ա. Մեքոնյանը 2011 թ. հրապարակ է հանել «Հայաստանի պատմության և ժողովրդագրության հիմնահարցեր (հոդվածների ժողովածու)» գիրքը: Այդ նույն թվականին ծննդյան 50-ամյակի առթիվ լրյս է տեսնում նրա կենսամատենագիտությունը: Գրքույկն ամփոփում է անվանի պատմաբանի 25-ամյա գիտահասարակական գործունեության ամբողջական պատկերը՝ անչափ խոսուն լուսանկարների մի խմբաքանակով:

Բացի մենագրական աշխատանքներից՝ Ա. Մեքոնյանը նաև կոլեկտիվ աշխատանքի ջատագով է. այսպես՝ Վ. Ղազախեցյանի հետ կազմել ու խմբագրել է «Հայաստանը պետական գաղտնի փաստաթղթերում (1922–1929 թթ.)» (2008) ժողովածուն, Է. Լ. Դանիելյանի համահեղինակությամբ գրել է «Հայոց պատմություն. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» (2008) գիրքը:

Հարկ է առանձնահատուկ նշել պատմաբանի հայրդու քաղաքացիական հստակ ու սթափ դիրքորոշումը մեր ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող հարցերի, մասնավորապես Հայկական հարցին, Հայոց ցեղասպանությանը, հայ-թուրքական արձանագրություններին, հայ-վրացական փոխհարաբերություններին վերաբերող հիմնախնդիրների հրապարակային քննարկումների ժամանակ: Այդ հարցերին են նվիրված «Հայոց պատմության դասերն ու պատգամները» (2013) և «Յեղասպանություն և հայրենագրկում. ճանաչումից հատուցում (հոդվածներ և հարցազրույցներ)» (2015) ժողովածուները: Դրանցից երկրորդում տեղ են գտել նաև Հայոց ցեղասպանության վերաբերյալ տարբեր լեզուներով հեղինակի ինչպես հրատարակված, այնպես էլ անտիպ հոդվածները, զեկուցումները և հարցազրույցները: Հայոց Մեծ եղեռնի հետևանքների վերացման, այն է՝ հատուցման հասնելու տեսանկյունից կարևորվում է միջազգային օրենսդրության մեջ հայրենագրկում հասկացության ձևակերպման անհրաժեշտությունը, այդ հարցում համահայկական և պետական հայեցակարգի ստեղծումը (ժողովածուի մասին պ. գ. թ. Արմեն Կարապետյանի գրախոսականը տե՛ս ՊԲՀ, 2016, № 1, էջ 224–227):

Ակադեմիկոս Ա. Մեքոնյանի գիտակազմակերպչական գործունեության մասին մեր խոսքը թերի կլինի, եթե հատուկ չնշվի նրա տքնաջան աշխատանքը «Հայոց պատմություն» ակադեմիական նոր բազմահատորյակի հրատարակության պատրաստման ու տպագրության հարցում: Նկատենք, որ նրա տնօրինության օրոք Պատմության ինստիտուտում հիմնվեց «Մեսրոպ արք. Աշճյան» գիտական կենտրոնը, արքեպիսկոպոսի անունը կրող մատենաշարը, սկսեցին պարբերաբար հրատարակվել «Հայոց պատմության հարցեր» տարեկան ժողովածուները, ստեղծվեց ինստիտուտի գիտահրատարակչական-տպագրական բազան: Գնահատելի է Ա. Մեքոնյանի նախաձեռնությունը Մուղնիի դպրոցն անվանի հոգևորական Մեսրոպ արք. Աշճյանի անվամբ կոչելու և Սրբազանի արձանը տեղադրելու գործում:

Ա. Մելքոնյանն իր գիտական եզրակացություններն ու մտորումները տարիներ ի վեր ներկայացրել է ու այսօր էլ շարունակում է այդ արդյունավետ շփումը լսարանների հետ տարբեր գիտաժողովներում, նաև դասախոսություններով ու ելույթներով հանդես է գալիս ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում՝ իր ծանրակշիռ խոսքն ուղղելով սփյուռքահայ և օտարազգի ունկնդիրներին՝ Ուկրաինայում, Գերմանիայում, Վրաստանում, ԱՄՆ-ում, Թուրքիայում, Ռուսաստանում, Ֆրանսիայում, Եգիպտոսում, Շվեդիայում, Իրանում, Իսպանիայում, Լիբանանում, Հունաստանում, Շվեյցարիայում, Հունգարիայում, Սիրիայում, Մեծ Բրիտանիայում, Կիպրոսում, Մոլդովայում:

Գիտավարչական աշխատանքին զուգահեռ ակադեմիկոսը վարում է նաև մանկավարժական եռանդուն գործունեություն, դասավանդում է Երևանի պետական համալսարանում, ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոնում, 2004–2006 թթ. զբաղեցրել է Երևանի Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանի հասարակական գիտությունների ամբիոնի վարիչի պաշտոնը: Դասախոսական աշխատանքը նպաստել է, որ նա ստեղծի նաև բուհական ու դպրոցական մի շարք դասագրքեր: Բազմիցս եղել է տարբեր բուհերի (Երևանի պետական, Ի. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական, Արցախի պետական համալսարաններ, Գյումրիի մանկավարժական ինստիտուտ) պատմության ֆակուլտետների պետական քննական հանձնաժողովների նախագահ:

Ա. Մելքոնյանը գլխավորում է Պատմության ինստիտուտի գիտական ու նույն ինստիտուտում գործող 004 Հայոց պատմության մասնագիտական խորհուրդները, ԵՊՀ խորհրդի, Պատմության ֆակուլտետի, Արևելագիտության ինստիտուտի, Երևան քաղաքի պատմության թանգարանի գիտական խորհուրդների անդամ է: Գիտական մի քանի հանդեսների ու տարեգրքի [«Հայոց պատմության հարցեր» (խմբագիր), «Լրաբեր հասարակական գիտությունների», «Պատմաբանասիրական հանդեսի», «Բանբեր հայագիտության», «Բանբեր Հայաստանի արխիվների», «Կանթեղ», «Վէմ», «Պատմություն և մշակույթ», «Պատմություն և հասարակագիտություն», «Вестник гуманитарных и юридических наук (Ставрополь, Северокавказский федеральный университет)» և այլն] խմբագրական խորհուրդների անդամ է:

Ա. Մելքոնյանը գրասենյակային գիտնական չէ. հետազոտական, գիտավարչական ու մանկավարժական աշխատանքով տարիներ շարունակ (սկսած 1997 թ.) ծանրաբեռնված լինելով՝ մեկնել է Արևմտյան Հայաստան, շրջել մեր Հայրենիքի տարածքներով, ապա աշխատություններով ու տեսաֆիլմերով իր տպավորությունները կիսել հայրենակիցների հետ: Այդ ուխտագնացությունների արդյունք է «Կարոտի Էրգիր» (2006) ֆիլմը: 2007 թ. օգոստոսի 10-ին՝ հայ ժողովրդի համար բախտորոշ Սևրի դաշնագրի ստորագրման օրը, նա բարձրացել է Արարատ լեռան գագաթը և դրա հիման վրա ստեղծել «Արարատ. Հայոց անմահության խորհուրդը» գիտահանրամատչելի աշխատությունն ու պատմավավերագրական համանուն ֆիլմը (2008)՝ նվիրված հայ նոր գրականության հիմնադիր, մեծ լուսավորիչ Իսախանուր Աբովյանի ծննդյան 200-ամյակին (1809 թ.) և Դորպատի համալսարանի պրոֆ. Ֆրիդրիխ Պարրոտի հետ Ի. Աբովյանի Արարատի գագաթը բարձրանալու 180-ամյակին (1829 թ.): Գրքի և ֆիլմի պատմափաստագրական, պատմաճանաչողական, գաղափարադաստիարակչական, ազգային-

հայրենասիրական կողմնորոշիչների մասին բովանդակալից գրախոսությամբ հանդես է եկել պ. գ. թ. Քնարիկ Ավագյանը (տե՛ս «Լրաբեր հասարակական գիտությունների», 2009, № 1, էջ 252-257):

Ա. Մելքոնյանը բեղմնավոր գործունեություն է ծավալել իբրև ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն: Նրա շնորհիվ սոցիալ-տնտեսական աննպաստ պայմաններում հնարավոր եղավ պահպանել ինստիտուտի գիտական ներուժը, ստեղծել աշխատանքային բարենպաստ միջավայր: Զգալի է նաև հոբելյարի ներդրումը գիտական երիտասարդ կադրերի պատրաստման ասպարեզում: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է 21 թեկնածուական ատենախոսություն, որոնք նվիրված են եղել Հայաստանի պատմական ժողովրդագրության, ցեղասպանության և այլ թեմաներին: Նա եղել է մի շարք ատենախոսությունների ընդդիմախոս: Իսմբագրել է բազմաթիվ գիտական աշխատություններ:

Ա. Մելքոնյանի ղեկավարության տարիներին ինստիտուտն արձանագրել է լուրջ ձեռքբերումներ. ակտիվացրել գործակցությունն ինչպես Սփյուռքի մեր հայրենակիցների, այնպես էլ արտասահմանյան գիտական շրջանակների հետ:

Օրինակելի է գիտությունը հասարակական-քաղաքական գործունեությանը շաղկապելու նրա մեծ հմտությունը: Ա. Մելքոնյանը մշտապես մտահոգված է մեր երկրի հոգսերով, իրականացրել և իրականացնում է հասարակական-քաղաքական արդյունավետ գործունեություն:

Աշխարհով մեկ սփռված հայությունը քաջածանոթ է հայ-թուրքական հարաբերությունների և նախաստորագրված արձանագրությունների վերաբերյալ Ա. Մելքոնյանի դիրքորոշմանը: Քաղաքացիական արիության ու սեփական հավատամքին անդավաճան մնալու վառ օրինակ է ՀՀ Ազգային ժողովում «Նախաստորագրված արձանագրությունները և Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացը» թեմայով 2009 թ. հոկտեմբերի 1-ին խորհրդարանական լուսններին նրա համարձակ ելույթը:

2010 թ. ՀՀ պաշտպանության նախարարին կից հասարակական խորհրդի նախաձեռնած «Պատմության և մշակույթի էջեր» ծրագրի շրջանակներում հանրապետության այլ գիտնականների, մտավորականների հետ մեր հոբելյարը հայրենասիրական դասախոսություններ է կարդացել Հայոց բանակում՝ նպաստելով ինչպես զինվորների ռազմահայրենասիրական ոգու, այնպես էլ պատմաճանաչողական կարողությունների բարձրացմանը:

Անվանի պատմաբանն իր գիտավարչական, մանկավարժական ու հասարակական ակտիվ գործունեության համար արժանացել է մի շարք մրցանակների ու պարգևների: Այսպես՝ նրա «Էրզրում» մենագրությունը և Էրզրումի նահանգի գավառների պատմությանը նվիրված շուրջ 30 հոդվածներն արժանացել են «Հայաստան» համահայկական հիմնադրամի կազմակերպած «Երիտասարդ գիտնական-94» մրցույթի գլխավոր մրցանակին, իսկ «Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին» աշխատությունը՝ «Գուրգեն Մելիքյանի Քաջաթաղի բազմազավակ ընտանիքների» հիմնադրամի դրամաշնորհին և Թեքեյան մշակութային միության «Հայկաշեն Ուզունյան» մրցանակին (2004 թ.): Նա պարգևատրվել է Հայաստանի և Արցախի հանրապետությունների կառավարական բարձր պարգևներով: Այսպես՝ Երևանի բժշկական համալսարանի «Ու-

կե» (2005թ.), «Ֆրիտյոֆ Նանսեն» (2010թ.), ԵՊՀ-ի և «Մանկավարժական Համալսարան» ոսկե (2011 թ.), ՀՀ ՊՆ «Գարեգին Նժդեհ» (2011 թ.) մեդալներով: Պատմագիտության բնագավառում ձեռք բերած ակնառու հաջողությունների համար Ա. Մեքոնյանը 2003 թ. պարգևատրվել է «Մովսես Խորենացի», իսկ 2005 թ. Հայոց ցեղասպանության 90-ամյա տարելիցի միջոցառումներին ակտիվորեն մասնակցելու համար՝ ՀՀ վարչապետի մեդալներով, նաև «ԼՂՀ ազգային-ազատագրական պայքարի 25-ամյակի առթիվ» հուշամեդալով (2013 թ.), «Անդրանիկ Օզանյան» (2013 թ.), «Արգիշտի Առաջին» (2014 թ.), «Վաչագան Բարեպաշտ» (2018 թ.) մեդալներով:

Ակադեմիկոս Ա. Մեքոնյանին՝ ներքին ազատություն ունեցող, համարձակ, կամեցող մարդուն, մաղթում ենք երկար տարիների կյանք ու բազմաթիվ աշխատություններ՝ ի մարմնավորումն իր գիտական անսպառ մտահղացումների և երիտասարդական ավյունի:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Իմբագրության կողմից

Հանդեսի խմբագրական խորհրդի հետ ի սրտե շնորհավորում ենք անվանի գիտնականին, նրան մաղթում քաջառողջություն և գիտական ասպարեզում նորանոր ձեռքբերումներ:

ՌՌԻԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ
(Ծննդյան 70-րդ տարեդարձի և գիտամանկավարժական
գործունեության 45-ամյակի առթիվ)*

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, հասարակական գործիչ Ռուբեն Արամի Սաֆրաստյանը 70 տարեկան է:



Վաստակաշատ գիտնականն արժանի տեղ է զբաղեցնում հայաստանյան արևելագիտական դպրոցի ճանաչված անունների շարքում ոչ միայն իբրև այդ դպրոցի ավանդույթի շարունակող, այլև Հայաստանում արևելագիտության, մասնավորապես թուրքագիտության զարգացման գործում ունեցած իր անուրանալի ներդրման համար: Լեզվագիտական ու պատմագիտական խոր գիտելիքները և բարձր պատրաստվածությունը, հետազոտական ու վերլուծական անվիճելի կարողությունները թույլ են տվել նրան հայ արևելագիտական դպրոցը պատվով

ներկայացնել արտերկրի գիտակրթական տարբեր շրջանակներում: Ռ. Սաֆրաստյանն անցել է գիտական-ստեղծագործական բովանդակալից ուղի, որը շաղկապված է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական հարուստ գործունեությանը:

Ռուբեն Սաֆրաստյանը ծնվել է 1955 թ. հոկտեմբերի 5-ին Երևան քաղաքում՝ հայտնի թուրքագետ-արևելագետ և քաղաքական գործիչ Արամ Սաֆրաստյանի ընտանիքում: Շարունակելով ընտանեկան ավանդույթը՝ նա ևս ընտրում է արևելագետի մասնագիտությունը: 1977 թ. ավարտում է Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության բաժինը, այնուհետև՝ 1980 թ.՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի ասպիրանտուրան: 1981 թ. աշխատանքի է անցնում Գիտությունների ակադեմիայի համակարգում նախ՝ որպես Արևելագիտության ինստիտուտի կրտսեր, ապա՝ ավագ, առաջատար գիտաշխատող: 1998 թվականից ղեկավարել է ինստիտուտի Թուրքիայի բաժինը: 2006–2020 թթ. եղել է Արևելագիտության ինստիտուտի տնօրեն. այժմ ինստիտուտի տնօրենի խորհրդականն է:

Գիտական գործունեությանը զուգահեռ Ռ. Սաֆրաստյանը 1988–1991 թթ. աշխատել է նաև որպես Գիտությունների ակադեմիայի Սփյուռքի և Հայոց ցեղասպանության ուսումնասիրման գիտական կենտրոնի փոխտնօրեն:

* Ներկայացվել է 04. III. 2026 թ., ընդունվել է տպագրության 20. III. 2026 թ.:

1983 թ. Ռ. Սաֆրաստյանը դարձել է պատմական գիտությունների թեկնածու, 2009-ին՝ պատմական գիտությունների դոկտոր: Գիտամանկավարժական արդյունավետ գործունեության համար 2007 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում: 2010 թ. անվանի արևելագետն ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 2014 թ.՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

Ավելի քան չորս տասնամյակ է, ինչ Ռ. Սաֆրաստյանն ակտիվ գիտամանկավարժական գործունեություն է ծավալում Երևանի բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ Երևանի պետական համալսարանում, Հայաստանի ամերիկյան համալսարանում, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում, Ռուս-հայկական համալսարանում, ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում, Գեղարվեստաթատերական ինստիտուտում, «Հրաչյա Աճառյան» համալսարանում: 2015–2020 թթ. ղեկավարել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը: Նրա հմուտ ղեկավարության ներքո բազմաթիվ երիտասարդներ ստացել են գիտական աստիճաններ և ներկայումս կարևոր դիրքեր են զբաղեցնում հայրենի գիտության տարբեր ոլորտներում:

Ռ. Սաֆրաստյանն այսօր էլ շարունակում է մանկավարժական-դասախոսական ակտիվ գործունեությունը՝ թուրքագիտության, ցեղասպանագիտության, Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության վերաբերյալ մասնագիտական հարուստ գիտելիքներն ու փորձը փոխանցելով երիտասարդ սերնդին:

Գիտնական-արևելագետ Ռ. Սաֆրաստյանին բնորոշ է ինքնազարգացման, ինքնակատարելագործման մղումը: Դրա շնորհիվ է, որ 1999–2002 թթ. նա հաջորդաբար հաղթող է ճանաչվում Հումբոլդտի (Գերմանիա), ապա Ֆուլբրայթի անվան (ԱՄՆ), այնուհետև Կենտրոնական եվրոպական համալսարանի (Հունգարիա) միջազգային գիտական մրցույթներում և մեկական տարի տևողությամբ հաջորդաբար գիտահետազոտական աշխատանք կատարում նախ Բոխում քաղաքի համալսարանում, ապա՝ Կալիֆոռնիայի Բըրքլի համալսարանում, այնուհետև Բուդապեշտի համալսարանի քաղաքականության ուսումնասիրման կենտրոնում և ամբողջացնում հայ-թուրքական հարաբերությունների, Օսմանյան կայսրության ու հանրապետական Թուրքիայի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները: Նրա արտերկրյա գիտական գործուղումների շարքն ընդգրկում է երկու տասնյակից ավելի երկրներ:

Ծանրաբեռնված գիտամանկավարժական ու վարչական աշխատանքով՝ Ռ. Սաֆրաստյանը հիմնադրել և խմբագրել է գիտական մի շարք պարբերականներ՝ «Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», «Ժամանակակից Եվրասիա», նաև, Վարշավայի համալսարանի ներկայացուցիչների հետ, պատմության, իրավունքի, քաղաքագիտության հարցերի ուսումնասիրմանը նվիրված «Հայ-լեհական տարեգիրքը»: Նրա նախաձեռնությամբ և խմբագրությամբ լույս է տեսել «Արևելագիտությունը Հայաստանում» գիտական մատենաշարը:

Բացի այդ, Ռ. Սաֆրաստյանը նաև Հայաստանում և արտերկրում հրատարակվող մի շարք հեղինակավոր գիտական պարբերականների խմբագրական խորհուրդների, ինչպես նաև գիտական կենտրոնների խորհուրդների անդամ է:

Ռ. Սաֆրաստյանի գիտական հետաքրքրությունների ոլորտում են Թուրքիայի նոր ու նորագույն պատմության, արտաքին քաղաքականության, աշխարհաքաղաքականության, ինչպես նաև Հայոց ցեղասպանության հիմնահարցերը: Նա հեղինակ է ավելի քան երկու հարյուր հրատարակումների, որոնք լույս են տեսել ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, պորտուգալերեն, թուրքերեն և այլ լեզուներով: Համահեղինակ է բուհական և դպրոցական դասագրքերի:

Վաստակաշատ թուրքագետի՝ տասնամյակների տքնաջան գիտական պրատումների համապարփակ արդյունքն է «Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876–1920 թթ.)» մենագրությունը (2009), որը լույս է ընծայվել նաև անգլերեն ու ֆրանսերեն: 2025 թ. Մոսկվայում լույս տեսավ այդ մենագրության վերամշակված հրատարակությունը՝ ռուսերեն: Աշխատությունը հաջողված փորձ է հայեցակարգային մակարդակով պարզաբանելու Օսմանյան կայսրության պատմության վերաբերյալ գիտաքաղաքական կարևորություն ունեցող բազմաթիվ հիմնահարցեր, մասնավորապես այդ տերության կառավարող շրջանակներում թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդների ցեղասպանության ծրագրի ծագումնաբանության բարդ ու հակասական խնդիրը: Աշխատությունն ուշագրավ է իր կառուցվածքով, պատմական նյութի քննական համակողմանի վերլուծությամբ, շարադրանքի ոճով: Այն ծանրակշիռ ներդրում է Հայկական հարցի ու Հայոց ցեղասպանության վերաբերյալ հայեցակարգային մոտեցումների ձևավորման ուղղությամբ:

Ռ. Սաֆրաստյանի գիտական կարևոր աշխատություններից է նաև «Մուսթաֆա Քեմալ. պայքար Հայաստանի Հանրապետության դեմ (1919–1921 թթ.)» գիրքը (2019): Ռ. Սաֆրաստյանի գիտական աշխատությունները լայն արձագանք են գտել ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում:

Ռ. Սաֆրաստյանն ունի նաև պետական կառավարման բարձրագույն մարմիններում միջազգայնագետ-վերլուծաբանի, ինչպես նաև դիվանագիտական աշխատանքի փորձառություն. 1991–1992 թթ. եղել է Հայաստանի Գերագույն խորհրդի միջազգային հարաբերությունների գծով ավագ փորձագետ, 1992–1996 թթ.՝ ՀՀ նախագահի աշխատակազմի վերլուծական բաժնի վարիչի տեղակալ: 1996–1997 թթ. կատարել է դիվանագիտական աշխատանք. Գերմանիայում եղել է ՀՀ դեսպանատան խորհրդական: Մասնակցել է մի շարք կարևոր բանակցային գործընթացների: Աշխարհաքաղաքական հարափոփոխ իրադարձությունների դարաշրջանում խիստ կարևորվում է ճշգրիտ վերլուծությունների ու գնահատականի անհրաժեշտությունը, ըստ այդմ՝ դասախոսություններով պարբերաբար հանդես է գալիս ՀՀ ԱԳ նախարարության դիվանագիտական դպրոցի ունկնդիրների առջև:

Ռ. Սաֆրաստյանը 2009–2018 թթ. և 2025 թվականից ՀՀ Հանրային խորհրդի անդամ է: Որպես փորձագետ ակտիվորեն արձագանքում է միջազգային հարաբերություններին և աշխարհաքաղաքական գործընթացներին՝ հաճախակի հանդես գալով վերլուծություններով ինչպես հայաստանյան, այնպես էլ արտերկրի ՉԼՄ-ում:

Գիտահասարակական բեղուն գործունեության համար Ռ. Սաֆրաստյանը պարգևատրվել է «Մովսես Խորենացի» (2008 թ.) և Պաշտպանության նախարարության «Գարեգին Նժդեհ» (2010 թ.) մեդալներով, ՀՀ Ազգային ժողովի պատվոգրով: 2021 թ. արժանացել է Պաշտպանության նախարարության պատվոգրի՝ «Արցախի Հանրապետությունում ծավալված պատերազմական գործողությունների ընթացքում Պաշտպանության նախարարությանը ցուցաբերած աջակցության համար»: Ֆրանսիական “Le dictionnaire biographique: Arméniens d’hier et d’aujourd’hui” հրատարակությունը 2021 թ. նրան ընդգրկել է պատմության ականավոր 3200 հայերի ցանկի մեջ:

Բազմաշնորհ գիտնական, խորաթափանց հետազոտող, գիտամանկավարժական ու պետական-վարչական աշխատանքի տարիների ահռելի փորձառություն ունեցող ակադեմիկոս Ռ. Սաֆրաստյանին մաղթում ենք արևշատություն, կյանքի երկար տարիներ, անձնական հաջողություններ և ստեղծագործական նորանոր ձեռքբերումներ:

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

ԱԼԵՔՍԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ
(Ծննդյան 70-ամյակի առթիվ)*

Մեր ժամանակի ճանաչված պատմաբաններից մեկը՝ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի երկարամյա աշխատակից, Քրիստոնյա Արևելքի բաժնի վարիչ, պ. գ. դ. Ալեքսան Հակոբի Հակոբյանը, դարձել է 70 տարեկան:



Ծնվել է 1955 թ. հոկտեմբերի 11-ին՝ Երևանում՝ ինժեներ-կոնստրուկտորի և հաշվապահի ընտանիքում: 1962–1972 թթ. սովորել է թիվ 46 և 144 միջնակարգ դպրոցներում՝ 7 և 3 տարի: 1972–1973 թթ. աշխատել է Երևանի «Հայգորգ» ֆիրմայում՝ որպես օժանդակ բանվոր: 1973–1978 թթ. ուսանել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում և ստացել ավարտական կարմիր դիպլոմ՝ «Հայ ժողովրդի պատմություն» մասնագիտացմամբ: Նրա դիպլոմա-

լին աշխատանքը, որը ղեկավարել էր հետագայում ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Բաբկեն Հարությունյանը (1941–2013)՝ նվիրված էր Բ. հ. 62 թ. Հռանդեայի հայ-հռոմեական պայմանագրին: Ի դեպ, ուսանողական տարիներին մեր հորեղբայրը «Ղարաբաղ» կոմիտեի ապագա անդամ, անկախ Հայաստանի մայրաքաղաքի առաջին քաղաքապետ Համբարձում Գալստյանի (1955–1994) հետ հրատարակել է հումորային բազմամյա պատի թերթ՝ «Ուտենի»:

1978 թ. հունիս-սեպտեմբեր ամիսներին Ա. Հակոբյանը հետբուհական ճամբարային զինվորական ծառայություն է անցել Սովետաշենի (ներկայիս՝ Նուբարաշեն) գնդում և ստացել կրտսեր սպայական կոչում: 1978 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին աշխատել է Հայաստանի ազգագրության նորաստեղծ թանգարանում (Սարդարապատ)՝ որպես գիտաշխատող: Իսկ նոյեմբերից մինչև 1981 թ. դեկտեմբեր ուսանել է ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի (ներկայիս՝ Սանկտ Պետերբուրգ) բաժանմունքի ասպիրանտուրայում ու ավարտել այն «Աղբյուրագիտություն և պատմագրություն» մասնագիտացմամբ: Այստեղ նրա երկրորդ ղեկավարն է դարձել անվանի հայագետ-բյուզանդագետ, պ. գ. դ. Կարեն Յուզբաշյանը (1927–2009):

1982–1990 թթ. Ա. Հակոբյանն աշխատել է ՀԽՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտում՝ որպես Կովկասագիտության և բյուզանդագիտության բաժնի ավագ

* Ներկայացվել է 13. III. 2026 թ., ընդունվել է տպագրության 20. III. 2026 թ.:

լաբորանտ, ապա՝ կրտսեր գիտաշխատող, գիտաշխատող և ավագ գիտաշխատող (այդ բաժինը, որը 1990-ականներին վերանվանվեց Քրիստոնյա Արևելքի բաժին, ստեղծել և ղեկավարում էր մեր հոբեյարի երրորդ ուսուցիչը՝ ճանաչված հայագետ-կովկասագետ, պ. գ. դ. Պարույր Մուրադյանը): 1985 թ. հունվարին նա Երևանում՝ Պատմության ինստիտուտում, պաշտպանել է «Աղուանք» և «աղուաններ» եզրույթները հունա-լատինական և հայկական աղբյուրներում (սեմանտիկ վերլուծություն)» (ռուսերեն) գիտական թեզը և ստացել պատմական գիտությունների թեկնածուի աստիճան: Պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը՝ «Բուն Աղուանքի և Հայոց Արևելից կողմանց իշխանատոհմերը և արքայատոհմերը Թ-ԺԳ դարերում (պատմա-աղբյուրագիտական քննություն)» թեմայով, 2014 թ. սեպտեմբերին հաջողությամբ պաշտպանել է իր հարազատ Արևելագիտության ինստիտուտում:

1988–1990 թթ. Արցախյան համազգային շարժման տարիներին Ա. Հակոբյանը դարձել էր նրա ղեկավարներից մեկը՝ որպես «Ղարաբաղ» կոմիտեի անդամ: Իբրև այդպիսին՝ 1988-ի դեկտեմբերից մինչև 1989-ի ապրիլի վերջ խորհրդային կենտրոնական իշխանությունների կողմից բանտարկվեց Սովետաշենի և Մոսկվայի («Մատրոսսկայա տիշինա») բանտերում: Ազատվելուց հետո մասնակցել է նաև մարտական գործողությունների՝ Քյարքիի (Տիգրանաշեն) օպերացիային, Գետաշենի ենթաշրջանի պաշտպանության կազմակերպմանը և այլն: 1990 թ. սեպտեմբերին համազգային շարժման մյուս առաջնորդների հետ ընտրվել է ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր: Եղել է ՀՀ Ազգային ժողովի I և II գումարումների (1995 և 1999 թթ.) պատգամավոր: Խորհրդարանում եղել է Անկախ պետականության հաստատման և ազգային քաղաքականության հարցերի, ապա՝ Պաշտպանության, ներքին գործերի և ազգային անվտանգության մշտական հանձնաժողովների անդամ: 1990–1991 թթ., համատեղությամբ աշխատել է ՀՀ կառավարությանն առընթեր փախստականների պետական կոմիտեի նախագահ, ապա, կարճ ժամանակով՝ ՀՀ նորընտիր նախագահի խորհրդական: 1993-ի դեկտեմբերի սկզբից մինչև 2004 թ. վերջ համատեղությամբ աշխատել է նաև Արցախում որպես ԼՂՀ նորաստեղծ Քաշաթաղի շրջանի վարչակազմի հիմնադիր-ղեկավար:

2005 թ. հունվարից մեր հոբեյարը կրկին աշխատում է Արևելագիտության ինստիտուտի Քրիստոնյա Արևելքի բաժնում՝ սկզբում որպես ավագ գիտաշխատող, փետրվարից՝ վարիչ: Անցած երկու տասնամյակների ընթացքում նա դարձել է հայագիտության տվյալ բնագավառի ճանաչված մասնագետներից մեկը: Ընդամին՝ կատարել է «Մատենագիրք Հայոց» մատենաշարի Գ-Ե հատորների գլխավոր խմբագրի պարտականությունները, խմբագրել նաև շուրջ երեք տասնյակ գիտական մենագրություններ և ժողովածուներ, այդ թվում՝ հրատարակելով իր լուսահոգի ավագ գործընկերների (Վարագ Առաքելյան, Կարեն Յուզբաշյան, Հովհաննես Կարապոյան, Հայրապետ Մարգարյան, Սեդրակ Բարխուդարյան և այլն) ձեռագիր մնացած գործերը: Մասնակցել է մեկ տասնյակից ավելի հանրապետական ու միջազգային գիտաժողովների կազմակերպմանը: Ղեկավարել է թեկնածուական ատենախոսություն պաշտպանած երեք ասպիրանտների:

2012–2016 թթ. համատեղության կարգով դասավանդել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի կովկասագիտության հոսքի մագիստրատուրայում:

Ա. Հակոբյանը հրատարակել է շուրջ հարյուր հիսուն գիտական հոդվածներ և մենագրական աշխատանքներ՝ այդ թվում՝ 1987 թվականին՝ «Ալբանիա-Ադուանքը հունա-լատինական և հայկական աղբյուրներում»՝ ռուսերեն (2022-ին լույս տեսավ դրա երկրորդ՝ լրամշակված հրատարակությունը), 2009-ին՝ «Պատմա-աշխարհագրական և վիճակագրական հետազոտություններ (Արցախ և Ուտիք)» (Վիեննայի Մխիթարյանների «Ազգային գրադարան» մատենաշարի թիվ 241), 2020-ին՝ «Արքայատոհմերն ու իշխանատոհմերը Բուն Ադուանքում և Հայոց Արևելից կողմանքում անտիկից մինչև ԺԳ դար (պատմա-աղբյուրագիտական քննություն)» («Ուտենի» հայագիտական մատենաշարի թիվ 2) մենագրությունները: Նա մասնակցել է մոտ մեկ տասնյակ կոլեկտիվ մենագրությունների առանձին բաժինների պատրաստմանը: Հրատարակել է նաև մոտ երեք տասնյակ հայ մատենագրական երկերի գիտաքննական բնագրեր: Դրանց թվում են. Հովհան Մամիկոնեանի «Պատմություն Տարանոյ», Անանուն Կաղանկատուացու «Պատմություն յաղագս յարուցման ազգաց բարբարոսաց», Ղևոնդ Վարդապետի «Պատմաբանություն», Փիլոն Տիրակացու «Ժամանակագրություն», Անանուն մատենագիրների՝ «Վաչագանի վեպ», «684 թուականի պատմություն», «Աշխարհացոյց» երկերը, Մաշտոց Եղիվարդեցու կորած համարվող «Պատմություն»-ը, «Կանոնագիրք Հայոց»-ի բազմաթիվ կանոնախմբեր, վաղ միջնադարի կարևորագույն վավերագրեր «Ձորանամակ»-ը և «Գահնամակ»-ը, թղթագրական ժանրի մի քանի, այդ թվում՝ նորահայտ նմուշներ և այլն:

Հեղինակի գիտական հոդվածները և հայ մատենագիրների գիտաքննական բնագրերը հրատարակվել են Հայաստանի և արտերկրի մի շարք պարբերականներում, ժողովածուներում, մի քանի տոնագրերում, «Մատենագիրք Հայոց» մատենաշարում: Տիրապետելով եվրոպական լեզուների (լատիներեն, հին հունարեն, ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, ռուսերեն)՝ Ա. Հակոբյանը մասնակցել է մի շարք միջազգային գիտաժողովների Երևանում, Մոսկվայում (1981, 2008, 2015, 2018, 2022–2025), Սանկտ Պետերբուրգում (1983, 1996, 2001, 2018), Թբիլիսիում (1987), Քեմբրիջում (2005), Ստեփանակերտում (2002–2022), Փարիզում (2008, 2009), Աշգաբադում (2007, 2013), Մայնի Ֆրանկֆուրտում (2016):

Արժե նշել նաև, որ մեր հոբելյարն ունի պետական պարգևներ՝ «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշան և «Մխիթար Գոշ» մեդալ, պարգևատրվել է նաև Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի «Ջալալեան բարեպաշտ իշխանի» շքանշանով և ՀՀ ԳԱԱ նախագահության պատվոգրերով:

Ա. Հակոբյանը ամուսնացած է, ունի 4 երեխա և 9 թոռ:

Գիտական գործունեության 45 տարիների ընթացքում Ալեքսան Հակոբյանի համար ամենից հարազատը եղել է Բուն Աղվանքի պատմության և մշակույթի՝ յուրահատուկ պլեմեականություն ունեցող թեմատիկան: Սկսած իր թեկնածուական և դոկտորական ատենախոսություններից մինչև հրատարակված երկու հիմնարար գրքերն ու բազմաթիվ հոդվածները նա մեզանում և արտերկրում հետևողականորեն փաստարկում ու խորացնում է XX դարի երկրորդ կեսի հայագետ-

աղվանագետների (Հակոբ Անասյան, Ասատուր Մնացականյան, Բագրատ Ուլուբաբյան, Շավարշ Սմբատյան, Բաբկեն Հարությունյան) այն կարևորագույն պարզաբանումը, որ Կուր գետի ի սկզբանե (այսինքն՝ հայ ժողովրդի կազմավորումից՝ էթնոհամախմբումից ի վեր) հայկական աջափնյակը «Աղուանք» է կոչվել միմիայն 428 թվականից հետո, երբ Հայաստանի Արշակունյաց թագավորությունը վերջնականապես կործանած ու այն մարզպանություն վարչամիավորի վերածած Սասանյան Իրանը նրա արևելյան Արցախ և Ուտիք նահանգները մտցրեց հարևան Առան-Աղուանք մարզպանության մեջ: Նախ և առաջ այս իրողությունն են անտեսում ու նենգափոխում ադրբեջանցի պատմակեղծարարները, և պատահական չէ, որ «բունիաթովչինա» կոչված այդ հակազիտական միտումի դեմ են շարունակում ուղղվել Ա. Հակոբյանի նորանոր աշխատանքները:

Երկրորդ հարազատ թեմատիկան հայ մատենագրության հետազոտությունն է ու քննական նոր բնագրերի կազմումն ու հրատարակումը, ապա և՛ արժևորումը: Առանձին հոդվածներով, դասական բնագրերի գիտական առաջաբաններով, հանգամանալից ծանոթագրություններով, ձեռագրական ընթերցումների սպառիչ տողատակերով պարզաբանվել ու ճշգրտվել են վաղ միջնադարի բազմաթիվ պատմաքաղաքական, պատմամշակութային, ժամանակագրական հարցեր. մի շարք դասական բնագրեր էլ թարգմանվել են աշխարհաբար և ռուսերեն: Ի դեպ, նշում են, որ հեղինակի՝ գիտնականին բնորոշ ճշգրտությունն ու հետևողականությունը ակնհայտ է եղել նաև, երբ նա աշխատել է քաղաքական և վարչական բնագավառներում, մասնավորապես՝ Քաշաթաղի շրջանի բնակեցման 12 տարիներին, որտեղ հոգևոր-հումանիտար գործոնը դրված է եղել կարևորագույն դիրքում:

Ա. Հակոբյանի հաջորդ հարազատ թեմատիկան Հայաստանի և հատկապես Արցախ-Ուտիքի ու Սյունիքի վիմագրության, տեղանվանաբանության և պատմական աշխարհագրության հետազոտությունն է (այդ առումով՝ VII դ. «Աշխարհացոյց»-ի հրատարակումը ևս պատահական չէ): Ընթերցվել են նորահայտ մի շարք վիմագրեր, կազմվել են քարտեզներ, կատարվել են բազմաթիվ ստուգաբանական ճշգրտումներ, նահանգների, գավառների սահմանների սրբագրումներ, հին ու նոր աշխարհագրական անունների, ճակատամարտերի և այլ վայրերի համադրումներ (ամենից տպավորիչը, իհարկե, Արտազ գավառում Ավարայրի նշանավոր հերոսամարտի դաշտի վերջնական տեղորոշումն է):

Յուրահատուկ է մեր երկրի հնագույն պատմության, աշխարհագրության և էթնիկ գործընթացների թեմատիկան, որի շրջանակում են հայ էթնոսի կազմավորման ժամանակին ու պատմամշակութային առանձնահատկություններին վերաբերող մի քանի աշխատանքները: Եվ, իհարկե, նշելի են վերջին տարիների մի քանի հոդվածները՝ նվիրված Երևանի հին պատմությանն ու տեղագրությանը: Մասնավորապես, հիշատակելի են 591 թվականին Հայաստանի երկրորդ բաժանումից հետո արդի մայրաքաղաքի կենտրոնով անցնող նոր սահմանի երկու կողմում Սասանյանների և բյուզանդացիների՝ իրար դեմ կառուցած զույգ բերդերին վերաբերվող հետազոտությունները, որոնք կարևորագույն նոր հանգամանքներ են պարզաբանում VII դ. 20-ական թվականներին առաջին «Իշխան Հայոց»

Սմբատ Բագրատունու նստավայրը դարձած Երևանի ձևավորման ու ծավալման հարցերում:

Մեր հոբելյարը՝ համակուրսեցիս, սիրում է կրկնել, որ եթե առողջությունը ների, ապա ևս տասը տարվա ստեղծագործական կյանքը բավարար կլինի՝ ավարտելու իր բացահայտած նոր գաղափարների վերածումը հոդվածների ու գրքերի: Իսկ մենք մաղթում ենք նրան շատ ավելի երկար ու բեղուն աշխատանք և ծառայություն՝ ի շահ իր այնքան սիրելի հայագիտության:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ

Պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի մշակութային մարդաբանության բաժնի գլխավոր գիտաշխատող, «Յեղասպանագիտական հանդեսի» գլխավոր խմբագիր: Գիտական հեղափոխությունները՝ ցեղասպանության հիշողություն, ազգային ինքնություն, պատկերագրություն, ժամանակակից ազգային շարժումներ: Հեղինակ է 7, համահեղինակ 6 գրքերի ու ավելի քան 150 հոդվածի: ORCID: 0000-0002-9187-623X.

Scopus ID: 54892056100. hmarutyam@yahoo.com

ՀՏԴ: 02(479.25)

DOI: 10.54503/0135-0536-2026.1-310

ՀՀ ԳԱԱ ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ 90 ՏԱՐԵԿԱՆ Է

2025 թ. տարեվերջին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի 90-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառում, որին մասնակցեցին պետական, դիվանագիտական, գիտակրթական ոլորտների ներկայացուցիչներ:

Մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս *Աշոտ Սաղյանը*: «Գիտությունների ազգային ակադեմիայի հիմնարար գիտական գրադարանը Հայաստանի Հանրապետության ամենախոշոր գիտական, տեղեկատվական կենտրոններից է: Իր հիմնադրման օրվանից այն դարձել է գիտական մտքի պահպանման, փոխանցման և զարգացման հուսալի հենարան՝ պահպանելով եզակի հավաքածուներ, ձևավորելով մասնագիտական հատուկ միջավայր և ժամանակի մարտահրավերներին համընթաց նորացնելով իր գործառույթները: Այստեղ հավաքված են համաշխարհային գիտական ժառանգության ամենաարժեքավոր տպագիր նյութերը: Այսօր, երբ գիտելիքի ստեղծումը և փոխանցումն առավել արագընթաց բնույթ են ստացել, Հիմնարար գիտական գրադարանը հաջողությամբ իրականացնում է նաև թվային մշակույթի զարգացման կարևոր առաքելություն՝ իր էլեկտրոնային հարթակներով և նորարարական ծրագրերով ապահովելով գիտության համար բաց, ժամանակակից և հուսալի միջավայր: Արժևորելով անցած ուղին՝ այսօր կարող ենք միայն շնորհակալություն հայտնել գրադարանի ղեկավարության, աշխատակազմի, գործընկեր կառույցների տարիների նվիրված աշխատանքի համար: Նրանց շնորհիվ գրադարանը պահպանում է իր բարձր կարգավիճակը և շարունակում է մնալ գիտության զարգացման անփոխարինելի հենասյունը», – ասաց ՀՀ ԳԱԱ նախագահը:

Աշոտ Սաղյանը նշեց, որ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի փոփոխություններից հետո ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանը բացառության կարգով շարունակելու է մնալ ԳԱԱ կազմում: «Վստահ եմ, որ գրադարանը նաև առաջիկա տասնամյակներում կշարունակի իր կարևոր առաքելությունը՝ որպես գիտության հզորացման, կրթության զարգացման և հանրային գիտակցության բարձրացման հուսալի գործընկեր», – նշեց նա:

ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանը համախմբում է շուրջ 3.5 միլիոն միավոր գիտական աշխատություն, հազվագյուտ և արժեքավոր տպագրություն, ձեռագրեր և արխիվային փաստաթղթեր, ժամանակակից էլեկտրոնային ռեսուրսներ: «Այստեղ ձևավորվել, հասակ են առել գիտնականների սերունդներ, ծնվել են գաղափարներ, պահպանվել է ազգային և համամարդկային հիշողությունը: Այսօր գրադարանը միայն գրքերի պահոց չէ. այն կենդանի միջավայր է, որտեղ ձգտում ենք համադրել ազգային ավանդույթը և նոր

տեխնոլոգիաները: Մեր առջև կանգնած Է պատասխանատու, բայց ոգեշնչող առաքելություն՝ պահպանել գիտական ժառանգությունը և գրադարանը դարձնել ժամանակակից գիտական հաղորդակցության կենտրոն», – ասաց ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի տնօրեն Մայա Գրիգորյանը:

Միջոցառման ժամանակ ներկայացվեց գրադարանի պատմությունը, ցուցադրվեցին տպագիր ժառանգության բացառիկ նմուշներ: Շնորհավորական ելույթներով հանդես եկան գործընկեր կառույցների ղեկավարներ, գիտակրթական ոլորտի ներկայացուցիչներ:

Աշոտ Սաղյանը ՀՀ ԳԱԱ նախագահության պատվոգրերով պարգևատրեց գրադարանի բազմամյա աշխատանքային գործունեություն ծավալած աշխատակիցներին:

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ», № 1-2, ՓԵՏՐՎԱՐ, 2026

ՀՏԴ: 929:72(479.25)Հասրաթյան

DOI: 10.54503/0135-0536-2026.1-312

ՄՈՒՐԱԴ ՀԱՍՐԱԹՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը, ծանր ու անդառնալի կորուստ կրեցին:



2026 թ. հունվարի 15-ին 91 տարեկան հասակում կյանքից հեռացավ հայ ճարտարապետագիտության պատրիարք, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Արվեստի ինստիտուտի տնօրենի խորհրդական, Ճարտարապետության բաժնի երկարամյա վարիչ, ՀՀ վաստակավոր ճարտարապետ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Մուրադ Մարգարի (Մորուսի) Հասրաթյանը:

Մ. Հասրաթյանը ծնվել է 1935 թ. հունիսի 20-ին Երևանում, անվանի պատմաբան-բանասեր, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ Մարգար Հասրաթյանի և ՀՍՍՀ վաստակավոր ուսուցչուհի Սիրանուշ Մարտիրոսյան-Հասրաթյանի ընտանիքում: 1952-ին ոսկե մեդալով ավարտելով Երևանի Խ. Աբովյանի անվան արական միջնակարգ դպրոցը՝ Մ. Հասրաթյանն ընդունվել է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետի ճարտարապետության բաժանմունք, որը գերազանցությամբ ավարտել է 1958-ին և որպես ավագ ճարտարապետ աշխատանքի անցել նորաբաց «Երևաննախագիծ» ինստիտուտի Գևորգ Թամանյանի արվեստանոցում: Նրա նախագծերով Երևանում կառուցվել են բնակելի և վարչական շենքեր, դպրոցներ, հեղինակել է Լուկաշինի անվան սովետտեսության և Քանաքեռ ՀԷԿ-ի բնակելի ավանների հատակագծերը: Երիտասարդական կառույցների նախագծման համար 1970-ին ճարտարապետն արժանացել է ՀԼԿԵՄ մրցանակի, իսկ տասնամյակներ անց՝ 2007-ին՝ ՀՀ վաստակավոր ճարտարապետի պատվավոր կոչման:

1964 թ. Մ. Հասրաթյանն աշխատանքի է անցել ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող, 1971–1976 թթ. եղել է գիտքարտուղար, 1979–1985 թթ. ղեկավարել է պատմության և մշակույթի հուշարձանների համահավաքի նորաստեղծ բաժինը, իսկ 1988–2025 թթ.՝ ճարտարապետության բաժինը: 2026 թ. Մ. Հասրաթյանը նշանակվել է Արվեստի ինստիտուտի տնօրենի խորհրդական:

1969 թ. Մ. Հասրաթյանը պաշտպանել է ատենախոսություն՝ «Սյունիքի XVII–XVIII դդ. ճարտարապետական համալիրները» թեմայով (առանց գիտական դեկավարի) և ստացել ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճան: 1973 թ. ԽՍՀՄ բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից Հասրաթյանն ստացել է ավագ գիտական աշխատողի կոչում՝ «Ճարտարապետության տեսություն և պատմություն» մասնագիտության գծով:

1993-ին Մ. Հասրաթյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Հայաստանի XV–XIX դ. սկզբի ճարտարապետությունը» թեմայով և ստացել Ռուսաստանի Դաշնության ճարտարապետության դոկտորի գիտական աստիճան: 2003-ին հայագետին շնորհվել է «Ճարտարապետություն» մասնագիտությամբ պրոֆեսորի գիտական կոչում: Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի առաջադրմամբ՝ 2006-ին նա ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: Դրանից մեկ տարի առաջ՝ 2005-ին, Մ. Հասրաթյանի ծննդյան 70-ամյակի կապակցությամբ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ լույս է տեսել «Հայ արվեստաբանների կենսամատենագիտություն» շարքի 2-րդ համարը՝ «Մուրադ Հասրաթյան», որի լրամշակված տարբերակը հրատարակվեց 2015-ին՝ գիտնականի ծննդյան 80-ամյակի կապակցությամբ:

Անվանի գիտնականի շուրջ երկու տասնյակ գրքերը, բազմաթիվ գրքույկներն ու հարյուրավոր գիտական հոդվածները լույս են տեսել Երևանում, Մոսկվայում, Կիևում, Թբիլիսիում, Փարիզում, Լիոնում, Վիեննայում, Լիսաբոնում, Հռոմում, Վենետիկում, Միլանում, Բոլոնիայում, Նեապոլում, Քյոլնում, Հալլեում, Լեյդենում, Չամոստյեում, Բեյրութում, Հալեպում, Տոկիոյում, Մոնրեալում, Անկարայում, Վարշավայում:

Մ. Հասրաթյանը ճարտարապետության այն եզակի պատմաբանն է, որն ուսումնասիրել և հրատարակել է հայ ճարտարապետության ամբողջական պատմությունը՝ սկզբնավորումից մինչև մեր օրերը, ընդ որում՝ ոչ միայն հայերեն, այլև ռուսերեն ու ֆրանսերեն՝ օտարալեզու ընթերցողի համար: 1985-ին Մոսկվայում լույս տեսած «Ակնարկ հայ ճարտարապետության» («Очерк армянской архитектуры», “Essai sur l’architecture arménienne”) մենագրության մեջ նա առաջին անգամ ներկայացրել է հայ ճարտարապետության անցած ուղին իր սկզբնավորումից մինչև XX դարը, իսկ 2010-ին Լիոնում ֆրանսերեն հրատարակվեց «Հայ ճարտարապետության պատմությունը սկզբից մինչև մեր օրերը» աշխատությունը (“Histoire de l’architecture arménienne des origines à nos jours”): «Հայ արվեստի պատմություն» աշխատության համար, որտեղ Մ. Հասրաթյանը հեղինակել է հայ ճարտարապետության պատմությանը նվիրված բաժինները, 2009 թ. արժանացել է ՀՀ պետական մրցանակի: Գիտնականն է հեղինակել «Հայոց պատմություն» քառահատորի՝ հայկական ճարտարապետության վերաբերյալ բոլոր հոդվածները:

Ծանրակշիռ է Մ. Հասրաթյանի ներդրումը հատկապես ուշ միջնադարի՝ (XV–XVIII դդ.) հայկական ճարտարապետության ուսումնասիրության գործում: Մինչև նրա աշխատությունները՝ հայ ճարտարապետության պատմության մեջ հայկա-

կան ուշ միջնադարյան (XVII–XVIII դդ.) հուշարձանները սակավ էին շրջանառվում: Նա առաջինն է լայնամասշտաբ և համակողմանիորեն հետազոտել ու ներկայացրել այդ շրջանի ճարտարապետությունը: 1973-ին ՀՍՍՀ ԳԱ հրատարակչությունը լույս է ընծայել «Սյունիքի XVII–XVIII դարերի ճարտարապետական համալիրները» աշխատությունը, որտեղ հեղինակը, առաջին անգամ ուսումնասիրելով և չափագրելով ուշ միջնադարի ուշագրավ հուշարձանները՝ Տաթևի Մեծ անապատի, Շատին վանքի, Հարանց, Շնհերի Կուսանաց, Բեխի անապատների, Հալիձորի, Մեղրու բերդերի և այլ համալիրներ, բացահայտել է «վանք» և «անապատ» կրոնական հաստատությունների գործառական նշանակությունը ուշ միջնադարում, մեկնաբանել դրանց ճարտարապետական լուծումների տարբերություններն ու առանձնահատկությունները:

Գիտնականի հետաքրքրությունների առանցքում հարատև գտնվել է Արցախի ճարտարապետության ուսումնասիրությունը: 1964-ին նա առաջին անգամ այցելել է Ղարաբաղ՝ դառնալով Արցախի ճարտարապետության առաջին հայ պատմաբանը: Հասրաթյանն է չափագրել Լեռնային Ղարաբաղի տարածքի հայկական միջնադարյան ճարտարապետության արժեքավոր հուշարձանախմբերը՝ Ամարասի վանքը, Դադիվանքը, Խաթրավանքը, Գանձասարի համալիրը, Գոչավանքը, բազմաթիվ եկեղեցիներ, այդ թվում՝ Շուշիի նշանավոր Ղազանչեցոցը: Հետագայում իր ուսումնասիրությունները հրատարակել է տարբեր լեզուներով՝ գրքույկների և հոդվածների տեսքով: Այդ տևական ուսումնասիրությունների հանրագումարը դարձավ «Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը» (1992) մենագրությունը:

Նախիջևանում Մ. Հասրաթյանը չափագրել, վերլուծել ու գիտական շրջանառության մեջ է դրել բազմաթիվ հուշարձաններ, որոնց թվում՝ Աստապատի Կարմիր վանքը, որը դրանից ոչ շատ ժամանակ անց քանդվեց և այժմ իր գոյությունը շարունակում է Մ. Հասրաթյանի չափագրություններում ու նկարագրություններում: Անվանի գիտնականը հետազոտել է նաև Ագուլիսի ճարտարապետական հուշարձանները և ուսումնասիրություն հրատարակել Ջուղայի խաչքարային դպրոցի առանձնահատկությունների մասին:

Մ. Հասրաթյանն իր աշխատություններում կարևորել է հատկապես վաղ միջնադարյան հայկական ճարտարապետության ուսումնասիրությունը, քանի որ հայկական ճարտարապետությունը ձևավորվել է վաղ միջնադարում: Նա տարիների ընթացքում հավաքել է փաստական մեծածավալ նյութ, չափագրել մասնագետների ուշադրությունից դուրս մնացած բազմաթիվ հուշարձաններ, արել դրանց գծագրերը և լուսանկարները:

2000-ին Մոսկվայում լույս է տեսել Մ. Հասրաթյանի «Армянская архитектура раннего христианства» հիմնարար աշխատությունը «Early Cristian Architecture of Armenia»)՝ հարուստ փաստական նյութով, բոլոր հուշարձանների լուսանկարներով և գծագրերով: Հետագայում նա գիրքը թարգմանել է հայերեն և 2010-ին հրատարակել Մոսկվայում («Հայկական վաղքրիստոնեական ճարտարապե-

տությունը»): Աշխատության մեջ հեղինակը ներկայացրել է IV–VII դդ. հայ ճարտարապետության հիմնական հուշարձանները՝ Հայաստանի շինարարական արվեստի բազմադարյան պատմության մեջ կարևորելով հատկապես վաղմիջնադարյան փուլը, երբ ձևավորվեց հայկական ճարտարապետության ազգային նկարագիրը:

Գիտնականը զբաղվել է նաև այնպիսի նշանակալից և քիչ ուսումնասիրված բնագավառով, ինչպիսին ճարտարապետական առնչությունների հիմնահարցն է: Նա ուսումնասիրել է հայ-բյուզանդական, հայ-սիրիական, հայ-իրանական, հայ-վրացական ճարտարապետական կապերը:

Նշանակալի է Մ. Հասրաթյանի ավանդը Արվեստի ինստիտուտի՝ հայ արվեստին նվիրված միջազգային գիտաժողովների (1975, 1978, 1981, 1985, 1988) կազմակերպման գործում: Նա նաև հայկական ճարտարապետությունը ներկայացրել է աշխարհի տարբեր երկրներում կայացած միջազգային բազմաթիվ գիտաժողովներում:

Ճարտարապետության վաստակաշատ պատմաբանի գիտական ու գիտակազմակերպական աշխատանքը հաջողությամբ զուգակցվել է մանկավարժական ու հասարակական ակտիվ գործունեության հետ: Պրոֆեսոր Հասրաթյանը տարիներ շարունակ դասավանդել է Երևանի պետական համալսարանում, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում, Երևանի ճարտարապետության և շինարարության ազգային համալսարանում՝ իր հարուստ փորձն ու գիտելիքները փոխանցելով ապագա ճարտարապետներին ու մշակութաբաններին: 2000 թ. հրավիրվել է Սորբոնի համալսարան և մեկ ամիս ֆրանսերեն դասախոսություններ կարդացել հայկական միջնադարյան ճարտարապետության վերաբերյալ:

1962-ից Մ. Հասրաթյանը Հայաստանի ճարտարապետների միության անդամ էր, ընտրվել է վարչության անդամ, ղեկավարել ճարտարապետության պատմության մասնաճյուղը: Երկար տարիներ եղել է «Պատմաբանասիրական հանդես» գիտական պարբերականի խմբագրական խորհրդի անդամ:

Տասնամյակներ շարունակ Արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժինը հայկական ճարտարապետության պատմագիտության առաջատարի ղեկավարությամբ գրել է իր տարեգրության հարուստ էջերը: 1996-ին Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ լույս է տեսել «Հայկական ճարտարապետության պատմություն» վեցհատորյակի առաջին հատորը, որն ընդգրկում է Հայկական լեռնաշխարհի ճարտարապետական մշակույթը՝ հնագույն ժամանակներից մինչև վաղ միջնադար: Իսկ «Հայկական ճարտարապետության պատմություն» վեցհատորյակի՝ հարուստ պատկերազարդված երկրորդ (2002) և երրորդ (2004) հատորները լույս տեսան Մ. Հասրաթյանի խմբագրությամբ: Վերջին տարիներին լույս տեսան ավստրիացի ականավոր արվեստաբան Յոզեֆ Սորժիգովսկու «Հայերի ճարտարապետությունը և Եվրոպան» գերմաներեն գրքի ռուսերեն թարգմանության 1-ին (2011) և 2-րդ (2018) հատորները, որոնց պատասխանատու խմբագիրներն էին Մ. Հասրաթյանն ու Ա. Աղայանը:

2010-ին Մ. Հասրաթյանն արժանացավ ՀՀ ԳԱԱ Թորոս Թորամանյանի անվան մրցանակին՝ իր արժանի տեղը զբաղեցնելով հայ ճարտարապետության անխոնջ ուսումնասիրողներ՝ այդ մրցանակի դափնեկիրներ Նիկոլայ Տոկարսկու, Վարազդատ Հարությունյանի, Հովհաննես Էսալփախյանի, Ալեքսանդր Սահինյանի, Պաոլո Կունեոյի և Ադրիանո Ալպագո Նովելլոյի կողքին:

Գիտական և գիտակազմակերպական ծանրակշիռ վաստակի համար Մ. Հասրաթյանը պարգևատրվել է ՀՀ ԳԱԱ վաստակագրով, ՀՀ մշակույթի նախարարության «Ոսկե մեդալով», ՀՀ ԿԳՄՍՆ «Ոսկե հուշամեդալով», ՀՀ վարչապետի հուշամեդալով, արժանացել ՀՀ վաստակավոր ճարտարապետի պատվավոր կոչման:

Մեծ գիտնականի, ազնիվ մտավորականի և լուսավոր մարդու պայծառ հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների սրտում:

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԳԱԱ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Աշոտ Սարգսյան – Ազաթանգեղոսի «Հայոց պատմության» ստեղծման
ազգային-կրոնական միջավայրը և քաղաքական նպատակը3

Քնարիկ Ավագյան – Հայաստանում սիրիահայ երեխաների և
երիտասարդների համար իրականացված ինտեգրման ծրագրերը
(2012 – 2018 թթ.) (անգ.)26

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՆՏՈՒԱՆ-ԺԱՆ ՍԵՆ-ՄԱՐՏԵՆԻ
ԾՆՆԴՅԱՆ 235-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Աելիտա Դոլուխանյան – Անտուան-ժան Սեն-Մարտենի հայագիտական
ժառանգության արդիական արժեքը49

ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Սամվել Ռամազյան – Հայոց թագավորի կերպարը «Օղուզ-Նամե»-ում
(ռուս.)67

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԻՒԹԱՐ ՍԵՐԱՍՏԱՅՈՒ
ԾՆՆԴՅԱՆ 350-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Թաթուլ Ասոյան – Մխիթարյան միաբանության ռահվիրան. Մխիթար
Սերաստացի82

ԱՐՍԵՆ ԱՅՏԸՆՅԱՆԻ
ԾՆՆԴՅԱՆ 200-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Վազգեն Համբարձումյան – Արսեն Այտընյանի հայերենագիտական
ժառանգությունը106

ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ
ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Վիկտոր Կատվայան – Հրաչյա Աճառյան. կյանքը և գիտական սխրանքը	126
Շողեր Մինասյան, Արմեն Սարգսյան – Ռուսերեն փոխառյալ բաղադրիչով դարձվածները Ղարաբաղի բարբառում	144

ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՆԻԿՈԼ ԳԱԼԱՆԴԵՐՅԱՆԻ
ԾՆՆԴՅԱՆ 145-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Աննա Ասատրյան, Լիլիթ Հակոբյան – Նիկոլ Գալանդերյանի «Փարվանա» օպերան. հայկական ռոմանտիզմի մոռացված արձագանքը (անգ.)	161
Անուշավան Զաքարյան – Յուրի Վեսելովսկին հայ թատրոնի և թատերական գործիչների մասին	180

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գարեգին Թումանյան – Ննջեցյալի գլխի պաշտպանությունը չարխափան միջոցներով (ակնարկներ նախապատմական ժամանակաշրջանից) (անգ.)	212
Անի Պետրոսյան – Ոռոգման մասին պատմական խոսույթի ձևավորումը Խորհրդային Հայաստանում	229

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գայանե Գևորգյան – Վիկտոր Կատվայան. Հայոց լեզվի բարբառագիտական ատլաս. պրակ Ա, Գեղարքունիքի մարզ	246
Աննա Ասատրյան – Արարատ Աղասյան. Հայ կերպարվեստը «Արաքս» հանդեսի էջերում (Սանկտ Պետերբուրգ, 1887–1898)	251
Հասմիկ Աբրահամյան – Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ. 6	256
Լուսինե Ղոնջյան – Առաջավորասիական պատմավիպական կերպարները հայ բանահյուսության մեջ. գիրք Ա	263
Թամար Հովհաննիսյան – Դավիթ Գասպարյան. Հայ գրականություն. գիրք յոթերորդ	266

ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

Վահրամ Բալայան – Բագրատ Ոլոբաբյան (ծննդյան 100-ամյակի առթիվ)	272
Համո Սուքիասյան – Վլադիմիր Ղազախեցյան (ծննդյան 100-ամյակի առթիվ) ...	281

Արամ Քոսյան – Գագիկ Սարգսյան (ծննդյան 100-ամյակի առթիվ)288

ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՐՆԵՐԸ

Անուշավան Զաքարյան – Աշոտ Մելքոնյան (ծննդյան 65-ամյակի առթիվ)294

Աշոտ Մելքոնյան – Ռուբեն Սաֆրաստյան (ծննդյան 70-րդ տարեդարձի և
գիտամանկավարժական գործունեության 45-ամյակի առթիվ)301

Հարություն Մարության – Ալեքսան Հակոբյան (ծննդյան 70-ամյակի առթիվ) ...305

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանը 90 տարեկան է310

ԼՐԱՏՈՒ

Մուրադ Հասրաթյան312

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ

Ашот Саргсян – Национально-религиозная среда и политическая цель
создания «Истории Армении» Агатангелоса3

Кнарик Авакян – Интеграционные программы, реализованные в Армении
для армянских детей и молодежи из Сирии (2012 – 2018 гг.)
(на англ. яз)26

ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

К 235-ЛЕТИЮ СО ДНЯ РОЖДЕНИЯ
АНТУАНА-ЖАНА СЕН-МАРТЕНА

Аэлига Долуханян – Актуальная ценность арменоведческого наследия
Антуана-Жана Сен-Мартена49

ФОЛЬКЛОРИСТИКА

Самвел Рамазян – Образ армянского царя в «Огуз-Наме» (на русск. яз.) ..67

ЛИНГВИСТИКА

К 350-ЛЕТИЮ СО ДНЯ РОЖДЕНИЯ
МХИТАРА СЕБАСТАЦИ

Татул Асоян – Основатель конгрегации Мхитаристов: Мхитар Себастанци82

К 200-ЛЕТИЮ СО ДНЯ РОЖДЕНИЯ
АРСЕНА АЙТЫНЯНА

Вазген Амбарцумян – Арменоведческое наследие Арсена Айтыняна106

К 150-ЛЕТИЮ СО ДНЯ РОЖДЕНИЯ
РАЧИЯ АЧАРЯНА

Виктор Катвалян – Рачия Ачарян: жизнь и научный подвиг126

Шогер Минасян, Армен Саргсян – Фразеологизмы с русским
заимствованным компонентом в Карабахском диалекте144

ИСКУССТВОВЕДЕНИЕ

К 145-ЛЕТИЮ СО ДНЯ РОЖДЕНИЯ
НИКОЛА ГАЛАНДЕРЯНА

Анна Асатрян, Лилит Акопян – Опера Никола Галандеряна «Парвана»:
забытое эхо армянского романтизма (на англ. яз)161

Анушаван Закарян – Юрий Веселовский об армянском театре и
театральных деятелях180

АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ

Гарегин Туманян – Защита головы усопшего апотропеическими
средствами (очерки доисторического периода) (на англ. яз)212

Ани Петросян – Формирование исторического нарратива об ирригации
в Советской Армении229

РЕЦЕНЗИИ

Гаяне Геворгян – Виктор Катвалян. Диалектический атлас армянского языка,
том А, Гегаркуникский регион246

Анна Асатрян – Арарат Агасян. Армянское изобразительное искусство
на страницах журнала «Аракс» (Санкт-Петербург, 1887–1898)251

Асмик Абрамян – Труды Института археологии и этнографии, 6256

Лусине Греджян – Переднеазиатские историко-эпические персонажи в армянском фольклоре, книга А	263
Тамар Ованнисян – Давид Гаспарян. Армянская литература, книга седьмая ...	266

НАШИ ЗАСЛУЖЕННЫЕ ДЕЯТЕЛИ

Ваграм Балаян – Баграт Улубабян (к 100-летию со дня рождения)	272
Амо Сукиасян – Владимир Казахецян (к 100-летию со дня рождения)	281
Арам Косян – Гагик Саргсян (к 100-летию со дня рождения)	288

НАШИ ЮБИЛЯРЫ

Анушаван Закарян – Ашот Мелконян (к 65-летию со дня рождения)	294
Ашот Мелконян – Рубен Сафрастян (к 70-летию со дня рождения и 45-летию научно-педагогической деятельности)	301
Арутюн Марутян – Алексан Акопян (к 70-летию со дня рождения)	305

НАУЧНАЯ ЖИЗНЬ

Фундаментальной научной библиотеке НАН РА 90 лет	310
--	-----

ХРОНИКА

Мурад Асратян	312
----------------------------	-----

CONTENTS

HISTORY

Ashot Sargsyan – National-Religious Context and the Political Purpose Behind the Creation of “History of Armenia” by Agathangelos	3
Knarik Avagyan – Integration Programs Implemented for Syrian–Armenian Children and Youth in Armenia (2012 – 2018) (in Eng.)	26

LITERARY STUDIES

TO THE 235TH ANNIVERSARY OF THE BIRTH OF ANTOINE-JEAN SAINT-MARTIN

Aelita Dolukhanyan – Significance of Saint-Martin’s Valuable Legacy in Armenian Studies	49
--	----

FOLKLORE STUDIES

- Samvel Ramazyan** – The Image of the Armenian King in “Oghuz-Nameh”
(in Russ)67

LINGUISTICS

TO THE 350TH ANNIVERSARY
OF THE BIRTH OF MKHITAR SEBASTATSI

- Tatoul Asoyan** – Founder of the Mekhitarist Congregation: Mkhitar Sebastatsi ..82

TO THE 200TH ANNIVERSARY
OF THE BIRTH OF ARSEN AYTINIAN

- Vazgen Hambardzumyan** – Armenological Inheritance of Arsen Aytinian106

TO THE 150TH ANNIVERSARY
OF THE BIRTH OF HRACHYA ACHARYAN

- Viktor Katvalyan** – Hrachya Acharyan: Life and Scientific Achievement126

- Shogher Minasyan, ArmeN Sargsyan** – Russian-Derived Phraseological
Units in the Karabakh Dialect144

ARTS

TO THE 145TH ANNIVERSARY
OF THE BIRTH OF NIKOL GALANDERYAN

- Anna Asatryan, Lilit Hakobyan** – The opera “Parvana” by Nikol Galanderyan:
the Forgotten Echo of Armenian Romanticism (in Eng.)161

- Anushavan Zakaryan** – Yuri Veselovsky on Armenian Theater and Theatrical
Figures180

ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

- Garegin Tumanyan** – Protecting the Head of the Deceased by Apotropaic
Means (Gleanings from Prehistoric Period) (in Eng.)212

- Ani Petrosyan** – Formation of the Historical Narrative on Irrigation in the
Soviet Armenia229

PUBLICATIONS

Gayane Gevorgyan – Victor Katvalyan. Dialectological Atlas of the Armenian Language, Volume A, Gegharkunik Region	246
Anna Asatryan – Ararat Aghasyan. Armenian Fine Arts on the Pages of the “Araks” Journal (St. Petersburg, 1887–1898)	251
Hasmik Abrahamyan – Works of the Institute of Archaeology and Ethnography, 6	256
Lusine Ghrejian – Middle Eastern Historical-Epic Characters in the Armenian Folklore, Book A	263
Tamar Hovhannisyán – David Gasparyan. Armenian Literature, Book Seven	266

OUR HONOURED SCHOLARS

Vahram Balayan – Bagrat Ulubabyan (on the occasion of his 100th birthday) ...	272
Hamo Sukiasyan – Vladimir Ghazakhetsyan (on the occasion of his 100th birthday)	281
Aram Kosyan – Gagik Sargsyan (on the occasion of his 100th birthday)	288

OUR JUBILEES

Anushavan Zakaryan – Ashot Melkonyan (on the occasion of his 65th birthday)	294
Ashot Melkonyan – Ruben Safrastyan (on the occasion of his 70th birthday and on the occasion of the 45th anniversary of his scientific and pedagogical activity)	301
Harutyun Marutyan – Alexan Hakobyan (on the occasion of his 70th birthday)	305

SCIENTIFIC LIFE

The Fundamental Scientific Library of NAS RA is 90 years old	310
--	-----

NEWS

Murad Hasratyan	312
------------------------------	-----

Հայերեն բաժնի խմբագիրներ

Հայերեն բաժնի սրբագրիչ
Ռուսերեն բաժնի խմբագիր
Անգլերեն բաժնի խմբագիր
Համակարգչային ձևավորում և էջադրում

Редакторы армянского отдела

Корректор армянского отдела
Редактор русского отдела
Редактор английского отдела
Компьютерный дизайн и пагинация

Editors of Armenian segment

Proofreader of Armenian segment
Editor of Russian segment
Editor of English segment
Computer design and pagination

Սոնա Գասպարյան
Հրաչյա Բալոյան
Աղավնի Շահինյան
Գայանե Հարությունյան
Մարինե Ժամկոչյան
Գոհար Հովհաննիսյան

Сона Гаспарян
Рачья Балоян
Агавни Шагинян
Гаянэ Арутюнян
Марине Жамкочан
Гоар Оганнисян

Sona Gasparyan
Hrachya Baloyan
Aghavni Shahinyan
Gayane Harutyunyan
Marine Zhamkochyan
Gohar Hovhannisyan

Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան-19, Մարշալ Բաղրամյան պող. 24-գ, հեռ. (010)581872

Адрес редакции: 0019, Ереван-19, пр. Маршала Баграмяна, 24 г, тел. (010)581872

Address: 24G Marshal Baghramyan av., 0019, Yerevan, Armenia, tel. (010)581872

Հանդեսի պաշտոնական կայքէջեր՝ <https://patmabanasirakanhandes.sci.am> / <https://pbh.sci.am>
<http://academhistory.am/hy/պատմաբանասիրական-հանդես.html>

Официальный сайты журнала: <https://patmabanasirakanhandes.sci.am> / <https://pbh.sci.am>
<http://academhistory.am/hy/պատմաբանասիրական-հանդես.html>

Official sites of the journal: <https://patmabanasirakanhandes.sci.am> / <https://pbh.sci.am>
<http://academhistory.am/hy/պատմաբանասիրական-հանդես.html>

Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ info@pbh.sci.am

Электронная почта журнала: info@pbh.sci.am

E-mail of the journal: info@pbh.sci.am

Հրատ. պատվեր № 1440
Ստորագրված է տպագրության 08. 04. 2026 թ.:
Տպագրական 20,5 մանուկ: Թուղթ № 1, 70x100:
Տպաքանակը՝ 150:

ՀՀ ԳԱԱ տպարան, 0019, Երևան, Մարշալ Բաղդամյան պող. 24:

Изд. заказ № 1440
Подписано к печати 08. 04. 2026 г.
Печ. 20,5 л. Бумага № 1, 70x100.
Тираж –150.

Типография НАН РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24.